

ԱԼԻՍ ՔԻՓ ՔԼԱՐՔ



**ՆԱՄԱԿՆԵՐ
ԿԻԼԻԿԻԱՅԷՆ
(ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ)**

HAIGAZIAN UNIVERSITY PRESS
ՊԷՅՐՈՒԹ 2020

Հրատարակութիւն՝
Հաճնոյ Հայրենակցական Միութեան, Լիբանան

ԱԼԻՍ ՔԻՓ ՔԼԱՐՔ

**ՆԱՄԱԿՆԵՐ
ԿԻԼԻԿԻԱՅԷՆ
(ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ)**

Թարգմանեց եւ ծանօթագրեց՝
Անդրանիկ Տազեսեան

HAIGAZIAN UNIVERSITY PRESS
ՊԷՅՐՈՒԹ 2020

Original Title:

Ալիս Բիսի Բլարք, Նամակներ Կիլիկիայէն
(Օրագրութիւն)

Թարգմանեց եւ ծանօթագրեց՝
Անդրանիկ Տազէսեան

First Edition 2020

© Copyright 2020 HAIGAZIAN UNIVERSITY PRESS
Beirut, Lebanon

All rights reserved.

No part of this publication may be reproduced, stored in or introduced into a retrieval system, or transmitted, in any form, or by any means (electronic, mechanical, photocopying, recording, or otherwise) without the prior permission of the publisher.

www.haigazian.edu.lb

ISBN 978 9953 585 44 4



Հատորը լոյս կը տեսնէ մեկենասույթեամբ
Հենրի եւ Ռաֆֆի Սիսլեան եղբայրներու
իրենց ծնողաց՝
Յակոբ եւ Վերժին Սիսլեաններու յիշատակին



Երկու Խօսք

Առաջին Համաշխարհային Պատերազմի աւարտին, Թուրքիոյ պարտութեամբ, հայ բռնագաղթեալները սկսան վերադառնալ հայրենի բնօրրան՝ Արեւմտեան Հայաստան եւ Կիլիկիա, տէր կանգնելու իրենց անցեալին եւ կերտելու նոր ապագայ՝ հայկական պետականութեան երազով: Փրկուած հաճընցիներուն մեծամասնութիւնը, նոյնպէս, վերադարձաւ՝ վերսկսելու ցեղասպանութեամբ ընդհատուած իր կեանքը:

Հայկական վերընձիւղումի, վերականգնումի, նորակերտումի տեսլականով ոգեւորուած՝ արեւմտեան երկիրներու միսիոնարական կեդրոնները նոր թափ ու թարմութեամբ վերստին ուղղուեցան ընդհանրապէս Փոքր Ասիա եւ մասնաւորաբար Կիլիկիա ամոքելու Եղեռնի ցեղասպանական վէրքերը, աջակցելու՝ կեանքին փարած տասանորդուած հայութեան յարութեան:

Հայկական բնակավայրերու մէջ միսիոնարները առաւել արմատաւորուեր էին 1860-70ականներէն: Լոյսի եւ բարեփոխման ձգտող հայութեան՝ մտքի ու հոգիի նորոգեալ լուսաւորութիւն տարածելու առումով, անոնք առատ բերք ու հունձք տուեր էին Էրզրումէն ու Արեւելեան Հայաստանի գաւառային շրջաններէն մինչեւ արեւմտահայ բնօրրանները Վանի, Խարբերդի, Կիլիկիոյ ու մայրաքաղաք Կոստանդնուպոլսոյ մէջ: Այդ վերընթաց առաքելութիւնը, սակայն, բրտօրէն ընդհատուեր էր աշխարհամարտը առիթ բռնելով հայութեան կենսընթացը խողխողած թուրք իշխանութեանց կողմէ: Իսկ հիմա, միսիոնարները կը վերադառնային նորոգուած ու բարեփոխուած առաքելութեամբ, մինչ իրենց կայանները եւ տեղաբնիկ հայերը տարբեր համեմատութիւններով տուժած-վնասուած-ոչնչացուած էին:

Պորտը Հաճընը ունէր իր վերադարձի առաքելութեան քարտէսին վրայ, ու կը յամենար՝ Դաշնակիցներու կողմէ Հաճընի ազատագրման սպասումով: Սակայն, իտես հաճընցի հոծ խումբերու վերադարձին՝ Պորտը կը վերաշխուժացնէ Հաճընի իր առաքելութիւնը, մանաւանդ որ իր կարգ մը կալուածները տակաւին կանգուն

էին հոն, միսիոնարներէն մին մնացեր էր հոն եւ կարելի ծառայութիւններ մատուցեր իր միջավայրի բնակչութեան:


Միսիոնարուհիներ Էտիթ Քոլտի եւ Ալիս Քլարքի ժամանումով, կը վերակենդանանայ Հաճըն Հոմը, կը գործէ որբանոց-դպրոցը աւելի քան 260 աշակերտ-աշակերտուհիներով, միսիոնարները կ'աջակցին վերականգնումի աշխատանքներուն, կը ջանան թեթեւցնել հաճընցիներուն ընկերատնտեսական տագնապները, առողջապահական խնդիրները, հոգեւոր սնունդ ու վստահութիւն ներշնչել անոնց, կը մասնակցին կրօնական ու կենցաղային արարողութիւններուն եւ... կը դառնան ճակատագրակից՝ նոյնպէս պաշարուելով թուրք չեթէներէն, վկայ՝ այս **օրագրութիւնը**:

Միսիոնարուհի Ալիս Քիփ Քլարքի այս **օրագրութիւնը** կ'ընէ նկարագրականը Հաճըն վերադարձած միսիոնարներու կենսագործունէութեան, անոնց նուիրումին՝ մարդոց, որոնք կը ձգտէին կեանքին փարիլ եւ կ'ուզէին հաւատալ պայծառ գալիքին, որ սակայն ետթաղանուեցաւ, ու չխնայուեցաւ նոյնիսկ որ Հաճըն հաւաքուած հազարեակ մը որբերը հասակ առնելով իրենց դրական, շինիչ նպաստը բերեն միջավայրի բարելաւման, բարգաւաճման:


Մեր մաղթանքն է որ Քլարքի այս հատորով նորահաս մեր սերունդները վերստին հաղորդակցութեան մէջ մտնեն պապենական հողին փարած եւ ամէն գնով անոր վերականգնումին հաւատացող, անձնուէր ու զոհուող հաճընցիին ոգիին, աւելի եւս զօդուին հայութեան պայծառ տեսլականին, մարդկային առաքելութեան, սատարեն մարդկութեան բարօր եւ ազնիւ վերելքին...

Հաճնոյ հերոսամարտի հարիւրամեակի միջոցառումներուն շարքին, այս երկրորդ մատեանի հրատարակութեան առիթով, Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը յանուն պապենական Հաճընին եւ համայն հաճընցիութեան, իր խորին երախտագիտութիւնը կը յայտնէ Ամերիկեան Միսիոնարական Պորտ Ընկերութեան՝ Հաճընին եւ հայութեան եւ անոր վերելքին հանդէպ անոր կատարած անփոխարինելի եւ անգնահատելի օգնութեան ու սատարումին համար:

*Հաճնոյ Հայրենակցական Միութիւն
Պէյրուս*



Հեղինակուիին երթուղին՝ Իսթանպուլէն մինչեւ Հաճըն, ապա նաեւ արտաքսումի ճամփան՝ Հաճընէն մինչեւ Սամսոն



Հաճրնի քաղաքային յատակագիծը

ԻԲՐԵՒ ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հրատարակուող օրագրութիւնը կը պատկանի Նիր Իսթ Ռիլիֆի (ՆԻՐ) Հաճնոյ որբանոցի պատասխանատուներէն Ալիս Քիփ Քլարքի¹ գրիչին: Ան անպարփակելի սիրով, տառապանքով ու ապրումով գրուած վկայութիւնն է հեղինակին Հաճըն կեցութեան 13 ամիսներուն: Քլարք Պոլիս կը հասնի 8 Մարտ 1919ին, Կիլիկիա՝ 25 Ապրիլ 1919ին, իսկ 11 Մայիս 1919ին՝ Հաճըն, ուր կը մնայ մինչեւ 13 Յունիս 1920:

ՆԻՐի Հաճընի համալիրը կը գտնուէր քաղաքին սահմաններէն քառորդ մղոն դուրս, քաղաքին հիւսիս-արեւելքը: Հաճնոյ հայաթափումէն մինչեւ տասանորդուած հաճընցիներու վերադարձը, համալիրը (որուն որբերը աքսորուած էին, որբուհիներու շէնքը այրած էր՝ քաղաքի հրդեհման ատեն, իսկ դպրոցաշէնքը օգտագործուած էր թուրք զինուորներու կողմէ)² կը տնօրինէ Միս Վոնը միքանի որբուհիներով եւ ուսուցչուհիներով³. որբանոցային կեանքը լիարժէք կը վերականգնի զինադադարին՝ Էտիթ Քոլտի ու Ալիս Քլարքի ժամանումով⁴: Ասոնք կը հաւաքեն Հաճնոյ «անտէր երեխաները [որոնք] գետինը կը պառկին, ուր որ կարենան: Ոչ տակերնին փռելիք ունին, ոչ ալ վրանին ծածկելիք», նաեւ՝ շրջակայ գիւղերէն բազմաթիւ որբեր, եւ դասաւանդութիւններու կը սկսին 5 Հոկտեմ-

¹ Քլարքի մայրը Պորտի Փոքր Ասիոյ առաքելութեան Ներքին Բաժնին նախագահուհին էր (*Missionary Herald*, Նոյեմբեր 1919, էջ 432):

² Տարբեր վայրերու մէջ, Հաճըն Հոմի աքսորեալ որբուհիներէն ոմանք հոգացուեր էին զուիցերիացի միսիոնարներու կողմէ, ուրիշներ դարձեր էին հիւանդապահուհիներ՝ թրքական հիւանդանոցներու մէջ: Չինադադարին, որբուհիները բրիտանացի զօրավարի միջամտութեամբ շոգեկառքով դրկուեր էին Ատանա, ապա՝ Սիս, յետոյ՝ Հաճըն (*Mrs. D.C. Eby, At the Mercy of Turkish Brigands (A True Story)*, The Bethel Publishing Company, New Carlisle, Ohio, 1922, էջ 49):

³ Իր կեցութեան շրջանին, Միս Վոն բուժեր էր եւ հոգացեր շատերու, իսկ զինադադարին վերատիրացեր էր միսիոնարական կալուածներուն, զորս պետութիւնը բռնագրաւեր էր պատերազմին սկիզբը (*Eby*, էջ 58-9):

⁴ Չինադադարի հանգրուանին, համալիրին մէջ տարբեր տեսողութեամբ կը կենսագործեն Միս Մքլինը, Միս Սմոլը, Միս Վոնը, Մսթըրը Մքֆարլընտը եւ Մսթըրը Սիլին:

բեր 1919ին⁵: Համալիրը կը գործէ անոնց ու հիւանդապահուի Միս Սուփըրի պատասխանատուութեամբ⁶ եւ աջակցութեամբ յոյն Ալի-թէային, երաժշտութեան ուսուցչուի Մարի Քեհէեանին, փոքրաթիւ ուսուցակազմի ու պաշտօնէութեան⁷:

Զինադադարի շրջանի իր կարճատեւ գոյութեան ամիսներուն, համալիրը կ'ընդունի այցելութիւնը կիլիկեան գրաւող զօրքերու թէ ՆԻՐԻ կիլիկեան այլ շրջաններու պաշտօնատարներու, կը պահպանէ պարբերական կայուն նամակագրական կապ նաեւ արտասահմանի հետ: Իր ծնողքին հետ՝ Քլարք մնայուն, գրեթէ օրընդմէջ նամակագրութիւն ունի, որ կը դադրի 6 Մարտ 1920ին: Այդ նամակներն են որ կը գոյացնեն գիրքին բովանդակութեան մեծ մասը:

ՆԻՐԻ Հաճնոյ գործունէութիւնը չի սահմանափակուիր որբանոցով, որբանոցայիններով⁸ կիրակնօրեայ պաշտամունքով⁹ ու հիւսքի գործարանով. ՆԻՐԻ համալիրը մանելու աշխատանքի կը

⁵ Հրդեհուած շէքին փոխարէն նոր մը կառուցուած էր հողէ առաստաղով եւ գետինով (փլատակներուն մէջէն այրած ու ժանգոտած գամեր օգտագործուեր էին) ամառային համալիրին մէջ, քաղաքին հարաւը: Դպրոցը վերաբացուած էր առանց մատիտի, քարէտախտակի, գրիչի: Աղտոտ պատերը մաքրելու համար վայրի խոզ մը որսացուած էր եւ մորթը իբրեւ խոզանակ գործածուած: Օճարը հագուագիւտ էր եւ շատ սուղ, առաստաղի կալվանացուած թիթեղներէն նոր վառարաններ շինուած էին՝ գողցուած վառարաններուն փոխարէն, ապակիի տեղ բամպակով ծածկուած էին պատուհանները, ժամացոյց չկար, սենեակներէն մին կարի եւ ոստայնանկութեան արտադրամասի, ուրիշ մը՝ զորագործարանի վերածուած էր, հիւսքի գործարան մը բացուած էր քաղաքը՝ բամպակի արտադրանք յառաջացնելու եւ կարելու որբանոցայիններուն հագուատեղէնը, անձեռոցներ եւ բարձեր, իսկ յաւելեալը՝ յատկացնելու ժողովուրդին, որոնք բոլորն ալ մեծ կարիքներ ունէին, թուրքերն ու քիւրտերը ներառեալ (Eby, էջ 63-6):

⁶ Աւելի ետք, մենոնայթներու որբանոցին պարպումէն ետք անոնց կը միանան Էպի ամուլը եւ Միս Պրետըմասը:

⁷ Ուսուցիչներ էին նաեւ.- Հայկանուշը (ուսուցչապետ), Խաթունը, Միրիամը, Կիլիզարը (նախաեղեռնեան շրջանին), Մարթան, Ագապին, Ճոզէֆինը, Թուրֆանտան, Մարին, Ալեքսան խոճան: Պաշտօնէութեան մաս կը կազմէին Նուրիցան (խոհարարուի), յոյն Կիլիզարը, Թորոսը (հացթուփ), Թորոսը (ատաղձագործ) (Eby, էջ 14, 18, 50, 68, 71, 88, 89, 96, 114, 133, 144, 148, 157, 213):

⁸ Քլարք երբեւէ չի տար որբանոցայիններուն ընդհանուր թիւը. Միս Էպի եւ Քոլտ՝ համալիրին բնակչութեան ընդհանուր թիւը կը նշեն 300, որոնցմէ կը վերապրին «երկու-երեք հոգի» (Eby, էջ 3. նաեւ՝ այս գիրքին մէջ Քոլտի գրութիւնը):

⁹ Որուն 4-500 երեխաներ կու գային մասնակցելու (Eby, 84):

լծէ 500 հաճընցի կանայք, որոնք դրամի փոխարէն կը նախընտրեն հագուստեղէն առնել: Անդին, Միս Սուփըր բուժման աշխատանքներ կը տանի քաղաքին մէջ, ուր մալարիան սկսեր էր աւեր գործել: Ան բուժօգնութեան կը հասնի Հաճընը պաշարած թուրքերուն եւս: Յիրաւի, «այնքան գործ կայ ընելիք, եւ այնքան քիչ անձեր, որ այդ գործերը ընեն...»՝ թէ՛ Հաճնոյ եւ թէ՛ համալիրին մէջ, ուստի եւ բնաւ զարմանալի չէ որ համալիրին պաշտօնէութեան օրը կը սկսէր «առաւօտեան հինգուկէս»ին:

Քլարքի առաջին գալուստը չէր Օսմանեան Կայսրութիւն, ոչ ալ իր առաջին մարդասիրական առաքելութիւնը: Սակայն, ուրիշ փորձառութիւն էր ասիկա: Քլարք Հաճըն հասեր էր Տերինճէ-Գոնիա-Էրէյլի-Պոզանթի-Ատանա¹⁰-Սիս երթուղիով: Ի դիմաց Հաճընի «շահեկան» փորձառութեան՝ «Աստուածաշունչը նոր, տարբեր միտքերով կ'իմաստաւորուի» իրեն: Վեցամսեայ կեցութեան աւարտի օրերուն, ան կը սկսի ծրագրել իր վերադարձը, սակայն որբանոցն ու գործակիցները անապահով վիճակի մէջ չձգելու մտահոգութեամբ կը յետաձգէ իր մեկնումը, իսկ այնուհետեւ - Փետրուարի սկիզբէն անապահովութեան ծաւալումով, ապա եւ Հաճընի պաշարումով – անտեղի կը դառնայ իր մեկնումը: Համալիրին՝ թրքական վերագրաւումէն ետք (13 Յունիս), համալիր մնացած օտար անձնակազմը (չորս ամերիկացի եւ երկու քանատացի՝ Էպի ամուլը¹¹, Էտիթ Քուլտ, Ալիս Քլարք, Միս

¹⁰ Ատանայէն Հաճըն քառօրեայ ճամփայ էր ձիով:

¹¹ Մենոնայթ միսիոնարներ Էպի ամուլը կ'ապրի Հաճնոյ պաշարման առաջին հանգրուանի դժուարութիւնները: Յետագային, Միսիզ Էպին հրատարակած իր յուշագիրքին մէջ, Հաճընը կը նկատէ «պատի մէջ շինուած քաղաք»: Հատորը թուականներ չունի, պատմողական ու նուազ փաստագրական է Քլարքի գիրքին բաղդատմամբ: Եղեռնի, տեղահանութեան եւ աքսորի ընդհանրական նկարագրութիւններէ ետք, հեղինակուիին մենոնայթներու եւ ՆԻՐԻ աղջկանց ու փոքրերու որբանոցը միասնաբար կը հրամցնէ, յաւելեալ մանրամասնութիւններով կու տայ որբանոցին թրքական վերագրաւումը, կ'անդրադառնայ Մանիսաճեան ընտանիքին, որբանոցի կեանքին, պաշտօնէութեան, կը կատարէ նաեւ սիրոյ անցողակի դրուագումը Ազապի Արըխեանի (1877–1963. *ան մօրենական մեծմօրս մայրն էր*) եւ իր ամուսին Յակոբին:

Պրետորմաս, Միս Սուփըր), առաւել երկու թրքուհիներ կը տարուին Թալաս, ու Սվազի եւ Թոքթաթի վրայով՝ Սամսոն, ուրկէ՝ Պոլիս:

Հաճոյ պաշարման օրերուն, Քլարք կը ճաշակէ մահուան հետ շփման փորձառութիւնը. «կը զգամ ու հաւանական է որ ասկէ վեց շաբաթ ետք մեր կեանքը վերջացած ըլլայ... Շատ պզտիկ հաւանականութիւն կայ որ ողջ մնամ, եւ կամ՝ այս տողերս երբեւէ կարդացուին ...Մսթըր Պ.ին երկտող մը կը գրեմ ...: Երկտողը փակ նամակ մը ունի ձեզի, որ ձեզի պիտի տրուի երբ համոզիչ փաստ ըլլայ թէ ես չեմ ապրիր»՝ կը գրէ ան 1920 Փետրուար 11ին:

Օրագրութիւնը ծաւալուն պարբերութիւններով, խտացեալ միտքերով, պատմողական ոճ ու բնոյթ ունի եւ՝ հովուերգական ու *օր-իէնթըլիստ* գիծ մը: Ան հարուստ է Հաճըն «հաստատական» վերադարձողներու կեանքին, կենցաղին, ընկերային վիճակին, սովորութիւններուն, մանաւանդ՝ «ամբողջութեամբ սիրելի» բնութեան նկարագրութիւններով¹²: Ան կը նկարագրէ նաեւ իր այցելած գիւղերուն կեանքը, կ'արձանագրէ պատմական բերդերէն («...աւելի տպաւորիչ բան չեմ տեսած երբեւէ») իր տպաւորութիւնները: Վառ կենդանութիւն ունին որբանոցի ներքին կեանքին վերաբաբախումի հատուածները, պաշարի կուտակման եւ մատակարարումի, ամանեղէն-իրեղէններու պակասի դրուագները, պատասխանատուներուն նուիրեալ, յանձնառու ճիգը՝ վերականգնելու թշուառ որբերը, ասոնց վերափոխում-վերաճումը, իրենց նախանձախնդիր տեսլականը, պաշարման իր ականատեսած փուլը, ատոր թրքական երեսակը, թուրք մտայնութիւնը, ֆրանսական սին խօսքերն ու Ֆրանսայի գործունէութեան իր կարճ եւ դիպուկ տողերը, ֆրանսական-բրիտանական-ամերիկեան մրցակցութիւնը...:

Քլարք քննականօրէն կը ժամանակագրէ «պնակախեցիի [նման] ժայռին կառչած ... ամէն կողմ աւերակ ... Հաճըն»ի (որ Կիլիկիոյ մէջ միայն ձիով հասանելի միակ միսիոնարական կայանն էր) զինադադարի կենսընթացը. «մինչ ակնկալելի էր որ ժամանակի ընթացքին Հաճըն բնակիլը աւելի կարելիութիւն դառնար, կարծես թէ հակառակը կ'ըլլայ: ... Այնքա՛ն աղտոտութիւն կայ եւ այնքան մար-

¹² Քլարք «զգլխուած» էր Հաճոյ եւ շրջապատի բնութենէն:

դիկ առնէտներու պէս կ'ապրին... տուներուն մեծ մասը չկայ արդէն, [սակայն] մնացածները բաւական են որ սքանչելի լուսնային պատկեր մը հրամցնեն»¹³:

Ազդու են Քլարքի՝ հաճընցիներու վերականգնումի ճիգին նկարագրականները. այլ շրջաններու բնակիչներէն «աւելի մեծ տոկոս»ով Հաճըն եւ շրջակայքը վերադարձած տեղաբնիկները կը բնակին 4500 տուններէն հազիւ 500ը կանգուն մնացած բնակարաններու մէջ¹⁴. «միջին հաշուով, իւրաքանչիւր տան մէջ քսան հոգի կայ, ներառեալ՝ մանուկներ... շատ մը մարդիկ քարայրներուն եւ փոսերու մէջ կը բնակին ...գնուելիք բան չկայ... [քաղաքը] մաքրուած է այնպէս՝ ինչպէս ագռաւը պիտի մաքրէր... երանի հաճընցիները կարենային իրենց այգիներուն երթալ, բայց թուրքերը աւերած են գրեթէ բոլորը ... զանգուած մը, որ ցնցոտիներու մէջ է, եւ չի կրնար հանդերձափոխուիլ, որովհետեւ ուրիշը չունի: Քուրջերը՝ քուրջերու կարկտնուած: Հիւանդամարմին անձերու խեղճ տեսքը քեզ կը հիւանդացնէ: Հիւանդութիւններ, որոնց մասին մեր երկրին մէջ շշուկով կը խօսինք, այստեղ սովորական են: Հոս բախտաւոր են անոնք որ երկու առողջ աչքեր ունին: Գիւղերու երեխաները ֆիզիքապէս աւելի լաւ վիճակի մէջ են քան Հաճըն գտնուողները...»:

Իր ժամանման օրերուն Քլարք Հաճընը կը նմանցնէ հրաբուխեալ Պոմպեյին, իսկ պաշարման օրերուն՝ «մեռեալ քաղաքի: Երբեմն ծուխ մը կը բարձրանայ տանիքէ մը, բայց պարզ աչքով կամ հեռադիտակով շարժող մարդ չենք տեսներ: Կը տեսնենք խրամատները եւ կ'ենթադրենք որ մարդիկ խլուրդի պէս, ընդատակ անցած են», կ'ընդգծէ հաճընցիներուն տոկունութիւնը. «Եթէ անոնք

¹³ Հաճըն վերադարձի առաջին վեց ամիսները ամէնադժուարն եղած էին. գաղթական, սպառած, անօթի կարիքաւորներուն պէտք էր նպաստ հասցնել, տնտեսութիւնը: Մեծ բաւարարութիւն էր եթէ օրը անցնէր առանց վնասներու. «Ով որ հայերուն հետ կ'աշխատէր ենթակայ էր խելքը կորսնցնելու...» (Eby, էջ 61-3):

¹⁴ Աքսորին Հաճընի ծայրամասային տուները բնակեցուած էին ռումելիացի եւ պալքան գաղթականներով, որոնք երկու տարի թափառելէ ետք հաստատուել էին Հաճըն, սակայն իմանալով հաճընցիներու վերադարձին մասին անմիջապէս հեռացել էին քաղաքէն, իրենց հետ տանելով տնային-խոհանոցային բոլոր իրեղէնները (Eby, էջ 58): Իդէպ, ֆրանսացիք արգիլել էին անտառահատում կատարել, որով կոճղ կարելի չէր ունենալ՝ տան առատաւ շինելու համար:

չարքաշութեան վարժ չըլլային չէին կրնար արքորին դիմանալ», եւ ւաւելին՝ Հակառակ անկարելի ու անտանելի ներկային հաճընցինք յոյս կ'ուզէին տաձել փայլուն գալիքի մը հանդէպ:

Խօսուն են նաեւ պաշարման առաջին օրերէն իսկ ջարդերը նոր ապրումներով վերլիշող, օրհասական ջիղերու վրայ ապրող ժողովուրդին վերաբերող հատուածները. «...Ժողովուրդը խուճապահար է, կը վախնայ ւաւելի գէշ զարգացումներէ»: Մանաւանդ Մարաշի անկման լուրերը խուճապի կը մատնեն հաճընցիք. «Անոնք կ'ըսեն, թէ իրենք են յաջորդ թիրախը»:

Ահաւոր փորձութեան ամիսներ կ'ըլլան համալիրին պաշարման ժամանակները, երբ համալիրը կը գտնուի թուրք բանակատեղիին մէջ, ամերիկեան դրօշակով կղզիացուած, Հաճնոյ հանդիպակաց, հարիւրաւոր որբերով, որոնք կ'ապրին անդոհանքը իրենց որբանոցի «գլխաւոր դարպասէն եօթանասուն հինգ ոտք հեռաւորութեամբ խրամատային» դիրքերուն: Յատկանշական է Քլարքի խորհրդածութիւններուն փոփոխութիւնը երբ Յունուար 15ին ճամփաները ւաւելի անապահով կը դառնան, Փետրուար 6ին թուրք կուտակումներ կը նկատուին Էւերէկի¹⁵ մէջ՝ Հաճընը գրաւելու ախորժակներով, եւ թուրք ըմբոստութիւններու տարածայնութիւնները կը շատնան: Անհունօրէն մարդասիրական տեսլականներով լի առաքելութեան մը պայծառ հեռանկարը՝ «Աքանջելի պիտի ըլլայ այս երեխաները հասցնել այնպիսի վիճակի մը, որ կարենան աշխարհին գոյակցիլ»¹⁶, կը յեղաշրջուի համալիրին շուրջ Ապրիլի սկիզբէն արագօրէն փոխուող պայմաններու լոյսին տակ: Պաշարման ծանրագոյն օրերուն, երբ մահուան տեսիլը կը պատէ զիրենք, «ինչի՞ ծառայած պիտի ըլլայ մեր փրկութեան այս ճիգը», «[այս որբերը]

¹⁵ Պատմական Կապադովկիոյ գլխաւոր բնակավայրերէն եղած Կեսարիայէն 5 ժամ հեռու՝ հարաւ-արեւելք, Կիլիկիոյ սահմանին, Չամանթը գետին կողքին գտնուող Էւերէկի անունը *աւերակ* բառին աղաւաղեալ տարբերակէն յառաջացած կը կարծուի: Էւերէկ կը բաղկանար չորս գիւղերէ՝ բուն Էւերէկը՝ 800-900 զուտ հայաբնակ տուներով, Ֆենեսէն՝ նոյնպէս հայաբնակ 700-800 տուներով, Այ-Կոստան՝ 400 յոյն եւ թուրք բնակիչներով: Ունէր իր բարբառը:

¹⁶ Ուշագրաւ է Միսիգ Էպիի բնութագրումը այս որբերուն հոգեբանութեան. ասոնք աշխարհէն մերժուածներ էին, որոնք միսիոնարները կը նկատէին միակ արգելքը սովահարութեան եւ իրենց միջեւ:

ինչու՞ վերադարձուեր էին կեանքին» հարցումները բազմիցս կը կրկնուին. Քլարք կը դժուարանայ համոզիչ պատասխաններ գտնելու իրեն կենակից, հարազատ այս որբուհիներուն, որոնց գիտէր «իրենց անունով եւ քանակով»: Քլարքի այս հարցումները համամարդկային են եւ համաժամանակեայ:

Ի տարբերութիւն ՀԲԸՄ Հաճընի որբանոցայիններուն անուանացանկերուն առկայութեան¹⁷, անձանօթ կը մնան Հաճըն Հոմի որբանոցայիններուն ցանկերը: Ուսանելի պիտի ըլլար աւելին գիտնալ համալիրին ներքին կեանքի բազկերակին զարկերուն թէ որբանոցին դիմապատկերին խնդրով. որբերն ու անօգնականները հարցախուզուած-ցանկագրուած էին, հարցաթերթիկներ լեցուած ու շատ բան իմացուած էր: Եւ թէիւ Քոլտի պատրաստած տեղեկագիրը անցած էր թուրքերու ձեռքը, բայց վստահաբար արխիւային շատ բան կը մնայ կուտակուած եւ չպեղուած: Շահեկան պիտի ըլլային Քլարքի եւ Հաճոյ վերականգնման փուլի օտար միսիոնարներու վկայութիւններու համադրեալ սերտումը, անոնց արխիւներուն պրպտումը: Այդ շրջանէն շատ քիչ կենցաղային-փաստագրական նկարագրականներ եւ լուսանկարներ կան հանրայնացուած: Իսկ Քլարք երկու լուսանկարչամեքենայ կը գործածէր Հաճոյ մէջ: Մեզի անձանօթ կը մնան նաեւ մենոնայթներուն նիւթերը, բացի Միսիզ Էպիին վերոյիշեալ գիրքէն¹⁸: Միւս կողմէն, դժուար թէ Էտիթ Քոլտ բաւարարուէր այս գիրքին վերջաւորութեան մեր հրատարակած գրութեամբ: Աւելցնենք նաեւ որ Քլարքի այս հատորը

¹⁷ Տե՛ս՝ ՀԲԸՄ Հաճընի Որբանոցը, 1919-1920, ներածութիւն, թարգմանութիւն եւ ծանօթագրութիւն՝ Անդրանիկ Տագէսեան, Հրատ.՝ Հաճոյ Հայրենակցական Միութեան, Պէյրութ, Հայկազեան Համալսարանի Հրատ., 2020:

¹⁸ Ա. Աշխարհամարտին, մենոնայթները կը լքեն Հաճոյ իրենց որբանոցը եւ կը մեկնին: Անոնց հայ պաշտօնեաներէն ոմանք կը միանան Միս Վոնի, որ կը վերահսկէ իրենց ունեցուածքին: Զինադադարի սկիզբը, ՆԻՐը կը գործածէ Սուրբ Սարգիսի մենոնայթներու շէնքերը՝ «տողց համար իբրեւ ժամանակաւոր պատասպարան»: 10 Սեպտեմբեր 1919էն կարճ ժամանակ ետք, Էպի ամոյն ու Միս Պրետըրմաս կը վերադառնան Հաճըն, վերսկսելու իրենց գործունէութիւնը, հոգալով առնուազն 20 պատանիի: Հաճոյ պաշարման օրերուն, անոնք կ'արտօնեն իրենց կալուածին գործածումը իբրեւ կայան, կը դառնան թրքական յարձակումի թիրախ եւ Ապրիլի սկիզբը կը պարպեն Ատանայի ճամփուն նայող իրենց որբանոցը, եւ որբերն ու պաշտօնէութիւնը կը փոխադրուին ՆԻՐի համալիր:

չ'ընդգրկեր իր օրագրութեան ամբողջութիւնը, ոչ ալ Միսիգ Էպիի գիրքը կը ներկայացնէ իր ամբողջական օրագրութիւնը... Շահեկան պիտի ըլլար հրատարակել Միս Սուփըրի բուժական ծառայութիւններուն յուշագրութիւնը՝ թէ՛ որբանոցայիններուն, թէ՛ մալարիայով եւ այլատեսակ հիւանդութիւններով տառապող քաղաքին եւ թէ՛ զայն պաշարած չեթէներուն...: Անկասկած Հաճնոյ անդոհանքը վերապրած այս վեց միսիոնարները շատ բան տուին թուղթերուն, որոնցմէ քիչը հանրայնացուած է, մինչ մնացեալները կը սպասեն արխիային պրպտումի...:



202-էջանի, փոքրածաւալ, 250 օրինակ հրատարակուած անգլերէն *Letters from Cilicia* վերնագրեալ այս օրագրութիւնը լոյս տեսած է 1924ին, Press of A.D. Weinthrop & Co ընկերութենէն, Շիքսկօ, Մ. Նահանգներ: Հատորը մեզի տրամադրեց Հայոց Յեղասպանութեան Թանգարան Ինստիտուտի ատենի տնօրէն Դոկտ. Հայկ Դեմոյեան, որուն շնորհակալութիւն կը յայտնենք: Օրագրութիւնը թարգմանաբար լոյս ընծայեցինք Պէյրութի *Արարատ* օրաթերթի 22 Յուլիս--12 Հոկտեմբեր 2014 թիւերուն մէջ: Այնուհետեւ զայն վերախմբագրած ենք ազատ թարգմանութեամբ, պահպանելով ոճն ու միտքերը, կարգ մը արատայայտութիւններ պատշաճեցուցած ենք հայերէնին:

Զայն հրատարակելով, կը կարծենք որ ան կրնայ ներշնչել ընթերցողը իմաստուն կերպով հայրենասիրական, մարդասիրական, նուիրումի ու ծառայութեան դասեր քաղելու անկէ: Իվերջոյ, պատ-

մութենէն դասեր չսերտողը դժուար թէ կեանքի ճամփաները յաջողապէս յաղթահարէ:

Հատորին իբրեւ յաւելուած թարգմանաբար կցած ենք համալիրի վարիչ Էտիթ Քոլտին առաջին տպաւորութիւնները՝ աղէտին մասին, որոնք կը յատկանշուին իրենց թարմութեամբ: Քոլտ զանոնք գրած է Թալաս իր կեցութեան առաջին հինգ օրերուն, համալիրէն արտաքսումէն միքանի օր ետք: Շատ հաւանաբար ասիկա Քոլտի ներկայացուցած ընդարձակ տեղեկագրին մէկ համառոտումն է:

Հատորին ծանօթագրութիւններուն համար օգտուեցանք Հայկազեան Համալսարանի Տէրեան հայագիտական եւ Պարսամեան անգլերէն, ինչպէս նաեւ Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Ճեմարանի (NEST) գրադարաններէն, ուր գտանք նաեւ ամէն օժանդակութիւն՝ պաշտօնէութեան կողմէ: Հատորին հրատարակման մէջ իրենց կարեւոր աջակցութիւնը բերին նաեւ երիտասարդ մտաւորական Պետրոս Թորոսեան, Ալիսա Պարախեան, *Արարապ* օրաթերթի ազնիւ խմբագրուի Անի Եփրէմեան: Քարտէսներուն պատշաճեցումը կատարեց Նարէ Տուտաքլեան, հրատարակութեան թեքնիք հարցերը ապահովեց Լիբանանի Հաճոյ Հայրենակցական Միութիւնը: Հեղինակուիին կենսագրութեան մանրամասնութիւններու եւ նկարին յայտնաբերման մէջ կարեւոր դեր ունեցան Վարդան Մատթէոսեան եւ Միհրան Մինասեան: Այս շինիչ գործակցութեան համար, բոլորին կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը:

Անդրանիկ Տազետեան

*Հօրս եւ մօրս՝ որոնց բացարձակ համակրանքը եւ բուռն
հետաքրքրությունը զիրենք հոգեպէս իմ մօտս պահեցին,
այն բոլոր օրերուն երբ մենք բաժնուած էինք իրարմէ:
ԱԼԻՍ ՔԻՓ ՔԼԱՐՔ*

ՆԱԽԱԲԱՆ

16 Փետրուար 1919ին «Լըայըթըն» նաւը Նիւ Եորքէն մեկնեցաւ Պրեսթ՝ Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի շուրջ 250 ծառայողներով¹⁹, որոնք կ'ուղղուէին Թուրքիա եւ Սուրիա: Պրեսթէն Մարսէյ՝ ճամփորդութիւնը կատարուեցաւ ամերիկեան բուժական շոգեկառքով մը, իսկ վերջին հանգրուանը դէպի Կոստանդնուպոլիս՝ «Կլաուսթըր Քեսըլ» բրիտանական հիւանդանոցային նաւով²⁰:

Կոստանդնուպոլիսը այն վայրն էր ուրկէ ծառայողները կը ղրկուէին երկրին խորերը: Ծրագիրը կը նպատակադրէր Նպաստամատոյցի գործունէութիւն ծաւալել «գրաւուած» տարածքներու մէջ, ուր դաշնակիցները կը վերահսկէին: Բայց ժամանակի ընթացքին, երբ թուրքերը սկսան անհանդարտ դառնալ, այսպէս կոչուած «չգրաւուած» շրջանները նուազ վտանգաւոր սկսան ըլլալ:

Յետագայ պատմութիւնը կերտուած է քաղուածքներէն այն նամակներուն, զորս հեղինակը գրեց իր ընտանիքին՝ Մ. Նահանգներ: Պատմութիւնը ամբողջացուած է հեղինակին օրագիրէն եւս, զոր ան կը պահէր Հաճըն գտնուած շրջանի վերջին հանգրուանին՝ Հաճնոյ մերձակայ համալիրը բնակութեան իր շրջանին, երբ Հաճնոյ հետ պաշարուած էր թուրքերէն, մինչ նամակային ու հեռագրային հաղորդակցութիւնը աշխարհին հետ կտրուած էր:

¹⁹ Յունուար 19ին եւ 24ին արդէն երկու խումբեր (45 անձ) ուղղուեր էին Մերձաւոր Արեւելք, բայց պատերազմական ծովային հրահանգները չէին արտօնած կին միսիոնարներու մեկնումը: Բանակցութիւններէ ետք միայն, կին միսիոնարներու կ'արտօնուի ուղղուիլ Մ. Արեւելք: Լըայըթընով 27 կամաւորուի կ'ուղղուին Մ. Արեւելք (*Missionary Herald*, Յունուար 1919, էջ 47, Մարտ, էջ 132): Նաւը կը փոխադրէր նաեւ 7 միլիոն տոլար արժողութեամբ իրեղէններ եւ նպաստ (*American Board Quarterly News Bulletin*, Boston, Մայիս 15, 1919, էջ 1):

²⁰ Ան Մարսէյէն պիտի նաւարկէր Մարտ 25ին (*Missionary Herald*, Յունիս 1919, էջ 236):

ՆԱՄԱԿՆԵՐ ԿԻԼԻԿԻԱՅԷՆ

Քսանհինգ Փետրուար 1919

Դժուար է ընմբռնել որ դեռ առջի օր հասանք Պրեսթ: Հետաքրքրական էր ճաշարանը: Խորքին մէջ, առիթ եղաւ որ ակնարկ մը նետենք Ֆրանսային՝ պատերազմէն այսքան կարճ ժամանակ ետք: Եւ կ'արժէր: Մինչեւ Մարսէյ՝ երկրին ընդմէջէն ճանապարհողութիւնը, որմէ կը սարսափէի, դժուար չեղաւ: Կիրակի իրիկուն, ժամը Ցին ուղղուեցանք կայարան եւ նստանք բուժական շոգեկառքը, որ կը բաղկանայ 14 վակոններէ: Ատոնցմէ իւրաքանչիւրը իր երկու կողմերուն ունի մետաղեայ եռաշարք անկողիններ, բանակային ծածկոցներով եւ բարձերով: Յերեկը միջանկեալ անկողինը կը դրուի ստորինին վրայ՝ աղուոր նստատեղի մը յառաջացնելով: Կարգը խիստ է. լոյսերը կը մարին ժամը տասին, իսկ առաւօտեան ժամը եօթուկէսին կազմ ու պատրաստ պէտք է ըլլանք: Ճաշին արձնագործուած ամանները եւ գաւաթները կը փոխանցուին պահակներուն կողմէ եւ մենք կանոնական զինուորներու նման ճաշ կ'ունենանք: Առաւօտեան չոր հաց, խոզապուխտ եւ սուրճ, իսկ այս կէսօրին՝ շոգիով եփած հորթի միս, չոր հաց, սուրճ եւ հացի կարկանդակ ունեցանք:

Գրեթէ անդադար անձրեւեց «Լըլայըթըն»ը ձգելնէս իվեր: Բայց այս առտու մեր աչքերը կապոյտ երկինքին բացինք եւ՝ տեսարանի մը, որ Իտալիոյ նման չէ, ուր մթագոյն նոճիներ կան, մոխրականաչ ձիթենիներ եւ կարմիր, կղմինտրածածկ տանիքներ, իսկ անդին՝ յետնախորքին՝ ձիւնածածկ լեռներ: Հոս, ծաղկած նշենիները վարդաւուն կը դառնան, իսկ օդը կարծես *իքսիր* ըլլայ: Մտածել՝ որ կանգ առնես Թարասքօն ու Արլ, բայց չարտօնուիս նոյնիսկ տախտակամածէն դուրս ոտք դնել...:

Փետրուար քսանվեց

«Կլաուսթրը քեսըլ»ը մեզ կը սպասէր երբ Ֆրանսայի ընդմէջէն վաթսունվեց ժամ տեւած ճամփորդութեամբ, այս կէսօրէ ետք ժամը երկուքին հասանք: Մէկ ժամէն կը նաւարկենք, իսկ նամակատունը տասնհինգ վայրկեանէն կը փակուի: Սալոնիկ կ'ուղղուինք եւ կը յու-

սանք որ կրնանք Կոստանդնուպոլիս անցնիլ: Բայց այս ամէնը կախեալ է բրիտանական ծովակալութեան հրահանգներէն:

Մարտ մէկ

Նաւով կը ճամփորդենք: Ափրիկէն շատ հեռու չէ: Մեր երթուղին կ'անցնի Սիկիլիոյ դուրսէն եւ ոչ թէ Մեսինայի նեղուցներէն՝ ծովային ականներու նկատառումով: Մեզի տրամադրուած է ականահաւաք մը, բայց տակաւին չէ բանեցուած: Նաւուն մէջ հետաքրքրական բազմաթիւ ճամփորդներ կան, որոնց շարքին՝ բրիտանացի զօրավար մը, որ Պաքու կ'ուղղուի. կռուող մը, որ ժամանակին Անգլիոյ հինգերորդ բանակին հրամանատարը եղած է:

Մեր ընկերակիցները ծանրաբեռնած են նաւուն կարողութիւնը. մենք խճողուած ենք նաւուն մէջ, կարծես գաղթականներ ըլլայինք: Քիչ մը խառնիճաղանջ է, իսկ մեր ճամպրուկները կա՛մ մեր անկողիններուն տակն են, կա՛մ ալ՝ վրան: Երանի կարենայի նկարել շրջապատս եւ ընկերակիցներս այնպէս՝ որ իրականը կարենայիք տեսնել:

Երէկ կարճ խօսակցութիւն մը ունեցայ նաւուն Յրդ պաշտօնատարին հետ: Ան իր շատ մը փորձառութիւններէն պատմեց ինծի. երբ Առաջին Համաշխարհային Պատերազմը յայտարարուեր է՝ գտնուեր է Ալժիր խարսխած նաւու մը վրայ: Ֆրանսացիք չեն թոյլատրած որ նաւը հանքածուխով մատակարարուի, հետեւաբար - իր ըսելով - «մանրաքայլ յառաջացանք «Ճիպ» (Ճիպրալթար) եւ հոն բեռնաւորեցինք»: Հինգ գերման նաւեր փորձեր են դուրս խուժել Միջերկրականէն բայց իրենք զանոնք զամուած պահեր են ժայռին՝ անոնց վրայ կրակելով տեսողութենէ լաւապէս պաշտպանուած դիրքերէն:

Մարտ երեք

Վեցին արթնցայ, աղեջուրի լոգանքս առի եւ արագ հագուելով նաւուն տախտակամածը բարձրացայ տեսնելու այն կղզիները զորս նկատեր էի անկողինիս մօտի դռնէն: Իմացայ որ մեր աջին եղողը

Անտրոսն է, ուր տասնհինգ տարիներ առաջ Ռոպերթը²¹ եւ ես իջանք, իսկ մեր ձախին՝ Ատտիկէի ծինածածկ գագաթներն են, որոնք յստակօրէն կ'երեւին երկնակամարին վրայ: Ծովը ակեղծ է, երկինքը՝ ամպոտ, բայց երբեմն արեւը դուրս կ'ելլէ եւ փայլուն երիզներ կը ձգէ ջուրին վրայ:

Մարտ չորս

Առտու ժամը եօթին նաւուն տախտակամածը աճապարեցի՝ ակնարկ մը նետելու վերջին վարդագոյն արեւածագին եւ լեռնային հիանալի համայնապատկերին: Ձիւնածածկ Ողիմպոս լեռը արժանի թուեցաւ աստուածներու: Սալոնիկի նաւահանգիստը հասանք ժամը իննին: Ճամփան հանդիպեցանք գերմանացիներէն ականահարուած բրիտանական «Նորսլէնտ» շոգենաւին՝ խրուած, մինչ միւս կողմը՝ բարձր, օդը ցցուած:

Բաւական հեռու ենք ցամաքէն եւ որոշ ալ չենք թէ մեր յաջորդ քայլերը ի՞նչ պիտի ըլլան, թէեւ յոյս ունինք որ մեզի պիտի արտօնուի Կոստանդնուպոլիս երթալ այս նաւով: Կ'ուզեմ բան մը տեսնել Սալոնիկէն, բայց ատիկա կախեալ է Տոքթ. Ուայթի²² տալիք տեղեկագրէն. ծովափ գնաց՝ մեզի լուր բերելու: Կ'ըսուի թէ շրջանը ահռելիօրէն աղտոտ է եւ լեցուած գաղթականներով ու տարբեր երկիրներու զինուորներով: Ժանտատենդէ բռնուած է շրջանը եւ ցամաք ելլելը թերեւս արգիլուի: Քաղաքի տեսարանը՝ այս հեռաւորութենէն, շատ հրապուրիչ է:

Մարտ վեց

Արտօնութիւն տրուեցաւ որ այս նաւով շարունակենք դէպի Կոստանդնուպոլիս. այս երեկոյ՝ կը նաւարկենք: Երեքշաբթի արտօնուեցանք ցամաք ելլել: Միսիգ Անտըրուուտը եւ ես քիչ մը թափառեցանք ծովափը, ուր մարդոց խճողում կար: Առնուազն տաս ազգութիւններ հաշուեցինք մեր պտոյտին ընթացքին: Փոշոտ հով մը կար եւ մարդիկ այնքան աղտոտ էին որ չէինք ուզեր որ մեր

²¹ Իր եղբայրը, ծնեալ 1879ին:

²² Հաւանաբար նկատի ունի Մարգուանի Անատոլիա Քոլէճի տնօրէն Դոկտ. Ճորճ Ուայթը:

հագուստները իրենց դպին: Աւելի ետք, քալեցինք միքանի նեղ փողոցներէ, ուր շատ մը տխուր, բայց եւ դիտարժան տեսարաններ կային: Քաղաքին մեծ մասը անցեալ տարի այրած է. գաղթականները կ'ապրին ըստ կարելոյն: Բրիտանացիք ընդարձակ հիւղակներ լարած են գաղթականներուն կեցութեան համար, բայց անոնցմէ շատերը կառչած կը մնան իրենց հին տուներուն: Տեսանք այրած շէնքի մը լաթերով առանձնացուած մէկ անկիւնը ապաստան գտած ընտանիք մը: Անոնք կ'եփէին գետինը սարքուած կրակի մը վրայ: Յոյն կաթոլիկ եկեղեցիի մը մէջ հետաքրքրական քանի մը խճանկարներ տեսանք՝ Աստուածածին մը խորանին խորքին, իսկ գմբէթին՝ սուրբերու թափօր մը:

Այս առտու, երբ տախտակամած ելայ, տեսայ որ մօտեցեր ենք Թենետոս կղզիին: Միառժամանակ ետք հասանք Տարտանէլի մուտքը:

Կալիփոլիի ծովեզերքը տեսնելը կը շարունակէ մնալ խանդավառող փորձառութիւն մը: Մօտիկէն տեսնելու առիթը ունեցանք «Քլայտգետ»ը՝ ծովափին, ուր զօրքերը իջած էին, իսկ կարճ ժամանակ ետք տեսանք նաւաբեկուած «Մեճեսթիք»ը: Հիմա, կէսօրին խարսխած ենք Չանաք քաղաքը՝ Տարտանէլի նեղ բաժնին վրայ՝ Մարմարա ծովուն կէս ճամփուն: Մեզի կ'ընկերակցի Կոստանդնուպոլիս ուղղուող սիխերու խումբ մը: Անոնք իրենց յատուկ ցեխէ վառարանները շինած են՝ տախտակամածին ցած յառաջամասին վրայ, ուր իրենց ճաշը կ'եփեն իրենց աղանդին կարգերուն համաձայն: Ջուրերուն վրայ փոքր առագաստանաւեր կը պարեն, մինչ իրենց ետին կը բարձրանան կանաչ եւ սրճագոյն լեռնափէշեր, ուր ոչխարներ կ'արածին: Մթագնած կարմիր տանիքով տուներու շարք մը կ'երեւի: Աւելի հեռուն՝ մանիշակաւուն լեռներ: Վերելը՝ քաղցրախորժ կապոյտ երկինք մը - բժաւորուած բամպակ ամպերով - կ'ամբողջացնէ պատկերը: Յոյս ունինք որ վաղը կէսօրէ ետք հասնինք Կոստանդնուպոլիս, թէեւ այս ուշացումը կասկածի տակ կը դնէ մեր յոյսը:

Երէկ առտու խարսխեցինք Մարմարայի ծովը: Արեւը դեռ չէր ծագած: Վաղ առաւօտեան երբ լուսաւորուիլ սկսաւ՝ դիտեցինք սիրուն մզկիթներն ու մինարէները: Քիչ մը ամպոտ էր, բայց արեւոտ օրուան հաւասարող գեղեցկութիւն մը կար: Ժամը շուրջ տասին, երբ դեռ քիչ մը հեռու էինք ցամաքէն, մեր առաջնորդներէն շատեր ծովափ ուղղուեցան: Անոնց վերադարձին, մեզի յայտնուեցաւ թէ ուր պիտի մնանք: Մեծամասնութիւնը պիտի մնայ Փրինսիփօ կղզին գտնուող պանդոկ մը, միքանին՝ Րոպերթ Քոլէճ²³ եւ Աղջկանց Ամերիկեան Քոլէճը²⁴, շուրջ քառասուն հոգի պիտի գիշերենք շոգեկառքի կայարանին մօտ քնանալու յարմարութեամբ օժտուած ինքնաշարժներուն մէջ, եւ վեց հոգի - ներառեալ ես - Կետիկ Փաշայի Իսթանպուլի Միսիոնարական Պորտի աղջկանց դպրոցը: Բերկրանքի մէջ եմ որ Միսիզ Մարտընին²⁵ եւ Միս Ճոնզին հետ եմ:

Քաղաքին պանդոկները խճողուած են, եւ թէեւ ոչ-բոլորը գոհ են կեցութեան կարգադրութիւններէն, այդուհանդերձ ասիկա կարելի լաւագոյնն է: Ինքզինքս շատ բախտաւոր կը նկատեմ: Երանի տեսնէիք մեր խումբը երբ կ'ուղղուէր իր կեցութեան վայրը: Միս Հոլթը²⁶, որ թրքերէն գիտէ, երեք բեռնակիր՝ *համալներ*, կանչեց: Ասոնք մեր ձեռքի պայուսակները շալկեցին եւ հետիոտն հետեւեցան մեզի: Մենք անցանք նշանաւոր Կալաթա կամուրջէն եւ խայտաբղէտ ամբոխէ մը: Առտուն անձրեւեր է, եւ ցեխոտ սալաքարերը սա-

²³ Պոլսոյ Րոպերթ Քոլէճը (American Robert College of Istanbul), հիմնուած է 1863ին եւ ցարդ գործող ամէնաերկարակեաց ամերիկեան ուսումնասարանն է Մ. Նահանգներէն դուրս: Կրթարանը մեծ նպաստ ունեցած է նաեւ հայ աշակերտներու (աւելի մանրամասն տե՛ս՝ Երուանդ Հ. Քասունի, «Ռոպըրթ Գոլէճ»՝ *Քննական Տեսութիւն Հայ Աւերարանականութեան Պատմութիւնը Օղակահիսող Դէմքերու եւ Եղելութիւններու (1828-1922ԹԹ)*, Պէյրութ, 2009, էջ 340-49):

²⁴ Պոլսոյ Ամերիկեան Աղջկանց Քոլէճը (American College for girls) հիմնուած է 1871ին, Վոսփորի ափին:

²⁵ Հաւանաբար նկատի ունի Մարգուանի Անատոլիա Քոլէճի պաշտօնատարներէն Տոքթ. Մարտընի տիկինը՝ Ճեսի:

²⁶ Միսիոնարուի Սոֆի Հոլթ, Մարտ 1919ին կը գտնուէր Պոլիս, եւ կը ծառայէր շրջանի (ներառեալ Ատափազարի) հայ գաղթականներուն (*Missionary Herald*, Յունիս 1919, էջ 229):

հուն էին: Մեքենաներ, կառքեր եւ սայլեր կ'անցնէին ջուր ցայտեցնելով: Ֆէսերով մարդիկ, մուրացկաններ՝ ցնցոտիներով, լաչակաւոր կանայք եւ ուրիշ անլաչակ կամ լաչակը համարձակութեամբ ետեւ նետած կիներ կ'անցնէին մեր քովէն: Օդը ծանր էր՝ չնկարագրուող մշտագոյ բոյրերովը Արեւելքին:

Դարձդարձիկ ճամփաներով գացինք ու գացինք, մինչեւ որ հեւասպառ ու տաքցած հասանք ու սիրալիր դիմաւորուեցանք: Լաւ է որ տունի մէջ ենք, յետոյ ալ՝ կրցանք հանգստանալ իրական անկողինի մէջ: Ննջարաններն ու նստասենեակները չորրորդ յարկն են, որով սքանչելի տեսարան մը կը բացուի Մարմարայի վրայ:

Մարտ Կրասնեկու

Առաջարկուեցաւ որ Հաճըն երթամ: Ես ուրախ եմ այս պատեհութենէն: Դուք գիտէք՝ որքան փափաքած եմ Թուրքիոյ խորերը երթալ:

Վստահ եմ - ինչպէս տեսանք Չինաստանի համար - Թուրքիոյ համար ալ ճիշտ է, որ մեծ քաղաքներուն մէջ չէ որ մարդ շատ կը մօտենայ ժողովուրդին:

Մեծ գոհունակութիւն է մտածել որ Էտիթ Քոլտին²⁷ պիտի ընկերակցիմ: Հիմա որ ան վերադարձաւ Թուրքիա, Միս Վոնը²⁸ պիտի կարենայ իր ուշացած արձակուրդը առնել եւ կրնայ պատահիլ որ մենք երկուքս միակ ամերիկացիներն ըլլանք Հաճընի մէջ: Պէտք չէ՛ մտահոգուիլք ինձմով, որովհետեւ երբ երթանք՝ բրիտանացի պա-

²⁷ Օրդ. Էտիթ Քոլտ, երկար ժամանակ Մարաշի Կեդրոնական Թուրքիոյ Քոլէճը պաշտօնավարելէ ետք անցած է Հաճըն: Պահ մը զինք կը գտնենք Նիւ Եորք՝ 1915 Նոյեմբերի վերջերուն, հաւանաբար Ա. Աշխարհամարտին բերմամբ: Քոլտ կը ստանձնէ Հաճնոյ Աղջկանց Բարձրագոյն Վարժարանի պատասխանատուութիւնը 1919 Մարտի կէսերուն:

²⁸ Միս Վոն, 14 Սեպտեմբեր 1904ին Պոստոնէն ճամփայ կ'ելլէ փոխարինելու համար Միսիգ Քաֆինկը, որ 15ամեայ մանկավարժական շրջանէ մը ետք կը քաշուի Հաճնոյ Աղջկանց Բարձրագոյն Վարժարանի տեսչութեան պաշտօնէն: Հաճնոյ տեղահանութեան շրջանին, Վոն կը մնայ Հաճըն, փակուած վարժարանին մէջ: Չինք կը գտնենք դարձեալ Հաճնոյ Աղջկանց Բարձրագոյն Վարժարանի պատնէշին վրայ, Չինադադարէն ետք, մինչեւ որ Քոլտի, ապա եւ Քլարքի ժամանումով, 1919 Յունիսի կէսերուն ան կը մեկնի Հաճընէն:

հակներ պիտի ընկերակցին մեզի, որպեսզի ճամփան մեզ չնեղեն: Իսկ երբ քաղաք հասնինք՝ վախնալիք բան չի մնար:

Կոստանդնուպոլսոյ մէջ պայմանները շատ քառային են: Մարդիկ չեն գիտեր թէ դէպքերը ինչպէ՛ս պիտի զարգանան: Անգլիան իր ձեռքերը ամբողջութեամբ մխրճած է, իսկ Ֆրանսան չի թուիր համարժէք ըլլալ գործին, հայերը բացարձակ ազատութիւն ունին, նոյնիսկ՝ հայկական դրօշակ կրելու: Ասիկա կը կատողեցնէ թուրքերը, որոնք սակայն ուժ չունին միջամտելու: Ապահով չէ մութէն ետք դուրսերը մնալ՝ կրակոցներու մտահոգութեամբ: Իրիկունը, բազմիցս, ատրճանակի բազմաթիւ կրակոցներ լսեցի: Երէկ գիշեր քիչ քնացայ եւ կը լսէի պահակը որ քալելու ընթացքին իր բիրով կը զարնէր սալայատակին՝ յելուզակներուն առիթ տալով որ փախչին: Ժամը երեքին իր զարկերը զօրացան:

Մարտ տասնչորս

Անորոշութիւնը զոր կ'ապրիմ հիմա քանի չեն գիտեր թէ երբ եւ ուր կ'երթամ, մաշիչ է: Տակաւին չնշանակուեցայ Հաճըն, թէեւ դեռեւս կը յուսամ հոն երթալ: Միսիոնարներէն շատեր, ներառեալ Էտիթ Քոլտը, մէկ-երկու օրէն պիտի ուղղուին Ատանա, քանի որ Ատանան մեկնակէտն է Հաճընին: Կ'ենթադրեմ՝ կրնամ միանալ մեկնողներու խումբին: Բայց դժուար է մեկնողներու պատասխանատուներուն՝ բոլորս միաժամանակ եւ անմիջապէս տեղափոխել: Լաւ որ առաջին այցս չէ Կոստանդնուպոլիս, քանի որ ամէն մարդ այնքան զբաղած է որ քիչ առիթ կայ տեսարժան վայրեր այցելելու: Անցեալ օր երբ Այա Սոֆիա գացի, զարմացայ թուրք զինուորներ տեսնելով մզկիթին մօտակայ պալատներուն մէջ տեղաւորուած:

Հաճելի էր այս առտու առանձինն շրջիլ: Այնքան տեսարժան վայրեր կային՝ երբ աչքերս կոշտ սալայատակէն բարձրացնէի: Դէպի Պայպըլ Հաուս ամէնէն ուղիղ ճամփան Մեծ Պազարին մէջէն կ'անցնի: Մեծ Պազարը բազմաթիւ կրպակներով խոշոր կառոյց մըն է, ուր առուծախը կը ծաւալի թէ՛ խօսքով եւ թէ՛ շարժուծեով: Կը ջանամ չդպիլ մարդոց, բայց դժուար է՝ խճողումի պարագային:

Մարտի տասնվեց

Կիրակի մը ես անցաւ, իսկ ես դեռ հոս եմ, առանց մեկնելու որոշակի ծրագրի: Ատանայի խումբը գնաց: Քիչ մը վիատ կը զգամ: Կարծես 1919 Փետրուար 16էն Մարտ 16ը կեանքիս ամէնաերկար ամիսը ըլլայ: Եթէ տասներկու ամիսներ ասոր տասներկու անգամը երկար են, ապա ձիւնէ մազերով եւ դողդոջուն քայլերով գերեզմանիս ճամփան բռնած կ'ըլլամ տունդարձիս: Ոչ թէ ե՛ս ողորմելի վիճակի մէջ եմ, այլ՝ պարզապէս ժամանակը անվերջանալի կը թուի: Ճիշտ է: Իրաւունք չունիմ գանգատելու երբ մտածեմ այս դպրոցին մէջ գործող սիրելի կիներուն մասին եւ անդրադառնամ անոնց կրածին՝ պատերազմի այս տարիներուն: Անոնք շատ սրտոտ են: Նոր ստացուած սնտուկներուն առթիւ անոնց բերկրանքը սրտառուչ է: Հիմա քիչ մը կը դադրին կարկտնելէ, զոր յաճախ կ'ընէին:

Մարտի քսաներեք

Գեղեցիկ օր մը անցուցի Ռոպերթ Քոլէճին մէջ: Ճաշեցի Միսիզ Ըրովինին²⁹ հետ եւ մէկ երկու հեռաձայն ըրի: Ամէն մարդ շատ սիրալիր է: Հանրակառքով պտտեցայ Միս Պարքըրին³⁰ հետ, իսկ վերադարձը նաւով կատարեցինք՝ Վոսփորի վրայով: Կ'ակնկալէինք որ նաւը մէկ տեղ միայն կանգ առնէ, բայց ընդհակառակը՝ մենք մէկ ծովափէն միւսը կեցանք, նախ եւրոպական, յետոյ՝ ասիական: Ինչպէս Միս Պարքըրը ըսաւ՝ «մենք դեգերեցանք մինչեւ տուն»: Յիշատակելի պտոյտ մըն էր: Մէյ մը կեցանք մարմարեայ գեղեցկագոյն պալատի մը առջեւ, ուր Ապտիւ Ազիզը³¹

²⁹ Հաւանաբար առնչուած Պատուելի Հ. Ըրովինին, որ Թալասի միսիոնարական կայարանին պատասխանատուն էր:

³⁰ Հաւանաբար նկատի ունի Միս Հերիէթ Քոնսթընս Պարքըրը, որ Պորտի Կեդրոնական Թուրքիոյ միսիոնարութեան մաս կը կազմէր: Ան 3 Սեպտեմբեր 1920ին Նիւ Եորք կը հասնի Այնթապէն եւ Հոկտեմբեր 20ին կը պսակուի Կիլիքըրթ Օլթի հետ, Նիւ Եորք:

³¹ Սուլթան Ապտուլ Ազիզ (1830–1876), գաւազն սուլթան Մահմուտ Բ.ի, 32րդ սուլթանն էր Օսմանեան Կայսրութեան: Յաջորդելով իր եղբօր՝ Ապտուլ Մեճիտ Ա.ին, ան գահակալեց 25 Յունիս 1861էն մինչեւ 30 Մայիս 1876, երբ գահազրկուեցաւ եւ մահացած գտնուեցաւ Յունիս 6ին:

բնակած է եւ մահացած: Ուրիշ անգամ մը ափ ելանք մարմարեայ շինութեան մը առջեւ, որ սուլթանին ազգականներուն զբօսավայրն է եղած: Մայր մտնող արեւը կը փայլէր մզկիթներու գմբէթին երբ իվերջոյ նաւարկեցինք Ոսկեղջիւրի փառքի բոցի մը մէջ:

Երէկ թէյեցինք պարսիկ իշխանուհիի մը հետ, որ Միս Էլընին³² բարեկամն է: Ծնունդով զուիցերիացի է, բայց ամուսնանալով իշխանի հետ, մահմետական դարձած է, եւ թէեւ «ալաֆրանկա» կը հագուի տան մէջ՝ փողոցը չարշաֆ կը քաշէ վրան: Իշխանը Կովկաս կը գտնուի, ուր կը փորձէ բրիտանացիներուն աջակցութիւնը ապահովել՝ յօգուտ պարսկական գահի իր յաւակնութիւններուն: Իշխանուհին մեզ հիւրընկալեց բաց-վարդագոյն շրջագգեստով: Երիտասարդ է եւ անուշիկ: Իր պզտիկ դուստրը՝ Ֆերուք, պարիկի նմանող փոքրիկ մը, շատ խորամանկ էր ու ընկերային: Մայրը թրքերէն, յունարէն, ֆրանսերէն եւ անգլերէն գիտէ: Պահ մը երաժշտութիւն լսելէ ետք, թէյ ու համեղ փոքր կարկանդակներ հիւրասիրուեցանք եւ կարճ ժամանակ ետք ալ ցտեսութիւն ըսինք:

Աւելի ետք

Ճիշտ հիմա իմացանք որ նշանակումներու ցանկը հրապարակուած է եւ ես Հաճըն պիտի երթամ: Դեռ յայտնի չէ թէ ե՛րբ ճամփայ կ'ելլենք: Միսիզ Մարտընին կը թուի թէ Հաճըն չեմ հասնիր Մայիսէն առաջ, բայց՝ հասած կ'ըլլամ Ատանա: Զօրավար Ալենպին³³ Փարիզէն ճամփայ ելած է եւ մենք իր իրաւասութեան սահմաններուն մէջ պիտի ըլլանք: Տեղ չենք կրնար երթալ մինչեւ որ ինք չհա-

³² Միսիոնարուհի Էնի Էլըն, 1920 Մարտին Պոլիսէն անցած էր Պրուսա, իբրեւ տեղի աղիտեայներուն համար Նիւ Ինկլընտի Նպաստիցի գործադիր տնօրէն: Յունիսին ան Պրուսայէն կ'անցնի Անքարա եւ ամերիկացի միսիոնարներու կեանքի ապահովութեան մտահոգութեամբ հանդիպում կ'ունենայ Մուսթաֆա Քեմալի հետ: Վերջինս կ'ապահովցնէ անոնց անվտանգութիւնը (*The Missionary Herald*, 1920 Մարտ, էջ 148. նաեւ՝ Յուլիս, էջ 304:

³³ Էտմընտ Հենրի Ալենպի (1861-1936) բրիտանացի զօրավար, նշանաւոր՝ Ա. Աշխարհամարտին Եգիպտոս-Սինա-Պաղեստին ճակատին վրայ Օսմանեան Կայսրութեան դէմ իր մղած ճակատամարտերով:

աստէ որ բաւարար զինուորներ կան շրջանին համար: Խնդիրներ պատահած են Հալէպ³⁴, բայց մանրամասնութիւններ չունինք:

Մարտ քսանչորս

Հինգ հոգիով շատ հետաքրքրական պտոյտ մը ըրինք դէպի Էյուպ մզկիթը, որ Ոսկեղջիւրի վերջաւորութեան է: Մզկիթը մոլե-
ռանդութեան կեդրոն նկատուած է, թէւէ մարդիկ շատ բարեկա-
մական էին մեզի հանդէպ: Բնութեան ծաղկումի շրջանն է եւ չեմ
կրնար ըսել թէ որքան հիանալի էր մեծ, աղտոտ քաղաքէն հեռա-
նալն ու արուարձանի անուշ օդը շնչելը: Այս մզկիթը մեծապէս յար-
գուած է իբրեւ այն վայրը, ուր սուլթաններ գահ բարձրանալու
ատեն իրենց երդումը կու տան եւ սուրը կը ստանձնեն: Այդ արա-
րողութեան սենեակը այնքան սուրբ է որ պէտք չէ պղծուի քրիս-
տոնեաներու մուտքով: Բայց մեզի արտօնուեցաւ ծիկրակել՝ գեղեց-
կօրէն սալարկուած պատերէն նեղ բացուածքէ մը: Մօտակայ ուրիշ
մզկիթ մը մտանք՝ դռան մօտ մեզի տրամադրուած մուճակները մեր
ոտքին: Ուշադիր էինք որ հետեւինք Մսթըր Էմրիչին³⁵ տրուած
ուղղութիւններուն եւ չկենանք ծնրադրող որեւէ իսլամի առջեւ: Գե-
ղատես ծերուկ թուրք մը, ասարտած ըլլալով իր աղօթքները մօտե-
ցաւ մեզի՝ պտտցնելու համար: Ան *քալփի* մըն էր, դատաւոր մը, եւ
շատ ընկերային, պարսաւեց թուրք սպայ մը, որ իր դէմքը կը
ծամաճռէր մեզի: Մեր նոր բարեկամը ուրիշ մզկիթ մը տարաւ մեզ՝
Ապտիլ Համիտի նախորդին դամբարանը, որ գիշեր-ցերեկ կը
հսկուի պարող տերվիշներու կողմէ: Էյուպի մզկիթին ետին եւ դէպի
լեռան բարձունքին գեղատեսիլ գերեզմանատուն մը կայ: Մենք

³⁴ 18 Փետրուար 1919ին տեղի կ'ունենայ Հալէպի ջարդը, որուն ընթացքին կը սպանուին առնուազն 46 եւ կը վիրաւորուին 85 հայեր (Յակոբ Չոլաքեան, «Սուրիահայ Կրթական Գործին Կուսակցականացումը Սկիզբէն Մինչեւ 1946», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հոր. Խ., Պէյրութ, 2020, էջ 603. նաեւ՝ Յակոբ Սերոբեան, *Եղեռնի Յուշերս*, Իրատ. պատրաստեց՝ Անդրանիկ Տագսեան, Պէյրութ, Տպ. Ֆոթօկրափիլոսոփա Բազմայեան, 2005, էջ 193-99):

³⁵ Ռիչըրտ Սթենլի Էմրիչ 1905ի ամռան հասած էր Օսմանեան Կայսրութիւն, ուր ծառայած էր մինչեւ մահանալը՝ Հալէպի մէջ, թոքատապէ, 4 Մայիս 1919ին: Ան մինչեւ Ա. Աշխարհամարտ տնօրէնն էր Մարտինի արական բարձրագոյն վարժարանին:

անոր վերի կողմը մագլցեցանք՝ Ոսկեղջիւրին համայնապատկերը դիտելու համար: «Եւրոպայի անուշ ջուրեր»ը մեր աջին էին, մինչ հեռուն՝ Կոստանդնուպոլսոյ մինարէները կապոյտ երկինքը կը ծակոտէին:

Հազարաւոր սովահարներու մասին գաւառէն եկող լուրերը, զիս անհամբեր կը դարձնեն գործիս ուշացումին պատճառով: Այս երկրին, ինչպէս եւ Ռուսիոյ տխուր պայմաններուն մասին շատ բաներ իմացանք: Օտեսայի դատարկումը վերջին սարսափելի դէպքն է: Երէկ հանդիպեցայ ամերիկացիի մը, որ Օտեսայէն նոր հասած էր Կոստանդնուպոլիս: Ան ներկայացուցիչն է Շիքակոյի Մեքքոմիք Հարվըսթըրը ընկերութեան. քսանվեց տարի Ռուսաստան ապրեր է: Շաբաթ մը առաջ ինք ու իր կինը Օտեսայէն փախեր են «Նիքոլայ Բ.» շոգենաւով: Հիւանդագին էին այն մանրամասնութիւնները զորս կը պատմէր՝ պոլշեիկներուն Օտեսային տիրելուն եւ բնակչութեան սպանութեան մասին: Հազարաւոր ռուս գաղթականներ նաւահանգիստը գտնուող նաւերու վրան են. զանոնք կերակրելու խնդիրը դժուար է:

Անցեալ Ուրբաթ, Միս Պարքըրը մեզմէ չորս հոգի պարող տերվիշներուն տարաւ: Բախտաւոր էինք որ ազատ տեղեր գտանք մզկիթին վերնատունը, ուրկէ կրցանք վարը՝ զիրենք դիտել: Նախ՝ ծնրադրեցին իրենց երկար ու մուգ շրջազգեստով եւ երկար սրճագոյն ֆէսերով, մինչ տերվիշներու տարօրինակ նուագախումբ մը տարօրինակ գործիքներով նուագեց մեր կողքին՝ գոց, պզտիկ տեղի մը մէջ: Միառժամանակ ետք, ծնրադրած մարդիկը ոտքի ելան եւ հանելով իրենց շրջազգեստներն ու կօշիկները, դանդաղօրէն քալեցին մզկիթին շուրջը, ծիսական խոնարհութիւն մը ըրին երեք երէց տերվիշներու, որոնք ճերմակ փաթթոցներ ունէին իրենց ֆէսերուն շուրջ: Այս արարողութիւնը երեք անգամ կրկնուեցաւ, ապա անոնց ոլորապտոյտ պարը սկսաւ: Սկիզբը մէկը, յետոյ միւսը, ապա յաջորդաբար՝ մինչեւ որ բոլորն ալ օղակին մէջ մտան: Մարդիկը երկար փէշեր հագուած էին, որոնք կը տարածուէին, մինչ իրենք կը պտուտկուէին: Կանաչ պարողներէն մին երկար պտուտկուելէ ետք յանկարծ դադրեցաւ ու կեցաւ առանց նուագագոյն գլխապտոյտի: Ոլորապտոյտը կրկնուեցաւ երեք անգամ, բոլոր

պարողներուն կողմէ: Ասոր յաջորդեցին ծիսական երթ մը եւ աջահամբոյրը: Կատարողութիւնը տեսեց մէկուկէս ժամ եւ թէեւ օդը ծանր էր հօտերով ու փոշիով՝ ուրախ էի որ դիտեցի ասիկա:

Երէկ Մսթըր Հէյնզը, Հուվըրի ներքոյ Նիր Իսթ Ռիլիֆի ուսեստի վարիչը՝ թէյի եկաւ: Հետաքրքրական պատմութիւններ պատմեց Պուլկարիոյ Պորիս թագաւորէն: Վերջինս մտասելեռումն ունի իմաստնութեամբ կառավարելու: Հէյնզ պատմեց Ռումանիոյ թագաւորին հետ իր ճաշին մասին, ուր խօսեր էր ռուս դքսուհիի մը հետ, որ հանգուցեալ ցարին ազգականն էր: Անոր հայրը, երկու եղբայրներն ու երեք հօրեղբայրները սպանուած էին պոլշեիկներուն կողմէ միքանի ամսուան ընթացքին:

Ապրիլ փասներեք

Հագիւ թէ կը հաւատամ լաւ լուրերուն: Վաղը Ատանայի եւ Հալէպի խումբը ճամփայ կ'ելլէ: Այս յետմիջօրէին Վոսփորի Աղջկանց Ամերիկեան Գոլէճը գացի: Օդը կատարեալ էր, եւ գեղեցիկ պտոյտ մը եղաւ: Ծառերը ծաղկած էին, իսկ ճերմակ եւ ծիրանեգոյն բաղեղը պատերու եւ սեմերու վրայ մագլցած է: Պէտք է իրերս մէկտեղեմ, որովհետեւ վաղը առտու կանուխ ճամփայ կ'ելլենք դէպի Տերինճէ, ուր վերջին կարգադրութիւններէ ետք կը լծուինք հնգօրեայ ճամփորդութեան՝ դէպի Ատանա:

Ապրիլ քսանմէկ

Սկսիմ պատմել ձեզի մեր ճամփորդութեան մասին: Հրահանգուեցաւ որ դադար առնենք Փրինսիփոյի մէջ: Երբ կը մօտենայինք կղզիին՝ բրիտանական հաճանաւ մը մեզի նշան ըրաւ թէ մեքենական խանգարում ունի: Այդ նաւէն մեր նաւը ընդունեցինք դանիացի նախարար մը, իր *ղաւսի*ն ընկերակցութեամբ: *Ղաւսը* ամեհի տեսքով էակ մըն էր: Զինք հասցուցինք ոչ-շատ հեռու խարսխած բրիտանական յանդուգն «Մարլպորո»ն, ուր դանիացի պաշտօնատարը ընդունուեցաւ պաշտօնական արարողութեամբ:

Նախարարին այցին պատճառը Եալթայէն գաղթական ելած Ռուսիոյ ցարուհիին ներկայութիւնն էր: Մեծ Դուքս Միքայէլը զանազան ուրիշ դուքսերու եւ դքսուհիներու հետ, ինչպէս եւ ազնուական

ընտանիքներու անդամներ - բոլորն ալ փախած միայն իրենց կեանքը փրկելով - նաւուն վրան էին: Մենք Փրինսիփօ իջանք եւ ճաշեցինք սիրուն պարտէզի մը մէջ՝ ջուրերուն վրայ կառուցուած տան մը կողքին: Ատիկա նախասիրած վայրը եղած է Անգլիոյ Էտուրրո Ը.ին...:

Մեր բնակավայրը Տերինճէի մէջ հինգերորդ յարկն էր հսկայ շտեմարանի մը, զոր գերմանացիք կառուցած էին՝ Պերլին-Պաղտատ երկաթուղիի այս կայարանի տուներուն համար: Ամբողջ շրջանը զինուորական օրէնքով կը գործէ: Նպաստիցի բոլոր աշխատողները, նոյնիսկ անոնք որոնք ժամանակաւոր աշխատանքի են, կարգաւորուած ժամեր եւ պարտականութիւններ ունին: Այստեղ մեծագոյն գործը Նպաստից ապրանքները ստուգել եւ դասաւորելն է: Քանի մեր խումբը միայն երկու օրուայ համար տեղ ապահոված էր՝ մեր ժամանակը լեցուցինք մեր ճամփորդութեան եւ կայքերուն անհրաժեշտ պահանջները ապահովելով: Տերինճէն կը գտնուի Մարմարայի երկար բազուկի մը վերջաւորութեան, ուր գեղեցիկ լեռներ կը ցցուին ջուրին մէջէն:

Մեզմէ անոնք որոնք երկրին խորերը պիտի ուղղուին, օրուան ընթացքին կը զբաղին մեր ճամփորդական մեքենաները մաքրելով եւ մեր հնգօրեայ ճամփորդութիւնը հանգստաւէտ դարձնելու պայմաններ ստեղծելով: Վեց մեքենայ ունինք մեր տրամադրութեան տակ: Չորսը մեր, մէկը՝ ապրանքներուն փոխադրութեան, իսկ վեցերորդը մեր խոհանոցն է: Առաջին մեքենան սքանչելի է շրջակայքը դիտելու համար: Փոխնիփոխ զայն կը նստինք: Երեսուն հոգի ենք. հետերնիս երկու հայ խոհարար ունինք: Փոխադրակառքերու երկար շարանի մը մէկ մասն ենք, հինգ անգլիացիներ կը պահակեն մեզի:

Տերինճէն Էրէյլի³⁶ բոլոր կայարաններուն մէջ անգլիացի զինուորներ տեսանք: Յետոյ, նուազ քան հարիւր մղոն անդին, ուր սահմանները վեճի նիւթ են, թուրք պահակներ տեսանք: Իսկ հիմա, Պոզանթի մէջ, ուր միքանի ժամու համար դադար առած ենք,

³⁶ Հեղինակուիին շփոթած է. գնացքը նախ կը հասնի Գոնիա, ապա՝ Էրէյլի:

հինտուները - իրենց տպաւորիչ խաքի փաթօններով եւ կոկիկ տարազներով - պաշտօնի վրայ են:

Ձեզի գաղափար մը տալու համար թէ ինչպէ՛ս կ'ապրինք՝ նկարագրեմ մեր մեքենան, ուր վեց կին ենք: Երկաթեայ անկողիներ ունինք, սաւաններ, բարձեր, ծածկոցներ, երկու աթոռ, երեք լուսցաման, անձեռոցներ, երկու դոյլ եւ կարճ աստիճան մը՝ մեքենայ մտնել-ելլելու համար: Չորս պատուհանները պզտիկ քառակուսի բացուածքներ են, երկաթեայ ձողերով: Ճաշերը կը պատրաստուին խոհանոցային մեքենային մէջ: Պիտոյքները եւ ճաշերը մեզի կը փոխանցուին կանոնաւորաբար՝ կայարանները կենալու պահերուն: Յատկանշականօրէն հանգստաւէտ ճամփորդութիւն մը կ'ունենանք: Օրուան ընթացքին մեքենային լայն կողմերու երկու դռները բաց կը մնան, մինչ մենք՝ նստած աթոռներուն, անկողիներուն եւ սնտուկներուն վրայ, կ'ապրինք խնճոյքը դիտելու դուրսի սքանչելի համայնապատկերը, որ կը տարածուի մեր առջեւ իր յարափոփոխ գեղեցկութեամբ:

Գաղափար չունէի որ Թուրքիոյ մէջ նման սքանչելի տեսարաններ կան: Կարծեմ Չինաստանը մէջս միշտ իր թովչանքը պիտի պահէ: Բայց ոչ մէկ բան պիտի գերազանցէ մարդոց հագուստներուն գոյներուն ճոխութիւնն ու Թուրքիոյ մէջ այս շաբաթ տեսածս քաղաքներուն եւ գիւղերուն տեսարժանութիւնը: Անշուշտ պէտք է ըսել որ հիմա գիւղական բնութիւնը կը դիտեմ իր ամէնէն աղուոր եղանակին: Դաշտերը, որ յետոյ պիտի սրճագունին եւ դառնան պարզ, հիմա թարմ են, կանաչաւուն ցողուններով: Ծաղիկները ամէնուրեք ծաղկած են: Երկնային ծաղկատեսակներ՝ մեծածաւալ, կապոյտ շերտերով, կարծես երկնակամարի ցուացումն ըլլան: Բոսորագոյն խաշխաշները կը ճօճին իրենց թոյլ ցողուններուն վրայ: Ինձի անձանօթ ծաղիկներու տեսակներու հոյլեր կան հոս, որոնք հոգիս կը զուարթացնեն իրենց գոյներով:

Շուշանները ծաղկած են, իսկ վարդենիները իրենց փառքը կ'ապրին: Ոչխարի եւ այծի հօտեր կ'արածին լեռնափէշերուն, մերթընդմերթ ալ ուղտերու շարան մը կ'անցնինք: Մայրամուտին երկու կիներ տեսանք, որոնք մօտակայ դաշտէն կ'անցնէին:

Անոնցմէ մին նարնջագոյն, թափուն զգեստ մը հագեր էր, միւսը՝ կարմիր, բոցագոյն զգեստ մը:

Կիրակի օրը Գոնիա դադար առինք:

Բախտաւոր էի որ հրաւիրուեցայ օրս Ամերիկեան հիւանդանոցը անցընելու: Գոնիան Պօղոս Առաքեալի Իկոնիումն է, որ յետոյ Թուրքիոյ մայրաքաղաք դարձաւ:

Միս Քուշմանը³⁷ հոն մնացեր էր պատերազմի ամբողջ տետողութեան եւ, որովհետեւ այլ երկիրներու հետ յարաբերութիւնները խզուած էին, անպաշտօն կերպով ստանձներ էր մինչեւ տասներեք երկիրներու հիւպատոսի պաշտօնները: Ան ահաւոր փորձառութիւն շահեր է այդ տարիներուն եւ ազնուօրէն միքանին հետս բաժնեկցեցաւ: Զատիկ էր եւ առտուն երբ հանդիպեցայ հիւանդապահուհիներուն, ինծի ըսին՝ «Տէրը յարութիւն առաւ»: Թելադրուած էի որ պատասխանեմ՝ «Ճշմարիտ է, ան յարութիւն առաւ»:

Ապրիլ քսանհինգ

Ներկայ միջավայրիս մասին խօսելէ առաջ, պէտք է պատմեմ ձեզի Գոնիայէն ետք ճամփորդութեանս մասին: Ուշ երեկոյեան Պոզանթի հասանք: Մնացինք գրեթէ մինչեւ յաջորդ կէսօր: Հոն տեղակայուած հինտունները լաւ, ուղիղ մարդիկ են եւ կատարելապէս կարգապահ: Պոզանթին կարելոր կայան մըն է, որովհետեւ կը գտնուի գերմաններուն կողմէ կառուցուած երկար փապուղիին ծայրը: Ճիշտ զինադադարին աւարտած են անոր կառուցումը եւ բրիտանացիք առաջինը զայն գործածեր են: Մեր կարաւանը երկար էր. մեր եօթ փոխադրակառքերուն կողքին կային տասնութ ուրիշներ եւս: Այս բոլորը երկու մեքենաներով կը քաշուին: Պերլինէն Պաղտատ ճամփու այս գլանը մաշելու վրայ է: Մեքենաները միշտ տեղի կու տային եւ մենք կը ստիպուէինք երկար դադարներ

³⁷ Միս Քուշման կը պաշտօնավարէր Գոնիայի Պորտի միսիոնարական կեդրոնին մէջ: Ան Ա. Աշխարհամարտի ամբողջ տետողութեան մնաց իր պաշտօնին վրայ, Գոնիա: Իդէպ, Ա. Աշխարհամարտի տարիներուն, իրենց պաշտօնին գլուխը մնացին միսիոնարներ Միս Կրեֆըմ՝ Սվագի, Միսիսզ Հրիսթի՝ Տարսոնի, Միս Վոն՝ Հաճընի եւ Միս Ճէյքըպսըն՝ Խարբերդի մէջ, իսկ Մարտինի մէջ՝ Միսիզ եւ Միս Տիուրի ու Միս Կրաֆ (*Missionary Herald*, Սեպտեմբեր 1919, էջ 361):

առնել, որպէսզի մեքենաները նորոգեն: Լեռնային կիրճերով սքան-
չելի ճամփորդութենէ մը ետք, Ատանայի դաշտը հասանք եւ կէսօրէ
ետք ժամը չորսին մտանք Ատանա: Ես պիտի մնամ Տոքթ. եւ Տիկ.
Չէյմպըրզներուն³⁸ տունը եւ պիտի ճաշեմ դարոցը, Միս Մէյրի
Ուէպին³⁹ հետ: Ամէն մարդ շատ ազնիւ է եւ հոգաճու որ հանգիստ
ընեն եւ կ'օգնեն որ Հաճըն հասնիմ: Քիչ մը ուշացում պիտի ըլլայ
մինչեւ որ մեր խումբը առաջնորդող մարդը գտնուի: Միս Ուէպը
հետս պիտի երթայ մինչեւ Միս, որ դաշտավայրին ծայրն է: Հոն
Միս Վոնին պիտի հանդիպիմ: Հետս պիտի գան երիտասարդ յոյն
կին մը՝ Ալիթէան եւ Մարի Քեհէեանը, հայ մը որ երաժշտութիւն
պիտի դասաւանդէ դարոցը:

Նամակ ստացայ Էտիթէն՝ Հաճընէն, թէ ակնդէտ զիս կը սպասէ:
Միս Վոնը Ամերիկա պիտի մեկնի անմիջապէս որ տեղաւորուիմ:

Ապրիլ քսանին

Երկու օր առաջ, Կիրակի, Տոքթ. Հասսը⁴⁰ ընթրիքին ըսաւ որ՝
«լաւ կ'ըլլայ որ գիտնաս թէ ի՛նչ պիտի պատահի, որպէսզի երբ
խառնակուի՝ չտագնապիս: Վաղը առտու ժամը վեցին հնդիկ զին-

³⁸ Պատուելի, Տոքթ. Ուիլիըմ Նիզպիթ Չէյմպըրզ, Պորտի հանրաճանօթ միսիո-
նար, որ առաքելութեան լծուած է նախ Էրզրումի մէջ, ապա անցած Ատանա, ուր
նախագահած Միջագային Նպաստից Յանձնաժողովը՝ Կիլիկիոյ 1909ի աղէ-
տէն ետք: Իր ասպարէզային կենսագործունէութեան մէկ մասը տուած է յուշագ-
րական հատորի մը մէջ (William Nesbitt Chambers, *Yoljuluk, Random Thoughts on
a Life in Imperial Turkey*, London, Simpkin Marshall, Limited, 1928):

³⁹ Մէյրի (1855–1938) եւ Էլիզապէթ Ուէպ (1860–1949)՝ իրենց կեանքը հայութեան
նուիրած միսիոնարուհիներ: Էլիզապէթ՝ 1886էն մինչեւ 1922 Ատանայի մէջ ծա-
ւալած է կրթական-որբանոցային գործունէութիւն, իսկ 1922–30՝ հաստատուած
Պէյրուօ, ուր քրոջ՝ Մէյրիի հետ հիմնած է Հայուհեաց Ամերիկեան Բարձրագոյն
Վարժարանը, որուն շէնքը ներկայիս Հայկազեան Համալսարանի ուսանողա-
կան գործունէութեանց կառոյցն է: Աւելի ետք, 1936ին անոնք հիմնած են Թրա-
տի Հայ Աւետ. Ընկերային Ծառայութեան Կեդրոնն ու Դպրոցը: Մէյրի՝ 1890էն
մինչեւ 1928 - փոքր ընդմիջումներով - կը գործէ Ատանայի մէջ, ապա կ'անցնի
Պէյրուօ: 1920ին քրոյերը՝ Ատանա գտնուելով, տեղի հայութեան հետ ենթա-
րկուած են երկամսեայ պաշարման (*Missionary Herald*, Սեպտեմբեր 1920, էջ
423-24):

⁴⁰ Ամերիկացի բժիշկ Սիրիլ Հասս (Dr. Cyril Haas) ծառայած է շրջանին մէջ 17
տարիներ՝ Ա. Աշխարհամարտէն առաջ, անոր ընթացքին եւ այնուհետեւ:

ուորներ քաղաքը պիտի պաշարեն եւ հրաման պիտի արձակուի տեղացիներուն որ իրենց ունեցած բոլոր զէնքերը բերեն կառավարական տուն: Հայերն ու թուրքերը զէնք ունին եւ եթէ հրամանէն քսանչորս ժամ ետք բաւարար քանակութեամբ զէնքեր չյանձնուին ու չհաստատուի որ հրահանգին հնազանդած են՝ տուն-տուն խուզարկութիւն պիտի կատարուի: Որեւէ անձի մօտ որ զէնք գտնուի՝ պիտի սպանուի»:

Կրնաք երեւակայել որ ասիկա խրտչեցուցիչ է: Քանի որ անգլիացիք երբ բան մը ըսեն՝ իրապէ՛ս կ'ըսեն: Երկուշաբթին լուռ էր, բայց ժողովուրդին ընդառաջումը բաւարար չէր, ուստի խուզարկութիւնը սկսաւ Երեքշաբթի: Երբ ժամը մէկին ընթրիքը կ'աւարտէինք, պոռչտուք լսեցինք փողոցէն, ճիշտ մեր պատուհանին տակը եւ տեսանք որ բրիտանացի խումբ մը զինուորներ, հրազէնի մը օգնութեամբ լայնածիր որսորդութեան ելած են: Քիչ ետք մօտակայ տունէ մը ռումբեր եւ մաուզեր ու երկու մարթիններ յայտնաբերուեցան, իսկ զանոնք թաքցնողը տեղնուտեղը սպանուեցաւ:

Մայիս տասնմէկ

Իվերջոյ Հաճըն եմ: Ըսեմ որ ասիկա Հաճըն է: Կիլիկիա, եւ ոչ թէ Թուրքիա: Որոշապէս չէի կարծեր որ Ատանայէն Հաճըն ութ օր պիտի տեւէ: Բայց տեւեց:

Տոքթ. Չէյմպըրըը երկու *արապան*եր վարձեր էր՝ սնտուկներն ու արկղերը փոխադրելու, իսկ մենք *Եայլը*ի մը նստած կը ճամփորդէինք: *Եայլըն* ծածկոցաւոր կառք մըն է, որ մղաններ ունի՝ ցնցումները նուազեցնելու:

Ատանայէն դուրս ճամփորդելու մեր արտօնութիւնը ապահովուած էր. կառավարութիւնը մեզի հինգ ոստիկան-պահակ տրամադրած էր եւ մենք կ'ակնկալէինք որ ճամփայ կ'ելլենք Ուրբաթ առտու ժամը վեցին: Եօթն էր երբ *արապան*երը բռնուեցան: Իսկ կառքը որ եկաւ, պարզուեցաւ որ սայլ մըն էր ետեւի նստարանով մը. առջեւի նստարանը հինգ *ինչ* լայնք ունէր: Առաջարկեցի երկրորդ սայլ մըն ալ վարձել, բայց կարծես ոչ ոք ատիկա կարելի համարեց: Հետեւաբար, Միս Ուէպն ու ես նստանք սայլին ետեւի նստարանը ու սկսանք մեր երկօրեայ ճամփորդութիւնը՝ դէպի Սիս:

Ալիթեան առջեւի նեղ նստարանին վրան էր, իսկ Մարին՝ ձիավարին կողքին: Երանի տեսնէիք մեզ՝ թէ ինչպէ՛ս քաղաքէն ելանք պահակներուն ընկերակցութեամբ: Անոնցմէ իւրաքանչիւրը զինուած էր, սուին ունէր եւ երեք շարք փամփշտակալ: Մէջքի եռաշարք փամփշտակալէն բացի, անոնցմէ մին, խաչաձեւ փամփշտակալ մըն ալ ունէր իր կուրծքին:

Դէպի Սիս՝ մեր ճանապարհորդութեան առաջին բաժինը մասնաւոր հետաքրքրութիւն չունէր, քանի որ շրջակայքը հարթ, իսկ ճամփան չափազանց աղքատիկ էր: Մերթընդմերթ իրերը կապկպելու համար կենալէ բացի, մեր ճամփորդութիւնը անարկած անցաւ մինչեւ ուշ երեկոյ, երբ անհիւներէն մէկը փրթաւ: Կը մթննար. պահ մը թուեցաւ թէ վիճակը մտահոգիչ պիտի դառնայ, բայց մարդիկը կերպով մը շինեցին ու մենք յաջողեցանք հասնիլ թրքական պզտիկ գիւղ մը, ուր գիշերեցինք: Աւետիս էֆենտին, մեր սայլապանը, բարեկամն էր գիւղապետին, որ մեզ իր տունը տարաւ: Մենք սրտագին ողջունուեցանք եւ առաջնորդուեցանք տախտակամած մը որ գահաւորակ կը կոչուի, ուր տաք եղանակին մարդիկ կը քնանան: Թրքական սուրճ սպասարկուեցաւ երկու կիներէն մէկուն կողմէ: Երկու կիներն ու երեխաները վերէն վար մեզ քննեցին ու անձաձուկ ակնարկներ ըրին մեր հագուստին ու կերպարանքին մասին:

Կանայք բաւական նկատելի էին իրենց ճակատին շարուած ոսկեդրամներով, գունաւոր օղերով եւ մազերուն մէջ ցցուած ուլունքներով: Անոնց հագուստն ալ հետաքրքրական էր. մեծ, լայն տաբատներ, լայն մոխրաւուն գօտիներով: Տունը շինուած էր արեւի տակ չորցուած ցեխէ աղիւսներով. հիւրերու վերապահուած սենեակը՝ ուր առաջնորդուեցանք, յատակին պզտիկ գորգեր ունէր, բայց կահոյք չկար: Մենք շտապանքով մեր ճաշը կերանք՝ վախնալով որ տնեցիներուն հետ ուտելու կը ստիպուինք: Միս Ուէպն ու ես մեր ճամփորդական քնապարկերն ունէինք, իսկ աղջիկները՝ իրենց *յիւթէկ*ները: Գիշերուան կարգադրութիւնները կարելի արագութեամբ ըրինք ու հանգստացանք, արդարօրէն ակնկալելով կազդուրող քուն մը:

Սակայն ափսոս մեր յոյսերուն: Հազիւ ընկողմանած էի՝ երբ բան մը ինկաւ ձեռքիս: Կանթեղս վառեցի եւ հաճելիօրէն յայտնաբերեցի որ թռչունի մը բոյնը կար գլխավերեւ: Անկողինս տեղափոխեցի եւ փորձեցի քնանալ: Բայց, բազմաթիւ չիրաւիրուած հիւրեր եկան: Այլ խօսքով՝ ոջիլներ եւ մժեղներ: Տառապեցայ: Այս ամբողջին վրայ աւելցան յանկարծ առաստաղի ծակտիկներէն վար հոսող ջրորի կաթիլները:

Բարեբախտաբար, անձրեւը շուտ դադրեցաւ, բայց գիշերը դժուար թէ հանգստացուցիչ կարելի էր համարել: Չորսուկէսին ոտքի էինք եւ ժամը վեցին արդէն ճամփայ ելած էինք: Յերեկը ճամփան քիչ մը անձրեւեց: Երեկոյեան ժամը հինգին Միս մտանք: Հին, աւերակ դղեակներ՝ լեռնագագաթներուն վրայ: Ատոնք կը վկայէին Հայաստանի անցեալի մեծութիւնը: Ամէնուրեք ձիւնագագաթ լեռներ էին: Տոքթ. Չէյմպըրը հեռագրեր էր Հաճըն թէ Միս պիտի հասնէի Շաբաթ օր, եւ իմացայ որ պատասխան ստացեր էր Ատանայէն մեր ելլելէն առաջ: Գացինք դպրոցաշէնքը, որ վերջերս թուրքերուն կողմէ վերադարձուեր էր հայերուն: Օգտագործեցինք դպրոցաշէնքի սենեակներ, որոնք բացարձակապէս ազատ էին ներխուժողներէ: Աւետիսը, որ հաճընցի մըն է եւ աքսորէն նոր կը վերադառնայ, հեռագրեց Միս Վոնին եւ իմացաւ թէ վերջինս որեւէ լուր չէ ստացած եւ թէ՛ ճամփայ պիտի ելլէ Երկուշաբթի առտու: Արագ ձիավարելով ան մեզի հասաւ Երեքշաբթի կէսօրին: Մինչ այդ, քիչ մը անհանգստացայ ու կարելի չեղաւ մեր ճամփորդութեան վերջին հանգրուանին ձեռնարկել Հինգշաբթիէն առաջ:

Սիսէն անդին սայլերը անօգտագործելի են: Հետեւաբար պէտք է ձի եւ ջորի ապահովել: Միս Վոնը իր նոր ձին՝ Վիքթորը բերեր էր ինձի համար, որ ձիավարեմ: Կազմ ու պատրաստ էինք առաւօտեան լոյսէն առաջ, քանի որ անասունները բեռնները տաղտկալի գործ է: Սնտուկներն ու ամէն ինչ պէտք է ամրօրէն կապուին թամբերուն: Յոյս ունէինք ուղտեր ձեռք բերել, բայց այդ պահուն չկային: Մինչ մեր թափօրը քաղաքէն կը հեռանար, *մութասարէֆը* ձիավարելով մեզի ընկերակցեցաւ մղոն մը: Թուրք էր ան եւ կ'ուզէր մեծարած ըլլալ մեզ: Միս Վոնը՝ ուշադիր որ շատ չրգոնիմ, պնդեց որ շատ երկար չճամփորդենք առանց դադարի: Մեր կարաւանը

վերածուեր էր ծիսահանդէսի, քանի անոր միացեր էին բազմաթիւ հայ տղամարդիկ՝ աւելի ապահով զգալով խումբով ճամփորդելը: Ժամը երկուքին դադարի հրահանգը տրուեցաւ. ընթերցինք ու հանգստացանք սիրուն, կանաչ մարգագետնի մը վրայ, գետակի եզրին:

Քանի որ յաջորդ օր առտու ժամը չորսին ճամփայ ելլել որոշեցինք՝ մեր վրանը լարեցինք այս հաճելի վայրին մէջ եւ աւելի ջառաջացանք այդ օր: Հայերէն մէկը մեկնեցաւ ու կէս ժամ չանցած՝ ողջ ոչխարով մը վերադարձաւ, զոր դրած էր իր թամբին: Ան ըսաւ թէ յայտներ էր հօտին տիրոջ որ իրենց խումբին մէջ բրիտանացի նշանաւոր զօրավարի մը դուստրը կայ եւ թէ՛ պատեհ էր որ ոչխար մորթուի անոր ի պատիւ: Մենք շոյեցինք ոչխարին գլուխը, որմէ ետք անմիջապէս ոչխարը քիչ մը անդին տարուեցաւ՝ մորթուելու եւ իր դեռ տաքուկ միսը կրակին վրայ կախուելով եփուելու: Թէէ տրեւոյթը չէր առինքներ զիս՝ մօտեցայ եւ կտոր մը համտեսեցի՝ փորձառութիւնը ունեցած ըլլալու համար: Մարդիկը կրակը վառած պահեցին ամբողջ գիշեր եւ փորձ ալ չըրին քնանալու, այնպէս որ դուրսի պողոտայէն ու երգերէն, մենք - վրանին մէջ - լաւ քուն չքաշեցինք:

Լուսածագէն առաջ ելանք, որպէսզի հանգստացող կենդանիները բերուին ու բեռցուին: Սիրուն էր դիտել առաւօտեան լոյսին գաղտագողի մուտքը հովիտ: Ոչխարի ու այծի հօտեր եկան գետակէն ջուր խմելու եւ յետոյ՝ հովիներուն կանչերով ուղղուելով, դարձան դէպի արահետը ու մէկ գիծ կազմելով լռութեամբ յառաջացան: Տարբեր հօտերը չխառնուեցան իրարու: Իւրաքանչիւր ոչխար գիտէր իր հովիւը եւ՝ փոխադարձաբար: Հարիւրներով եկան ու անցան մեզի. ես անոնց հաշիւը կորսնցուցի՝ մինչ կը սպասէինք որ անցնին, որպէսզի կարենայինք ճամփայ ելլել: Կէսօրէ ետք հեղեղանման անձրեւեց. դժուարութեամբ լարեցինք մեր վրանն ու մասամբ չորցուցինք մեզ եւ մեր իրերը: Յաջորդ առտու երկինքը ցած էր մինչ արեւը կը պայքարէր դուրս գալու. ժամը իննին բնութիւնը ժպտեցաւ:

Սիսէն ելլելէ կարճ ժամանակ ետք հասանք Տաւրոսի ստորոտը: Ծամփուն մնացեալ հատուածը սքանչելիօրէն գեղեցիկ էր: Այս երրորդ օրը լեռնային կիրճէ մը անցանք, որ Ալժիրի մօտի Կորժ Տը

Լա Շիֆան յիշեցուց: Վարը, մեր արահետէն ներքեւ, Սիհուն գետի վարար ջուրերը կը պարէին: Գոհ էի որ Վիքթորը լեռնային ձի է, մանաւանդ երբ ճամփան վերածուեցաւ ժայռերէ կախուած քարքարոտ կածանի: Երբ Հաճըն հասնելու երեք մղոն մնացած էր, դադար առինք մամռոտ աղբիւրի մը մօտ հանգչելու: Հազիւ բեռնաթափեր էինք՝ ձիավար երեք մարդիկ խթաններով կեցուցին իրենց ձիերուն փրփրոտ ընթացքը: Ըստ իս, այս արագութեան ցուցադրութիւնը շատ հաճելի է արեւելքցիին: Բայց այս արագութիւնը չենք տեսներ ասոնց անձնական գործունէութեան ընթացքին: Անոնք մեզ դիմաւորելու համար ճամփան դրուած միքանի հիւրընկալ խմբակներէն մին էին: Յարութիւն էֆենտի⁴¹, որ *քայմաքամ* է (քաղաքապետը), ոստիկանապետը եւ այլ պաշտօնատար մը կը գոյացնէին առաջին այս խումբը: Բարեւտութեւ եւ բազում քաղցրախօսութենէ ետք, լիցքաւորուած, այս երեքով ուղղուեցանք քաղաք:

Պատմեմ ձեզի խնդալիք դէպք մը, որ ճամփան պատահեցաւ: Յարութիւն էֆենտի, միսիոնարներուն հաւատարիմ բարեկամն է. պատերազմին ընթացքին բազմիցս գացեր է համալիրը՝ Միս Վոնը տեսնելու... Ասիկա Հաճընէն դուրս իր առաջին ճամփորդութիւնն էր չորս տարիէ իվեր: Համալիրին բարեկամները գիտեն որ մայրիկա Պորտին նախագահուիին է եւ ահա՝ զուարճալի արտայայտութիւնը *քայմաքամին*՝ «Միս Քլարքը դուստրն է Պորտի Ամերիկայի նախագահին, եւ իրեն կը տրուի նոյն այն յարգանքը զոր կը տրուի նախագահ Ուիլսոնի դստեր: Ան լաւ օրիորդ մըն է»: Հազիւ զսպեցի իմ ժպիտս երբ ասիկա ինծի թարգմանուեցաւ: Բայց մտածեցի որ ասիկա կրնայ օգտակար ըլլալ գործին եւ ափսոս պիտի ըլլար չօգտուիլ իր այս միտքէն:

Հիմա մեր տեսադաշտին մէջն է Հաճընը, որ շատ պատկերաւոր դիրքով՝ լեռան լանջին է, մինչ լեռները կը բարձրանան իրմէ վեր:

⁴¹ Հեղինակուիին գրած է Հիարաթուն: Թիւրիմացութիւն մը կայ, որովհետեւ քաղաքապետը այդ օրերուն Արմենակ Քիրեճեանն էր: Չինադադարէն ետք, Ապրիլ 27ին, Հաճոյ քաղաքապետ կը նշանակուի Արմենակ Քիրեճեան: 19 Փետրուար 1920ին ան կը փոխարինուի Կարապետ Չալեանով: Հեղինակուիին քաղաքապետն ու քայմաքամը փոխարինաբար կ'օգտագործէ:

Այնտեղ ուրկէ առաջին հայեացքը նետեցինք քաղաքին վրայ, աղջիկներու խումբ մը տեսանք՝ ճամփուն երկու կողմը: Անոնք կանաչ ճիւղեր ունէին իրենց ձեռքերուն: Մինչ մենք ձիերով կը յառաջանայինք՝ անոնք բարիգալուստի երգ մը երգեցին եւ վարդեր նետեցին մեր ճամփուն: Ասոնք Հաճըն Հոմի⁴² աղջիկներն են: Պէտք է խոստովանիմ որ արցունքոտեցան թարթիչներս, մինչ անոնց դէպի մեզ բարձրացած դէմքերուն կը նայէի: Անոնք ետելը մնացին մինչ մենք յառաջացանք միքանի քայլ, ուրիշ խումբի մը առջեւ հայ ներկայացուցիչները իրենց բարիգալուստի խօսքը արտասանեցին: Մեր թափօրը - երկարած արդէն - շարունակեց ճամփան առանց կանգ առնելու մինչեւ հասանք հսկայ, կախուած ժայռի մը: Ժայռին վրայ շուրջ տաս-տասներկու տեղացի պարմաններ իրենց տեղական երաժշտական գործիքներով բարի գալուստ նուագեցին: Երբ մօտեցանք Հաճնոյ՝ հետաքրքրասէրներէն շատեր ճամփան շարուած էին: Անցանք փոքրիկ քարէ կամուրջը եւ մտանք քաղաք: Երբ կառավարական շէնքէն կ'անցնէինք՝ շարքի կեցած ոստիկանները բարեւի կեցան: Հուսկ, պարմանուհիները եւ խումբ մը պարմաններ մեզմէ առաջ անցան, եւ մեր խումբը սկսաւ գլխաւորուիլ տղեկով մը, որ կը քալէր փոքր, արմատախլած ծառ մը բարձր բռնած: Սեմերէն ու տանիքներէն կանայք մեզ կը դիտէին: Ես ինձի մտածեցի՝ «ան որ տան վերեւն է վար թող չիջնէ», որովհետեւ մինչ կը յառաջանայինք նեղ ու աղտոտ փողոցներէն վեր ու աւելի վեր, աւելի կը խճողուէինք յաւելեալ թիւով քաղաքացիներով:

Հաճընը սքանչելիօրէն տեղադրուած է ծովու մակերեսէն երեք-հազար հինգհարիւր ոտք բարձրութեան վրայ, մինչ զինք շրջապատող լեռները յաւելեալ հազար ոտք մըն ալ կը բարձրանան: Բայց քաղաքը աննկարագրելիօրէն ողորմելի վիճակի մէջ է: 1915ին երբ թուրքերը տեղի բնակչութեան գլխաւոր մասը կազմող 25,000 հայութիւնը գործնապէս տեղահանեցին, փորձեցին քաղաքը հրդե-

⁴² 1880ականներէն հիմնուած միսիոնարական Աղջկանց Բարձրագոյն Վարժարան, ժողովրդականօրէն ճանչցուած իբրեւ Քրտէտի կամ Հաճըն Հոմի դպրոց (Յակոբ Պօղոսեան, *Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը, եւ Շրջակայ Գօզան-Տաղի Հայ Գիւղերը*, Հրատ.՝ Հաճնոյ Հայրենակցական Վերաշինաց Միութեան, Լոս Անճելըս, Տպ. Պոզաճեան, 1942, էջ 462):

հով կործանել: Այնքան լաւ յաջողեցան որ 4500 տուններէն միայն 500ը կանգուն է ներկայիս: Աւերակ է ամէն կողմ:

Անցանք քաղաքին մէջէն ոլորապտոյտ ճամփով մը, հասնելու համար համալիր, որ քաղաքին սահմաններէն քառորդ մղոն մը դուրս է: Հոն հասանք ճամփայով մը, որ ուղղակի լեռան կողէն բացուած է: Երբ կամուրջը հասանք, որ այս ճամփուն սկիզբին է, փոքրեր ողջունեցին մեզ: Ասոնք չէին եկած մեզ դիմաւորելու: Ասոնց հետ էին Էտիթը, Միս Մքլինը եւ հիւանդապահուիին: Համալիրը պզտիկ դրախտ մը թուեցաւ, ուր վարդերը նոր կը ծաղկէին եւ օդը հոտաւէտ բոյրով կը լեցնէին: Մինչեւ ոսկորներու խորքը կը զգամ որ ուրախ պիտի ըլլամ հոս: Սենեակս գլխաւոր շէնքին մէջ չէ, այլ՝ անկէ շուրջ 75 ոտք հեռու գտնուող կառոյցին: Յոգնած եմ օրաւոր ճանապարհորդութենէս եւ... յետոյ կը պատմեմ:

Մայիս տասնին

Այնքան զբաղ էի ինքզինքս այստեղի կեանքին յարմարցնելու, որ ժամանակ չունեցայ գրելու: Շատեր այցելեցին: Օր մը հաշուեցի՝ 33 հոգի այցելեց ինձի: Կարելոր է որ ընդունիմ այս մարդիկը: Միայն այդ պատճառով՝ նոր սկսայ Նպաստից գործունէութիւնս:

Հաճընի մէջ վիճակը իւրօրինակ է: Կը կարծուէր որ մարդիկ շրջանին մէջ այնքան տարածուած-ցրուած էին, որ Նպաստիցի խնդիր պիտի չըլլար: Բայց տարօրինակ է ըսել թէ Հաճընի եւ շրջակայից գիւղերու ժողովուրդէն աւելի մեծ տոկոս մը կը վերադառնայ, քան՝ այլ շրջաններու բնակիչներ: Հաճընի մէջ կանգուն մնացած միքանի հարիւր տունները մարդոցմով լեփլեցուն են: Միջին հաշուով, իւրաքանչիւր տան մէջ քսան հոգի կայ, ներառեալ՝ մանուկներ: Այնքան գործ կայ ընելիք, եւ այնքան քիչ անձեր, որ այդ գործերը ընեն... Երբ Միս Վոնը շուտով մեկնի, եւ պէտք է մեկնի - կարելոր է իրեն համար - ամերիկացի երեք կին կը մնանք՝ կարիքներուն հասնելու: Բարեբախտաբար, ինձի եւ Միս Մքլինին համար ուսուցիչներ կան եւ՝ երէց աղջիկներ, որոնք իրեւ թարգմանիչներ կը գործեն: Մեծապէս կը յենինք Օրդ. Յակոբեանին, որ շրջանաւարտն է միսիոնարական այս դպրոցին եւ Կոստանդնուպոլսոյ Ամերիկեան Քոլէճին: Ազնիւ, նուիրուած անձ մըն է որ ունի եւ պիտի

շարունակէ մեծ պատասխանատուութիւններ շակել⁴³: Ուրախ եմ՝ երբ կը մտածեմ որ ան մասնաւորաբար հետս պիտի աշխատի: Իր եղբայրը՝ Մատթէոսը, մեր մատակարարն է:

Ընթրիքէն անմիջապէս ետք - երէկ - լեռ մագլցեցանք՝ մեր համալիրէն վեր, այծերու երամակը դիտելու: Յից վերելք մըն էր՝ որքան ալ ճիգ ընէի: Հովիւներ կը բնակին հոն, վրաններու տակ: Յերեկը այծերը դե՛ռ անելի բարձրերը կը տանին եւ ետ՝ մեր տեսած վայրերը կ'իջեցնեն ուշ երեկոյեան, կթելու: Գոհ եմ որ շուտով կը վարժուիմ տեղական ուտեստին: Մածուն կը սիրեմ: Ասիկա չափազանց առողջարար կը նկատուի: Նման է պանիրի անուշեղէնին՝ իր բաղադրութեամբ, եւ շատ մօտ է թթու կաթին զոր կը վայելէինք Ռուսիա եւ Ֆինլանտա գտնուած ատեննիս:

Այս առտու ժամը վեցին նախաճաշեցինք, քանի որ մեր դպրոցի երէց աղջիկներէն մէկը պիտի պսակուէր դպրոցին մէջ ու պէտք է ներկայ ըլլանք: Հարսը որբ է, եւ հակառակ որ փեսան տեսքով ներկայանալի չէ, Միս Վոնը կը խորհի որ լաւ ամուսնութիւն մըն է աղջկան համար, քանի որ մարդը ո՛չ խմող է, ո՛չ ալ բախտախաղի հետեւող: Որոշ է որ արժէքաւոր դրամագլուխ մը ունի. իր բերնի վերին առամնաշարը ամբողջութեամբ ոսկի է:

Հարսին համար պատշաճ է որ յուզուած մնայ արարողութեան նախորդող ամբողջ շրջանին: Մինչ քօղը կը պատրասատուէր՝ երիտասարդուհիները կը հեծկլտային: Տպաւորիչ էր:

Հիւրերը ժամանեցին երկար թափօրով մը, գլխաւորութեամբ ջութակէ, ծնծղայէ եւ այլ գործիքներէ բաղկացած նուագախումբին: Յետոյ հարսն ու փեսան թափօրը առաջնորդեցին դպրոցին մեծ սենեակը, ուր երկու գրիգորեան⁴⁴ կրօնաւորներ պսակեցին զիրենք:

Պարտիզահայեաց պատշգամը կեցած կը գրեմ հիմա: Վարը, պարտէզին մէջ, մեղուները զբաղ են մեղր հաւաքելով: Շուտով մորենիներն ու կեռասները պիտի հասուննան, անոնցմէ կարճ ժամանակ ետք՝ համեղ խաղողները: Խոստմնալից է: Գոհ պիտի ըլլամ

⁴³ Մարիամ Յակոբեան ծնած է Երապաքան: 1898-1913՝ պաշտօնավարած է ի՛ր իսկ շրջանաւարտած միսիոնարական վարժարանին մէջ:

⁴⁴ Ըսել կ'ուզէ առաքելական:

հոս, քանի որ մտային եւ հոգեւոր մթնոլորտը, նաեւ ֆիզիքականը գօտեպնդող են: Ես խաղաղութիւն կը զգամ մարմնով ու մտքով: Հաճընը հեռաւոր վայր մըն է, ուր որեւէ մէկը որ մելամաղձոտութեան կը հակի, դժուար թէ ապրի: Բայց ես միշտ ուրախ եմ լեռներուն մէջ եւ - հետեւաբար - ապագան հաճոյքով կ'ակնկալեմ: Տեսադաշտը կը տարածուի մինչեւ տուները: Բայց կարճ երթով մը դէպի կամուրջ՝ տեսարանը կ'ընդարձակուի, իսկ որոշ պահերու՝ լեռներուն կողերը հին գորգերու գոյները կը զգենուն:

Առջի գիշեր, ընթրիքէն քիչ առաջ, Էտիթը եւ ես քալեցինք դէպի Քրտէտ (աղբիւրը), հովիտին մէջ, ճամփան սիրուն վայրի ծաղիկներ շրջանցելով: Կային թրաշուշաններ, անմոռուկներ եւ ինծի անծանօթ այլ ծաղիկներ: Պարտէզը լի է գեղեցկութեամբ եւ բոյրով: Այսպիսի վարդեր երբեք տեսած չես. վարդագոյն, սպիտակ եւ սքանչելի դեղին:

Մայիս քսանհինգ

Եթէ մտածէք որ Հաճըն գալէս - 15 օր է - իվեր միայն երկու անգամ համալիրին դռնէն դուրս ելեր եմ՝ կը զարմանաք որ ինչ պիտի ունենամ գրելիք: Իրականութիւնն այն է, սակայն, որ ժամերով կրնամ գրել եւ սպառած կ'ըլլամ միայն իմ նամակներս ստացողները: Այնքա՛ն շահեկան են այստեղի փորձառութիւններս:

Օրինակ, վստահ եմ կ'արժէ գիտնալ, թէ ինչ պէտք է ընել կովին՝ որպէսզի իր կաթը սիրայօժար հոսեցնէ: Ճիշտ իր մօր դիմացը պէտք է կապես հորթուկը, եւ ան՝ տեսնելով իր ծագը, պատրաստ պիտի ըլլայ մատուցելու իր կաթը: Իսկ եթէ հորթուկը մեռնի՝ հոգ չէ, որովհետեւ անոր մորթը կը լեցնեն եւ կը կապեն մայր կովին դիմաց, ու կաթի նոյն արդիւնքը կը ստացուի:

Մեր «կալուածին» մէջ նոր հորթուկ մը ունեցանք, որ 12 ժամ առաջ ծնաւ: Զինք նկարեցի՝ աղջիկներէն մէկուն բազուկներուն մէջ գրկուած: Երեք շնիկներ ունինք՝ Էնվէր, Թալաաթ եւ Ճեմալ: Փոքրերը այսպէս անուանած են զանոնք: Կը կարծենք որ քիչ մը շատ է շնիկներուն համար, բայց Թուրքիոյ մէջ շուները քիչ մը անտեսուած են եւ հաճելի ձեւ մըն է հիմա հակադարձելով՝

թուրքերը շուն կոչել: Ինձի պատմեցին Փորթ Սայիտի որբի մը մասին, որ ուրախ էր իր մուկերը Մուհամմէտ անուանելով:

Շաբաթ մըն է, գրեթէ անընդհատ կ'անձրեւէ. հովիւները ստիպուեցան հօտը լեռնէն վար բերել մէկ-երկու գիշեր, որպէսզի հեղեղի զոհ չերթան: Ուստի, առտունները այծերուն եւ ոչխարներուն մայիւնէն, կովերուն բառաչէն եւ էջերուն զոռցէն կ'արթննամ: Իրենց մեկնումէն ետք, երբ լռութիւն կը տիրէ, Ագապին դուռս կը զարնէ, կրակ վարելու եւ տաք ջուր բերելու: Այսպէս կը սկսի օրս:

Տարօրինակ զգացում է բացարձակապէս կտրուած ըլլալ աշխարհէն՝ ինչպէս մենք ենք: Լուրեր կը սողոսկին, բայց որքան վստահելի են՝ չենք գիտեր:

Իմացանք որ թուրքերը սարսափելի տառապանքներ կրած են: Խօսքս Էրզրումէն Շարի⁴⁵ դաշտագետինը եկած գաղթականներուն մասին է: Շատ հեռու չեն մեզմէ: Մեզ պատմող հայը ըսաւ թէ հակառակ որ ինք հայ է, իր սիրտը կ'արիւնի իր տեսածէն: Ըստ իրեն, այդ գաղթականները գրեթէ մերկ են եւ խոտ կ'ուտեն: Զանոնք չէ՛ որ պէտք է մեղադրել: Պարզապէս գիւղացիներ են, փախած՝ երբ ռուսերը Էրզրում մտեր են: Պէտք է օգնել իրենց՝ եթէ կարելիութիւնը կայ:

Զգրաւուած շրջաններուն մէջ կացութիւնը սուր է: Թուրքերը - ոչ ոքի համարատու - կը սպառնան քրիստոնեաները ամբողջական ոչնչացման ենթարկել: Այսպէս իմացանք Սվազի Վիլայէթին մասին: Իրաւ որ մենք շատ խաղաղ շրջանի մը մէջ ենք:

⁴⁵ Շար կամ Շար Տերէ կը գտնուէր Հաճընէն հիւսիս, հետիոտն ութ-ինն ժամ, ձիով մէկ ժամ հեռաւորութեան վրայ: Զայն կառուցած են Հաճընէն տեղափոխուած խումբ մը հայեր, շուրջ 1860ականներուն: Զուտ հայաբնակ գիւղ էր, 350 տուն – շուրջ 2000 շունչ – բնակչութեամբ, որոնց միայն 300ը զինադադարին ողջ մնացած ու վերադարձած էր գիւղ: Շարի մասին արեւի մանրամասն տե՛ս՝ Գրիգոր Թաթուլեան, *Անթերղուած Գաղտնիքներ*, Պէրոյթ, Տպ. Ատլաս, 1967, էջ 28-34, իսկ տեղահանութեան մասին՝ Անդրանիկ Տագէսեան, «Շարի Տեղահանութիւնը [28 Մայիս-17 Յունիս 1915]», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. ԼԵ., 2015, էջ 645-54:

Մայիս երեսուն

Գործիս ծիրը տակաւ կը ծաւալի: Երէկ, Օրդ. Յակոբեանն ու ես հիւսքի գործարանը գացինք, պատասխանատուէն իմանալու համար մանելու գործիքներու տեղադրումին ընթացքը: Տարիներ առաջ, ճեմալ փաշան նիւթական օգնութիւն տուեր է գործարանը հաստատելու համար: Բայց պատերազմի տարիներուն չեն հոգացած եւ հիմա նորոգութեան խիստ կարիք ունի:

Ատանայէն Նպաստիցին մեզի դրկած հագուստները գրեթէ սպառած են: Թէեւ միառժամանակ ետք մեր հիւսքի արտադրութիւնը պիտի ունենանք, բայց այս պահուս պէտքը ունինք հագուստեղէնի:

Անցեալ օր փոքրիկ որբուկ մը բերին հագուստի համար: Ան կ'ապրէր կնոջ մը հետ, որ խելագարեր է եւ երեխային հետ լաւ չի վարուիր: Սիրուն փոքրիկ մըն է, բայց սահմուկած կ'երեւէր: Կտոր տուի ներքնաշապիկի ու վարտիքներու համար եւ հագուստի համար ալ՝ աստարցու: Կարգադրեցի նաեւ որ կին մը կարէ հագուստները, լուայ զինք ու ետ բերէ: Ասիկա վաղ առաւօտուն պատահեցաւ եւ նոյն գիշեր, էլմասը որ գոհար կը նշանակէ, վերադարձաւ հանդերձանքով ու մաքուր:

Հիմա կը մնայ մեր դռնապահուիկին քով եւ մեր մանկապարտէզը կը յաճախէ: Մեր առնելէն երեք օր ետք արդէն վերափոխուած աղջնակ մըն էր ան: Այս նուրբիկը շատ քնքշօրէն կը մանէ եւ շատ սիրելի է երբ կը կենայ հերթապահուիկին՝ Ալթունին քով, ու կը դարձնէ բուրդը՝ մեծ կնոջ մը ճարտարութեամբ: Երբեմն վեր կը նայի, ամչկոտ պզտիկ ժպիտով մը:

Շուարած ենք՝ ինչպէս գործ ճարենք մեր դուռը ափ առնողներուն: Ներկայիս, պատ շարելու գործերնիս կ'ընթանայ, բայց քանի որ հագուստեղէն կ'ուզուի եւ հագուստեղէն չունինք՝ չենք գիտեր ի՞նչ ընենք:

Յունիս երկուք

Նամակս կը գրեմ բազմազբաղ յետմիջօրէի մը աւարտին: Խճողուած էինք կիներով, որոնք եկեր էին այժի մազ ու բուրդ առնելու: Այս շրջանին՝ Երկուշաբթի եւ Հինգշաբթի երեկոներ, ամբոխ

մը կը դիմագրաւենք: Բոլորն ալ ակնդէտ վճարովի հումք կ'ուզեն մանելու. դժուար է զանոնք ձեռնունայն ետ դրկել՝ երբ սպառին մեր ունեցածները:

Այսօր խղճալի բազմաթիւ պարագաներ ունեցանք: Մէկը՝ աղջիկ մըն էր, դաջուածքէն սարսափելիօրէն դիմափոխուած: Արաքները դաջած են զինք: Ուրիշ մը, անոր քոյրը բերաւ՝ չերքէզներէն փրկելով: Երեքը ցնցոտիներու մէջ էին եւ հիւանդ: Պէտք է խոհանոց երթամ հիմա, քանի յանձն առած եմ ամերիկացիներուն ճաշը պատրաստել: Լաւ հայ խոհարար մը ունէին միսիոնարները, բայց ան՝ Գէորգը, սպանուեր է տեղահանութեան ընթացքին եւ արքային վերադարձողներէն շատեր դժգոհ են, որ չենք ջանար ուրիշ խոհարար մը փորձել: Երէց աղջիկներէն երկուքը՝ Լիզան եւ Լէան կատարեալ սիրայօժարութեամբ մաքրութիւնը կ'ընեն, իսկ ես՝ ճաշը:

Յունիս տաս

Իմացանք որ Միս Մքլինը Թալաս պէտք է երթայ, իսկ Միս Սուփըրը⁴⁶, որ Ատանա կը գտնուի, հոս պիտի գայ, Միս Մքլինը չ'ուզեր ձգել հոս: Զինք սրտցաւօրէն պիտի կարօտնանք: Հաւանաբար, Միս Վոնն ալ միասին երթայ, շարունակելով իր երթը դէպի Կոստանդնուպոլիս եւ Ամերիկա՝ Թալասի ճամփով: Մերսին գտնուող Մսթըրր Մեքֆարլընտը⁴⁷ Միս Սուփըրին հետ պիտի գայ եւ միքանի շաբաթ հոս մնալով մեզի պիտի օգնէ:

Երէկ առտու մեծաթիւ կիներ եկան՝ բուրդ առնելու: Ժամը 8էն 12ի միջեւ դադարի առիթ չկար: Օրիորդ Յակոբեանը կը թարգմանէ, օրիորդ Արծաթը (Ազա՛տ - Ա.Տ.) կ'արձանագրէ, իսկ պզտիկ աղջիկ մը՝ Կիլլենիա, կը բերէ-կը տանի ապրանքը:

Եթէ կարենայի վարժեցնել քիթս՝ չհոտառելու - երբ չեմ ուզեր - շատ շնորհակալ պիտի ըլլայի: Չես կրնար երեակայել հոտը՝ այնպիսի չլուացուած զանգուածի մը, որ ցնցոտիներու մէջ է, եւ չի կրնար հանդերձափոխուիլ, որովհետեւ ուրիշը չունի: Երէկ առտու

⁴⁶ Աւելի ետք ան կենսական ներկայութիւն կը դառնայ Հաճըն Հոմի մէջ:

⁴⁷ Հաւանաբար նկատի ունի Տոքթ. Չարլզ Ս. Մեքֆարլընտը, որ նորակազմ Հայաստան-Ամերիկա Ընկերակցութեան անդամ էր եւ քարտուղարը Եկեղեցիներու Խորհուրդի Համադաշնութեան (*Missionary Herald*, Հոկտեմբեր 1920, էջ 441):

ծրագիր մը մշակեցի, որ տհաճութիւնը կը բարեփոխէ որոշ չափով: Սեղան մը դրի մուտքի դռան դուրսը, մուտքի առաստաղին տակ: Օրիորդ Յակոբեանն ու ես հոն կը նստինք՝ կիներն ընդունելու: Ալթունը զիրենք մայր դռնէն ներս կը ձգէ տաս-տաս: Այսպէս կ'ըլլայ երբ ան իր գործին գլուխն ըլլայ: Անոնք արահետէն կու գան եւ այլ դռնէ մը մեզի կը հասնին: Չափազանց մօտիկ կը խճողեն մեզի: Իւրաքանչիւրը կը ջանայ ուրիշէ մը յառաջ անցնիլ: Սիրտս խառնուեցաւ: Ստիպուեցայ Կիւլենիան ղրկել կաւիճի, եւ՝ գիծ մը քաշեցի քարէ արահետին վրայ, մեզմէ շուրջ չորս ոտք հեռու, եւ յայտարարեցի որ այդ գիծէն ասդին ոչ ոք անցնի: Կանայք շատ լաւ ընդունեցին ասիկա. երբ մէկը անուշադրութեամբ անտեսէր գիծը՝ Կիւլենիան անմիջապէս կը յուշէր իրեն՝ գիծին մասին: Այսօր աւելի քան 100 կին եկան, իսկ երէկ՝ աւելի քան 150: Ոմանք մանելու հումք կ'ուզեն, ուրիշներ՝ դերձանը կը յանձնեն եւ կ'ուզեն վճարուիլ կամ հագուստ առնել: Քանի որ հագուստի պակաս ունինք, ոմանք կը նախընտրեն յետաձգել վճարուիլը, փափաքելով հագուստ առնել՝ երբ ունենանք:

Որբերը միշտ մեզի հետ են: Անոնք մնայուն հարց են մեզի համար: Աքսորականները հաստատակամ կը վերադառնան: Ու՛ր պիտի բնակին ասոնք - մինչ Հաճընի տուներուն մեծամասնութիւնը աւերակ է - չեմ կրնար երեւակայել: Անտէր երեխաները գետինը կը պառկին, ուր որ կարենան: Ոչ տակերնին փռելիք ունին, ոչ ալ վրանին ծածկելիք: Ասիկա տանելի է ամառը, ի՛սկ ձմեռը, ի՛նչ պիտի ընենք:

Յունիս փասնհինգ

Այնքան գեղեցիկ էր երէկ, որ տակաւին անոր ուրախ ազդեցութեան տակն եմ: Էտիթը կը տենչար քաղաքէն դուրս ելլել՝ քիչ մը փոխուելու համար: Չէի անդրադարձած որ որքան պէտքը ունէինք ատոր: Խօսք կայ որ մենոնայթներու⁴⁸ պատկանող այգին

⁴⁸ Մենոնայթներ ծառայած են եւ շրջան մը վարած Տոքթ. Ճան Մարթինի 1892ին Հաճընի մէջ հիմնած մանչերու բարձրագոյն վարժարանը: Նշանաւոր միսիոնարուի, Հաճընի երախտաւոր Ռոզ Լեմպըրթ (1878–1974, հեղինակ *Hadjin, and the Armenian Massacres* հատորին), անդամ էր մենոնայթ եկեղեցիին:

երթանք: Պատերազմին սկիզբէն իվեր, երբ մենոնայթները քեցին իրենց որբանոցը, Միս Վոնը կը հոգայ իրենց այգին:

Ճամփան մեզ տարաւ Հաճընն իվար, յետոյ վեր՝ դէպի լեռները: Գեղեցիկ երթ մըն էր, այնքան անապական ու պատկերալի: Անցանք փոքր ջրվէժներէ եւ դաշտերէ: Վայրի ծաղիկները գոյներու երիզներ շիներ էին: Խաշխաշը կը ծաղկի Ֆլենտերգի դաշտերուն մէջ, բայց հոս ալ՝ Հաճընի բլուրներուն վրայ, ան կարմիր կը ծաղկի: Ասոնք մեծ են եւ փառահեղ:

Գոյնը մեզ ոգեշնչեց: Ծաղիկ մը կար - անունը չեմ գիտեր - որ հեռուէն մանուշակագոյն ցախի տպաւորութիւնը կու տայ: Բազմաթիւ երերող *էսֆոպրըլներ* տեսանք, բայց բանաստեղծները իրեն արժանի հռչակէն աւելի տուած են: Նարդոսը առատ էր, նոյնպէս յափրուկը:

Հասանք տեղ եւ նստանք շինութիւններէն մէկուն մուտքին ու կերանք, յետոյ - իբրեւ քաղցրաւենիք - կեռաս քաղեցինք: Մեկնելէ առաջ Միս Վոնը ուզեց ստուգել որ տեղի հոգատար անձը հաւատարիմ էր իր գործին: Ընդհանրապէս թարմացնող, կէսօրեայ պտոյտ մըն էր: Վերադարձանք պատրաստ՝ ժխորին: Առաւել հրճուեցանք ուրախալի լուրեր կարդալով մեզ սպասող նամակներէն: Միս Սմոլը, որ Ատանա կը գտնուի, պիտի մեզի փոխանցուի միքանի ամիս, ընկերակցելով Միս Սուփըրին:

Յունիս տրասնութ

Առջի գիշեր դպրոցի աղջիկներէն մէկուն նշանտուքի խնդութիւնը կար: Թուրքիոյ մէջ նշանտուքը ամուսնութեան չափ պարտաւորեցնող է: Կրօնաւորները կը կատարեն նշանտուքը: Հարսնցուն առաքելական է: Դպրոցին հաւաքասենեակը լեցուած էր հարս ու փեսային բարեկամներով: Հարս ու փեսան նստան երկու կրօնաւորներուն առջեւ եւ ամբողջ տեւողութեան - երկու ժամ - երբեք իրար չնայեցան: Կրօնաւորները խորհուրդներ տուին ու երգեցին, յետոյ ազգային երգեր երգուեցան, յանպատրաստից ճաշեր արտասանուեցան: Բոլորը հիւրասիրուեցան պտղաջուրով եւ եփուած հատիկով որ *լեպլեպի* կը կոչուի: Մեծ խնդիրը այն էր որ միքանի հարիւր մարդ կար, բայց՝ միայն երկվեցեակ մը գաւաթ: Ստիպ-

ուեցանք գաւաթները վերստին գործածել, ուստի եւ՝ երկարեցաւ հիրաւասիրութիւնը: *Ուստի*ներէն մին, որ իմ քարգործներուս պատասխանատուն է, սպասարկեց եւ դժուար թէ վաղը կարենայ Նպաստից աշխատանքին ծառայել:

Իդէպ, նոր մեթոտ մը որդեգրած եմ գործաւորները վճարելու: *Ուստի* - միշտ ըստ արեւելեան սովորոյթի - այրերը նախ կանչած է, մինչ կանայք...: Երէկ յայտարարեցի որ այսուհետեւ նախ կիները պիտի կանչեմ: *Ուստի* քիչ մը զարմացաւ: Իրենց կեանքին մէջ առաջին անգամ հաճընցի կիներ իրենց այրերէն յառաջ անցան:

Յունիս քսաներեք

Միս Վոնը եւ Միս Մքլինը անցեալ Ուրբաթ մեկնեցան Մսթըր Ֆաուլին հետ, որ Թալասէն եկած էր իրենց ընկերակցելու: Յաջորդօրը Ատանայէն ժամանեցին այն երեքը որոնց կը սպասէինք:

Յերեկը շատ տաք է: Վախազդեցիկ պահ մը ունեցանք այսօր կիներուն հետ: Այնպիսի խճողում մը կար եւ այնքան անկարգաւորելի...: Այնքան անվերահսկելի դարձան որ վերջաւորութեան ստիպուեցանք փակել համալիրին դուռը եւ ետ դրկել զիրենք: Վստահ եմ դասերնին առած կ'ըլլան յաջորդի:

Աստուածաշունչի բազմաթիւ առակներ ինծի նոր, առաջուրնէ տարբեր միտքերով կ'իմաստաւորուին: Օրինակ, այն մեծաթիւ մարդիկը որ Յիսուսի շուրջ խմբուած էին, շատ նման էին այս առտու շուրջս հաւաքուածներուն. վճռական էին հագուստեղէն ձեռք ձգելու: Ասոնք հաւանաբար չէին լուացուած եւ տհաճ կը հոտէին: Մարդ կ'ըմբռնէ կարիքը նաւ նստելու եւ հեռանալու՝ ճնշումէն, եւ կը հասկնայ նաեւ թարմացումը պարտէզին: Այսուհետեւ աստուածաշնչական «Մարդ մը այգի ցանեց»ը եւս, ուրիշ իմաստ պիտի ունենայ ինծի համար: Հիմա - եւ միշտ ալ այդպէս եղած է - քաղցր, մաքուր տեղ մը պէտք է ունենալ՝ աւաններէն ու քաղաքներէն հոն ապաստանելու համար:

Երանի հաճընցիները կարենային իրենց այգիներուն երթալ, բայց թուրքերը աւերած են գրեթէ բոլորը: Չեմ գիտեր ի՞նչ կրնայ պատահիլ երբ տակաւին նոր մարդիկ վերադառնան: Կ'ըսուի թէ Միսի մէջ հարիւրաւորներ կը սպասեն առիթի՝ հոս վերադառնալու:

Ուրիշներ Ատանա եկած են արդէն՝ նոյն նպատակով: Ֆրանսացիք կը խոստանան օգնել իրենց. կ'ըսեն որ իրենք պատասխանատու են: Բայց խոստումը կը վերջանայ խօսքին հետ:

Բամատանի ամիսն ենք: Բոլոր հաւատացեալ իսլամները արեւածագէն արեւամուտ ծոմ կը բռնեն, նոյնիսկ ջուր չեն խմեր: Պէտք է թուրք ընտանիքներ այցելենք երբ ծոմը աւարտի *պայրամի* խնճոյքով: Հաճընի մէջ փոքրաթիւ թուրքեր մնացած են: Հիմա իրենց կարգն է հակադարձութենէ վախնալու: Իրենցմէ շատեր կը հեռանան քաղաքէն: Բոլորիս համար ալ մտահոգիչ ժամանակներ են: Խաղաղութեան պայմանները անծանօթ են եւ յստակ չէ, թէ Հայաստանը ի՛նչ պիտի ընդգրկէ: Իմացանք որ Զօրավար Մաճը⁴⁹, բրիտանական բանակէն, մօտ ատենէն Հաճըն պիտի այցելէ եւ Հաճըն Հոմի մեր հիւրը պիտի ըլլայ: Փակուած մեր նեղ անկիւնին մէջ՝ ոչինչ գիտենք զարգացումներէն. թերեւս ինք մեզի քիչ մը նորութիւններ հաղորդէ:

Յունիս քանինն

Յաւելեալ տաք մը պատած է շրջանը: Դժուար է աշխատիլ կէսօրուան ճաշէն ետք: Կարելի է միայն միառժամանակ հանգչիլ: Բարեբախտաբար իրիկունները լաւ զով կ'ընէ եւ հովոտ է, այնպէս որ թարմացած կ'արթնանք: Առտուները գէշ չեն, միայն կէսօրէ ետքերը դժուար են:

Մանող կիներուն թիւը հինգհարիւրի հասաւ: Հակառակ մեր բոլոր ծրագրումներուն, դժուար է ամբոխը կարգաւորել: Տոմսակի նոր դրութիւն մը հաստատեցինք, որուն հիմամբ առտուն միայն հարիւր կին պիտի ընդունինք: Անշուշտ, երբ սպառի մեր հումքը՝ օրերու եւ տոմսերու առումով, չենք կրնար տակաւին աւելիին ընդառաջել:

Անցեալ օր հումքի իմ շտապ պահանջքիս ի պատասխան, Ատանայէն երկու ուղտաբեռ դրկուեցաւ: Ասոր ի յաւելումն, երկու իշաբեռ ալ մէկ կողմ պահ դրած էինք՝ անցեալ շաբաթ ճամփորդներուն

⁴⁹ Բրիֆտանացի զօրավար Մաճ՝ Կիլիկիոյ գրաման ուժերու վերին հրամանատարն էր. ան Հաճըն կ'այցելէ 15 Յունիս 1919ին:

միջոցաւ ստացուած: Հետեւաբար, ինչպէս կը տեսնես, հագուստի պահանջարկը կրնանք բաւարարել:

Նիւթը փոխենք: Ծաղկած նոնենիին թուփը տեսա՞՞ծ էք: Այնպիսի սքանչելի տեսք ունի իր փառաւոր, տարտղնած ծաղիկներով: Պատշգամի անկողինէս կը տեսնեմ բոցավառող թուփը որ հոգիս կը զուարճացնէ: Փոքր փեթակներ կան գաւիթիս կողքի կառոյցին պատուհանին տակ: Յերեկը, հետեւաբար, մնայուն բզզոց կայ: Փոքրիկներուն պարտականութիւն տրուած է իբրեւ *պեքճիներ* (պահակներ)՝ հսկելու մեղուներուն: Անոնք պէտք է պահակեն, որ երբ մեղուները խոնուելու նշաններ տան, փոքրերը մեզ տեղեակ պահեն զարգացումներէն եւ - ըստ տեղական սովորութեան - քարերով ձայն հանեն որպէսզի մեղուները հանդարտին: Առտու կանուխ երբ կ'արթննամ եւ տակաւին զով է, մեղուները լուռ են՝ լեռները կը դիտեմ, որոնք արեւը կը խոչընդոտեն մինչեւ ժամը եօթ: Միւս կողմը, սակայն, արեւի շողերը հասած կ'ըլլան արդէն կարգ մը գագաթներու: Հիմա ոտնաձայն կը լսեմ եւ գիտեմ որ յոյն աղջիկն է՝ Պարթէմը որ իր դոյլով կ'երթայ այծերը կթելու Փեցիին՝ մեծ, արատ մագով հովուական շունին հետ, որ հոս գիշերները կը պահակէ: Պարթէմը քարէ արահետով եւ Մարաշի դռնէն կ'երթայ հովիւներուն հիւղակները: Իրիկունը երբ անկողին մտնեմ, երբեմն կը լսեմ հովիւներուն երգերը՝ տարօրինակ, տխուր նուագները զորս կը սիրեն նուագել ու երգել:

Այս առտու, երկու իշուկներ, իմ քնատեղիս ներքեւ, աշխուժօրէն խաղցան ու հաճելի ժամանակ անցուցին: Կեռասները տարածուած են մօտակայ տանիքին վրայ. ամէնուրեք ցպիկները կան, որոնք սկսած են չորնալ՝ ձմեռը գործածուելու համար:

Յուլիս երեք

Այսօր որբերն ու անօգնականները հարցախուզելու օրն էր: Յատկապէս կը պատրաստուէինք այս առտուան ու շատ բան իմացանք: Մենոնայթներու շէնքերը տողոց համար իբրեւ ժամանակաւոր պատսպարան կը գործածենք: Իսկ վերի գործարանի կառոյցը աղջիկներուն եւ փոքր տղոց համար պատրաստ պիտի ըլլայ վաղը չէ միւս օր: Մեր կարելիին չափով կը ջանանք փոքրերը գիշերեցնել

իրենց ազգականներուն կամ մարդոց մօտ որոնք պատասպարան կու տան անոնց: Անշուշտ, ասոնց ճաշը մենք կը վճարենք: Մեր տարողունակութիւնը չափազանց սահմանափակ է:

Յուլիս չորս

Րամատանը չաւարտեցաւ Կիրակի օր՝ ըստ մեր ակնկալութեան, քանի որ մեզի լուր չհասաւ թէ նոր լուսինին երեւման խնդրով երեք հոգիի վկայութիւնը հաստատուած է: Այդ պատճառով ալ շնորհաւորանքի այցելութիւններ չըրինք մինչեւ Երեքշաբթի: Էտիթը, օրիորդ Յակոբեանն ու ես առաւօտեան իննէն առաջ սկսանք այցելութեանց՝ մինչեւ կէսօր: Նախ՝ քայմաքամին տունը գացինք, շնորհաւորելու իր կինը: Շատ անշուք է մուտքը տունին, որ կը գտնուի խեղճուկրակ փողոցներէն մէկուն վրայ: Երկբաժին սանդուխներ բարձրանալէ ետք մեզ ողջունեց քայմաքամը որ պատրաստ չէր թուեր հիւրեր ընդունելու: Ան լայն հագուստ մը հագած էր, որ կը ծառայէ թէ՛ իբրեւ գիշերանոց, թէ՛ իբրեւ տնային հանդերձանք:

Առաջնորդուեցանք ընդունարանը, որ դատարկ էր, բացի պատէպատ երկարող նստարանէ մը, որ սեպտիկ կը կոչուի: Ներկայ էր քայմաքամին կինը, որ քնքուշ է եւ տպաւորիչ կեցուածք ունի: Շուտով լոխում եւ ծխախոտ բերուեցաւ ու հրամցուեցաւ: Համտեսեցինք քաղցրաւենիքը եւ միառժամանակ ետք աւարտին հասցուցինք մեր այցելութիւնը: Յետոյ գացինք քաղաքային դատաւորին տունը (ըստ երեւոյթին՝ քաղաքային եւ կրօնական դատաւորներ կան): Մեր այցելութիւնները ծրագրած էինք իշխանութեանց ամէնամեծերէն սկսիլ եւ յաջորդաբար իջնել: Այս անգամ, մտնելով մայր դռնէն՝ տեսանք որ ախոռի մէջ ենք եւ պէտք է աստիճանաւոր ուղիէ մը յառաջանալ մինչեւ բուն տունը հասնիլը:

Հետաքրքրական էր ձին կապուած տեսնել ճողի մը, մինչ ախոռին հոտը մեզի հետ վեր կը բարձրանար: Դատաւորը տունը չէր կամ ալ չերեւաց: Իր կինն ու դուստրը հիւրընկալեցին մեզ: Ներկայ էր նաեւ ընտանիքին բարեկամ մը կամ ծառայ մը: Քայմաքամին կինը սեւ, սաթէն, իսկ դատաւորին կինը՝ ծիծաղելիօրէն լայն հագուստ մը հագեր էր, մազերը երկու հիւսք ըրած էր եւ բոպիկ էր:

Մենք, ինչպես միշտ, *սեպիրի*ին նստանք պահ մը: Այստեղի հիւրասիրութիւնը ճերմակ փոքրիկ շաքարներն էին եւ թրքական սուրճ՝ սովորական փոքրիկ գաւաթներով:

- Բոլորն ալ աղջիկներ են,- մեզի ականարկելով ըսաւ տան երրորդ անձը:

- Այո, բայց խելք ունին, խելացի են, մեզի պէս չեն,- պատասխանեց տանտիրուհին:

Ուրիշ թուրքի մը այցելութեան ատեն, մեր Հաճըն ժամանման օրերու *քայմաքամի*ն աները եկաւ: Տանտէրը՝ երիտասարդ չերքէզուհի մը իբրեւ երկրորդ կին ունենալու խնդրով կը բանակցէր: Առաջին կինը, որ շատ գրաւիչ է, սարսափելիօրէն անուրախ է: Մարդը Սիս կանչուեր է վերջերս, ֆրանսացի պաշտօնատարի մը նիւթական հաշուետուութիւն կատարելու: Ասիկա պատճառ եղեր է որ իր դարպասումը դադրի, մինչ իր աները նախախնամական արարք կը նկատէր Սիս կանչուիլը, ու կ'ըսէր՝ «Տէր, բրինձը լա՛ւ մաքրէ»:

Իրապէս որ մեծ գործ կ'ընենք: Երբ նկատի կ'առնենք մեր փոքր մարդուժը՝ յատկանշական կը գտնենք մեր ըրածը: Երբեմն, երբ տխուր կողմերուն կը նայիմ՝ կը վհատիմ: Բայց պէտք է մտածենք որ առնուազն ա՛յն ինչ մենք կրնանք ընել անելի լաւ է ոչինչ ընելէն: Այսպիսի քուրջեր երբեք չեն տեսած: Քուրջեր՝ քուրջերու կարկտնուած: Հիւանդամարմին անձերու խեղճ տեսքը քեզ կը հիւանդացնէ: Հիւանդութիւններ, որոնց մասին մեր երկրին մէջ շուկով կը խօսինք, այստեղ սովորական են: Հոս բախտաւոր են անոնք որ երկու առողջ աչքեր ունին:

Կարելորն այն է որ օգնենք մարդոց, միաժամանակ չձգենք որ իրենց հանդէպ իրենց յարգանքը տապալի: Շատեր մեզ կը դատապարտեն, որովհետեւ ըստ իրենց, կը մերժենք առատ դրամ տալ իրենց ուզածին պէս: Բայց մենք պէտք է ընենք ա՛յն ինչ ճիշտն է: Երբ կորովս կը նուազի, կը նայիմ Միս Վոնին մեկնելէն առաջ ինծի տուած բացիկին, ուր գրուած է. «Աստուած քեզ անտառ պիտի չըրկէ որ կաղնի տապալես հացի դանակով: Երբ Ան քեզ կանչէ որ նախապէս չըրած գործ մը ընես, Ան քեզի պիտի շնորհէ նախապէս չունեցածդ ուժը»:

Յուլիս հինգ

Երբ զբաղ էի Շաբաթ օրուան ճաշով, Միս Սմոլը խոհանոց գալով լուրեր հաղորդեց: Ըստ իր լուրերուն՝ հայերը կ'աշխատին որ Սիսի ֆրանսացի ներկայացուցիչը Հաճըն այցելէ: Անոնք կը հաւատան որ եթէ Հաճընի կացութիւնը ըմբռնուի՝ օգնութիւն պիտի կատարուի յօգուտ քաղաքի վերակառուցման: Այցելութեան խոստումներ յաճախակի եղած են, սակայն չեն գործադրուած: Բայց անցեալ օր տեղեկացուած է որ ժամանումը մօտալուտ է: Մենք չէինք հաւատար:

Հիմա, յստակ լուր կայ թէ բրիտանական բանակէն Ջօրավար Մաճ, որ Կիլիկիոյ մէջ ամէնաբարձր զինուորական պաշտօնատարն է եւ գնդապետ մը՝ Տը Փիէփափ, որ քաղաքային վարչութեան պետն է, իրենց օգնականներով Հաճըն պիտի գան յառաջիկայ Չորեքշաբթի՝ Սիսի սպային հետ: Բնական է, մե'նք պիտի հիւրընկալենք զիրենք: Բայց մեր սահմանափակ սենեակներով եւ անբաւարար իրեղէններով՝ դիւրին պիտի չըլլայ: Իմ բնակած տունս հիւրերուն պիտի տրամադրենք, իսկ մենք պիտի երթանք խճողել գլխաւոր շէնքը: Անոնք պիտի գան զինուորներով, որոնք պիտի ստիպուին բացօթեայ պառկիլ եւ դպրոցին խոհանոցէն կերակրուիլ:

Յուլիս տասներկու

Իվերջոյ կրնանք շնչել: Անոնք եկան, տեսան եւ Ջօրավար Մաճին խօսքերով՝ «Հաճընը էապէս գրաւուած է» յայտարարեցին: Շատ դժուար երկու օրեր ունեցանք: Գրաւող բանակը կը լափէ: Ճաշի խնդիրը դիւրին չեղաւ: Սեղանի սպասքի նորացում չէ եղած պատերազմին սկիզբէն իսկ առաջ, ուրեմն՝ մեր ունեցածը անբաւարար էր:

Մենք աչք պէտք էր գոցէինք պնակներու փոսիկներու, ճաքերու, անհամատեղութիւններու եւ մեծահոգաբար նայէինք այնպիսի թերացումներու, ինչպէս օրինակ՝ կոտրած բերանով թէյնիկէն թէյ հրամցուելուն: Կարելոր էր որ սպասարկողը իր կեցուածքը պահէր: 17 զինուորներ պէտք էր հոգացուէին. մեր կողմէն անոնց պատասխանատու ուսուցիչը գրեթէ խելքը կորսնցուց: Պաշտօնատարները

շատ գնահատեցին եւ, հակառակ մեր բուօ պայմաններուն, հաճոյացանք այս այցելութեամբ: Բաներ մը իմացանք խաղաղութեան պայմաններուն մասին, որոնցմէ ոչինչ լսած էինք:

Թէյի ժամանակ, Հաճոյ կառավարական տան մէջ նիստէ մը ետք, Զօրավար Մաճ, խօսելով երկրի չկարգաւորուած կարգավիճակին մասին, յայտնեց որ այդ առաւօտ բան մը պատահած էր, որ տիպական էր այս այցելութեան: Ան պատմեց որ աւագակ մը որ արհամարհէր էր բոլորը, *քոնաք* (կառավարական տուն) եկեր էր եւ ինքզինք յանձնէր: Միքանի շաբաթ առաջ շրջանին մէջ թրքական ըմբոստութեան մը իրական վտանգը կար, բայց բան չպատահեցաւ: Այդ օրերուն, Ատանայի մէջ ջարդի մը ահը կար օդին մէջ, բայց զօրավարը յայտնեց թէ կարգ մը թուրքերու յայտնուել էր որ անգլիացիք վարժ չէին ջարդուելու եւ խոհեմութիւն պիտի չըլլար նման բան փորձելը:

Հիւրերուն կեցութեան երկրորդ եւ վերջին գիշերը իրենց ի պատիւ կառավարական տան մէջ տրուած ընթրիքէն վերադարձին, զօրավար Մաճ պզտիկ մը վիրաւորուեցաւ, երբ իր ձին սահեցաւ անհարթ ճամփուն վրայ: Զօրավարին օգնական սպան՝ Տը Լարրար, երբ փորձեց օգնութեան հասնիլ, կիցի հարուած մը ստացաւ ձիէն եւ թէւ լուրջ վնասուածք չունեցաւ, չընկերակցեցաւ զօրավարին՝ Ատանա վերադարձին, ապաքինման պատճառով:

Զուգադիպեցաւ որ միակ ֆրանսախօսը ես էի, թէւ ճիշտ է՝ թերի: Եւ քանի որ վիրաւորը անգլերէն բնաւ չի գիտեր, պաշտօնակոչուած զգացի իրեն այցելելու երբ առիթ ունենայի: Համակրելի երիտասարդ մըն է եւ երախտապարտ կը զգայ Միս Սուփըրին ու մեր հոգածութեան: Պատերազմի ամբողջ տետղութեան միշտ ճակատի վրայ եղած է. ասիկա իր առաջին արկածն էր:

Գալ շաբաթ էտիթը եւ Մսթըր Մքֆարլընտը Շար պիտի երթան՝ այնտեղի պայմանները ուսումնասիրելու. թերեւս, մինչեւ իրենց վերադարձը մեր «վիրաւորը» միացած կ'ըլլայ զօրավարին:

Յուլիս տասնեօթ

Այսպէս, օրերը կ'անցնին: Հիմա հնձել ու քաղել սկսած ենք: Հետաքրքրական է դիտել հնձելու մասին Աստուածաշունչին մէջ

գրուած իրական պատկերը: Գարին կը կոխկրտեն ոչ թէ եզներով, այլ նախնական եղանակով՝ ձիով մը եւ կամնով: Յետոյ մարդիկ զայն օդը կը նետեն մեծ, ծիծաղելի պատառաքաղներով: Օդին մէջ գարին կը հովուի ու կը զատուի, որմէ ետք կանայք կը մաղեն հատիկն ու տուն կը տանին: Մենք զբաղած ենք *պուլդուր* (ցորեն) մթերելով ծմռան համար: Յորենը կը լուացուի, կ'եռացուի եւ յետոյ կ'ընտրուի: Պուլդուրով փիլաֆը չափազանց լաւ է: Քիչ մը ջուրով կ'եռացուի, լա՛ւ կը համեմուի եւ արդիւնքը բրինձէն լաւ է: Գետնախնձորի չգոյութեան՝ ցորենը լաւ փոր կը բռնէ:

Մարան կ'իջնեմ մեր պահեստները քննելու, ներշնչուելու, եւ երբեմն ի՛րապէս կը հիանամ՝ ինչպէս ճաշը կը յառաջանայ: Արկածախնդրութիւն է՝ եթէ այդ տեսանկիւնէն դիտես: Դուն քեզ յաղթական կը զգաս երբ գոհացուցիչ ճաշ մը արտադրուի:

«Արտադրուի» ըսելը զիս հրճուեցնող բանի մը մասին մտածել կու տայ: Մեր բնակավայրի իւրաքանչիւր աղջիկ գործի մէկ բաժինին պատասխանատուն է: Օրինակ, հաւկիթի պաշարները քննելով, երբ տեսնեմ որ նուազած են ու հաւկիթի պէտքը ունինք, Նուարդին (որ հաւկիթի պատասխանատուն է) կը մնայ «արտադրել» զանոնք: Եթէ կ'ուզես՝ լուացքի հագուստներուդ ցանկը ըրէ... կրնաս չընել ալ: Բայց եթէ բան մը պակասած է, քու սենեակիդ աղջիկը, որ լուացքին ու քու հագուստներուդ պատասխանատուն է, պէտք է «արտադրէ» պակսողները: Միս Մքլինը կարճ վերարկու մը կորսնցուց: Անգտանելի էր: Էտիթը ըսաւ որ Մարիցան պէտք է արտադրէ զայն՝ փնտռուիք մը ետք: Օրեր շարունակ փայտը պակասած էր եւ կրակին խնդրով դժուարութիւն ունէինք: Կրտսեր աղջիկները, դադարին - մինչ իշաբեռները չէին հասած տակաւին - պէտք էր տեղէ մը փայտ արտադրէին: Ասիկա կը նշանակէր որ ցողուններ եւ ճիւղիկներ պէտք էր հաւաքէին՝ ուրկէ՛ որ գտնէին: Ամէն օր հաճոյալի այնպիսի բան մը կը պատահի, որ ես իմ ընկերոջս՝ R.L.S.ին⁵⁰ հետ կ'ըսեմ. «Աշխարհը լեցուն է բազմաթիւ բաներով. մենք ուրախ պէտք է ըլլանք իբրեւ արքաներ»: Կամ ալ ասոր պէս բան մը կ'ըսեմ:

⁵⁰ Յապաւումը չկրցանք ճշտել:

Երբ բոլորս պահ մը ընթրիքի նստանք տան նախագաւիթը՝ դիտեցինք աստղերուն ծագիլը: Հոս գիշերները շատ գեղեցիկ են: Սպան ալ հրաւիրեցինք որ հետերնիս նստի: Հետեւաբար, ինծի համար անկարելի էր հեռանալ: Միւսները մէկ առ մէկ գացին, բայց ես կարծես պէտք էր մնայի, հակառակ որ ֆրանսերէնս տակաւ աւելի կը կաղար: Հանգստացայ երբ գնաց:

Միս Սուփըրը շատ յոգնաջան կ'աշխատի: Այս առտու, հինգէն առաջ քաղաք գնաց մալարիայով բռնուած կին մը քննելու: Կը պնդենք որ հրաժարի ընդառաջելէ մեր համալիրէն դուրսի կան-ջերուն, քանի որ ինք ալ պիտի հիւանդանայ: Ամբողջովին կլան-ուած է իր մասնագիտութեամբ եւ ուրիշ ոչինչ կը մտածէ:

Յուլիս տասնութ

Էտիթը եւ Մսթըր Մքֆարլընտը կէսօրէն քիչ առաջ հասան: Յա-ջող բայց յոգնեցուցիչ ճամփորդութիւն մը ունեցած են: Մեկնումի առաջին գիշերը բռնատար կառապանը չէ հասած իրենց հետ, եւ ստիպուեր են տեղացիի մը տունը պառկիլ: Բայց ողջ-ողջ կերուեր են մժեղներէն:

Դեռ աւելին, ստիպուեր են հիւրընկալուիլ Շարի եւ Ռումլուի⁵¹ ժողովուրդէն որ ճաշի համար հերթի կը կանգնի: Ասիկա դժուար եղեր է իրենց համար:

Յուլիս քսան

Հանգիստի հառաջանք մը արձակեցինք երբ մեր ֆրանսացիին ձին անհետացաւ մեր տեսադաշտէն: Մինչեւ սպայ Տը Լարրարին մեկնումը՝ չէինք անդրադարձած որքան սպառեր էինք: Ասիկա կը գրեմ մեր ընթրիքէն ետք, մինչ պատուհանէն դուրս կը նայիմ եւ կը տեսնեմ կրտսեր որբուհիները գործարանէն իրենց իրիկնային ընթ-րիքը առած՝ իրենց տունը կը դառնան: Հոս կու գան իրենց ճաշն առնելու, քանի շատ բարդ է իրենց կեցութեան վայրերը ճաշ եփելը: Կերակուր եփելու անօթներու մեծ պակասն ալ ուրիշ խնդիր է:

⁵¹ Ռումլուն Հաճնոյ հիւսիսային ամէնամօտ գիւղն էր:

Էլմասը որբանոց փոխադրուեցաւ երբ պարզուեցաւ որ անհրաժեշտ հոգածութեան չ'արժանանար հոն ուր որ է: Տղոց որբանոցը ժամանակաւորապէս հաստատած ենք Սուրբ Սարգիսի մէջ, որ մենոնայթներուն կը պատկանի եւ կը գտնուի քաղաքին միւս կողմը: Երիտասարդ մը (որ նոյն այս կազմակերպութեան ստանձնած որբանոցի մը մէջ եղած էր) վերակացուն է այս տղոց եւ շատ գոհացուցիչ գործ կ'ընէ: Մե'նք հաց կը դրկենք իրենց՝ շաբաթը երեք անգամ: Ուրիշ քիչ բան ունին ուտելիք: Էտիթին ըսածը ճիշտ է՝ «Մեր կրցածը այն է, որ իրենց առիթը տանք մաքուր ըլլալու, բաւարար ուտելու եւ, պատեհութիւն՝ աշխատելու»:

Ուրախ ենք որ Մինաս Էֆենտիին եկաւ: Ատակ անձ է: Սկիզբը մենոնայթներուն ծառայած է, իսկ երբ պատերազմին սկիզբը անոնք գացեր են՝ միսիոնարներուն եկեր է ծառայելու: Թէ՛ կարող է եւ թէ՛ պարկեշտ: Ա'ն ալ աքսորուեր է ու հասեր Տէր Զօր, բայց ձեռով մը փրկուեր է մահէն եւ Մուսուլ գտնուեր է բրիտանացիներու հոն մտնելու ատեն: Բրիտանացիք նկատելով անոր կարողութիւնը՝ պատասխանատուութիւններ տուեր են իրեն, պատասխանատու նշանակելով հսկայ շտեմարաններու, զորս թուրքերը լեցուցեր էին եւ յուսացեր որ իրենք պիտի գործածեն: Յետագային, պահեստները տրամադրուեր են հայերուն, իսկ անոնցմէ շատերուն վարումը՝ յանձնուեր է Մինաս Էֆենտիին: Էտիթը կը կարծէ որ իր ուսերէն բեռ մը հանուած է, քանի որ շատ բաներ զորս ուզած էինք ընել, հիմա Մինաս Էֆենտիով կ'ըլլան: Մարդը կը հասկնայ հիւքէ, հետեւաբար պիտի ուզենք որ քննէ ու թելադրանքներ ընէ մեր հիւքի աշխատանոցին մասին: Աշխատանքի առաջարկ ունեցեր է Ատանայէն, լաւ վճարումով, բայց ընտրեր է հոս վերադառնալ եւ միսիոնարներուն ծառայել: Կ'ըսէ որ աքսորի ատեն Միս Վոնի նամակներուն եւ միսիոնարներուն աջակցութեան շնորհիւ յաղթահարած է իր աքսորի դժուարութիւնները:

Երէկ, սարսափելի տաքին, մինչ կը հանգչէի սենեակս, իմացուցին որ իսլամ կիներ եկած են: Ստիպուեցայ հագուիլ ու իջնել: Եկողները քափիին կիներ, դուստրն ու ծառան էին, որոնք սենեակը նստած էին. կը յիշե՞ք՝ երբ իրենց տունը գացեր էինք պայրամի տօնին: Կիներ շատ տրամաթիք անձ մըն է եւ հաճելի է իր խօսիլը

լսել: Գիտե՞ք ասոնք ինչպէ՛ս կը սահմուկին «չար ացք»էն: Իր մանչին ակնարկելով, կինը ըսաւ որ ան «վեց լեզու կը խօսի - Աստուած թող հանէ այս անէծքը»:

Երանի գիտնայի այն քաղցրահունչ արտայայտութիւններէն զորս մարդիկ կը գործածեն: Եթէ մէկը կը սիրես եւ համակրանք ունիս իրեն հանդէպ, կրնաս ըսել թէ քու սիրտդ կը յարմարի իրենի-նին: Փոքրիկն Ռեբեկան որ մեզի բերուած էր քանի որ թուրքերէն վերախլուած իր մայրը գործ գտած էր ընտանիքի մը մէջ (ուր փոք-րիկին տեղ չկար), առաջին շաբաթները լացով անցուց:

- Ինչու՞ կու լաս, մեզի չե՞ս սիրեր,- հարցուց միւս փոքրերէն մին:

- Այո, կը սիրեմ, արիւնս կ'եռայ ձեզի համար: Բայց նորէն, մայրս կ'ուզեմ,- պատասխանեց Ռեբեկան:

Փոքրիկները կը խաղան իմ տեսած ամէնէն իւրայատուկ պուպ-րիկներուն հետ: Պուպրիկներ շինած են թափօններէ:

Քաղաքական կացութիւնը այնքան անհանդարտ է, որ մարդիկ չեն գիտեր ի՛նչ ընեն: Ուզածիդ չափ ֆրանսամէտ փրոփականտ կայ, որ կը նշանակէ թէ որոշակիօրէն հակամարտութեան կեցուածք մը կը սնուցուի: Մեր վարկը խաթարող՝ կարելի ամէն բան կ'ըսեն: Ֆրանսացիք, մինչեւ այս պահը, ոչինչ կ'ընեն բնակչութեան հա-մար, իսկ մենք կարելի ամէն ինչ կ'ընենք օգնելու համար: Եղածը տարօրինակ է: Քաղաքին մէջ ժողովուրդին վիճակը սարսափելի է: Երանի ֆրանսացիք խօսելէ զատ բան մը ընեն:

Յուլիս երեսուն

Այսօր յուսահատ կը զգամ: Որբերուն թիւը կ'աճի, իսկ մեր յատկացումները կը նուազին: Ատանայէն մթերքի փոխադրումը չա-փազանց սուղ է, քանի ամէն ինչ պէտք է բեռնատար անասուն-ներով փոխադրել: Դժուար թէ մարդ գիտակցի մեկուսացած Հա-ճընին առնչուող Նպաստից գործի դժուարութիւններուն: Քաղաքին մէջ գնուելիք բան չկայ: Էտիթը կ'ըսէ՝ քաղաքը «մաքրուած է այնպէս՝ ինչպէս ազոաւը պիտի մաքրէր»:

Երէկ քաղաք գացինք պսակի: Չեմ սիրեր երբ ստիպուած ըլլամ աղտեղութեան մէջ մտնել: Բայց պատշաճութիւնը կը պահանջէր, քանի ընտանիքը կը փափաքէր որ ամերիկացիք ներկայ ըլլան: Միայն Էտիթը, Միս Սմոլն ու ես գացինք: Մեզի ըսուած էր որ կէսօրին երթանք: Բայց Էտիթը ըսաւ թէ տարբերութիւն պիտի չընէ, քանի որ յստակ չէ թէ ե՛րբ է կէսօրը: Ուստի, մենք, սովորական ժամուն՝ 12ին կերանք ու մեր բնակավայրը ձգեցինք ժամը մէկին: Երբ տեղ հասանք, ստիպուած էինք բարձրանալ բարձրագոյն յարկը խախտու տան մը, որ սիրտխառնութիւն հոտերով լի էր: Ասիկա փեսային բնակարանն էր: Աւելի ճիշտը՝ այն տեղն էր, ուր ինք մէկ-երկու սենեակ ունէր: Սարսափելի գերխճողութեան այս պայմաններուն մէջ ոչ ոք կրնայ ասկէ աւելին ունենալ: Առաջնորդուեցանք *սելամ-լըքը*՝ հիւրասենեակը, եւ հիւրասիրուեցանք անուշ օշարակով: Ներկաները անչափ անհոգ կը թուէին պսակին մանրամասնութեանց խնդրով: Չէին գիտեր որ հարսը գնա՞ց դպրոց՝ ուր պսակի արարողութիւնը տեղի պիտի ունենար: Ուստի շուրջ կէս ժամ ետք առաջարկուեցաւ որ առաքելական դպրոց երթանք, ուր հաւանաբար շուտով հարսն ալ կրնար հասնիլ: Կարծես ծնողքը քիչ առնչուած էր իրադարձութեան: Երբ հասանք դպրոց՝ պատրաստութեան բան չտեսանք, թէեւ հոն եղող միքանի առաղծագործ երբ մեզ տեսան՝ գործի լծուեցան: Ուրիշ մարդիկ ալ եկան եւ սենեակը լեցուիլ սկսաւ: Հաւաքուածները ժողովրդային պատկեր մը կը ներակայացնէին. լաւ հագուած միքանի մարդիկ կային, որոնց կողքին ամէն որակի՝ մինչեւ ցնցոտիներ հագուած մարդիկ ալ: Ի վերջոյ հարս ու փեսան երեւցան, իրաքանչիւրը՝ իր ազգականին ընկերակցութեամբ: Նախ բեմին առջեւ կեցան, յետոյ չորս կրօնաւորներէն մին թելադրեց որ բեմ ելլեն, եւ ելան: Հանդիսականները կարծես չէին հետաքրքրուած արարողութեամբ, ու շարունակեցին իրենց խօսակցութիւնները, որ գրեթէ խլացնող էին: Կրօնաւորները է՛ն փնթիներն էին. արարողութիւնը տպաւորիչ չէր, մինչեւ ժամը 3.45 տուեց: Փորձեցինք կարելի արագութեամբ դուրս ելլել՝ խուսափելու համար փեսային տունը վերադարձող ամբոխին խռնուելէ: Բայց ջլաջողեցանք: Փորձեցի ընթացիկ լուսանկար մը նկարել, բայց մարդիկ

նկատեցին եւ քարացան. ամէն մարդ կ'ուզէր նկարին մէջ ըլլալ: Անշուշտ նկարեցի՝ զիրենք գոհացնելով: Ամբոխին գրեթէ մէջտեղն էինք եւ անկարելի էր շնչել: Թաշկինակները քիթերնուս բռնած յառաջացանք: Բարեբախտաբար ճամփաբաժանին՝ ամբոխը մայրուղին ընտրեց, մինչ մենք ուրիշ ճամփայ առինք: Իրենցմէ շուտ հասանք տունը, բայց պէտք էր սպասէինք հարսնետրոներուն, որովհետեւ նախ յատուկ արարողութիւն մը պէտք էր կատարուէր, որմէ ետք միայն մարդիկ կրնային տունը մտնել: Տղայ մը այծի մը պարանը բռնած կը սպասէր: Երբ հարս ու փեսան տուն հասան, մարդ մը արագօրէն այծը դարձնելով իր կռնակին՝ կտրեց կոկորդը:

Արիւնը հոսեցաւ փողոցն ի վար, իսկ հարս ու փեսան արիւնը կոխելով մտան տուն: Ասիկա ընթացիկ սովորութիւնն է հոս: Բայց եթէ այծը սուղ ըլլայ՝ կարելի է փոխարէնը կուծեր կոտրել: Ուղղուեցանք վեր՝ գարշահոտ ամբոխին մէջէն, եւ նստանք յատկապէս կանանց վերապահուած սենեակը: Աւելի լաւ սենեակը այրերուն վերապահուած է անշուշտ: Միքանի վայրկեան ետք, Էտիթը ըսաւ որ կրնանք շնորհաւորել հարսը եւ տուն երթալ: Հարսը կեցեր էր սենեակի մը մէջ, ձեռք կը թօթուէր հիւրերուն հետ, մինչ փեսան ուրիշ սենեակի մը մէջ նոյնը կ'ընէր: Երբ դուրս կ'ելլէինք, տեսանք որ խեղճ այծը կը մորթագերծէին: Մեծագոյն դժուարութեամբ յաջողեցանք արիւնին չկոխել: Մինչ այդ, արիւնը կարմրեր էր փողոցը: Շուրջ հինգին տուն հասանք:

Միս Սմոլը հնարագէտն է իր գործին: Գրեթէ բան մը չունի ի ձեռի որպէսզի գործ դարձնէ, բայց ձեռով մը կը յաջողի գործերը ընթացքի մէջ պահել: Չէք կրնար երեւակայել: Նեղն են՝ ամէնասովորական կարիքներու առումով իսկ: Կարելու դերձանը գրեթէ սպառած է. գրած ենք Տերինճէ, բայց ոչինչ ստացած ցարդ: Միս Սմոլը գործ պէտք է հայթայթէ աղջիկներուն եւ՝ գրեթէ ոչինչէն, ու կը յաջողի՝ Գիտէք՝ հին մուսլին ներքնագգեստներ ունէի, որոնք միքանի անգամ ալ պիտի հագուէի ու թափէի: Ատոնց լաւ մասերը առի եւ կրցայ 20 քառակուսի թաշկինակի չափ ձեւել: Իսկ Միս Սմոլը յաջողեցաւ կրտսեր աղջիկներով զանոնք թաշկինակի վերածել: Ոմանք միջակ, իսկ երկուքին եզերքը ասեղնագործուած է: Միս Սմոլը այս ծայրամասերը փրցուցեր էր իր հին հագուստէն:

Տաղանդ ունի տեսնելու կարելիություններ՝ ամենէն անխոստմնալից բաներուն մէջ իսկ: Հայրը ծովային սպայ էր, իսկ եղբայրը երբ գրէ քրոջը եւ կարծէ որ քոյրը տոգորուելու պէտք ունի, անոր կը յիշեցնէ իրենց հօր սխրանքը:

Պէտք չէ մոռնամ որ ամէն առտու ժամը 5.30ը կը հասնի ճիշտ ժամանակին, ի հեճուկս կանուխ կամ ուշ քնանալուս: Հետեւաբար՝ «գիշեր բարի»:

Օգոստոս եօթ

Կէսօրէ ետք Կարապետ էֆենտին հանդիպեցաւ: Մոռցայ որ չէք գիտեր զինք: Ան հեռագրորդն է քաղաքին, ամերիկացիներուն լաւ բարեկամը: Ոգետրուած էր, որովհետեւ վստահ էր որ իրեն հասած լուրը ճիշտ է, թէ՛ Ամերիկան Հայաստանի մանտրաթը պիտի ստանձնէ եւ թէ՛ Կիլիկիան այդ հողատարածքին մէջ պիտի ներառնուի: Չէինք կրնար աւելի լաւ բան ուզել: Բայց չենք համարձակիր լաւատես ըլլալ դեռեւս՝ հաւատալու համար:

Այսօր, Կիւլենիան, փոքր օգնականս, պահ մը հեռացաւ ու վերադարձաւ նուէրով մը՝ իր ձեռակերտ փիղ մը բերաւ ինձի: Ծայրայեղօրէն ծիծաղելի է. կտորէ շիներ է զայն եւ ծածկեր է բուրդով, որ մանողներուն համար կը պատրաստուի: Տարօրինակ է բրդոտ փիղ մը ունենալ: Դեռ աւելին, ասիկա երկար պոչ մըն ալ ունի: Անցեալ օր փոքրիկները երկու պուպրիկ շինեցին մին ինձի, միւսը՝ Միս Սմոլին:

Օգոստոս տասներկու

Հաճելիօրէն զով եղանակ կը վայելենք ներկայիս, մանաւանդ գիշերներն ու առտուները. իսկ երէկուան դաշտագնացութենէն իվեր կեանքը աւելի տանելի կը թուի: Օրեր շարունակ համալիրէն դուրս չէի ելած, ուստի փոփոխութիւնը բոլորիս համար ալ լաւ եղաւ: Էտիթը առաջարկեր էր որ Շարի ճամփան գտնուող Չաթախի ալին քով ընթանք: Հաճընէն դուրս ձիավարեցինք դէպի բնութիւնը, որ ամբողջութեամբ սիրելի էր: Հաճոյացանք երբ կառավարութիւնը ուստիկան մը դրկեց մեզի հետ՝ մեզի պահապան: Ան առնուազն տեսարժան էր իր տարագրով, ուսէն կախուած իր զէնքով: Չէնքը

կախած էր այնպիսի դիրքով մը, որ ինձի թուեցաւ որ եթէ պատահաբար կրակուի՝ ես աչքէս կը հարուածուիմ:

Ծաղիկներուն գոյները հիմա մեծմասամբ մանուշակագոյն եւ նարդոսագոյն կը թուին: Լաւագոյն ու գեղեցկագոյն տեսակի ծաղիկներ կան հոս. շատ երկար, մեծ, մանուշակագոյն ցցուն գնդիկներով՝ աւելի քան երկու *ինչ* լայնքով: Վայրի *քլեմատիս*ը սպիտակ ցողի կը նմանի: Չաթախ՝ իջանք ձիերէն եւ մեր ընթրիքը շալկեցինք վեր՝ ջրվիժող ջուրին մօտի մեծ ժայռին քով: Իրիկնային գոյները գեղեցիկ էին. արեամուտին, լեռնագագաթները ալպեան փայլքը հագուեցան: Ընթրիքէն անմիջապէս ետք տուն ուղղուեցանք: Մութ էր երբ քաղաք մտանք: Արեւելեան քաղաքը աւելի տեսարժան է հեռուէն, քան մօտէն: Նոյնն է պարագան Հաճընին: Սարսափելի էին հոտերը քաղաքի նեղ փողոցներուն, եւ ինչպէս գիտէք՝ կատարելապէս աննկարագրելի: Փլատակները աւելի հետաքրքրական կ'երեւին գիշերը: Մինչ քաղաքէն կը ձիավարէինք, Էտիթին ըսի. «Մարդ կրնայ գրեթէ երեւակայել որ ասիկա Պոմպէյն է, իսկ սա՝ Կլաւքոսին բնակարանը»: Այս նկարագրութիւնը աւելի ճշմարիտ դարձաւ երբ անկիւնը դարձանք եւ լիալուսինը երեւաց: Հաճընը կառչած է ժայռին, ինչպէս պնակախեցին: Եւ թէեւ տուներուն մեծ մասը չկայ արդէն, մնացածները բաւական են որ սքանչելի լուսնային պատկեր մը հրամցնեն: Ըստ Էտիթին, Հաճընը ներկայիս միակ միսիոնարական կայանն է, ուր ձիով միայն կարելի է հասնիլ: Առաջ, նման ուրիշ կայաններ ալ կային, բայց հիմա կա՛մ երկաթուղին հոն կը հասնի, կա՛մ ալ ինքնաշարժի ճամփաներ բացուելով հաղորդակցութիւնը դիւրացուած է:

Օգոստոս քսանմէկ

Մսթըր Մքֆարլընտը կը ծրագրէ Խառնի⁵² մեկնիլ շուտով: Իմացանք նաեւ որ Միս Սմոլն ալ կանչուած է այնտեղի որբանոցին համար: Մենք անմխիթար վիճակի մէջ ենք:

⁵² Գիւղ՝ Ատանայի նահանգի Ճեպէլ Պերեքէթ գաւառի, Պաղչէ գաւառակին մէջ, Ճիհուն գետի ձախ ափին: 1909ի Կիլիկիոյ աղէտին Խառնիի 140 տուն հայ բնակչութենէն փրկուեցան միայն 9ը (Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ.

Մեր վարի այգիին մէջ միքանի պզտիկ խնձորենիներ ունինք, որոնցմէ երբեք ալ հասուն պտուղ պիտի չունենանք, քանի որ տեղացիք խակ կը քաղեն զանոնք: Եզեկիէլ Մարգարէն կ'ըսէ. «Հայրերը ազոխն են կերեր, զաւակներուն ակռաներն են ցաւեր»: Այս արտայայտութիւնը գրուած է ճիշտ Կիլիկիոյ համար: Մարդիկը խաղողը եւ պտուղը կ'ուտեն՝ երբ դեռ ասոնք բացարձակ կանաչ են, կամ ալ հագի գունափոխուած: Իրենք այդպէս շատ կը սիրեն:

Այս առտու մինչ նստած էի ո՛չ թէ կիներու ընդունարանը, այլ հո՛ւն ուր կ'ընդունինք որբերն ու անօգնականները, կրտսեր աղջիկներէն երկուքը եկան նոր վարդագոյն գոգնոցներ հագած: Ձեռքս համբուրեցին, ապա ճակատնին տարին, յետոյ նորէն համբուրեցին: Թէեւ քնքուշ է, բայց բան մըն է որ երբեք չեմ քաջալերեր կիներու եւ փոքրիկներու պարագային: Ինձի շնորհակալութիւն կը յայտնէին իրենց նոր հագուստին համար: Ես կապ չունէի անոնց պատրաստութեան, բայց ամերիկացի պատասխանատուներէն մին եմ՝ նոր կացութեան, հետեւաբար երախտագիտութեան իմ բաժինս կը ստանամ:

Լեոնալանջի ընթրիքէն վերադարձած ենք. ասիկա Մսթըր Մքֆարլընտին եւ Միս Սմոլին ողջերթի խնճոյքն էր: Դժուար էր այդ գառիվերը ելլել: Տեղեր կային որ արահետը իննիսուն աստիճան ուղղահայեաց թուեցաւ, իսկ այս չոր օդին՝ նաեւ չափազանց սահուն: Գեղեցիկ էր տեսնել աղջիկները ընդառաջ՝ իրենց կարմրավարդագոյն գոգնոցներով: Երբ հարթավայրը հասանք, նստանք էջով բերուած գորգերուն վրայ: Խեղճ էջը երկու պղնձեայ ջրամաններ ալ շալկած էր: Ընթրիքնիս կը բաղկանար տեղական հացէ, որ բարակ կ'ըլլայ՝ *փէնքէյք* նման, վրան՝ մանրուած միս, որուն *լեհմաճուն* անունը կու տան: Ասիկա փաթեցինք, սենտուիչի վերածեցինք: Մաճուն ալ ունէինք. ընթրիքը ամարտեցինք մօտակայ գիւղէն բերուած խաղողով, ուր շուտ կը հասուննայ:

Նստած դիտեցինք անլի բարձրերէն հօտին վերադարձը եւ բացականչեցինք իտես «Հայաստան»ին, հուսկ՝ պատանիներէն մէկուն գեղեցկութեան, եւ ոգետորուեցանք «Ամերիկա»յով: Մեկնելէ ա-

Բարսեղեան, Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 2, Դ-Կ, ԵՊՀ Հրատ., Երեւան, 1988, էջ 679):

ռաջ մեզմէ ոմանք «թաշկինակ մը ձգել» խաղցան կրտսերներուն հետ եւ ասարտեցինք «Լանտըն Պրիճ» երգով: Զուարճալի պէտք էր ըլլար «պարան քաշել»ը քանի ես եւ ուսուցիչ մը կողմերուն պարագլուխներն էինք, իսկ կրտսերները զորս հաւաքագրեր էինք խաղին՝ հազիւ կրնային մեր ծունկերը բռնել: Անոնք մոխրաջուրի պէս փակեցան ու մենք յաղթեցինք, մինչ երէց աղջիկներ մեր օգնութեան հասան: Վերջալոյսին տուն հասանք:

Մինչ կը գրէի, դուռս զարնուեցաւ եւ երբ ըսի՝ «հրամեցէք»՝ Կիւլենիան եւ Սիրանուշը երեւցան, իրենց ձեռքերուն նուէրներ՝ անկողին մը պուպրիկներուն, հագուստեղէն եւ մէկական գիշերանոց: Երանի կարենայիք տեսնել ասոնք. անկողինը՝ պատուհանի ցանցի կտոր մը ունի իբրեւ առածգական բաժին, իսկ մահիճը ճարտարօրէն շինուած է: Այնքան քաղցր է որ փոքրերը համոզուած են թէ ես կառչած եմ պուպրիկներուն: Շատ լրջութեամբ գործ կը կատարեն. *Ֆիլը* (փիլը) այնպէս մը լեցուցեր էին որ ոտքի կը կենայ եւ ինծի կը նայի:

Սեպտեմբեր հինգ

Թեթեւ գլխապտոյտ մը կը զգամ. քիչ մը ինքզինքս կորսնցուցած եմ: Անցեալ օր Մատթէոսը լուր բերաւ թէ պէտք է վերադարձնենք մեր դրոշմաթուղթերը, որովհետեւ այսուհետեւ մենք Կիլիկիոյ մէջ չենք, այլ՝ Սուրիոյ: Վստահ՝ չեմ հասկնար ի՞նչ կը նշանակէ ասիկա: Հաւանաբար միառժամանակ ետք կացութիւնը պիտի ուղղուի: Ասկէ շաբաթ մը առաջ օրիորդ Յակոբեանն ու ես Շար գացինք, ու վերադարձանք Երեքշաբթի: Վերադարձին շատ յոգնած էի եւ չկրցայ գրել այդ մասին: Վերադարձէս ետք ալ բազմաթիւ գործեր ու մանրամասնութիւններ ունէի ստուգելիք՝ գրելու առիթ չեղաւ:

Դժուար պիտի ըլլայ անցեալ Ուրբաթի առտուն վերյիշել՝ երբ մեկնեցանք Շար: Այնքան բաներ պատահեցան անկէ ետք: Գերգբաղ օր մըն էր, քանի ըլլալիքներուն կողքին ատելցեր էր պտուղ մթերելը: Կարելի չէր յետաձգել եւ - հետեւաբար - խենթի պէս լծուեցայ ատոր: Այդ օր ժամը երեքուկէսին գործը ձգեցինք, որպէսզի դէպի Շար մեր երթին գոնէ մէկ մասը քալենք եւ յաջորդ յետմիջօրէին հասնինք Շար: Ես նողկալի կենդանի մը կը վարէի, քանի

Վիքթորը կը կաղար: Եթէ վարած ծիս շիտակ բան մը ունէր՝ կ'ուզեմ գիտնալ: Կա՛մ իր ետեւի ոտքերով ճանճեր կը քշեր, կա՛մ առջեւի ոտքերով քարերուն կը խարխափէր: Տգեղ էր եւ փորձեց օրիորդ Յակոբեանին ձիուն կից զարնել, հետեւաբար ստիպուեցայ միշտ ետեւ մնալ: Իդէպ, դանդաղ եւ տհաճօրէն կոշտ ընթացք մը ունէր: Պիտի կարծէք որ այս պտոյտը բնաւ հաճելի չեղաւ: Բայց այդպէս չէ. սքանչելի ժամանակ անցուցի եւ անհամբեր եմ յառաջիկայ շաբթու աւելի երկար պտոյտին:

Պատմեմ Շարի մեր արշաւին մասին: Անցանք Չաթախը, ուր կը յիշէք՝ ընթրիք մը ըրեր էինք շաբաթներ առաջ: Ծրագրեր էինք Հաճընէն ձիով երեք ժամ հեռու գտնուող ակ մը երթալ եւ հոն բացօթեայ քնանալ:

Խումբին մաս կը կազմէին օրիորդ Յակոբեանը եւ ես, ընկերակցութեամբ մեր *քաթըրճի*ին (բեռնատար անասուններուն մարդը) եւ ոստիկանի մը: Մեր խոչընդոտներէն բացի, երկու բեռնաւոր անասուն ունէինք, քանի հագուստեղէն կը փոխադրէինք Շար՝ իբրեւ ձեռավարձք իրենց գործին, եթէ դրամի փոխարէն հագուստեղէն ուզէին ունենալ: Տաք էր օդը երբ ճամփայ ելանք, բայց տակաւ զովացաւ՝ մինչ արեւը մայրամուտին կ'ուղղուէր եւ մենք հաճելի ընթացք մը ունեցանք: Մթնելու պահուն բանակելի տեղը հասանք: Ոստիկանը վախցաւ ակ երթալու, ըսելով թէ՛ «հոն մարդ չկայ»: Ստիպուեցանք շեղիլ ակէն, ու գացինք ուղղութեամբ մը որ արահետ չունէր: Իվերջոյ հասանք հովիւներու վրաններու: Անոնք ողջունեցին մեզ՝ Արեւելքի մէջ այնքան ընդունուած հիւրասիրութեամբ եւ իրենց վրանները առաջարկեցին: Հրաժարեցանք անոնց ասպնջականութենէն եւ քիչ մըն ալ ձիավարելով, մեր ճամփորդական անկողինները փոցեցինք: Մարդիկը գետինը ծառի ճիւղեր դասաւորեցին, որով մեր ցանցերը մեր անկողիններուն վրայ կախուեցան եւ մենք ալ շատ հանգիստ եղանք: Ձիերը հաւաքուեցան եւ մենք սպասեցինք հովիւները, որոնք - բոլորը - աքսորէն վերադարձածներ են եւ իրենց ունեցուածքը կը վերակարգաւորեն:

Մեզի մածուն բերին, մինչ անոնցմէ մին սիրտը բացաւ. «երբ անապատը անօթի էի, ես ինձի ըսի որ եթէ երբեւէ վերադառնամ սեւ վրան, մածուն պիտի հրամցնեմ ամէն անցորդի»: Ձեզի կրնամ

ըսած ըլլալ որ բոլորին վրանները սեւ այծի մազէ շինուած են: Չկրցանք մեր հագուստներէն մաս մը հանել այս բաց տարածութեան մէջ, բայց հաճելի էր երկննալ աստղերուն տակ ու դիտել հովիւներու վրաններուն կողքի կրակները: Մեր երկու ընկերակիցները գետինը պառկեցան, մեր անկողիներուն ծայրը, իսկ ձիերը խոտ կերան մօտակայքը: Լոյսը բացուելուն՝ արթնցանք եւ հովիւներուն բերած այծի տաք կաթը խմելէ ետք շարունակեցինք երթը: Սովորական ճամփուն վերադառնալու համար գետակներ շրջանցեցինք եւ ժայռոտ արահետներէ անցանք, որոնք ծանօթ էին ոստիկանին: Երանի կարելիութիւնն ունենայի այս երկրին գեղեցկութիւնները նկարագրելու: Նման երկինքներ երբեք չեմ տեսած. լեռներուն գոյները կը փոխուին արեւալոյսին անցումներով եւ չեմ գիտեր ե՞րբ ամէնագեղեցիկը կ'ըլլան. երբ գոհարային վարդամոխրագո՞յն ըլլան, թէ՞ երբ մեղեսիկի բոլոր երանգները հագուին:

Պահ մը ետք Շարի դաշտագետինը հասանք: Մեզի համար հաճելի փոփոխութիւն էր՝ ամիսներ պզտիկ միջավայրի մէջ փակուած մնալէ ետք: Ժամը վեցին ձգեցինք հովիւները եւ ժամը 10ին հասանք Հասթահանա թրքական գիւղը, ուր հայեր կալուածներ ունին:

Հունձքի ժամանակն է. ցորեն կամնելը սքանչելի տեսարան կը պարզէ: Ծանօթ էինք մարդու մը, որ իր կնոջ կալուածներուն կը հսկէր: Եկաւ բարիգալուստի եւ հրաւիրեց որ վերադարձին իր տունը այցելենք: Օրիորդ Յակոբեանը իսլամ քեռի մը ունի Պոլլաթի մէջ, որ չերթէ գիւղ մըն է մեր ճամփուն վրայ: Պոլլաթ դադար առինք կէսօրուայ ճաշի՝ ապուրի, կամ աւելի ճիշտը՝ լոլիկապուր տաքցնելու: Այս ազնիւ քեռին եկաւ հետերնիս մնաց երբ կ'ուտէինք: Յետոյ իր տունը գացինք: Իրապէս հաճելի մարդ մըն է: Բայց քիչ մը տարօրինակ էր թիւ երկու կնոջ հանդիպիլ: Այս թիւ երկու կինը թելադրուած էր օրիորդ Յակոբեանին հարազատէն, որ այս մարդուն առաջին կինն է: Առաջին կինը իր ամուսնացած դստեր հետ ուրիշ տեղ կ'ապրի հիմա: Այս երկրորդ կինը չերթէ գիւղ եւ ազնիւ: Ռուսական ռճով թէյ հիւրասիրուեցանք, քանի չերթէզները շատ բաներ ուսերուն պէս կ'ընեն:

Այս յետմիջօրէին անբնական բան մը տեսանք: Հողմապտոյտ: Երբ կը յառաջանայինք՝ քաթըրճին մեզի թելադրեց որ ետև նայինք: Իրաւ ալ հեռուն, բարակ, կարմրափոշի սին մը տեսանք, որ գետնէն երկինք կ'երկարէր: Դաշտագետինը շատ գեղեցիկ է, իսկ գարնան անելի սքանչելի պէտք է ըլլայ, երբ բազմատեսակ ծաղիկներ ծաղկին: Չորս տարբեր տեսակի ուղտափուշ տեսանք: Անոնցմէ մին գրեթէ 5 ոտք հասակ ունէր եւ այնպիսի ճիւղեր՝ կարծես ճիւղաւորուած աշտանակ ըլլար: Դեղնագոյն մշտադալար մը կար եւ սիրուն փոքրիկ ծաղիկ մը որ կոճղերու մէջ կը բուսնի եւ կառոյցով պարիկային բան մը ունի, ճերմակ է եւ գետնին մօտիկ: Ասկէ մաճուցիկ նիւթ կը պատրաստեն:

Շարը դաշտագետնէն անդին է, լեռներուն մէջ, բայց Հաճընի պէս փակուած չէ: Դիրքը սիրուն է, հոսող գետակի մը երկու ափերուն: Հիմնուած է հոռմէացիներէն եւ Ոսկեայ Կոմանա կոչուած է: Շատ մը մեծ տաճարներ կային հոն. հաւանաբար Փոքր Ասիոյ սրբավայրերէն մէկը եղած է: Ժամանակ մը 5000 մայրապետեր ապրած են հոն: Տարիներով աներակի մէջ՝ ոչ ոք ոչինչ կառուցած է, մինչեւ շուրջ 50 տարի առաջ, երբ հայերը Շարը կառուցեցին օգտագործելով հնավայրի շինանիւթերը: Շատ հետաքրքրական է՝ սիւներու մասեր ու խոյակներ տեսանք տուներու պատերուն հիւսուած: Բողոքական եկեղեցիին ճակատապատը, օրինակ, լաւագոյն խոյակներէ հիւսուած է: Թուրքերը ժողովուրդին տեղահանութենէն ետք, Շարը առաւելագոյնս քանդած են: Չեն այրած զայն, ինչպէս ըրեր էին Հաճընին, այլ՝ փայտերը ծախած, եւ լրբօրէն քանդած երկու եկեղեցիները՝ առաքելականն ու բողոքականը, ըստ իրենց շնորհքին: Առաքելական եկեղեցին՝ ամբողջովին աներակոյտ, միայն կամար մը կանգուն ունի: Բողոքական եկեղեցին կարելի է ձեւի բերել՝ առանց մեծ չարչարանքի: Տախտակամածը հանուած է, պատուհաններն ալ: Խոյակներուն գեղեցիկ քանդակները ամբողջ ջարդած են, բայց կառոյցը դեռ լաւապէս կանգուն է:

Գացինք Հաճընի մեր որբուհիներէն մէկուն՝ Քրիսթինային տունը: Ամբողջ ընտանիքը թուրքերը սպանած են: Տուներնին հիմնովին քանդուած է. միայն լայն սենեակ մը կանգուն է, բաւական հովասուն, որովհետեւ բոլոր պատուհանները տարուած են: Շուրջս

նայեցայ՝ ներխուժողներէ մտահոգ: Բայց օրիորդ Յակոբեանը անփոյթ ակնարկով մը հասկցուց որ ապահով վայրի մէջ ենք: Անշուշտ, մարդիկ եկան մեզ տեսնելու, եւ, հանգստանալու քիչ առիթ եղաւ:

Կիւենիան, որ Հաճընի դպրոցէն էր եւ նոր վերադարձեր էր արտօրէն, մեզ հոգաց: Հոն էր նաեւ Ֆլորան, Ատանայի մեր կայքին, Տիկ. Հասսին, երկարամեայ խոհարարը: Առատ պտուղ՝ համեղ ճերմակ թութ, սալոր եւ շատ պզտիկ ծիրան հիւրասիրուեցանք: Կանուխ անկողին մտանք, բայց ի՞նչ գիշեր էր: Մարդ-մարդասանք չկար: Կարծեցի որ առաւօտեան լոյսը չճագած պիտի խելագարիմ. բայց առաջը չէի կրնար առնել: Ինքզինքիս ըսի. «անոր որ Տէրը կը սիրէ՝ զայն կը պատժէ» եւ հետեւցուցի որ շատ սիրուած էի: Ինքզինքս հանգստացուցի ըսելով՝ «գիշերային անձկութեան տուկալը առաւօտեան խնդութիւն կը բերէ»: Օրիորդ Յակոբեանը ըսաւ որ յաջորդ գիշեր տանիքը պիտի պառկինք: Յաջորդ օրը՝ Կիրակի, բողոքական եկեղեցիին մէջ այցելու առաքելական կրօնաւորը արարողութիւն մատուցեց, իսկ ես եւ օրիորդ Յակոբեանը պատուոյ աթոռներուն նստանք: Տախտակամած չկար՝ ժողովուրդը գետինը նստաւ, կանայք մէկ կողմ, այրերը՝ միւս:

Նստանք գորգով ծածկուած կոճղի մը վրայ՝ հաւատացեալներուն յարելով: Նստոցը այնքան ցած էր, որ մէջքս ցաւեցաւ մինչեւ երկար արարողութիւնը աւարտեցաւ: Ժողովուրդը չափազանց անհոգ է, մանաւանդ՝ փոքրերը: Ասոնք ուզածնուն պէս ելումուտ կ'ընեն: Փոքրիկ տղեկ մը, հակառակ իր երէց քրոջ խրատներուն, իր հագուստին մէկ մասը վեր բռնեց ու պարեց խորանին առջեւ: Ոչ ոք, նոյնիսկ կրօնաւորը, վրդոված կը թուէին ասկէ: Արարողութենէն ետք շարցի ամուլի մը ընկերակցութեամբ գացինք հնութիւնները դիտելու: Հետաքրքրական ամփիթատրոն մը կայ, որուն շատ մը նստարանաշարքերը կանգուն են: Կանգուն են նաեւ սիւներ, որով կը յստականայ թէ ու՛ր էին տաճարները: Այս հին քաղաքին մէջ տաճարներն եղած են հիմնական կառոյցները: Գեղատեսիլ մուտք մը տակաւին կանգուն է, բայց փաստը որ այնքան շինանիւթ տարուած է՝ յստակ է այն քիչէն որ տեղւոյն վրայ մնացած է: Մեզի

ընկերակցող մարդը սահմուկելի բաներ պատմեց 1895ի⁵³ Ատանայի կոտորածի պատահարներուն զուգահեռ: Ինք մէկն էր այն 80 հոգիէն, որոնք 5000 թուրքերու դէմ յաջող ինքնապաշտպանութիւն կազմակերպեցին՝ իրենց եւ իրենց ընտանիքներուն համար: Տոյց տուաւ թէ ու՛ր կոուեր էին եւ յայտնեց թէ վերջաւորութեան ստիպուեր էին լուցկիի գլխիկով կայծ տալ իրենց գէնքերուն, որոնք սովորական որսորդական հրացաններ էին: Բայց թուրքերը չէին գիտցած որ հայերուն զինամթերքը գրեթէ սպառած է: Իր կինը բացատրեց որ երկաթեայ երկար ձողով մը ինքզինք պաշտպաներ է: Սարսուզդեցիկ է այս բոլորը լսել ուղղակի ենթականերէն եւ՝ նոյնիքն դէպքին վայրը:

Յետմիջօրէին, բողոքականները արարողութիւն մը ունէին, որուն Յակոբեանն ու ես մասնակցեցանք: Յետոյ, հետեւելով կրօնաւորին, թափօրով ուղղուեցանք առաքելական եկեղեցիին ատերակները, ուր յիշատակի կարճ ձեռնարկ մը կատարուեցաւ՝ ջարդին ու քսորին մահացածներուն համար: Այդ գիշեր մենք հանուեցանք մեր սենեակին մէջ եւ *քիմոնօ*ներ հագուած՝ քալեցինք միքանի տուն վար ու հանգիստ քնացանք դրացիի մը տան տանիքը:

Մեզի ըսուած էր որ մօտակայ գիւղի մը մէջ կրնայինք պար դիտել. չերքէզ գիւղ մը, ուր Կիլենիան ծանօթներ ունի:

Չերքէզները շատ լաւ գիւղ կը կառուցանեն եւ ճերմակ կը ներկեն տունները, որով գեղեցիկ տպաւորութիւն կը ձգէ: Ասոնք թուրքերէն մաքուր են: Բոլորն ալ չափազանց սիրալիր էին: Գացինք ամէնահարուստ տուներէն մին, ուր դիտեցինք դուստրերէն ոմանց հարսանեկան զարդեղէնը: Կանայք շատ նկարագեղ հագուստներ կը հագնին, հարուստ՝ արծաթեղէնով ու գոհարեղէնով: Մեզի ընթրիք մատուցուեցաւ պղնձեայ մեծ ակսէով. իբրեւ գլխաւոր ճաշ տապկուած հաւ եւ տեղական հաց հրամցուեցաւ: Օրիորդ Յակոբեանն ու ես նոյն պնակէն կերանք: Բարեբախտաբար մենք միակ ուտողներն էինք այդ պահուն. միւսները յետոյ կերան:

Պարը այնքան յետաձգուեցաւ որ յուսահատիլ սկսայ, անդրադառնալով որ որքան հեռու կը գտնուէինք մեր գիշերելու տեղէն:

⁵³ Հաւանաբար տպագրական սխալ. պէտք է ըլլայ 1909:

Ի վերջոյ պարը սկսաւ: *Սերտարին* նստանք, մինչ մարդ մը գետինը խոնացուց, որ շատ կարելոր էր: Հակառակ այս տամկացումին, պարի վերջաւորութեան փոշին ահաւոր էր: Այրերը սենեակին մէկ, իսկ կանայք՝ միւս կողմը կեցան: Տեսակ մը հարմոնիքայի ընկերակցութեամբ, անոնք երկու-երկու պարեցին: Ոչ թէ շրջանակաձեւ պարեցին, այլ *քապրիի* պէս: Պահ մը զէնքի կրակոցներ եղան պատուհաններէն, եւ քանի որ չէի ակնկալեր այդ կրակոցները՝ քիչ մը խռովեցայ: Սակայն, քանի որ տեսայ կրակոցները, կարծեմ կրնամ տոկալ, եթէ ասիկա միակ փորձառութիւնս պիտի ըլլայ: Վերադարձանք Հասթահանա, երբ մութը գրեթէ կոխած էր: Կարծես կ'անձրեւէր, հետեալաբար ստիպուեցանք տան մէջ պառկիլ: Ընտանիքը մեզի տրամադրեց իր միակ սենեակը. շատ հանգիստ քնացանք: Առտուն ցուլի կաթ եւ տեղական հաց նախաճաշեցինք: Շարի մէջ ինծի անձանօթ կաթի մշակուած տարբերակ մը կերայ: *Քեմուտ* է անունը: Ոչխարի եռացուած կաթն է, քիչ մը մածունով խառնուած: Քաղցր է եւ քիչ մը կը նմանի Տելընշայրի կաթնասերին: Տուն հասանք յաջորդ յետմիջօրէին:

Սեպտեմբեր Կաս

Դեռեւս Հաճըն են, թէեւ կ'ենթադրէի որ մօտակայ գիւղ մը պէտք էր գտնուէի: Կիրակի յետմիջօրէին Տոքթ. Չէյմպըրզէն հեռագիր ստացանք, թէ էպիները եւ Միս Պրետըմասը, մենոնայթ միսիոնարները, Ատանա հասած են եւ Հաճըն պիտի ուղղուին Երեքշաբթի: Կ'ուզէին որ եօթ անասուն՝ ձի եւ ջորի, Միս դրկենք, որպէսզի զիրենք դիմաւորեն: Ասիկա մեր շրջապտոյտը կասեցուց: Բարեբախտաբար, ասիկա մեր շրջապտոյտը յետաձգեց, քանի որ ծրագրեցինք շրջապտոյտի ելլել յաջորդ Երկուշաբթի: Մենոնայթներուն իրերը, որոնց Միս Վոնը կը հոգար, տարուած են Սուրբ Սարգիս, ուր երէկ գացինք՝ հսկելու կահոյքին տեղաւորումին, որպէսզի կարելի եղածին չափ տնային կերպարանք տանք վայրին:

Կրտսերները պտոյտի տարինք, որով գեղեցիկ օր մը անցուցին: Խաղողին ժամանակն է: Թէեւ առատ չէ խաղողը այս տարի, բայց ես իմ առատ բաժինս կ'ունենամ: Ճերմակ խաղողը կը սիրեմ: Պէտք էր տեսնել փոքրիկն Ռեբեկան եւ Կիւնէշը: Կիւնէշը կաղ է,

Ռեբեկան՝ շատ նիհարիկ: Իրենց համար հետիոտն պտոյտը շատ երկար պիտի ըլլար: Զիրենք թամբերուն գրպանները դրինք ու կախեցինք ձիերէն մէկուն կռնակէն: Ճամփորդութեան ատեն միայն գլուխնին կ'երեւէր պարկերէն դուրս:

Երբ վերադարձանք համալիր, մեծ խանդավառութիւն նկատեցինք եւ մտմտացինք թէ ինչ կրնար ըլլալ պատճառը: Մուտքին՝ հանելուկը լուծուեցաւ: Աղջիկները խրտուիլակներ շինած-շարած էին մեզ ողջունելու: Իրապէս, ասոնք իմ հանդիպած ամէնէն խելացի բաներն էին: Այդ խրտուիլակները տարբեր աղջիկներ կը ներկայացնէին եւ ճշալու աստիճան ծիծաղաշարժ էին: Եօթը հատ էին՝ մեզմէ իւրաքանչիւրին համար պատրաստուած: Ինծի «Կինէշը» տրուեցաւ, որուն գլխարկ իբրեւ արծնուած սկահակ մըն էր դրուած: Մարմինները փայտէ ցալիկներով շինուած էին, յետոյ լեցուած ու գունաւոր գծուած՝ կաւիճով: Բակ մտանք մեր յատուկ իրերով եւ այնքան խնդրով որ հազիւ կրնայինք քալել: Ամէնէն հիասքանչը ընդունարանը մեզ դիմաւորող կերպարն էր: Նախորդ օրը Սիսէն Թայարտան⁵⁴ կապուած էր, եւ ահա՝ անոր կրկնօրինակը մեր դէմն էր, խաչաձեւուած ոտքերով, վեր ցցուած մօրուքով եւ ձեռքը՝ բարեւի բարձրացուցած:

Երկուշաբթի ձի մը գնեցի. յուսամ իրեն մասին եղած գովասանքները ճիշտ ըլլան: Զինք Հայաստան կոչեցի, որ Արմինիային անունն է: Տեղացիք հաճոյացած են իմ անուանումովս: Գեղեցիկ բառ մը՝ երբ մարդիկ զայն կ'արտասանեն: Զիս պիտի հանգստացնեմ՝ ի պատրաստութիւն գալ շաբթուան երթին: Այս Ուրբաթ, Էտիթին հետ կ'երթամ ժամանող մենոնայթներուն ընդառաջ: Անոնք մեր հիւրը պիտի ըլլան Կիրակի օր, իսկ այնուհետեւ հաւանաբար ուզեն երթալ Սուրբ Սարգիս, ուր իրենց կահոյքը դասաւորուած է:

Ինչպէս դրոշմաթուղթերէն կը նկատէք, հիմա մենք եգիպտական արշաւախումբին ծիրին մէջն ենք, այսինքն՝ Ալեքսիի: Շարունակեցէք ինծի հասցէագրել ինչպէս առաջ, քանի՛ եթէ նոյնիսկ

⁵⁴ Ֆրանսացի զօրավար Թայարտա Սիսի գինուորական կառավարիչն էր:

Կիլիկիա չենք գտնուիր պաշտօնապէս, տարբերութիւն չ'ընէր: Իսկ անմիջապէս որ նոր հասցէ մը յառաջանայ՝ ձեզի կ'իմացնեմ:

Սեպտեմբեր քսանչորս

Կը ցաւիմ որ անհանգստացած էք թրքական ըմբոստութեան տարածայնութիւններով, քանի որ հոն ուր կը գտնուիմ՝ բացարձակ վտանգ չկայ: Օրիորդ Յակոբեանը կ'ըսէ թէ Ատանայի Վիլայէթը միշտ ալ ամէնէն ապահովը եղած է Թուրքիոյ մէջ, իսկ Հաճընը՝ ամէնէն ապահով քաղաքը Վիլայէթին մէջ:

Անցեալ Երկուշաբթին երեքով սկսանք մեր շրջապտոյտը դէպի գիւղերը: Առտուն գերգբաղ վիճակ էր, քանի մենոնայթները եկան իրենց բարեկամները մեր քովը ընդունելու՝ իրենց համալիրը շատ հեռու ըլլալուն: Ուրախ էինք իրենց գալուստով, բայց ստիպուեցանք աճապարել: Հիւրերուն պատճառով ընթրիքի պահը երկարեցաւ: Հիւսքի գործարանին արտադրած կտորեղէնը որ միշտ պէտք է ստուգել, ուշ բերուեցաւ, ուստի մեր կարելին ընելով հանդերձ, չկրցանք համալիրը ձգել ժամը չորսէն առաջ: Մեր ծրագիրը Փանլըք⁵⁵ երթալ էր առաջին գիշերը, որպէսզի յաջորդող դժուար ճանապարհորդութիւնը՝ Կերիմսէ⁵⁶, դիւրացնէինք: Քաղաքը կտրելով, անցանք մեր «ջրհորին» միւս կողմը: Հաճընը բարձրադիր է, բայց գացինք տեղ մը, ուրկէ դէպի վար՝ տուները սկսանք դիտել: Ճամփան՝ շատ զառիվեր, տակաւ անելի դժուարացաւ:

Հասանք վիճակի մը, ուր միայն հողին չամրացուած քարեր կային, եւ մեր ձիերը ուշադիր պէտք էր յառաջանային: Կը յիշեմ, փոքրութեանս, մեծապէս տպաւորուած էի զօրավար Իսրայէլ Փաթընմի նկարով, ուր ան փախչելով բրիտանացիներէն, կը ձիավարէր քարէ աստիճաններէ վար: Հիմա ատիկա ոչինչ կը նկատեմ: Ա՛յն ինչ իրագործեցի Հայաստանի մէջ լրիւ հաւասար կը նկատեմ զօրավարին քաջագործութեան: Չեմ հասկնար՝ կենդանիները ինչպէ՞ս շարունակեցին ոտնատեղ գտնել: Բարեբախտաբար, այս բոլորը հա-

⁵⁵ Փանլըք՝ հայկական գիւղ, Հաճընէն 4-5 ժամ հեռու դէպի հիւսիս արեւմուտք: 1896ի կոտորածներէն ետք գիւղը հայաթափուած էր:

⁵⁶ Կիլիկեան Թագաւորութեան շրջանի պատմական Կոռոմոզլը, 1910ականներուն յունաբնակ գիւղ, կը գտնուէր Հաճընի արեւմուտքը:

ճելի էր: Ուշ սկսած էինք երթը եւ մթննալ սկսաւ՝ Փանլըքը երեւնալէն առաջ. իսկ ժամը եօթին արդէն անկարելի էր յառաջանալը:

Յառաջացանք, բայց անյուսալիօրէն կորսուեցանք: Մէջտեղ մնացինք 5 ձիով, լեռան կողին, առանց լոյսի նշոյլի: Շարունակեցինք երթը՝ մեր ձիերը առաջնորդելով, առանց *եարփ* մը իսկ տեսնելու: Ձիերը ճարտար էին, բայց խաղ չէր քարերուն վրայէն սահիլն ու երբեմն իյնալը: Հարթավայր մը հասանք, ուր առաջարկեցի գիշերել: Միւսները կարծես կ'ուզէին շարունակել, ուստի յառաջացանք սահելով եւ սղալով: Վերջաւորութեան, երբ մեր վիճակը յուսահատական կը թուէր, լոյսի նշոյլներ տեսանք վարը: *Քաթըրճին* ձայնեց՝ «Փանլըքը, Փանլըքը» որ կը նշանակէ փանլըքցիներ: Ձայն չեկաւ, բայց մենք շարունակեցինք: Իվերջոյ լոյսերը սկսան մօտենալ եւ թուրք երեխաներ մօտեցան շօճիի ճիւղերէ ջահեր բռնած: Աւելի պիտի չմանրամասնեմ, բայց միքանի սխալ արահետներով երթալէ ետք հասանք երկու-երեք տուներու: Փանլըքը չէր, բայց տեղ մըն էր ուր կրնայինք գիշերել: Բոլորը սիրալիք էին, իսկ բարի, թուրք ծերուկը բարեկամական էր՝ կրցածին չափ: Մեր անկողինները տանիքը փոեցինք եւ շօճիի ճիւղերու կրակի լոյսով, ընթրիքի իրերը հանեցինք: Անօթեցած էինք, քանի արդէն ժամը 9 էր: Ափսոսանքով նկատեցինք, սակայն, որ ամէնէն կարելոր թամբաբեռը Հաճըն մնացեր էր: Այդուհանդերձ, կարգադրեցինք ընթրիքը եւ բախտին վստահեցանք մեր շրջապտոյտին շարունակութիւնը: *Քաթըրճին* թուրքին մանրամասնօրէն պատմեց մեր արկածախնդրութեան մասին:

Թուրքը պատասխանեց. «այո, կը հասկնամ թէ ինչ դժուարութեամբ իջած էք լեռնէն բայց ի՞նչպէս կրցաք այս պակասաւորները⁵⁷ բերել»: Գիտէք, Թուրքիոյ մէջ կանայք երբեմն իբրեւ էջ, բեռնատար կենդանի կամ պակասաւոր էակներ կ'որակուին: Չեմ գիտեր այս որակումներէն ո՞րն է էն գէշը:

Հանգիստ գիշեր մը ունեցանք, իսկ առտուն, տունէ մը մարդ մը մեզի տաք կաթ բերաւ, մինչ մեր ազնիւ տանտէրը համեղ խաղող հրամցուց, որով լաւ նախաճաշ մը ունեցանք: Ճամփայ ելանք ժամը

⁵⁷ Հաճնոյ բարբառով՝ պասասավուէյ (= պակասաւոր), որ իգական սեռին տրուած կոչական մըն է, միաժամանակ բարացուցական՝ կնոջ ստորադասութեան:

7ին, ընկերակցութեամբ տեսարժան թուրքին, որ մեզի ընկերակցեցաւ մինչեւ Փանլըք՝ ճամփան ցոյց տալու: Մէկ ժամ ձիով յառաջանալէ ետք հասանք: Անցորդէ մը իմացանք, որ Փանլըքի մէջ թամբաբեռով մարդ մը մեզի պիտի հանդիպի: Հասկցանք որ մեր Հաճընի թերացումը նկատուեր է եւ բարի մարդիկը կարգադրեր են որ այդ բեռը մեզի հասնի: Երբ Փանլըքի կամուրջը հասանք, հանդիպեցանք մարդուն, Ալիթէայէն երկտողով մը: Յոյս ունէինք որ յետմիջօրէին կը հասնինք Կերիմսէ, բայց սխալ ճամփայ առինք եւ իվերջոյ ժամը ճին հասանք տեղ: Թամբին վրայ 11 ժամ մնալը բաւական շատ է:

Կերիմսէ տեսարժան դիրք մը ունի: Շատ հին յունաբնակ գիւղ մըն է: Բնակիչները չեն աքսորուած, բայց ասպատակող թուրքերու կողմէ կողոպտուած են եւ քանի որ հողամշակ չեն, ոչ ալ աշխատասէր՝ տխուր վիճակի մէջ են: Ոմանք փոքր պարտէզներ ունին, օրուան վաստակովը օրը ապրող մարդիկ: Հետաքրքրական ընտանիք մը կայ՝ Սաւայտու անունով: Հայր ու մայրը գրել-կարդալ չեն գիտեր, բայց զաւակները բոլորն ալ Հաճըն Հոմ գալով ուսում առած են: Զաւակներէն մին Մ. Նահանգներ պատուելի է, երիցագոյն դուստրը՝ Պոլսոյ Քոլէճէն շրջանաւարտ: Ամէնակրտսեր դուստրը, Սոֆիան, մեր դպրոցն է հիմա, սիրելի պարմանուհի է: Ընտանիքը կը բնակի եկեղեցիին կողքին, ուր եւ մնացինք: Մեծապէս հոգացին մեզ:

Տախտակամածին փռեցինք մեր անկողինները, հագուեցանք սենեակի մը մէջ ուր եւ ճաշեցինք: Օլիմփիան՝ երէց քոյրը, իր տան մէջ բաներ մը եփեր էր, հետեւաբար աղուոր մը ճաշեցինք: Տեղական բոլոր տեսակի ճաշերը սիրելիս պատճառ է որ այսպիսի շրջապտոյտներ հանգստաւէտ դառնան: Յոգնեցուցիչը մարդոց մնայուն ներկայութիւնն է: Ուր որ հասնիս՝ քեզ կը շրջապատեն, նոյնիսկ առիթը չես ունենար լուացուելու: Այս անգամ հետս ձեռագործ տարեր էի եւ գէշ չեղաւ:

Յորենը զատելու եղանակը յատուկութիւն մը ունի որ Կերիմսէին է, թերեւս ալ՝ յունական գիւղերունը: Մենք ճիշտ ժամանակին հասեր էինք՝ դիտելու զայն: Երկար սնամէջ կոճղ մը կը կանգնեցնեն եւ զտուած ցորենը կը թափեն անոր մէջ: Յետոյ չորսական

մարդ կը կանգնի կոճղին իւրաքանչիւր կողմին ու իւրաքանչիւրը իր մեծ, փայտէ թակոցը վերէն վար կոճղին մէջ տարուբերելով, երգեր կ'երգէ: Այս ձեւով անոնք կը գատեն ցորենը յարդէն: Իրիկունը երիտասարդները կը կանգնին մէկ, իսկ երիտասարդուհիները միւս կողմ: Երկու տարբեր վայրերու մէջ ըրին ցորենի գտման այս գործողութիւնը: Մէկը՝ ճիշտ մեր քնացած վայրին ներքելը: Այնքան յոգնած էինք որ քնացանք իրենց աւարտելէն առաջ: Յաջորդ առտու խօսեցանք որբերու՝ թէ՛ Նիր Իսթ Ռիլիֆին⁵⁸ եւ թէ՛ Հաճըն Հոմին համար: Սքանչելի աղբիւր մը կայ՝ Ճեննէթ Փունարը, դրախտային աղբիւր է, ուր մազլցեցանք ջուր խմելու: Վերադարձին, նոյն գիւղին մէջ այցելեցինք ընտանիքի մը, ուր հիւրասիրուեցանք տեղական բարակ հացով ու համեղ մեղրով:

Մեր յաջորդ գիւղը Երապաքանն⁵⁹ էր որուն ճամփան սքանչելի է: Ըսած էին ինձի թէ տեսարանները ուշագրաւ էին. բայց իրականութիւնը ըսուածէն աւելի է: Ճամփուն մեծ մասը լեռներուն կողերէն կը յառաջանայինք, այնքան նեղ կաճաններէ, որ զարմանալի էր թէ ինչպէս մեր ձիերը սմբակնին դնելու տեղ կը գտնէին: Ճամփուն մէկ մասը շօճիի անտառներու մէջէն կ'անցնէր: Օդը քնքուշ էր ծառերէն թափած եւ գետինը ծածկած ցողիկներու բոյրով: Հիասքանչ տեսարաններ տեսանք՝ հեռաւոր գագաթներու, նոյնիսկ պահ մըն ալ՝ Ամանոսի լեռները: Գեղեցիկ լեռ մը կար՝ Ալամաղ (Ամեհի լեռ), այնքան բարձր, որ միշտ ձիւնի գօտիներ ունի իր վրան: Կերիւմսէէն մեզի իբրեւ առաջնորդ ընկերակցողին շնորհիւ, ճամփու դժուարու-

⁵⁸ Նիր Իսթ Ռիլիֆը կեանքի կոչուած էր 1915ին, սկիզբը՝ «The American Committee for Syrian and Armenian Relief, NEF» անունով, ի պատասխան Ա. Աջխարհամարտի առաջին իսկ տարիներուն ծայր առած տեղաբնիկ հայ, յոյն, ասորի եւ այլ քրիստոնէայ փոքրամասնութեանց ահեղ տառապանքներուն, տեղահանութեան ու ջարդերուն: 1919ին, կազմակերպութեան գործունէութեան դաշտը տարածուելով ընդգրկեց ամբողջ Միջին Արեւելքն ու Արեւմտեան Ասիոյ շրջանը եւ վերանուանուեցաւ «Near East Relief»: 1930ին ան վերակոչուեցաւ «Near East Foundation»: 1915-30՝ ՆԻՐը հանգանակեց աւելի քան 110 միլիոն տղար՝ ի նպաստ Օսմանեան Կայսրութեան գաղթականներուն հոգատարութեան: ՆԻՐը հիմնեց վարժարաններ, որբանոցներ, արհեստից վարժարաններ, սնունդ մատակարարեց գաղթականներու եւ հոգաց 132,000 որբերու:

⁵⁹ Հաճնոյ հարաւարեւմուտքը, Վահկայէն մօտ 12 մղոն հեռու հայաբնակ գիւղ, շուրջ 5-600 շունչով (Պօղոսեան, էջ 49):

թին չունեցանք: Երապաքան հասնել է ճիշտ առաջ, լեռան բարձունքին կանգնած հին բերդի ստորոտէն անցանք: Ահարկու տեսք մը ունի բերդը եւ կատարելապէս սքանչելի՝ որ նման դղեակ մը կրնար հոն կառուցուիլ: Հսկայ է, շինուած մեծ քարերով: Չհասկցանք՝ մարդ ինչպէս հոն հասած կրնայ ըլլալ: Հաւանաբար շինուած էր Ֆեքէի բերդին հետ միաժամանակ, Ֆեքէն աւելի ետքը այցելեցինք: Մարդ չի գիտեր՝ ո՛վ ե՛րբ շինած է: Աւելի տպաւորիչ բան չեմ տեսած երբեւէ:

Չորսուկէսին Երապաքան հասանք եւ գացինք օրիորդ Յակոբեանին հարազատին տունը: Անմիջապէս գիւղացիներ եկան եւ անընդհատ այցելութիւններ ընդունեցինք յաջորդ երկու ժամերուն: Դժուար եղաւ, քանի տաք էր եւ փոշոտած էինք: Այդ գիւղին մէջ 800 հայ կար: Բոլորը աքսորուեր են. հիմա անոնցմէ 290ը վերադարձած է: Տուներուն մեծ մասը քանդուած է, եկեղեցիին տանիքը չկայ, յատակը՝ նոյնպէս, եկեղեցիին կից տունէն քար մ'իսկ չէ մնացած: Օրիորդ Յակոբեանին զարմիկին տունին գաւիթը այնքան ալ մեծ չէր մեզի համար: Սոխալուեցանք սենեակներէն մին իբրեւ ննջարան, միւրը՝ հանդերձափոխութեան համար գործածել: Գիշերը հող կաթեցաւ առաստաղէն: Առտու մեզի ըսին որ ատիկա օձերու սողոսկելուն պատճառով է: Իւրաքանչիւր տունի մէջ մէկէ աւելի օձ կայ: Իրենք ատիկա բախտաբեր կը նկատեն: Ըսին որ երբեմն երբ երաժշտութիւն հնչէ օձը իր գլուխը դուրս կը ցցէ՝ լսելու:

Յետմիջօրէին, եկեղեցիին մէջ հանդիպում մը կարգադրուեցաւ: Հանդիպումը կայացաւ անառաստաղ եկեղեցիին մէջ՝ ազդեցիկ տեսարան մը պարզելով: Երեք յարդէ աթոռակներ բերին մեզի համար, միւսները գետին նստան: Մինչ արարողութիւնը տեղի կ'ունենար, ամպեր կուտակուեցան եւ անձրեւել սկսաւ: Տեղացիներէն մին մեզ իր տան ընդարձակ գաւիթը հրաւիրեց: Հազիւ աւարտած էինք արարողութիւնը, մարդիկ, որոնք կանչուած էին արարողութեան ընթացքին, վերադարձան յայտնելու, թէ գիւղացի կին մը մահացեր էր: Յուզում յառաջացաւ: Օրիորդ Յակոբեանը ըսաւ որ պէտք է հանգուցեալին տունը երթանք, ուր տեսարանը ցաւալի էր: Երբ հասանք սենեակը ուր մարմինը դրուած էր, կանայք գետինը փռուած կ'ողբային եւ իրենց կուրծքերը կը ծեծէին: Բարեբախտա-

բար, մեր ներս մտնելը անհրաժեշտ չէր՝ դուրսը սպասեցինք: Հանգուցեալին ամուսինը յեներ էր մէկու մը ուսին եւ կ'ողբար ցաւագին: Յետոյ մարմինը գաւիթ հանուեցաւ եւ խումբը նորէն աղիողորմ ճիչեր արձակեց: Հոս, մահէն ետք թաղումը շուտ պէտք է կատարուի: Մենք տախտակի սղոցումի ծայնը լսեցինք: Կին մը եկաւ չափը առնելու մահացեալին: Ուրիշներ մարմինը սաւանի մէջ կարեցին: Ամուսինը կը շարունակէր ողբալ, կանայք ցաւագար վիճակ ունէին: Շատ երկիւղալից էր: Յետոյ մարդիկ շալկեցին մարմինն ու գացին: Մենք տուն մտանք եւ ընթրիքով հիւրասիրուեցանք այն մարդուն կողմէ, որուն տան մէջ կայացած էր մեր յետմիջօրէի հանդիպումը:

Հիւրընկալ տանտիրոջ հետ գետինը նստանք, շրջանակաձեւ պղինձի մը շուրջ, որ դրուած էր ցած, 5 *ինչ* բարձրութեամբ սեղանի մը վրայ: Կինը մեզի հետ չկերաւ, այլ միւս կիներուն հետ մեզի ծառայեց: Հաճելի է փոքրիկ բահեր շինել բարակ հացի կտորով եւ ատով ուտել ճաշը, յետոյ ալ՝ հացէ բահը: Այս հացը պատրաստելու համար գունդ մը խմոր կը բացուի եւ կը տարածուի այնքան՝ մինչեւ շրջանակաձեւ դառնայ, շուրջ երկու ոտք տրամագիծով: Ասկա թիթեղէ շերտի մը վրայ կ'եփեն: Շատ վարպետութիւն կ'ուզէ: Եփելէ ետք հացի մեծ դէզեր կը գոյացնեն՝ յետագայ գործածութեան համար: Գործածութեան ատեն հացը կը խոնաւցուի, կը ծալուի դէպի կեդրոն՝ չորս կողմերէն, մինչեւ որ շուրջ 6 *ինչ*նոց քառակուսի մը յառաջանայ:

Գիւղերու երեխաները ֆիզիքապէս աւելի լաւ վիճակի մէջ են քան Հաճըն գտնուողները: Աչքի հիւանդութիւնները աւելի քիչ են: Հարցապնդեցինք բազմաթիւ որբեր եւ ցանկագրեցինք անոնք, որոնց կրնայինք առնել:

Յաջորդ առաւօտ, շուրջ ութն ուղղուեցանք Ֆեքէ, մեր այցելութեան վերջին հանգրուանը: Մէկ ժամ լեռնային սեպ ճամփէ վար իջանք, Քալատերէի (ժայռի հովիտ) եւ Ճինկէտերէի (գնչուի հովիտ) կողքէն: Ըսին որ Ճինկէտերէի մէջ մարդ մը ակնարկեր է որ մենք պահակներ չունինք, մինչ ուրիշ մը նայելով իմ երկու լուսանկարչական մեքենաներուս պատասխաներ է. «այո, բայց զէնքեր կը կրէ»: Շաբաթ էր օրը եւ մենք կ'ուզէինք Ֆեքէ հասնիլ ժամանակին, որպէսզի յետմիջօրէին դղեակը ելլենք: Դղեակը Երապաքանի

դղեակին պէս տպաւորիչ է: Աւանը կը գտնուի ժայռին վրայ կառուցուած դղեակին տակ: Մագլցեցանք բաւական չարչարանքով: Բայց կ'արժէր յոգնութիւնը: Աւերակ է, բայց կանգուն է այնքան մը, որ կարելի կը դարձնէ երեւակայութեամբ վերակառուցել զայն: Գագաթէն սքանչելի տեսարան մը կը պարզուի:

Ֆեքէի մէջ ունեցանք զբաղ Կիրակի մը, որ սկսաւ ժամը 7:30ի եկեղեցական պաշտամունքով: Էտիթը եւ ես խօսք առինք իսկ օրհորդ Յակոբեանը խօսեցաւ յետմիջօրէի արարողութեան: Ողջունուեցանք Էլիզային եւ Լէային կողմէ: Ֆեքէն իրենց ծննդավայրն էր: Միքանի օրուան այցելութեան եկեր էին: Տեսանք այն խոշոր փուռը, ուր Էլիզային հայրը սպանուեր էր 1909ի կոտորածին: Մնացինք եկեղեցապատկան տան մը մէջ, որ լաւ վիճակի մէջ էր: Աքսորէն ետք թուրքերը գործածեր էին եկեղեցին եւ կից տունը: Լէային հարազատը կը բնակէր երկու սենեակնոց տան մը մէջ: Ֆեքէն ողորմելի վիճակի մէջ է, տուներուն երկու-երրորդը քանդուած: Քաջութիւն կ'ուզէ այստեղ ապագան դիմագրաւելու համար: Ոմանք աւելի լաւ արդիւնքի կրնան հասնիլ Ատանա կամ Սիս երթալով, բայց կ'ուզեն հոս մնալ եթէ՝ ուսուցիչ ու քարոզիչ ունենան. կ'արժէ իրենց տալ կարելի ամէն օգնութիւն:

Գերզբաղ օր մըն էր, բազմաթիւ խորհրդակցութիւններ ունեցանք, հրաւիրուեցանք թէ՛ ճաշի, թէ՛ ընթրիքի:

Յետմիջօրէին, խորհրդակցութիւններուն միջեւ, երկու թուրք ընտանիքի այցելեցինք: Թուրք կիները հմայիչ կրնան նկատուիլ: Երկրորդ տան մէջ ուրիշ ներկաներ ալ կային՝ կիներ անշուշտ. մեր հիւրընկալը կը հսկէր որ սուրճ սպասարկուի ու ծխախոտ փաթթուի: Անհանգստացած էր որ իրենց հետ չէինք ծխեր: Երկուշաբթի առտու ձգեցինք Ֆեքէն եւ մինչ կը մօտենայինք մեր դպրոցին, բոլոր աշակերտուհիները շարուած տեսանք ճամփան: Իրենց բարիգալուստը մեզ ջերմօրէն խանդավառեց:

Սեպտեմբեր քսանին

Ստանձնած եմ որբերուն ընդհանուր վերահսկողութիւնը որ կ'ընդգրկէ հայթայթումը եւ զննումը անձեռոցներուն, հագուստներու մաքրութեան, եւն.: Որբերը գիւղերէն են, կան որ առժամեայ

որբանոցներու մէջ էին: Ամէն օր գործարանի շէնքը պէտք է երթամ՝ տղաքը հսկելու: Աղջիկները մեր տանիքին տակ են, անելի ճիշտը՝ մեր համալիրին տուններուն մէջ են:

Այսօր օրնիբուն կ'աշխատէի անձեռոցներուն վրայ: Ասիկա դեռ սկիզբն է: Պիտի ջանամ սենեակները գրաւիչ դարձնել, թէեւ զարդարանք չունիմ: Գիշերը, սենեակս դառնալէ ետք, Էտիթը լուր դրկեց որ երթամ եւ խաղող կոխկրտելը դիտեմ: Երկու մեծ ասագաններու մէջ կիներ հեղուկը կը ճմլէին ոտքով: Տեսարժան պահ էր. մութ էր, աղջիկները շօճիի ճիւղեր վառած կը լուսաւորէին բացօթեան: Այսօր ուրիշ բան մըն ալ ըրի. թուանշան ներկեցի որբերու թիթեղէ գաւաթներուն վրայ: Այս գաւաթները շինուած են մեր խտացուած կաթի տուփերէն, անուշիկ են, պզտիկ բռնակներ զօդուած են անոնց:

Հոկտեմբեր հինգ

«Ինչպէս պաղ ջուրը՝ ծարաւ հոգիներուն, այնպէս ալ լաւ լուրը՝ հեռու երկրէ»: Ասիկա, նամակներու առումով, ցարդ լաւագոյն շաբաթս եղաւ հոս: Նամակային երկու օրերուն ալ նիւթեր ստացայ: Պարէն ստացայ եւ, մինչ մտահոգ էի ձմռան գործերու հեռանկարով, շատ բարեբախտութիւն եղաւ ստացածս: Յառաջիկայ շաբաթներուն մեր վիճակը պիտի լաւանայ, յետոյ ալ անելի դիրին պիտի ըլլայ: Գիւղերէն եկող բոլոր փոքրերը պէտք է գննուին Միս Սուփըրին կողմէ: Անոնց մեծամասնութիւնը սխալ բան մը ունի: Անցնող շաբաթ մինչեւ 64 փոքրիկ դարմանատունը քնացան: Սքանչելի պիտի ըլլայ այս երեխաները հասցնել այնպիսի վիճակի մը, որ կարենան աշխարհին գոյակցիլ: Ասոնք հազիւ ժամանած՝ դարմանատուն կը տարուին, կը լոզցուին եւ խոզանակով կը լուացուին: Կերիմսէի փոքրերուն մեծամասնութիւնը գլխու եւ մարմնի ոջիլ ունէր: Միս Սուփըրն ու իր օգնականները վրէժխնդրօրէն խոզանակով լոզցուցին զանոնք: Առաջին լոզանքէն ետք - բարեբախտաբար բոլոր փոքրերը միաժամանակ չհասան - պէտք էր տեսնել փաթթոցաւոր երեսներ: Անոնց գլուխը փաթթած էինք, որ *քերոսի*ն հոտը գլխուն վրայ մնայ: Օր մը ետքը ասոնք երկրորդ լոզանք մը պէտք ունին: Երկու ներքնազգեստ եւ հագուստ պատրաստուած էր ա-

սոնց համար: Կրնաք երեւակայել մեր խճողուածութիւնը: Երեխաներուն մեծամասնութիւնը «իչ» ունէր: Ասիկա սարսափելի հիւանդութիւն մըն է, որ աղտոտ միջավայրի մէջ ապրելէ կը յառաջանայ: Միս Սուփըրը կը յաջողի բուժել. մեծ հոգածութիւն պէտք է, որ երեխաները իրարու չփոխանցեն հիւանդութիւնը: Թիւ 17 սենեակը, ուր որբեր կան, սկսած է լաւանալ: Մուսլինէ վարագոյր շինեցի երեք պատուհաններուն, վերը ծոպեր ալ դրի: Իւրաքանչիւր երեխայի գաւաթն ու անձեռոցը առանձնացուցած եմ, յառաջիկային իւրաքանչիւրը *պոխչա* մը պիտի ունենայ իր հագուստներուն եւ իրերուն համար:

Ամսագիրերուն համար ուրախ եմ. թէ՛ կը կարդացուին, թէ՛ ալ յետագային պատերը կը զարդարենք անոնց գունաւոր նկարներով: Վաղը կրնամ երէցները իրենց մնայուն կացարանը փոխադրել: Դարմանատան բնակիչներէն բացի մէկը պիտի չմնայ հոս: Մեր այս կառոյցին վերի բաժինը երբեք ալ չէ աւարտած, բայց շուտով տախտակամած պիտի ունենայ, իսկ տանիքը պիտի նորոգուի: Ֆեքէէն կին մը պաշտօնակոչեցինք: Լաւ վերահսկիչ պիտի ըլլայ այս փոքրերուն: Մայրական զգացումներով անձ մըն է եւ արդիւնաւէտ: Փոքրերը - շատերը - պզտիկ վայրենիներ են. կենդանիներու պէս ապրեր են: Աքսորին, անոնցմէ շատեր արաբներու քով ապրեր են:

Ֆեքէ հաճելի ճաշ մը ունեցանք մարդու մը հիւրընկալութեամբ, իր տան մէջ: Բարեկեցիկ է եւ վերատիրացած է իր ունեցուածքին մէկ մասին: Վերջերս ամուսնացած է, փոքր քոյրն ու եղբայրը հետը կը մնան, բայց ծնողքը արքսորին սպանուած են: Գաղթականութեան մասին մեր լսած նկարագրութիւնները սարսափելի են: Ասոր քոյրը հաւանաբար տասնհինգ տարեկան է եւ շատ անուշիկ: Տեղահանութեան, մեծ եղբայրը Հալէպ մնացած է, մինչ փոքր քոյրն ու եղբայրը Տէր Զօր դրկուած են: Պահ մը, երբ կարաւանը դանդաղ կը յառաջանայ եղեր, արաբներ յարձակեր են իրենց վրայ, դանակներով աջ ու ձախ զարկեր եւ ստիպեր են որ աճապարեն: Շատեր սպանուեր են, մարդիկ ու կանայք կտոր-կտոր եղեր: Սահմուկած այս երկու փոքրերը աջ ու ձախ կը վազեն: Վերջաւորութեան, աղջիկը իր միակ հագուստին գօտիին կարուած ամբողջ ոսկին կու

տայ արաբներուն, խնդրելով որ զինք ու իր եղբայրը խնայեն: Չարմանալիօրէն, կը թուի թէ պատիւի զգացում մը կայ այս վայրի ժողովուրդին մէջ. դրամը առնելէ ետք երեխաները ազատ կ'արձակուին: Օրեր ետք, խումբ մը մարդոց մէջ, աղջիկը իր հարսնուկին ծայնը կը լսէ եւ կը տեսնէ որ այս ազգականը ուրիշ կարաւանով մը աքսորուած էր: Աղջիկին տեսնես՝ չես երեւակայեր որ այսպիսի փորձառութիւններէ անցած կրնայ ըլլալ:

Մինչ ակնկալելի էր որ ժամանակի ընթացքին Հաճըն բնակիլը անելի կարելիութիւն դառնար, կարծես թէ հակառակը կ'ըլլայ: Քաղաքին մասին կը խօսիմ անշուշտ: Եկեղեցական պաշտամունքէն վերադարձիս՝ զգացուեցայ կացութեան վատթար վիճակէն. Այնքա՛ն աղտոտութիւն կայ եւ այնքան մարդիկ առնէտներու պէս կ'ապրին...: Գրեթէ անյոյս կը թուի ինձի, թէեւ Մատթէոսը կը հաւաստէ թէ մարդիկ բնականոն կ'ապրին: Նկատի առ, որ մենք աներակոյտով չենք զբաղիր. հիմա որ դասաւանդութիւնը սկսանք՝ մեծահասակները հոս են եւ Նպաստամատոյցի դերը իրենք ստանձնած են: Ըստ իրենց, քաղաքի մարդոց համար գործի հնարաւորութիւն կայ: Հայկական Կոմիտէի տնօրինութեամբ գործող վանքի որբանոցը շուտով պիտի բացուի, ըստ ծրագրի՝ հազար որբով⁶⁰: Մէյ մը մտածէ. որբեր կը բերեն այլ տեղերէ: Երբ այստեղ գրեթէ անկարելի է որեւէ բան գնել, ինչպէ՛ս մարդ կրնայ այսպէս իմաստուն մտածել եւ նման քայլ առնել՝ չեմ հասկնար: Ակնդէտ կը սպասենք Մինաս էֆենտիին, որ անելի քան ամիս մը առաջ գնաց մեր որբերուն անհրաժեշտ բաներ բերելու: Կը մոռնամ ձեզի յայտնելու այն անուշիկ բարեմաղթանքներուն մասին, որոնցմով ճամփան կը դիմաւորուինք. երբեմն՝ «խաղաղութեամբ երթաք», երբեմն՝ «Աստուծոյ հանդիպիք ճամփուն»⁶¹, երբեմն ալ՝ «ծիծաղով ու խնդալով երթաք» կը բարեմաղթեն մեզի: Նուարդը երբ զիս լոգան-

⁶⁰ Խօսքը՝ ՀԲԸՄիութեան Հաճնոյ որբանոցին մասին է, որ Դամասկոսէն Հաճըն տեղափոխուեցաւ 1919 Սեպտեմբերի վերջ-Նոյեմբերի սկիզբը (*ՀԲԸՄ Հաճընի Որբանոցը, 1919-1920*):

⁶¹ Հաճնոյ բարբառով պիտի ըսէին՝ «Ասվօժ էոստ փիյէ քէ»:

քի կանչէ, ու լոգանքէն ելլեմ, դուռին քով կ'ըլլայ ու՛ «առողջութիւն ըլլայ քեզի»⁶², կը բարեմաղթէ:

Հոկտեմբեր տաս

Հետաքրքրական է տեսնել թուրքերէն փրկուած երեխաներուն մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը: Սիրանուշին հետ, որուն մասին գրած եմ, անգթօրէն, իբրեւ փոքրիկ ստրուկ վարուած են: Գրեթէ խելքը թոցուցեր էր: Երբ եկաւ՝ կարծես ապուշ ըլլար: Իսկ հիմա բարեւաման նշաններ ցոյց կու տայ եւ կը կարծենք որ տակաւ պիտի վերածի խելացի երիտասարդուհիի մը: Չափազանց անուշիկ է եւ քաղցր բնատրութիւն ունի: Այնքան վատ վարուած են հետը, որ չի յիշեր իր ազգանունը, ոչ ալ՝ թէ արքորէն առաջ ու՛ր կ'ապրէր: Կիւլենիան, որ բուրդի գործին մէջ մեզի կ'օգնէ, սիրելի փոքրիկ մըն է, կը թուի թէ ազնիւ արին ունի: Վստահ է որ Կեսարիա կ'ապրէր, բայց չի գիտեր իր ծնողաց անունը: Կ'ենթադրէ որ սպանուած են, բայց վստահ չէ:

Շատ ուրախ կը զգամ գործիս առնչութեամբ: Երանի հասկնայի փոքրերուն ըսած ծիծաղելի խօսքերը: Կ'ենթադրեմ որ կարգ մը մարդիկ կը կարծեն որ անելի հետաքրքրական պիտի գտնէի անելի մեծ թիւով ամերիկացիներու գտնուած տեղ մը գտնուիլ, կամ թերեւս վայր մը, որ քաղաքականապէս անելի կարեւորութիւն ունի: Կը կարծեմ որ ոչ մէկ այլ տեղ անելի՛ հարուստ փորձառութիւն կրնայի ունենալ: Թէեւ չեմ գիտեր լեզուն, բայց անելի կը մօտենամ աղջիկներուն եւ ուսուցիչներուն եւ միշտ՝ սքանչելի տարի մը պիտի նկատեմ ասիկա: Միս Սուփըրը գերծանր կ'աշխատի, մէկ-երկու օրէ իվեր սպառած է - կը յուսայ որ վաղը ոտքի կ'ելլէ: Ես յատկանշականօրէն լաւ եմ, գրեթէ գլխացաւ չունիմ: Անքնութեան խնդիր ունիմ: Կ'ենթադրեմ որ մեր գտնուած տեղի բարձրութիւնն է: Բայց նոյնիսկ երբ գիշերը քիչ քնանամ, անհանգիստ չեմ արթննար: Գէշ չէ երբ սքանչելի, լուսնեակ գիշերներով երկինքը դիտես այնպէս՝ ինչպէս մենք այս օրերուն: Սկսանք անձրեւոտ օրեր ունենալ, բայց օրերուն մեծամասնութիւնը արեւոտ է:

⁶² Հաճոյ բարբառով պիտի ըսէին՝ «Սաղլըխ թեննօ քէ»:

Հոկտեմբեր չորս

Շրջան մը, մեր ամերիկեան խոհանոցին կրակարանը լաւ չէր բաներ: Յետոյ գիտցանք որ, կը խեղդուի ծովսէն եւ հիմա որ խողովակը մաքրեցինք, լաւապէս կը բանի: Մինչեւ Ատանայէն նոր պաշար հասնի՝ ճաշի համար հագիւ կէս գաւաթ իւղ ունիմ: Ժողովուրդին կեցուածքը մեր դպրոցին հանդէպ կատարելապէս շճմեցուցիչ է: Քաղաքին մէջ առաքելական, ծրի դպրոց մը կայ բայց ժողովուրդը կ'արհամարհէ զայն: Ըստ իրենց, Հաճըն Հոմի դպրոցի կրթութեան պէս կրթութիւն չկայ ուրիշ տեղ: Դպրոցին աշակերտական տարողութեան սահմանին հասած ենք, բայց տակաւին խնդրանքներ կ'ըլլան որ նորեր արձանագրենք: Աղջիկ մը որ Կոստանդնուպոլիս գնաց ու քոյրը հետը տարաւ, քոյրը ետ պիտի դրկէ քանի որ, ըստ իրեն, Հաճըն Հոմին նմանը չկայ: Որոշապէս, ոգին գեղեցիկ է հոս: Կ'արժէ մտածել՝ երբ միակ միսիոնարով մը երէց տղոց դպրոցը կը բանի: Երանի կարենայիք տեսնել մեր աշակերտներէն միքանին, մանաւանդ՝ նոր որբերը: Զոյգ մը երկու փոքրիկ քոյրեր ունինք: Կը յիշէ՞ք Էլմասը: Մեզի միանալէ միառժամանակ ետք, իր փոքրիկ քոյրը՝ Մարին գտնուեցաւ: Ան կ'նոջ մը հետ կ'ապրէր, որ վերջաւորութեան զինք փողոցը ձգեց եւ մենք առինք: Ծանր հիւանդ է, բայց Միս Սուփըրը հրաշքներ գործեց եւ կ'երեւի շուտով կը լաւանայ: Էլմասը բացարձակապէս նուիրուած է քրոջը եւ միշտ ձեռք-ձեռքի կը տեսնենք զիրենք: Էլմասը սկսած է կլորիկ այտեր ունենալ. տակաւ անուշիկ օրիորդի մը կը վերածուի: Միս քոյրերը Ազատուիին եւ Պայծառն են՝ վեց եւ չորս տարեկան, համապատասխանաբար: Պայծառը չարուկ է եւ երբեմն ոռիկին ծեծ կ'ուզէ, որ բարելաւէ իր վարքը: Քաջ է, մինչ փոքր Մարին՝ ոչ: Այս երկու զոյգերը դիտելը շատ քաղցր է: Լաւ տղաք ալ ունինք որբերուն մէջ. ասոնք լաւ մարդիկ պիտի դառնան եւ փոխհատուցեն մեր հոգածութիւնը: Վստահ եմ:

Հոկտեմբեր քսանհինգ

Պտոյտի պիտի մեկնինք դէպի շօճիները: Վայր մը, ուր պատերազմէն առաջ մարդիկ ամառները կ'երթային՝ շաբաթներով մնալու: Ճաշերնիս հետերնիս առինք: Մեզի հետ են Էպիները եւ Միս

Պրետըմասը: Մօտ երկու ժամնոց երթ մըն է. յոյս ունինք որ տասին կը հասնինք:

Երէկ նամակ չեկաւ, բայց իմացանք որ նամակաբաշխը ճամփան է: Յուսամ Ատանայի շրջանի խնդիրներուն մասին լուրերը ճիշտ չեն: Զօրավար Մաճը մեզի ըսած էր որ, մասնաւորաբար մենք, ապահով ենք հոս: Չեմ խօսիր մեզի՝ սպառնացող վտանգի մասին. ես հայերը նկատի ունիմ: Աղօտ կ'անդրադառնամ թէ ի՞նչ կրնայ նշանակել որեւէ վնաս կամ սպառնալիք՝ մեր աղջիկներուն: Չեմ գիտեր էլմասին վնասուելէն ետք ես ինչպէ՛ս կրնամ ապրիլ: Կը կարծեմ որ տարբեր վայրերու մէջ ըմբոստութիւններ պիտի ըլլան եւ վստահ եմ՝ անգլիացիք շուտով պիտի ճնշեն: Մտահոգ եմ որ երբ դուք ահազանգային տեղեկութիւններ կարդաք թերթերու մէջ՝ ի՞նչ պիտի ընէք: Գիտեմ նաեւ որ երբ նամակս ստանաք արդէն ամէն ինչ խաղաղած պիտի ըլլայ: Երկար ժամանակ, մինչեւ Թուրքիոյ հետ խաղաղութիւն կնքուիլը, անհանդարտ վիճակ պիտի ըլլայ: Թուրքերը սկսած են մտածել որ դաշնակիցները լուրջ չեն եւ ասիկա չի զարմացներ զիս: Երբ Ատանայէն եկող քարոզիչը հասնի, պիտի գիտնանք իրական իրավիճակը:

Աղուոր յետմիջօրէ մը ունեցանք այսօր: Գիտէի որ այդպէս պիտի ըլլայ, որովհետեւ օրը կատարեալ էր. լուսաւոր, բայց ոչ փայլփլուն, իսկ շօճիները՝ գեղեցիկ անտառ մը կազմած էին: Ճամփան մեզ տարաւ միշտ դէպի վեր եւ երբ հասանք՝ վեցհազար ոտք բարձրութեան վրայ էինք: Շօճիներուն բոյրը հաճելի էր, իսկ գետինը լեցուն էր *սաֆրանի* ծաղիկներով: Ասոնք դեղնաւուն նարդոսներ են՝ ոսկեայ կեդրոններով: Հով մը կը խաղար ծառերուն միջեւ, մինչ հեռու լեռնագագաթներուն տեսքը գեղեցիկ էր, ճաշեցինք գետինը թափած շօճիի ցպիկներուն վրայ, յետոյ ալ պաղ ակ մը գացինք համեղ ջուր խմելու: Այս բոլորը այնքան խաղաղ էր որ անհաւատալի է որ որեւէ տեղ խռովութիւն կրնայ ըլլալ: Մութը շուտ կ'իջնէ հոս՝ լեռներուն վրայ: Տուն հասանք ժամը հինգուկեսին, բայց արդէն մութ էր:

Հոկտեմբեր քսաներթ

Օրս պիտի ամփոփեմ: Վեցէն առաջ արթնցայ, 6:40ին խոհանոցն էի նախաճաշին հսկելու: Աղօթքէն ետք գացի ստուգելու թէ քանի՛ որբ *եմենի* չունի (տեսակ մը մուճակ): Կարգադրեցի որ պատրաստեն զանոնք մեր ունեցած փոքր պահեստէն, միւսներուն համար ալ պատուիրեցի որ ոտքի չափերը առնեն յետմիջօրէին: Լարեցի ժամացոյցները. Կիրակի մոռցեր էի լարել: Յետոյ եկայ այս կառոյցը որ կիները մղեմ ներքնազգեստ կարելու աշխատանքին: Ձեւեցի ու կտրեցի եւ թելադրեցի կիներուն՝ ի՛նչ ընել: Միջանկեալ, ընթրիքին ընթացք տուի: Բազմիցս խորհուրդ հարցուցին Նպաստիցի դժուարութեանց խնդրով: Պէտք էր աշակերտներ բերէի դպրոցէն, որպէսզի իրենց չափերը առնուին: Այծի մսապուր, եփած լոլիկ եւ ծիրանի անուշով խմորեղէն ընթրեցինք: Անմիջապէս ետք խօսեցայ դպրոցի ձեռնարկին: Կարի կնոջ հետ պատրաստութիւն տեսայ կարի դասիս համար: Մասամբ աւարտած էի գործս երբ լուր եկաւ որ բաներ մը դրկեմ Սուրբ Սարգիսի տղոց որբանոցը: Կարգադրեցի որ անոնցմէ իննին գուլպաներուն չափը առնուի: Ատանայի Լորտ Մէյըրզ Ֆանտէն⁶³ 4000 զոյգ գուլպայ նոր ստացանք:

Մտածեցինք մեր որբերուն յարմար հագուստ գտնել, մինչ հակերը գետինը փռուած էին: Բաւական գործ էր. մեր 58 աղջիկներուն երկուքական հագուստ յարմարցուցինք: Պահ մը գացի Լէային՝ թելադրելու ընթրիքի պատրաստութիւնները տեսնել: Ընթրիքը 5:30ին կ'ընենք: Վերջացուցի գործերս եւ ընթրիքին *քաքաու* ու թերխաշ հաւկիթ կերայ:

⁶³ Ծանօթ նաեւ Armenian Refugee's Relief Fund անունով, հիմնուած էր Յունուար 1915ին, եւ արձանագրուած Բրիտանիոյ մէջ իբրեւ պատերազմի բարեսիրական հիմնադրամ, 1916ին: Հիմնադրամը կը վերահսկուէր Լոնտոնի Հայոց Միացեալ Ընկերակցութեան Ընդհանուր Ժողովին կողմէ. մեծագումար հանգանակութիւններ կազմակերպեց եւ նուիրեց հայկական զանազան յանձնախումբերու եւ կազմակերպութիւններու, որոնք ուղղակիօրէն գաղթականներուն կ'առնչուէին: Հիմնադրամի կարկառուն գործիչներէն էին պատուելի Հերըլտ Պաքսթըն եւ Էնիւրին Ուիլիըմզ (Akaby Nassibian, *Britain and the Armenian Question 1915-1923*, Croom Helm Ltd., վերատպ. 1985, էջ 62):

Սենեակս եմ, պատրաստ՝ անկողին մտնելու: Ապրանքներուն հետ Ատանայէն նամակ մը եկաւ Տորթ. Չէյմպըրզէն, որով ճնշուած կը զգանք: Ան կը գրէ թէ տարածայնութիւններ կան որ անզլիացիք կը քաշուին ու ֆրանսացիք կու գան:

Հոկտեմբեր երկուր

Հայ պատուելին, որ երկար ժամանակէ իվեր կը սպասէի, ի վերջոյ ընտանեօք հասաւ⁶⁴: Ինք եւ իր կինը բաւական անզլերէն գիտեն, ինք Հալէպ անցուցած է աքսորի մէկ շրջանը եւ գործ ունեցած է անզլիացիներուն հետ: Յետոյ ղրկուած են Ռաքքա, ուր շատեր անօթութենէ մեռան⁶⁵: Պատուելիին երեխաները տկարակազմ են, իսկ կինը զօրաւոր չ'երեւիր: Դժուարաւ հասեր են Ատանայէն հոս, քանի որ ճիշտ այդ պահուն խնդիրներ պատահած են թուրք չեթէներուն (աւագակ) հետ: Իմացանք որ Ատանայի կողքի հայկական գիւղ մը ամբողջութեամբ ոչնչացուած է: Պատուելիին ընտանիքը ճիհան (նախապէս՝ Համիտիէ) հասեր է այն պահուն երբ 7 հայեր՝ 4 մարդ, երկու կին եւ երեխայ մը սպանուեր են: Պատուելին թաղեր է զանոնք: Պատմեց որ սարսափազդու էր վիճակը, որովհետեւ դիակները անդամահատուած էին: Կարճ ժամանակ ետք չեթէները ձերբակալուեր են - կարծեմ անոնց մեծամասնութիւնը - եւ անոնցմէ եօթը հրացանազարկ եղեր են: Պատուելին անձամբ տեսեր է ասիկա: Երկար ուշացումով հասեր են հոս: Լուր տարածուեր է որ Հաճընը 4000 չեթէներով պաշարուած է եւ պատուելիենք չեն համարձակած ճամփայ ելլել: Ծիծաղելի է, քանի որ մենք շատ ապահով ենք հոս: Էտիթը կ'ըսէ որ երբ լուր տարածուի թէ Պոլսոյ կամ նոյնիսկ Կովկասի մէջ խռովութիւն կայ, կը յայտնուի նաեւ որ Հաճընը վտանգի մէջ է: Ատանայի շրջակայքը պատահած խռովութեան ամբողջ շրջանին մենք բացառապէս խաղաղ էինք: Գիտէք որ մենք հեռաւոր գիւղերը այցելեցինք մեր *քաթըրճի*ներուն

⁶⁴ Խօսքը հայ աւետարանական պատուելի Յարութիւն Իսաչատուրեանի մասին է:

⁶⁵ Անոնք կորսնցուցեր էին իրենց զաւակներուն կէսը: Միսիզ Էպի կը վկայաբերէ պատուելիին տիկնոջ՝ Աղանիին խօսքը. «Երանի կարենայի իմ ներքին ասքերս փակել» (Eby, էջ 79-80):

հետ, առանց որեւէ ուստիկանի: Ուրախ եմ որ այսքան հեռու եմ «քաղաքակրթութենէն»: Աւելի ապահով է:

Պզտիկ տղայ մը ունինք՝ Միհրան, ութ տարեկան է կարծեմ: Երբ չորս տարի առաջ իր ծնողքը աքսորուեր է, ընտանիքին բոլոր զաւակները միասին տարուեր են: Բացի Միհրանէն բոլորը մահացեր են. ազգական մը զինք գտնելով վերադարձուցեր է Երապաքան: Լքուած էր, եւ երբ ամիս մը առաջ գիւղը այցելեցինք, կարգադրեցինք որ միւս որբերուն հետ մեզի դրկուի: Իր գալէն կարճ ժամանակ առաջ գիւղի տղաքը քարկոծեր են զինք եւ ծանրօրէն վնասեր են ծունկը: Ամէնասիրելի տղեկն է եւ չեմ հասկնար թէ ինչպէ՛ս մարդ պիտի ուզէր վնասել իրեն: Միս Սուփըրը կը վիրակապէ զինք ամէն առտու. շատ սթափ է Միս Սուփըրին օգնելու. միշտ անձամբ կը քակէ վիրակապերը եւ կոկիկ կը փաթթէ զանոնք: Որոշեցինք պահել փոքր տղեկ մը մեր քով, մինչ նախապէս կը մտածէինք Սուրբ Սարգիս դրկել միւս փոքրերուն հետ, քանի մենք խճողութեանք: Սկիզբը, դժուար էր զինք վերահսկել, որովհետեւ վիրակապերը կը քակէր եւ ծանրօրէն «իչ»է վարակուեր էր: Փոքրիկ Վահանը չորս տարեկան է, բայց այնքան խնդիր էր Միս Սուփըրին համար, որ վերջինս փափաքեցաւ հրաժարիլ անկէ, քանի շատ ուրիշ ընելիք ունէր միւսներուն հետ: Միս Սուփըրը ամէն ինչ փորձեց, որ ան կարգի մտնէ. վերջաւորութեան՝ լուծում չմնաց ձեռքերը կապելէ եւ առանց ընթրիքի քնանալու դրկելէ բացի: Անկէ իվեր բացարձակապէս լաւացած է, բուժուած՝ իր խռովայոյզ վիճակէն:

Այս Կիրակի էտիթին հերթն էր տունը մնալու. իր քովը մնացին ամէնափոքր երեխաները: Մեր վերադարձին՝ փոքրիկներուն հետ մեզի ընդառաջ եկաւ, կամուրջին քով հանդիպելու: Փոքրիկն Վահանին ձեռքը իր ձեռքին մէջ դրած միասին քալեցին: Վահանը անոր նայելով ըսաւ. «անգամ մը տոքթօրը (իրենք Միս Սուփըրին տոքթօր կ'ըսեն) ձեռքս իր ձեռքին մէջ դրաւ»: Սրտայոյզ չէ՞ ասիկա: Անոնք անհամբեր են անգլերէն խօսելու, եւ երբ որոշ նախադասութիւններ կը սորվին՝ կը գործածեն իրենց երեակայածին պէս: Օրինակ, Ստեփանը ուզեց շնորհակալութիւն յայտնել ինձի իր թաշկինակին համար ու ըսաւ «կուտ պայ», որ կատարելապէս ընդունելի էր, գիտէի՝ ինչ ըսել կ'ուզէր եւ ա՛տ էր էականը:

Միս Սուփըրը անսպառ է: Նուիրուած է երեխաներուն, խելացի ու ճարտար հիւանդապահուիի է: Ատանայէն դեղ ստանալու դժուարութիւն կ'ունենայ. վաղը պիտի ստիպուի դարմանատունը գոցել մինչեւ նոր դեղերու ստացումը: Վախնալիք է երբ առանց լուծումի կը մնաս՝ մինչ այսքան երեխաներ հոգաճութեանդ յանձնուած են:

Հոկտեմբեր տասնութ

Այսօր նամակ մը եկաւ Միսիզ Հ[աաս]էն, այնքան սիրալիր էր որ զիս ուրախացուց: Գիտնալը՝ թէ մարդիկ քու մասիդ կը մտածեն, պատճառ կը դառնայ որ դուն քաջ մնաս: Այս տարի զիս կանգուն պահողը այս գիտակցութիւնն է՝ որեւէ բանէ աւելի: Ժամանակէ մը ի վեր փոքրերուն ուսնոց կը պատրաստէի: Նոր աւարտեցի: Շատ անուշիկ կ'երեւին: Անհամբեր եմ տեսնելու փոքրերը երբ այս զգեստով եկեղեցի ուղղուին: Միհրանը մեր շարունակուող հրճուանքն է: Անցեալ օր մէկը հարցուց անօթի՞ է, կամ բաւարար կերամ՞ծ է:

- Անօթի տղաները անշարժ կը մնան՝ եւ կախերես: Չ՞ես տեսներ որ կը վազեմ ու կը ցատկոտեմ:

Նոյեմբեր քսաներկուս⁶⁶

Առջի օր կանչվուող մը կար՝ «ծիւն»՝ լեռներուն: Առաւօտեան նախաճաշին ծիւն կը զգայինք օդին մէջ եւ տեսանք ալ: Անչափ ուրախ եմ որ բոլոր աղջիկները *Ֆլանէէ* վերարկուներ ունին: Այդուհանդերձ, դողալով կու գան ինծի: Բայց կը մտածեմ եւ գոհ կը զգամ երբ անդրադառնամ որ որքան բարելաւուած են հիմա, առաջուան բաղդատմամբ: Ամէնէն նիհար հինգ աղջիկները զօրակայանի *Ֆլանէլ* հագուստներ ունին: Բայց երեխայի համար *Ֆլանէլ* հագուստ պատրաստելը՝ գործ է: Կեանքի՛ս մէջ այսքան հեւքոտ չեմ ապրած:

Թուրք մը, որ ցորեն բերաւ միքանի շաբաթ առաջ, կը վերահսկէ թէ ու՛ր կը մթերուի ան, մինչ Մատթէոսը կ'օգնէ իրեն: Օրհորդ Յակոբեանը եւ Ալիթեան կը դիտէին երբ թուրքը ըսաւ՝ «աղջիկներ,

⁶⁶ Բնագրի մեքենագրական սխալ:

ինչու՞ չէք օգներ, ամօթ է ձգել որ էֆենտին աշխատի»: Յատկապէս ասոնց պարագային ծիծաղելի էր, որովհետեւ ասոնք երկրորդականի շրջանաւարտներ են, իսկ թուրքը չէր կատակեր: Անշուշտ, կանայք պէտք է աշխատին մինչ այրերը՝ նստին:

Հոկտեմբեր քսաներեք

Հաճելի է ջերմ սենեակի մէջ գտնուիլ: Երէկ իրիկուն երկար մնացի այդ տաքուկ սենեակին մէջ, որովհետեւ մտերմիկ ալ թուեցաւ: Պզտիկ, աղուոր իրեղէն մը ունիմ, որ ատենին Կարտնըրներուն պատկանած է: Գիտէ՞ք փայտի վառարանը որքան կը տաքցնէ: Ահա թէ ինչու գոհ պէտք է զգամ, քանի որ փայտի վառարան մը պիտի դրուի կարող կանանց սենեակը: Հիմա իմ սենեակս նստած եմ. փոքրիկն Միհրանն ալ տախտակամածին նստած՝ թուղթէ թոչուններ կը մկրատէ: Հետաքրքրական ժամանակ անցուցինք ընթրիքին, երբ օրհորդ Յակոբեանն ու Էտիթը պատմեցին ուսուցիչներէն մէկուն քաշած դժուարութիւնները թուրքերէն: Անոր անունը ժողէֆին է. Թալասի դպրոցին մէջ, միւս աղջիկներուն կարգին, բանտարկուեր է երբ կալուածը խլուեր է եւ դպրոցը փակուեր: Կեսարահայերու մեծ խումբեր իսլամանալով մղեր են այս աղջիկները կրօնափոխ ըլլալ՝ կեանքերնին փրկելու համար: Աղջիկները աներեր մնացեր են. ֆիզիքական բրտութեան չեն ենթարկուած, բայց հարց է՝ եթէ պահեր են իրենց մտային առողջութիւնը: Իբրեւ հիւանդապահուի գործածուեր են թրքական հիւանդանոցի մը մէջ, բայց հեռանալու իրաւունք չեն ունեցեր: Անգամ մը անոնց ըսուեր է որ պիտի ամուսնանան թուրքերու հետ, որպէսզի իրենց հայկական արինը մաքրուի:

- Մեր արինը ձեր արինին պիտի չխառնուի,- պատասխաներ են այս աղջիկները: Բազմիցս բերուեր են թուրք սպաներու առջեւ, որոնք հաւաստեր են թէ անոնց օրհասն է եւ չեն կրնար յետս կոչել մահը, եւ թէ անոնց անունները տեղահանութեան ցանկերուն արձանագրուած են: Բանտարկուեր են Մայիս 1916ին եւ ազատագրուեր՝ Փետրուար 1919ին: Վերջաւորութեան անոնց թելադրուեր է կրօնափոխուիլ:

- Նայեցէք ձեր Մայիս 1916ի արձանագրութիւններուն. մեր պատասխանները հոն են, պատճառ չունինք մեր պատասխանները փոխելու,- ըսեր են այս աղջիկները:

Նոր ոստիկանապետ⁶⁷ մը ունինք. հաճելի, ուսեալ մարդ մըն է: Մեզի այցելութեան եկաւ երէկ եւ համակրեցանք իրեն: Իր հայրը իրաւաբան է, իսկ մայրը Պոլիս, Քոլէճը աւարտած է: Ծնողքը, իր հինգ եղբայրներն ու երկու քոյրերը՝ բոլորը սպանուեր են: Այնքան շատ ջարդեր եղած են, որ հետաքրքրական է որ օրդիորդ Յակոբեանը դէպքերու ակնարկելով զանոնք ժամանագրականօրէն կ'առնէ Ձէյթունի ջարդին, Ատանայի ջարդին, եւն.:

Հոկտեմբեր երեսուն

Այս յետմիջօրէին ֆրանսացի սպայ մը՝ Սուպի⁶⁸, որ Կիլիկիոյ նահանգը կը շրջի, մեզի այցելութեան եկաւ: Ան յայտնեց որ Մարաշն ու Այնթապը Կիլիկիոյ մէջ ընդգրկուած են եւ ամբողջ շրջանը նշանակուած է Ֆրանսայի: Հայերուն հանդէպ հակադիր թուեցաւ: Իր մեկնումէն ետք իմացանք որ Մարոքէն է եւ իսլամ: Ատիկա կը բացատրէ իր վերաբերմունքը: Արեւելքցիի կը նմանի:

Բերկրանքի մէջ ենք ջերմ օդին համար, մանաւանդ այսօր, երբ օրիորդ Յակոբեանը Ատանա մեկնեցաւ՝ դէպի Ամերիկա իր ճամփուն վրայ: Շաբաթը զբաղ անցաւ՝ իր մեկնումին պատրաստութիւններով:

Դեկտեմբեր եօթ

Դէպի եկեղեցի քալեցինք այսօր եւ դարձեալ ազդուեցայ Հաճնոյ թշուառութենէն: Առանձնացուցած եմ երեխաներուն ներքնագագեստները՝ հիմա որ ձմռան հագուստներուն գոյութեամբ անոնց պէտք չունին երեխաները: Ասոնցմէ մաս մը պիտի փորձենք յարմարցնել խղճալի կարգ մը քիւրտ երեխաներու: Իդէպ, քիւրտերուն առնչութեամբ, անցեալ օր շատ ազնիւ քիւրտ շէյխ մը՝ Տերսուն էֆենտին, մեզի այցելութեան եկաւ: Ան սքանչելի մարդ է, միսիո-

⁶⁷ Նկատի ունի Յովհաննէս Ժամկոչեանը:

⁶⁸ Թայարտայի օգնական, ֆրանսական բանակային, մարտքցի Սուպի Հաճըն կը մնայ երեք օր:

նարներուն ու հայերուն լաւ բարեկամ: Շատ դժգոհ էր տեղահանութենէն: Միքանի տարի առաջ երբ անընդհատ ամազակութիւն տեղի կ'ունենայ եղեր Կեսարիայէն Հաճըն ճամփուն վրայ, կառավարութիւնը թելադրեր է Տերսուն էֆենտիին որ այդ կողմերը ուղղուի իր մարդոցմով, խոստանալով այնտեղ իրենց ընդարձակ բնակավայր տալ եթէ անցքը ապահովեն: Անցեալ օր երբ եկաւ, հանդիպեցայ իրեն: Խօսակցութեան ատեն հիացումս յայտնեցի իր գուլպաներուն մասին: Երէկ երբ նորէն եկաւ, ինծի զոյգ մը շատ սիրուն գուլպայ նուէր բերեր էր, մանուած, ներկուած ու հիսուած իր ընտանիքի մէկ անդամէն: Էտիթը ըսաւ որ հսկայ տուն մը ունի. իր կիներուն կողքին, իր ամուսնացած զաւակներն ալ իրեն հետ կ'ապրին՝ նահապետական կարգով:

Դեկտեմբեր քսան

Այսօր առաջին ձիւնը տեղաց. տեսարանը շատ սիրուն է: Յուրտ չէ, ձիւնը փափուկ է եւ կը փակի իւրաքանչիւր ցախի ու տերեւի՝ աներեւակայելիօրէն գեղեցիկ պատկեր մը յառաջացնելով: *Քլեմաթիսը* ձմռան այնքան սիրուն է իր գիրուկ կոյզերով որ հիմա իր կոյզերը՝ ձիւնէ սպիտակ ծաղիկներու վերածուած են: Այսօր մեր վարի հովիտին մէջ զուարթօրէն հոսող գետակը դիտեցի. խենթի պէս կը հոսի. իր երգը ականջներս լեցուց մինչ կանգնած էի ձիւնին մէջ:

Այլանդակ բան մը կայ դրամական շուկային մէջ. լաւապէս կը զգանք, բայց բան չենք հասկնար: Մեզի ըսուած է որ դրամական փոխանցումներ չկատարենք եւ ամէն մարդ կը ջանայ որեւէ ձեռով դրամ գործածելէ խուսափիլ: Չենք հասկնար ի՞նչ կը նշանակէ այս վիճակը: Քանի Ատանայէն լուր չեկաւ, միառժամանակ անտեղեակ պիտի մնանք այս հարցով: Չեթէներուն առնչութեամբ նոր խռովութիւններ եղան, եւ պատուելին Շար չգնաց՝ ըստ ծրագրուածին: Ինք այս առտու ճամփայ պիտի ելլէր, բայց քայմաքամն ու ոստիկանապետը տարիամոզեցին զինք:

Դեկտեմբեր քսանհինգ

.... Ահա անցաւ եւ Ծնունդի օրը: Ետ՝ դէպի սկիզբին երթալով կարծեմ նախ պէտք է պատմեմ երէկ իրիկուան մասին, կամ ալ՝

երէկ յետմիջօրէին մասին, երբ երեքս եռանդոտ աշխատեցանք երկուհարիւր պարկուճ պատրաստել՝ փոքրերուն համար: Ի վերջոյ վերջացուցինք. յետոյ կարգը դպրոցի սենեակին կաղանդի ծառը հոտելուն եկաւ: Շօճիի ծառ մըն էր. սկիզբը անյոյս թուեցաւ, բայց ինչե՛ր կարելի է իրագործել անխոստմնալից իրերով: Ճիւղերը հին, վնասուած էին եւ փոքրաթիւ, բայց խոհեմ բաժանումով արդիւնքը կէս-լաւ եղաւ: Թատրոնը զոր աղջիկները ներկայացուցին Եսթրի պատմութեան տրամաթիք վիճակն էր, չափազանց լաւ ստացուեցաւ: Ահասերոս թագաւորը իմ կապոյտ *քիմոնոյի*ս մէջ ահարկու թուեցաւ, իսկ սեւ-ճերմակ գծաւոր հագուստս՝ չար Հարնանին շատ վայելէր էր: Որբանոցի տղաքը երկու ներկայացում տուին: Նուէրներու բաշխումով աւարտին հասաւ հանդիսութիւնը: Իւրաքանչիւր պարկուճի մէջ լեպլեպու, չամիչ եւ լոխում կար: Յետոյ իւրաքանչիւրին նարինջ մը տրուեցաւ: Այս առտու ժամը հինգ չեղած արթնցայ սենեակիս կողքէն հնչող ծննդեան երգերէն: Երբ երգը վերջացաւ ու դուռը բացի աղջիկներուն շնորհակալութիւն յայտնելու՝ տեսարժան պահ մը ապրեցայ, երբ մոմեր բռնած աղջիկները տեսայ: Եղանակը, որ սպառնալից կը թուէր, փոխուած էր. երկինքը մաքուր էր, շատ փայլուն բան մը կար ճիշտ մեր գլխավերելը: Կարծես իրապէս հրեշտակներու երգն էր: Ուրիշ խումբեր ալ երգեցին, ընդհանուրը՝ շուրջ ժամ մը: Առանձինն ընթերցիւնք որուն զոհ գնաց մեր մեծագոյն հնդկահաւը:

Որոշած էինք հիւրեր ընդունիլ հայկական Ծնունդին, բայց կարգ մը մարդիկ այսօր այցելեցին եւ մեր յետմիջօրէն զբաղ եղաւ քսանինը հիւրերով:

Դեկտեմբեր քսաներթ

Մինչեւ հիմա ծունկի էի կրակին առջեւ. անսովոր դիրք մը չէ ասիկա այս օրերուն՝ թաց տախտակի դիմաց: Գրեթէ անընդհատ կ'անձրեւէ եւ ի՛նչ ընենք որ մեր առաստաղները կը կաթկթին. թէ՛ ախտոնները, թէ՛ համոցները եւ թէ՛ վառելիքի մթերանոցը անպաշտպան են ու մենք դժուար վիճակի մատնուած ենք:

Շատ հետաքրքրական բաներու ականատես կ'ըլլամ եւ կը մտածեմ գրել ձեզի, բայց անմիջապէս կը մոռնամ: Կ'ուզէի գրել այն մեծ,

փոստ քարին մասին, ուր կանայք աղ կը ծեծեն: Ամէն քաղաք երթալուս անոր քովէն կ'անցնիմ եւ երբեմն կանայք կը տեսնեմ հոն:

Յունուար փասնմէկ

Այսօր, հազիւ ընթրիքը աւարտած, Մսթըր Նիլսընը⁶⁹ Ատանայէն ժամանեց, զարմացնելով մեզ: Գիտէինք որ պիտի գար, բայց քիչ մը աւելի ուշ կը սպասէինք զինք: Լաւ մարդ է եւ ուրախ ենք իր ներկայութեամբ, թէւ գիտենք որ հազիւ շաբաթ մը կամ տաս օր կրնայ մնալ: Բան մը որ ան կրնայ ընել՝ որբերուն հարցաթերթիկները լեցնելն է. գործ մը որ ատենէ մը իվեր մեր գլխուն վրայ կախուած կը մնայ: Բաւական տարածայնութիւններ պատմեց մեզի եւ անշուշտ շահեկան էր այս շփումը՝ աշխարհին հետ:

Յունուար փասնհինգ

Դուք, խեղճ մարդիկ, որ միապաղաղ, լուռ կեանք մը կ'ապրիք Էվընսթընի մէջ, ուր ձեր նամակները կանոնաւորաբար ձեզի կը հասնին ... Մենք չենք գիտեր եթէ երբեւէ, եւ որեւէ բան պիտի հասնի մեզի, հիմա որ սարսուռը կը զգանք իլուր այն լուրերուն թէ աւազակային խումբեր ճամփաները ելած են եւ այդ պատճառով նամակները կրնան չհասնիլ: Ասիկա իմացանք անցեալ երեքշաբթի: Մարդ չի համարձակիր Սիսէն դուրս ելլել: Յաջորդ օրը իմացանք որ նամակները պիտի հասնին, քանի որ «զէշ թուրքերը հեռացուած են»: «Ձուարթ կեանք մըն է ասիկա, եթէ չտկարանաս»: Ըսե՛ր էի ձեզի թէ ամիսներ առաջ երեք հազար թուրքեր մինչեւ ակոյաները զինուած, Էւերէկ հաւաքուեր են, պատրաստ՝ Հաճընի

⁶⁹ Նկատի ունի Վեր. Փոլ եւ Տիկ. Նիլսընները, որոնք Պորտի Կեդրոնական Թուրքիոյ միսիոնարութեան մաս կը կազմէին, հաստատուած էին Տարսոն (Հաճընէն շուրջ 100 մղոն հարաւ), ուր իրենց խնամքին յանձնուած էին շուրջ 100 որբեր: Անոնք Տարսոնի մէջ, իրենց դուստրը կորսնցուցին 20 Մարտ 1920ին: Յունիս 1920ին, Տարսոնի ֆրանսական սահմաններէն անդին անցած ըլլալով, անոնք ձերբակալուեր էին աւազակներէ, բայց Յուլիս 6ին արդէն ազատ արձակուեր: Տարսոնի ամերիկեան միսիոնարութեան կեդրոնը Սեպտեմբեր 1920ին կը հաշուէր պատուելի եւ Տիկ. Նիլսընները, Միսիգ Պլոքը եւ Միս Պիսէլը (վերջինս՝ ժամանակաւոր) (*Missionary Herald*, 1920՝ Մայիս, էջ 249. նաեւ՝ Օգոստոս, էջ 379-80. նաեւ՝ Սեպտեմբեր 422-23. նաեւ՝ Դեկտեմբեր, էջ 560):

վրայ արշաւելու եւ զայն ջնջելու քարտէսէն: Կ'ըսուէր թէ նոյնիսկ թնդանօթ ունեցեր են: Մենք կարելորութիւն չտուինք ատոր, որովհետեւ ըստաձը այնքան ապուշ բան էր, բայց այսպիսի բաներ երբ կը լսեն դուրսը բնակողները կը սկսին մտածել թէ հոս մեր կեանքը վտանգի տակ է: Այսքան ժամանակ մենք կատարեալ խաղաղութեան մէջ էինք եւ այսպէս պիտի մնանք: Մտաբեր Նիլսընը յայտնեց որ ֆրանսացիք ճանապարհաշինութեան ձեռնարկած են ասկէ մինչեւ Սիս, ուրեմն միառժամանակ ետք մեքենաները կրնան երթեւելել: Որքան գոհ եմ որ իմ փորձառութիւնս ճանապարհաշինութենէն առաջ սկսաւ:

Յունուար քսանհինգ

«Իրիկնային ապուր, սքանչելի ապուր»: Գիտէ՞ք՝ հաւանաբար Լուիս Քերոլը⁷⁰ Հաճընը եւ ամերիկեան համալիրը նկատի ունէր այդ ծաղրասացութիւնը յօրինելու ատեն: Ընթրիքին միշտ ապուր կը պատրաստենք, քանի որ ամէնադիրինն է: Ես ալ նոր բաղադրատեսակներ աւելցնելով համեղ ապուրներ պատրաստեցի: Էտիթը ըսաւ որ կը շարունակեմ համալիրին աւանդը՝ ապուրին առնչութեամբ: Երբ առաջին անգամ Հաճըն եկեր է եւ ստածներ առտնին տնտեսութիւնը՝ խոհարար Գէորգին թելադրեր է ապուր պատրաստել ընթրիքին: Վերջինս պատասխաններ է թէ ապուրը ընթրիքի համար չէ, այլ՝ ճաշի:

Նիւթը փոխելու եւ պատմութիւն մը պատմելու համար, յիշեցնեմ ձեզի թէ մեծապէս հիասթափած եմ թէ չեմ ծրագրած վերջնակաւնապէս հեռացումս Հաճընէն եւ Զէյթունի ճամփով Մարաշ հասնիլս: Զէյթունցիք սովորաբար, գէթ անցեալին, տեսարժան հանդերձանք կը հագնէին եւ թերեւս կը յիշէք, որ քաղաքը Հաճընի հետ այն երկրորդ քաղաքն էր որ թուրքերուն դիմադրեց, երբ հայերը անկախութեան համար կը պայքարէին:

Զէյթունցիք շատ պահպանողական են. կը պատմուի մեծ մարդու մը մասին որ մերժեր է իր մահացած կնոջ երեսը վերջին անգամ նայիլ, ըսելով՝ «երբ ողջ էր, երբեք իր երեսը չէի տեսած եւ

⁷⁰ Լուիս Քերոլ (1832–1898), անգլիացի գրող, մանկագիր-երեակայագիր, հեղինակ *Alice in Wonderland*ի առաջին տարբերակի:

հիմա որ մեռած է՝ նոյն յարգանքը պիտի մատուցանեմ իրեն»։ Մարաշի մէջ միսիոնարական հանդիպումէ մը՝ Ջէյթունի ճամփով վերադարձին ընթացքին իր ունեցած փորձառութեան մասին, Էտիթ հետեւեալ պատմութիւնը պատմեց. միսիոնարական խումբին ընկերակցեր է խումբ մը, որուն հանդէպ Էտիթ կասկածներ ունեցեր է, մանաւանդ որ անոնք ինքնակոչ ընկերակիցներ եղեր են։ Երբ Հաճընի մօտեցեր են, ընկերակից մարդիկը ըսեր են թէ իրենք աւագակներ են, բայց որոշած են պաշտպանել միսիոնարները եւ չթոյլատրել այլ աւագակներու յարձակումը։ Ընդհանուր առմամբ, օտարները բաւական ապահով են հոս, որովհետեւ ընդհանուր այն հասկացողութիւնը կայ որ իրենց հետ դրամ չեն ունենար։ Երբ Մաթըր Նիլսընը հոս պիտի գար, Սիս՝ իրեն ըսուեր էր որ ճամփան ապահով չէ, բայց Տերսուն էֆենտին եւ ուրիշ քիւրտ մը որ այս կողմերը կու գան եղեր, իրեն յայտներ են թէ իրենք կը հոգան իր ապահովութեան։ Տեղ մը, իրենցմէ մէկուն մեծ վերարկուն եւ փաթօցըը հագցուցեր են իրեն՝ ծածկելու այն իրողութիւնը, որ ան «գլխարկ դնող» էր՝ ինչպէս կը կոչուին օտարները հոս։ Բայց ոչ մէկ դժուարութեան հանդիպեր է։ Նման բաները ընդհանրապէս վախցնելու համար են։

Չեմ կարծեր ձեզի ըսած ըլլամ փոքրերէն շատերուն անունները։ Սկիզբը երբ եկայ, այդ անունները ծիծաղաշարժ հնչեցին, բայց հիմա զանոնք աշխարհի ամէնաբնական անունները կը նկատեմ։ Սիրանուշ, Շնորհիկ, Կիլեզար, Դշխուն, Ազնիւ, Սիրուն, Ռահել, Հռիփսիմէ, Արուսեակ, Սիրարփի, Սեմակիլ, Կասիա, Երանիքա, Ջարուհի, Երանուհի եւ Սրբուհի՝ օրինակներ են։ Կը կասկածի՞ք որ սկիզբը բաւական մտածեցի որ երբեք ալ այդ անունները պիտի չտրվին։ Հիմա աղջիկ որբուհիները գիտեմ իրենց անունով եւ քանակով։ Հաճոյքն ունինք տաս Մարիամներ ունենալու։ Ասոնց ազգանուններն ալ գիտեմ։

Փեպրուար փաս

Կճու ցուրտ մը կայ. սենեակներէն շատերուն օդը դուրսի օդին պէս է։ Երեք օր սենեակս մնացի պաղառնութեան պատճառով, բայց Շաբաթ օր միւս շինութիւնը գացի ընթացիկ պարտականու-

թիւններս ստանձնելու՝ Միս Սուփըրին փոխարէն: Մսթըր Նիլսընը երկու շաբաթ առաջ մեկնեցաւ. այնուհետեւ մենք գործերով ծանրաբեռնուեցանք: Երկուշաբթի Միս Սուփըրը հագիւ կրնար ուղքի ելլել, Էտիթը գրեթէ հիւանդ էր, իսկ ես նուազ քան առողջ էի՝ երբ հիւր մը երեւցաւ՝ Մսթըր Սիլին Ատանայէն: Իր ժամանումը փոթորիկի մը զուգարկայեցաւ: Նպաստիցի նոր աշխատատարն է ան, որ վերջերս Ֆրանայէն եկաւ, ուր մեքենավար էր՝ պատերազմի երկու տարին: Ծածկոցներ եւ հանդերձանք բերաւ մեր շրջանի գիւղերուն բաժնելու: Անշուշտ, շատ մը վայրերու մէջ առատ ձիւնի այս պայմաններուն անկարելի է գիւղերը երթալ: Շատ աղուոր է այս երիտասարդին հոս գտնուիլը, բայց երբ եղանակը բարելաւուի Ատանա պիտի վերադառնայ եւ մեզի պիտի թողու Նպաստից ապրանքներուն յետագայ ցրուումը:

Փետրուար տասներկու

Վայելեցինք Մսթըր Սիլին ներկայութիւնը եւ ցաւեցանք որ մեկնեցաւ այս յետմիջօրէին: Ազնիւ երիտասարդ է, որուն նմաններուն յաճախ կը հանդիպինք. հսկայ է եւ խոշոր, բայց շատ անուշ հոգի ունի: Ըսաւ թէ այնքան սիրած է Հաճընը որ պիտի հաճոյանար հոս նշանակուելով: Ուշագրաւ չէ՞՞ ինչպէս մարդիկ գրեթէ անմիջապէս կը կապուին այս վայրին: Տուրտը նուազած է եւ մենք շնորհակալ ենք. կեանքը դժուար էր անցնող միքանի օրերուն: Մսթըր Սիլին մեր կրակարանը կրցաւ նորոգել: Կը զգայինք որ տաքութիւն չենք ստանար, ու պարզուեցաւ որ խողովակներէն մին անջատուած է: Այսօր, ի հակադրութիւն, միջօրէականի եղանակ է մեծ շէնքին մէջ: Ուրախ եմ մտածելով թէ դուք այս պահուն Քալիֆորնիա կը գտնուիք: Գիտէ՞ք, հեռաւորութիւնը մեծ տարբերութիւն չ'ընէր: Ձեռով մը ձեզի աւելի մօտ զգացեր եմ հիմա, հոս գտնուելէս իվեր, աւելի քան երբեւէ. հոգի՛ն է իրապէս կարեւորը, կը կարծեմ:

Մարտ երկուք

Ափսոս որ հիւանդ էի, բայց այսօր վերսկսայ աշխատանքիս եւ թէեւ, բնականաբար, սովորականէն քիչ մը աւելի յոգնած եմ, քննութիւն բռնեցի յաջողապէս: Եղանակը ջերմացած է եւ այսօր

իտէալականօրէն գեղեցիկ է: Թերեւս ինծի չափ խանդավառ չզգաք երբ գիտնաք թէ հազուստներէն քսանեօթ հատը կարուած վերջացած են, եւ, ես, հպարտ եմ այդ իրագործումով:

Մարտի վեց

Ասիկա սքանչելիօրէն արեւոտ օր մըն է: Հագս գրեթէ իր աւարտին հասած է: Դժուար վիճակ էր, ափսոս որ չհասայ օգնութեան՝ երբ միւս գործակիցներս յոգնած էին: Շատ պատճառներով հաւանաբար չկարենամ Մարտ 2 եւ Այնթապ երթալ: Բայց աւելի ետք այս մասին աւելին կ'իմանամ: Շատ հիւանդ տղեկ մը ունինք՝ վախնամ չապաքինի, թէեւ այս ժողովուրդին հզօրութիւնը յատկանշական է: Երբ աղ տրուի մարդու մը, օրինակ մեր *քաթըրճի*ին, ան ձիու մը գործածած աղին չափ կ'առնէ: Եթէ անոնք չարքաշութեան վարժ չըլլային չէին կրնար աքտորին դիմանալ:

Հեղինակային նշում

Ասիկա Հաճընէն Ամերիկա հասած վերջին նամակն է, մինչեւ Փետրուար 1922՝ երբ 10 Մարտ 1920 թուակիր հետեւեալ նամակը ազգայնականներուն կողմէ իվերջոյ արտօնուեցաւ եւ տեղ հասաւ:

Մարտի տասներօթ

Սքանչելի էր այսօր. արեւը կը փայլէր կապոյտ երկինքին մէջ: Երեխաներ ինծի պզտիկ, դեղին քրքմածաղիկ բերին, մեր գարնան առաջին ծաղիկները: Թուեցաւ թէ ձմեռը երբեք պիտի չվերջանայ, բայց շաբաթ մը առաջի արարողութիւնը իր կախարդանքը գործեց: Աղջիկները «ձմեռը այրեցին» եւ ատով ձմեռը աւարտեցաւ⁷¹: Քաղաքին մէջ ընթացիկ սովորոյթը տանիքներուն վրայ կրակ վառելն է: Իդէպ, տանիքները ցեխէ շինուած են: Քանի հիւանդ էի սենեակիս մէջ, աղջիկները կրակը վառեցին վարը՝ պատուհանիս տակ: Կ'արժէ գիտնալ այս սովորութիւնը, որովհետեւ ազդու է: Այդ գիշերէն իվեր եղանակը բարեխառն է:

⁷¹ Նկատի ունի հայկական աւանդական տեսանկյունից «տերընտես»ը:

... Բան մը կայ, որուն մասին խուսափած եմ գրելէ եւ թերեւս ալ սխալած եմ այդպէս ընելով: Կը կարծեմ լսած էք Մարաշի եւ այնտեղի խոռվութիւններուն⁷² մասին եւ մտահոգուած ինձմով: Ջարդ մը տեղի ունեցած է հոն որուն մասին մինչեւ վերջերս մենք ալ չէինք իմացած: Սարսափելի եղած է, բայց յուսամ գիտէք, բոլոր միսիոնարներն ու Նպաստից պաշտօնէութիւնը ապահով են: Բնականաբար, մենք քիչ մը ահաբեկեցանք հոս, բայց իրական դժուարութիւն չունեցանք: Յետոյ բոլոր մանրամասնութիւնները կու տամ ձեզի, բայց դուք երկվայրկեան մ'իսկ մի՛ մտահոգուիք ինձմով: Չէի մտածեր հեռանալ Հաճընէն. վախնալու պատճառ կար, բայց երբ ատիկա անցեալ կը թուի հիմա, Էտիթին եւ երեխաներուն հանդէպ հանգիստ խղճով՝ կրնամ երթալ: Երբ այս ստանաք, յուսամ արդէն ճամփայ ելած կ'ըլլամ դէպի ձեզի եւ կը խոստովանիմ որ ակնդէտ ձեզ կ'ուզեմ տեսնել: Երբեմն կը թուի թէ ա՛լ չեմ կրնար սպասել:

Գրուած բայց չդրկուած [նամակներ]

Փետրուար երեք

Այնքան տարածայնութիւններ կը հասնին մեզի, որ որոշեցի արձանագրել դէպքեր որոնք յետագային ձեզի համար շահեկան կրնան ըլլալ: Նամակներուս մէջ ոչինչ պիտի գրեմ, որ ձեզի մտահոգութիւն պատճառէ, քանի դուք չէք կրնար օգնել մեզի՝ ինչ ալ պատահի: Քանի որ այս արձանագրութիւնը - եթէ երբեւէ կարդաք - պիտի չերթայ սովորական խողովակներով, այլ՝ ձեռամբ պիտի տրուի ձեզի, բաներ մը պիտի պատմեմ ձեզի, որոնք չէի համարձակեր վստահիլ նամակատան՝ գրաքննութեան պատճառով: Շա՛տ քիչ գրած եմ թէ ինչպէ՛ս ֆրանսացիք կը վարեն շրջանի խնդիրները: Գիտէք որ անոնց տրուած է Կիլիկիոյ վերահսկողու-

⁷² Մարաշի դէպքերը կը զարգանան Յունուար 1920ի սկիզբէն ու կը վերածուին աղէտի՝ Փետրուարի կիսուն, երբ Մարաշի ֆրանսական կայազօրը եւ ծննդավայր վերադարձած մարաշցիներու կարեւոր մաս մը կը ջարդուին թուրք չեթէներու կողմէ: Մարաշի ջարդին հայ զոհերուն նախնական թիւ կը նշուի 15-20,000 (*Missionary Herald*, Ապրիլ 1920, էջ 165. նաեւ՝ Յունիս, էջ 287-88):

թիւնը եւ իրենց ներկայի քաղաքականութիւնը հայերուն զէնք մատակարարելն է:

Քաղաքականութիւն մըն է, որ մեզի համար շատ անխոհեմ կը թուի, քանի որ հայերը իդիմաց անցեալի դաժանութեանց եւ անարդարութեան, որոշ է որ պիտի հակադարձեն թուրքերուն՝ երբ առիթը հրամցուի: Ամբողջ աշնան ու ձմռան, հայերը տրամաթիք ձեռնարկներով, իրենց կրած չարչարանքները կենդանի պահեցին: Թուրք քայմաքամը փոխարինուած է հայով մը:

Իմացանք որ կարգ մը թուրք գիւղերու մէջ հայ ոստիկաններ զէնքեր բռնագրուած են: Այս ամէնը անհանդարտութիւն եւ ժխտական շփում կը յառաջացնէ: Մեզի լուր հասաւ որ մեծաթիւ թուրքեր կը մէկտեղուին Մուսթաֆա Քեմալ փաշա անունով ղեկավարի մը ներքեւ, որ վճռած է ֆրանսացիք երկրէն դուրս քշել: Կ'ըսուի թէ Մարաշը յարձակման ենթարկուած է: Կը յիշէք որ ան մեզմէ չորս օրուան հեռաւորութիւն ունի - շուրջ հարիւրքսան մղոն - եւ հաճընցիք խուճապի մատնուած են: Անոնք կ'ըսեն, թէ իրենք են յաջորդ թիրախը: Ֆրանսացիք - իբր թէ կը պաշտպանեն Կիլիկիան - ոչ մէկ զինուոր դրկած են այս քաղաքին պաշտպանութեան: Մինչ այդ, միւս կողմէն, բոլոր գրասենեակները իրենց մարդիկը նշանակած են՝ հայեր, ֆրանսական համազգեստով, եւ ֆրանսական դրօշակը բարձրացուած է առաքելական դպրոցին վերեւ:

Շատ ցուրտ է եւ բաւական ձիւն տեղաց, որով հիմա լեռնանցքները անանցանելի են: Երբ ձիւնը հալի՝ տեսնենք ինչ կ'ըլլայ: Կ'ըսուի թէ նոյնիսկ թուրք կանայք ու երեխաներ կը զինուին իսկ մեր խեղճ ժողովուրդը կը զգայ որ օրհասի մէջ է:

Փետրուար չորս

Պատուելին փորձեց Մարաշ հեռագրել: Երկար ժամանակէ իվեր նամակ չէ եկած այնտեղի բարեկամներէն: Լուր չի հասնիր մեզի, որով կը հաստատուին մեր վախերը թէ շրջանը պաշարուած է ու կտրուած շրջապատէն: Այս յետմիջօրէին ձիերը հանեցինք եւ ուղղուեցանք վանքին որբանոցը, զոր հայկական յանձնախումբը կը վարէ: Խեղճ վերակացուն ջարդերուն ընթացքին այնքան շատ հարազատներ կորսնցուցած է որ գրեթէ յոյս չունի որ Հաճընին կը

խնայուի: Այս բոլորը եւ ամէնուրեք պատմուող պատմութիւնները՝ անցեալի սարսափներուն մասին, որոշապէս չեն խանդավառեր մեզ՝ մեր ներկայ կացութեան մէջ: Բարեբախտաբար, այնքան ծանրաբեռնուած ենք գործերով որ քիչ ժամանակ ունինք որեւէ այլ բանի մասին մտածելու: Փոքրիկներս նոր հագուստներ պէտք է ունենան, իսկ իրենց հին հագուստները պէտք է կարկտանուին: Ողորմութիւն պէտք է համարել որ հասարակաց աշխատանքը կը յաջողի մեր հորիզոնը գրեթէ լեցնել:

Փեպրուար վեց

Իմացանք որ Էւերէկի շրջանին մէջ թուրքերը կուտակումներ կը կատարեն Հաճընը գլխաւոր թիրախ ունենալով: Ծովակալ Պրիսթօլէն - Կոստանդնուպոլսոյ մեր բարձր յանձնակատարը - նամակ մը եկաւ մեզի, յիշեցնելով որ Թուրքիոյ բոլոր ամերիկացիները պէտք է բացարձակապէս չէզոք մնան եւ ո՛չ հայերուն, ո՛չ ալ ֆրանսացիներուն կողմը բռնեն: Հայեր խումբ-խումբ կու գան մեր համալիրը՝ նամակ ու հեռագիր ղրկելու միջոցները արծարծելու: Ֆրանսացիք կը պատասխանեն թէ պատճառ չկայ վախնալու, եւ թէ՛ երբ կարիքը յառաջանայ, համապատասխան ապահովութիւն պիտի տրամադրուի:

Փեպրուար ութ

Էտիթը հիմա եկաւ յայտնելու Կիլիկիոյ հեռաւոր սահմանին գտնուող հայկական գիւղի մը մասին հասած լուրը՝ թէ այդտեղի գիւղացիք ընդունուին եւ պատսպարուին Հաճնոյ մէջ: Անսիրտ պէտք է ըլլալ մերժելու, բայց քաղաքին գերխճողուածութիւնը [հարցը կը դժուարացնէ] - շատ մը մարդիկ քարայրներուն եւ փոսերու մէջ կը բնակին: Դժուար է եօթհազար հոգի բնակին դեռ կանգուն հինգ հարիւր տուներուն մէջ: Տեղ չկայ:

Փեպրուար տասնմէկ

Իրիկունով կը գրեմ, սարսափելի ցերեկէ մը ետք: Առտու ժամը իննին մօտերը մեր դուռը եկան երկու հայեր որոնք գրեթէ զգայազիրկ էին ցուրտէն ու յոգնութենէն: Պատմեցին իրենց պատմութիւն-

նը, թէ շաբաթներէ իվեր արտաքին աշխարհէն կտրուած, Մարաշի ամերիկացիք իրենց կացութեան մասին հաղորդելու համար գիրենք սուրհանդակ դրկած են Հաճըն: Բայց սուրհանդակը Ձէյթուն հասնելէն ետք աւելի չէ ուզած երթալ: Ձէյթունցիներուն միջեւ վիճակ քաշուած է թէ ո՛ր երկու հոգին պիտի շարունակէ ճամփան: Անոնք, որոնց ելած է վիճակը գիշերով ճամփայ ելած են ըսելով թէ՛ «երթալը մահ է, մնալն ալ մահ է»: Ասոնք լեռնագագաթներու ճամփով, պաղէն գրեթէ մեռնելով, հասեր են մեզի: Վեց գիշեր տեւած է իրենց երթը: Թուղթ մը ունէին որ կ'ըսէր թէ իրենց պէտք է քսան ոսկի վճարուի: Իրենց բերած երկտողը հեռագրի մը ձեւն ունէր եւ հետեւեալն էր. «թուրքերն ու ֆրանսացիք կը կռուին: Մեր համալիրէն կ'երեւի որ կռուող ֆրանսացիք յստակօրէն պաշտպանողական վիճակի մէջ են: Քաղաքին մէջ բազմաթիւ քրիստոնեաներ սպանուեցան, մեր որբերէն ոմանք վիրաւորուեցան: Ուտեստի պակասութիւն ունինք, լուր դրկեցինք Արնուլտին ու Պրիսթօլին՝ Կոստանդնուպոլիս եւ Հալէպի ամերիկեան հիւպատոսին»: Երկտողը ստորագրած էր Նպաստամատոյցի Մարաշի տնօրէնը: Այնքան տարօրինակ ու խղճալի կը թուի մտածել, թէ Մարաշ - մեծ քաղաքը - օգնութիւն կ'ուզէ փոքրիկ Հաճընէն, որ Նպաստամատոյցին ըրած աշխատանքներուն մէջ ամէնէն անմատչելի վայրն է: Այդուհանդերձ մենք հեռագրամիջոց ունինք տակաւին եւ անմիջապէս որ երկտողը տարուի կայան՝ ճամփայ կ'ելլէ: Յուսանք չի խափանուիր: Նոյն այս զէյթունցիք նամակ բերած էին մեր պատուելիին՝ Մարաշի պատուելիէն, որով վերջինս կը պատմէ իր կնոջ եւ երկու զաւակներուն խողխողուիլը թուրքերէն: Դուք Ամերիկայի մէջ կրնայ աւելի գիտնաք երկրի ներքնամասի վիճակին մասին քան մենք, բայց վտանգը մօտալուտ կը թուի: Մենք հոս խորհրդակցութիւն մը ունեցանք Էտիթին գրասենեակը:

Երէկ, ձեզի ուղարկած նամակիս մէջ գրած էի Մսթըր Սիլիի Ժամանման մասին: Ատանայէն եկած Նպաստամատոյցի պաշտօնատար մըն է, որ միքանի օրուան այցելութեամբ եկաւ՝ ծածկոցներ ու հագուստեղէն բերելով: Պնդեց որ Ատանա երթանք քանի դեռ ճամփան բաց է: Երեքս միաձայն ըսինք՝ «ո՛չ, մեր տեղը հոս է»: Փափաքելի է որ Մսթըր Սիլին վերադառնայ Ատանա, քանի որ

կրնայ մեր վիճակը ներկայացնել իշխանութիւններուն: Կ'ուզենք որ անմիջապէս մեկնի: Էտիթը եւ ես միասին խօսեցանք միաններուն՝ իր երթալէն ետք: Էտիթը ըսաւ՝ «կը զգամ ու հաւանական է որ ասկէ վեց շաբաթ ետք մեր կեանքը վերջացած ըլլայ»: Մենք լռութեամբ կը դիմագրաւենք այդ մտածումը, որովհետեւ գիտենք որ հիմա մեկնելով՝ կրնանք փրկել մեր կեանքը, բայց կը կորսնցնենք մեր հոգիները: Կեանքը շատ քաղցր կը թուի ինձի համար եւ կը տենչամ ձեզ բոլորդ նորէն տեսնել բայց եթէ անոր աւարտը հոս՝ Թուրքիոյ մէջ պիտի ըլլայ եւ՝ թուրքերուն ձեռքով, ապա պէտք է հաւատամ Աստուծոյ՝ ինձի համար ծրագրածին:

Եթէ ճակատագիրս մա՛հ է՝ հո՛ւ, եւ՝ կ'աղօթեմ որ քաջութեամբ դիմագրաւեմ մահը: Վերջերս *ժողովորդի Գիրքէն* միքանի համարներ կարդացի, որոնք ազդեցին վրաս եւ ամրացայ: Այստեղ կ'ընդօրինակեմ զանոնք, որովհետեւ հիմա զիս կը հանգստացնեն.

Կանաչ մարգերու՛ մէջ: Ո՛չ միշտ: Երբեմն Ան՝

Որ լաւագոյնը գիտէ, ազնութեամբ առաջնորդեց զիս

Յոգնատանջ ճամփաներու, ուր ծանր շուքեր կան:

Եւ խաղաղ ջուրերու՛ մօտ: Ո՛չ, ոչ՝ միշտ:

Յաճախ ծանր մրրիկները շուքս կը փչեն

Եւ հոգիս վերեւ ալիքներն ու կոհակները կ'անցնին:

Բայց երբ փոթորիկները էն բարձրը կ'աղմկեն եւ ես

Օգնութիւն կը կանչեմ, Տէրը, կողքիս

Կը փսփսայ հոգիս՝ «ահա ես եմ»:

Ահա, ուր Ան զիս կ'առաջնորդէ՝ ես ապահով կ'երթամ

Դէպի երջանկութիւնը գալիք, քանի՛ պիտի գիտնամ

Ինչու, իր իմաստութեամբ, Ան զիս այսպէս առաջնորդեց:

Մսթըր Պ.ին երկտող մը կը գրեմ որ Մսթըր Սիլիին հետ Ատանա պիտի երթայ, յետոյ՝ Կոստանդնուպոլիս, ուրկէ կարելի է դրկել բիտանական փոստով: Երկտողը փակ նամակ մը ունի ձեզի, որ ձեզի պիտի տրուի երբ համոզիչ փաստ ըլլայ թէ ես չեմ ապրիր:

Փետրուար տասներկու

Այսօր Մսթըր Սիլին մեկնեցաւ: Թէեւ ատիկա ամէնէն ճիշտ քայլն էր, բայց ձեռով մը լքուած զգացիմք, մինչ ինք կ'աներե-

ուրթանար ճամփուն վրայ: Յոյս ունինք որ ուսեստի պահանջքը զոր իրեն հետ ղրկեցինք՝ կրնայ ընդառաջուիլ ու մեզի ղրկուիլ քանի դեռ առիթ կայ:

Փեղրուար փասնհինգ

Քանի պաղառնութիւնս կը շարունակուի եւ անընդհատ կը հազամ, ստիպուած եմ ետ անկողին մնալ, ուստի եկող լուրերը իմ սենեակս պէտք է բերուին: Խումբ մը աղջիկներ, որոնք Մարտի վերջաւորութեան տրուելիք երգահանդէսին համար ծանօթէն կ'աշխատին, քովս եկան խօսելու: Շատ մելամաղձոտ են: Լէան, անոնցմէ մին, ըսաւ՝ «վասն ինչի՞ այս բոլոր ճիգը»: Տարբեր ձեւերով, երեխաները գիտեն սպառնալից տագնապին մասին. իսկ երէկ՝ գիրուկ Վահանիկը ըսաւ. «Եթէ թուրքերը գան գլուխս կտրելու՝ կը փախչիմ»: Խեղճ պատիկներ, իսլամ անունը իրենց դող կը պատճառէ:

Անշուշտ շատ մը ազնիւ թուրքեր ալ կան որոնք երբեք չհաւանեցան հայերուն դէմ գործուած անիրաւութիւններուն: Եղած են պարագաներ, երբ թուրքեր պահած ու պահպանած են հայեր, սակայն երբ վտանգը սպառնալից կը դառնայ, դժուար է յիշել որ լաւ թուրք ալ կայ:

Պատուհանէս դուրսը շատ նկարագեղ հագուած հայ մը կ'երեւի: Զինուոր մըն է, որ կը պատկանի մեզմէ վեր գտնուող բարձունքներէն մէկուն հսկող քսան հոգինոց խումբին: Խոցոտող ցուրտ է, իսկ ինք ճերմակ գլխանոց մը (*պաշլըք*) ունի գլխուն, վեղարի տեսակ մը զոր չերթէզները կը շինեն. առջեւի ծայրերը իրար խաչածեւելէ ետք, վեղարին ետին իրար կը կապուին: Իր փամփշտակալով ու զէնքով ան ահեղ մըն է: Մենք բացարձակապէս չէզոք պէտք է ըլլանք, ահա թէ ինչու մերժեցինք նիւթապէս աջակցիլ պաշտպանութեան ճիգին: Բայց նաեւ մենք մեզ հանգստացուցինք՝ մտածելով որ ճիշտ կ'ըլլայ ծածկոցներ տալ, որպէսզի մարդիկը տաք մնան ու հսկեն:

Հիմա Ատանայէն լրաբեր մը հասաւ: Իր նամակները կը պնդեն մեզի որ մեկնինք այն մտածումով որ եթէ թուրքերը գան եւ ջարդ մը տեղի ունենայ, անկարող պիտի ըլլանք մեր որբերը փրկել: Սակայն մենք պատճառ չենք տեսներ մեր որոշումը փոխելու, եւ պիտի մնանք ահաբեկած ժողովուրդին հետ այն գիտակցութեամբ,

որ մեր ներկայութիւնը իրենց հանգստութիւն կը պատճառէ: Իրիկ-նային ձեռնարկներ կազմակերպեցինք փոքրիկներուն համար, որ-պէսզի իրենց մտածումները շեղենք սարսափէն: Մեզի գոհունակու-թիւն է ասիկա ընել: Շատ քիչ ճիգ կը պահանջէ իրենց հաճոյք պատճառելը:

Փեղրուար տասնութ

Դեռ իրական տեղեկութիւն չկայ կացութեան մասին: Բնականա-բար մարդիկ անցեալի տառապանքներէն կը խօսին: Կարի կիներ-րէն մին, Մարիամը, երբեւէ ասանկ տխուր աչքեր չէր ունեցած: Կը մտածէ Տէր Զօրի ճամփուն վրայ անօթութենէն կորսնցուցած իր ե-րեք զաւակներուն մասին: Կը մտածէ ողջ թաղուած իր ամուսինին մասին: Քանի-քանի Ռաքէլներ կու լան իրենց զաւակներուն հա-մար: Էլիզան, շրջանաւարտութեան այս հանգրուանին, այնքան ուղղամիտ եւ հաւատարիմ, չի կրնար մոռնալ որ տաս տարի առաջ իր հայրը Ֆեքէի իր սեփական փուռին մէջ սպանուեցաւ թուրքե-րուն կողմէ: Դժուար է լաւատեսութիւն զգալ, բայց ամերիկացիներ-րուն հանդէպ տեղացիներուն ունեցած հոգեյոյզ հաւատքին պատճառով, մենք պէտք է խնդանք՝ մինչ մեր սրտերը տխուր են: Տունէն բերած թուղթերս խառնշտկելով գտայ հին, անուշ լուտերա-կան սաղմոսը, զոր այնքան կը սիրենք: Կարգ մը տողեր - կը թուի - լաւ կը յարմարին այս ժողովուրդին անցեալին, ներկային եւ ապա-գային, որուն հետ գէշ վարուած են:

Տարածուն, անթիւ փուշերը որոնք կ'օրօրուին
Գահին շուրջ ճերմակ շարքերով
Բոլորը արմաւենի ճօճելով եւ սաղմոս երգելով
Յաղթանակի.... Ո՛վ են անոնք:
Անոնք պատանդ հիւրերն են
Փորձառութեան, խաչի ու նահատակութեան
Հաւաքուած են Յիսուսի ոտքերուն շուրջ՝
Յաւիտենական տան մէջ:
Եւ անոնք շարուած են մաքուր արտաքինով
Անոնց քայլերգերը բամբիռով ու քնարով կ'երգուին
Քերովբէներուն եւ սերովբէներուն հետ
Երկնքի աստեղային երգչախումբէն:

Մինչ հոս երկրի վրայ, տխուր էին սրտերն անոնց
Հիմա գերուրախ են անոնք.
Յաղթական կ'ուղղուին շնորհքի գահին
Արքայական զգեստներ հագին:
Դժբախտութեանց ու փորձութեանց մէջ
Ոչ ոք անոնց վիշտը ամոքեց,
Բայց հոն վերը, Սիրոյ Աստուածը
Արցունքներն անոնց սրբեց:
Հիմա անոնք Շաբաթի հանգիստը կը վայելեն
Խնձոյքի բեմին, ուր Քրիստոս, Տէրն իրենց
Թէ՛ հիր է եւ թէ՛ տանտէր:

Փեպրուար քսաներկու

Կէսօրէ ետք, գրած ատենս, դռանս դակոցը լսեցի. պատուելին էր, եկեր էր ողջերթի: Նոր որոշուեր է որ Ատանա պէտք է երթայ, անձամբ խնդրելու որ Հաճընին օգնեն: Իր ընկերակիցներն են առաքելական եպիսկոպոսն ու առաքելական դպրոցին գլխաւորը⁷³: Անորոշ է թէ ինչ կրնան իրագործել: Բայց կ'արժէ փորձել:

Փեպրուար քսանվեց

Վստահելի լուր չկայ, բայց տարածայնութիւն մը կայ, թէ պատուիրակները դէպի Ատանա ճամփուն վրայ յարձակումի ենթարկուեր են: Չենք գիտեր ինչ եղած են: Մինչ այդ, վախը կ'աւելնայ:

Փեպրուար քսանեօթ

Երկու իսլամ աղջիկ կայ մեր դպրոցին մէջ. շուրջ քսանամեայ Այիշան, զոր ամուսնալուծած էր ամուսինը առանց պատճառի, եւ կ'ուզէ ուսում ստանալ, յուսալով որ այդպէսով կրնայ դասաւանդել: Երկրորդը սիրուն աղջիկ մըն է՝ Ճեննէթ, տասներկու տարեկան: Այսօր այս երկուքին մայրերը զիրենք բերին, փափաքելով որ անոնք միշտ դպրոցը մնան: Հաճընի բոլոր իսլամներուն հանդէպ լաւ զգացումներ չեն տաճուիր. շուրջ երեք հարիւր է անոնց թիւը:

⁷³ Պետրոս սրբազան Սարաճեան եւ Շմաւոն Փոստոյեան:

Այս երկու մայրերը կը վախնան իրենց զաւակներուն վրայ: Էտիթը արտօնած է որ անոնք գիշերը գան:

Փեղրուար քսանութ

Այս յետմիջօրէ, պատուհանէս դուրս նայելով տեսայ որ մեր համալիրին իմ սենեակիս նայող հովիտին փոքր հարթավայրին վրայ, խումբ մը հայեր զօրավարժութիւն կ'ընեն: Անոնք յառաջանալով կը նետուին գետին եւ կը դիրքաւորուին իրենց զէնքերով: Բազմիցս կրկնեցին այս վարժութիւնը: Հարիւրամեակներ շարունակ, թուրքերը հայերուն զէնք կրել արգիլած են, ուստի հիմա հայերը ամէն ճիգ կ'ընեն ինքնապատրաստուելու թշնամիին դէմ: Հոգեյոյզ տեսարան է երբ մարդիկ լեռնային այս տարածքին վրայ ամէն ինչ կ'ընեն պահպանելու իրենց քաղաքը: Մարզումին զօրակոչուած են յարաբերաբար անկարգ խումբ մը հայ կամաւորներ⁷⁴: Անոնք Էրզրումի եւ Էւերէկի շրջանէն են, որոնք աքսորուեր են 1915ին եւ տունդարձին միայն իրենց աւերակ տուներով դիմաւորուեր են: Ո՛չ ընտանիք, ո՛չ ալ տուն ունենալով, անոնք պատրաստ են իրենց ծառայութիւնները ծախել փոքր գումարի փոխարէն՝ օգնութեան պէտք ունեցող որեւէ տեղի: Իրենց ղեկավարը Կովկասի մէջ մեծն Անդրանիկին հրամանին տակ կռուած է⁷⁵: Շատ մը պատճառներով, այս մարդոց քաղաք ժամանելը գէշ է քաղաքին համար, քանի որ իրենց վերահսկողութեան ենթարկեցին շրջանը: Հակառակ բազմաթիւ քաղաքացիներու չկամութեան, ասոնք կը նեղեն Հաճընի եւ շրջապատի գիւղերուն իսլամները: Ասոնցմէ մէկն է որ վախցուցած է Այիշային մայրը:

Մարտ մէկ

Պատուելիէն նամակ եկաւ այսօր: Բաւական մեծ փորձառութիւն մը անցուցեր է իրենց խումբը: Սիսէն ոչ-շատ հեռու, աւազակներու դէմ կռուի բռնուեր են՝ իրենց կեանքը փրկելու համար: Ձիերնին

⁷⁴ Հաճըն եկած կամաւորներուն ընդհանուր թիւը շուրջ 30 էր: Անոնցմէ մաս մը կը լքէ Հաճընը պաշարումէն առաջ:

⁷⁵ Խօսքը 1919 Դեկտեմբերին Հաճըն հաստատուած ինքնապաշտպանութեան յետագայ հրամանատար, վաշտապետ, կեսարացի Սարգիս Ճեպէճեանի մասին է:

սպանուեր է, բայց թաքստոց մը գտեր են խորունկ քարայրի մը մէջ եւ երկու ժամ ետ մղեր են թշնամին: Իրենց փամփուշտները վերջանալու պահուն, Սիսէն խումբ մը՝ իմանալով կռիւին մասին, օգնութեան հասած է: Իվերջոյ ապահով հասեր են Ատանա, բայց յուսատու շատ քիչ բան կայ տեղեկագրելու՝ թէ Հաճըն զօրք կ'ուղարկուի: Պատուելին կը հաւաստէ որ Հաճըն վերադարձի ճամփան փակուած է: Իր կինը տկար է, իբրեւ հետեւանք քառամեայ աքսորին, իսկ մեր սրտերը կը ցաւին իտես իրեն եւ իր երեք սիրասուն մանչերուն: Երէկ, եկեղեցիէն մեր տունդարձին, մարդիկ տեսանք որ մեծ կոճղեր կը փոխադրեն՝ քաղաքի պաշտպանութեան: Մեր մենոնայթ ընկերները վստահ են որ ոչ մէկ վնաս պիտի հասնի Հաճնոյ: Մենք այնքան ալ վստահ չենք:

Մարտ երեք

Օրերը կ'անցնին առանց իրական որեւէ փոփոխութեան: Ժողովուրդը Շարի, որ մեզմէ հիւսիս գտնուող գիւղ մըն է, ուր անցեալ Սեպտեմբերին հետաքրքրական փորձառութիւն մը ունեցած էի, կը գիտակցի որ յարձակման առաջին գիծին վրան է: Չափազանց ցուրտ է եւ դեռ բաւական ձիւն կայ գետինները, ուրեմն եւ դժուար է գիւղը ամբողջութեամբ տեղափոխել: Ուրիշ հարց է թէ ի՞նչ կրնանք ընել՝ եթէ անոնք մեզի գան: Երապաքանը խուճապի մէջ է: Այնտեղի պատուելին⁷⁶ հոս է եւ կ'աղերսէ որ իր հօտը ընդունինք: Անոնք պատրաստուած են եւ արտօնութեան կը սպասեն գալու Հաճըն:

Տաւ է զիրենք մերժելը, բայց մենք ալ անօգ ենք: Մեր ամէնօրեայ շրջագայութեան ընթացքին մեր աչքերը կ'այրին չհոսող արցունքներով, մինչ մեր շրթունքները պէտք է խնդան: Ընկճող փորձառութիւն մըն է տեսնել ժողովուրդը որ այսքան վստահութիւն եւ ապաւէն ունի յաչս մեզի: Երկար տարիներ, Ամերիկան իրենց ներկայացուած է իբրեւ նուիրեալ միսիոնարներ, եւ ժողովուրդէն շատեր կը կարծեն որ Ամերիկան դրախտ է, իսկ ամերկացիք՝ դրախտամիտներ: Անոնք սակայն, տխուր գիտակցութիւն մը կ'ունենան երբ կու գան մեր երկիրը, իրենց սրտի փափաքին երկիրը:

⁷⁶ Երապաքանի պատուելին Սարգիսն էր (Eby, էջ 100):

Մարտի վեց

Այս առտու Էտիթը ըսաւ որ երթամ այն պարտէզը, ուր վայրի կակաչները պիտի ծաղկին յառաջիկային: Թերեւս, երբ ծաղկելու ժամանակը հասնի՝ հոն ձիավարելու կարելիութիւն չունենանք: Հետեւաբար, Փիթըրը եւ Հայաստանը թամբեցին եւ մենք նեղ արահետով ուղղուեցանք քաղաք, ուր սարսափ տեսանք ժողովուրդին դէմքերուն: Անցանք փլատակ շէնքերը, ամէնուրեք հանդիպեցանք մարտիկներու, յետոյ անցանք պետական շէնքերուն առջեւէն եւ փոքր, քարաշէն կամուրջէն՝ Ատանայի ճամփուն վրայ, յետոյ ազատ մակաղելու ձգեցինք մեր ձիերը: Յետոյ դարձանք աջ եւ հետեւեցանք լեռնային նեղ կաճանին: Մանուշակներն ու սիքլամէնները (նապաստակի ականջ – U.S.) ծաղկած էին, կարծես գարունը կը փսփսար մեզի: Երբ հասանք որոշեալ տեղը, ուր տակաւին ծաղիկի հետք չէր երեւեր, բայց եւ ընդամէնը միքանի շաբաթ ետք գոյներով պիտի ժայթքէր, կեցուցինք մեր ձիերը: Յանկարծ ժայռերուն ետեւէն մարդ մը ելաւ եւ Էտիթին բարեւիւն խոժոռ պատասխան մը տուաւ: Միքանի վայրկեան դիտեցինք հեռաւոր լեռները եւ դանդաղ ձիավարեցինք տուն: Հարցուցի Էտիթին թէ մարդը հովի՞ւ էր: Պատասխանեց որ ոչխարներ չունէր: Ես իմ կարծիքս ունիմ այդ մարդուն մասին:

Մարտի տաս

Երէկ լրաբերը եկաւ՝ ինծի ուղղուած բազմաթիւ նամակներով: Այս առտու, սովորականին պէս մեր նամակները ղրկեցինք, բայց լուր հասաւ որ լրաբերը սպանուած է իսկ նամակներու կապոցը՝ առնուած: Էտիթը իր կիսամեայ տեղեկագիրը ղրկեր էր, որ այսպէսով կորսուեցաւ: Կը թուի թէ թուրքերը սկսած են մեզ շրջափակել: Իրիկունը երբ Էտիթին ականարկեցի լեռան կողի, օտարոտի մարդուն մեր հանդիպումին, ըսաւ. «գիտցայ որ թուրք է եւ մտածեցի որ կրնայ լրտես-հետախոյզ մը ըլլալ, բայց չուզեցի քեզ մտահոգել»: Իրեն ըսի թէ ես ալ մտածեցի թէ կրնար վատ անձ մը ըլլալ, եւ չարտայայտուեցայ՝ զինք չվախցնելու համար: Իրապէս կը կարծեմ որ մեր՝ իրեն հանդէպ անտարբերութիւնը, մեզ փրկեց:

Մարտի տասներեք

Տարօրինակ օր մըն է այսօր: Յուրտ անձրեւ մը կը թափի երկինքէն. ընկճուած կը զգամ: Յետմիջօրէին վեց-եօթ հայեր եկան Էտիթին հետ խորհրդակցելու: Անոնք ըսին թէ Ֆեքէէն հեռագիր հասած էր, թէ եթէ Հաճնոյ բոլոր կանայք ու փոքրերը Ֆեքէ երթան, ֆրանսացի զինուորներ զիրենք Ատանա կը տանին: Մենք բոլորս ձեռականօրէն խօսեցանք այս մասին, որովհետեւ բոլորս ալ գիտենք ատոր զարգացումը: Եթէ Ֆեքէի մէջ ֆրանսական զօրքեր կան՝ ինչու՞ Հաճըն չեն գար: Յամենայնդէպս, Հաճընէն Ֆեքէ քալել կարելի չէ: Անշուշտ թակարդ մըն է, ուր թուրքերը կ'ակնկալեն մենք իյնանք: «Ո՛չ,- ըսինք մենք.- հոս մեռնինք, քան թէ ճամփան խող-խողուինք»: Մենոնայթները եւ վանքի որբանոցին պատասխանատուները մեզի պէս կը մտածէին, եւ առաջարկէն հրաժարելու պատասխան մը դրկուեցաւ: Ժամ մը ետք հաղորդակցութիւնը կտրուեցաւ եւ հիմա, մենք աշխարհէն կտրուած ենք: Ժողովուրդը խուճապահար է, կը վախնայ աւելի գէշ զարգացումներէ: Կ'ըսուի թէ մարդ մը խելքը թոցուցեր է:

Մարտի տասնչորս

Կին մը, գրեթէ խելագար վիճակի մէջ, այսօր համալիր եկաւ եւ աղերսեց որ հոս մնայ: Ամուսինը դերձակ է, ունի երկու զաւակ, մէկը՝ նորածին: Ատենին շատ գեղեցիկ եղեր է ան, իսկ հիմա աչքերը խոշորցած են եւ նուազագոյն ծայնէն իսկ տեղէն կը ցատկէ: Այս ընտանիքին պիտի արտօնենք որ մեր քովը, վարը, պզտիկ սենեակի մը մէջ բնակի: Այս ընտանիքէն բացի, թուրք աղջիկ մըն ալ՝ Հաթաճըն հանըմ, մեր հոգածութեան տրուեցաւ: Ան *ղապր*ին աղջիկն է: Անոր մայրը ահով եկաւ այս առտու, քանի որ հայ զինուորներէն ոմանք սպանացեր են ընտանիքին: Գէշ կ'ըլլայ հայերուն համար, եթէ այս աղջիկը վնասուի, որովհետեւ ան Շէյխ ու Իսլամին ազգականն է: Իսկ Շէյխ ու Իսլամը *ճիհապ* հոշակող անձն է: Մայրը չհամարձակեցաւ զինք բերել, բայց այս յետմիջօրէին, մութին մէջ, մեր լաւագոյն հայ պաշտօնեաներէն մին՝ Թորոսը, զինք մեզի բերաւ: Քօղը հանած եւ առանց չարշաֆի եկաւ որպէսզի իբրեւ թուրք չճանչցուի:

Մարտի տասնհինգ

Այս առտու, ժամը տասնմեկի ատեն, երբ խոհանոցը փոքրիկն Պայծառին ու Մարիին կաթը կը տաքցնէի մեծ պոռչտուք եւ իրարանցում լսեցի: Դուրս խուժեցի եւ տեսայ որ փոքրիկներն ու ուսուցիչները երկինքը կը դիտեն ուր օդանաւ մը կը սաւառնէր: Կապոց մը նետուեր է օդանաւէն, մեր համալիրէն ոչ-շատ հեռու: Զայն տարեր են կառավարական շէնք: Փոքրիկներէն ոմանք տարօրինակ տեսարանէն թուլցեր էին, իսկ դասարանին մէջ, ուսուցիչ մը մարեր է երբ պոռչտուքը լսեր է, կարծելով որ թուրքերը եկան: Շուտով տեղեկութիւն եկաւ քաղաքէն, թէ կապոցը միայն հայերուն նամակներ բերեր է: Մեզի նամակ չկար: Հաճոյնի իշխանութեանց ուղղուած նամակ մը կար թէ՛ չլուսահատին, որովհետեւ հազարաւոր զինուորներ ճամփայ ելած են⁷⁷, եւ թէ՛ ամէն երկու կամ երեք օրը անգամ մը սաւառնակ մը պիտի գայ: Անչափ սրտոտած կը զգամ սաւառնակին գալով: Հիմա կը գիտակցիմ որ ֆրանսացիք կրնան մեզ պահպանել օդէն: Չեմ կարծեր որ թուրքերը հակօդային զէնքեր ունին: Մենք կրնանք փրկուիլ: Նամակը կը յայտնէր թէ եթէ ապահով վայր մը նշուէր մեծ ճերմակ խաչով մը, սաւառնակը էջք պիտի կատարէր, ու ժողով մը գումարուէր:

Մարտի տասնվեց

Ձիավարեցիք վեր, դէպի մենոնայթներուն համալիրը, որուն կից որոշ հարթավայր մը կայ: Հոն հարիւրաւոր հայեր փոսիկներ կը լեցնէին եւ մեծ, ճերմակ խաչ մը կը գծէին կալիճով: Երանի իրենց եւ մեր յոյսերը ի դերեւ չելլեն:

Մարտի տասնութ

Գրեթէ նոյն ժամուն՝ ինչպէս Երկուշաբթի, սաւառնակը դարձեալ թռաւ մեր գլխավերեւ, բայց աւելի բարձր քան նախապէս եւ ոչինչ

⁷⁷ Իրականութեան մէջ, շուրջ 500 կամաւոր հաւաքուած էր Ախարճայի մօտ (Ատանա): Ծրագիրը ամբողջութեամբ կը ձախողի. 22 Սեպտեմբերին կամաւորները կը պաշարուին ֆրանսական զօրքին կողմէ, կը զինաթափուին ու ոմանք կ'աքսորուին Իզմիր (*Հաճոյնի Որբանոցը*, էջ 32):

նետեց, ոչ ալ փորձեց վայրէջք կատարել, ու հեռացաւ: Ինչ՞ կրնայ նշանակել:

Փոքրիկները լաւ են, բայց շատ վախցած են: Փոքրիկ Պայծառը, մեր էն նիհար փոքրերէն մին, Միս Սուփըրին ներկայացուցեր է երկու թղթեայ դահեկաններ, ըսելով որ ատոնցմով պէտք է փամփուշտ գնել: Ինծի համար շատ դժուար է ընդունիլ որ այս փոքրիկները ծանօթ են կսկիծի:

Մարտ քսան

Այս յետմիջօրէին երեքս ձիավարեցինք դէպի լեռնակողը այն ճամփուն որ մեր համալիրէն Մարաշ կ'երթայ: Կ'ուզէինք ծաղկած քրքմածաղիկ տեսնել: Տակաւին յամեցող ձիւնի շերտերէն դուրս նայող, միքանի դեղին ծաղիկներ տեսանք: Աւելի ետք լեռան ուսին հասնելով, հանդիպեցանք հոն կայանած հայկական պահակակէտին: Այսպիսի բազմաթիւ պահակակէտեր կան, իւրաքանչիւրը քսանեակ մը պահակներով, որպէսզի գտնուելով գազաթներուն՝ հետախուզեն ճամփաները: Ծրագիրը այն է որ թշնամի ուժերը հեռու պահեն՝ մինչեւ որ յաւելեալ ուժեր հասնին քաղաքէն: Յոռեգոյն պարագային, այս պահակները պիտի նահանջեն քաղաք եւ իրենց վերջին դիրքը պիտի ըլլայ առաքելական դպրոցը եւ մեծ, կիսաւեր քարաշէն եկեղեցին⁷⁸ երկու կողք-կողքի կառոյցներ, որոնք իրարու պիտի կապուին շինութեան ընթացքի մէջ եղող ստորգետնեայ ճամփով մը: Վերադարձին հանդիպեցանք մարդոց որոնք կ'ուղղուէին բարձունքները՝ մեր հանդիպած պահակները ոգելորելու:

Մարտ քսաներկու

Նորէն սաւառնակը: Միայն զինամթերքի պզտիկ տուփ մը նետեց՝ վայրէջքի դաշտին մէջ, յետոյ անհետացաւ կապոյտին մէջ: Հանդիսութիւն ծրագրեր էինք շրջանաւարտ դասարանին համար եւ ճիշտ գտանք որ գործադրենք զայն: Տօնակատարութիւնը ընթրիքի ձեւ առաւ, ուր երկրորդ կարգի աշակերտուիիները սպասարկեցին, յետոյ խաղեր խաղցանք: Աղջիկները սովորութիւն ունին ո-

⁷⁸ Հաճնոյ մեծագոյն եկեղեցին հրկիզուած էր, մինչ փոքրը կանգուն էր եւ գործածուեր էր կառավարութեան կողմէ իբրեւ ցորենի շտեմարան (Eby, էջ 83):

րել է հաւաքի վերջաւորութեան սաղմոս մը երգելու: Անոնցմէ մին ընտրեց «Բնաւ չձախողող բարեկամ մը»: Դժուար էր զսպել արցունքները, մինչ երիտասարդ ձայները կը կոհակուէին՝ վերանորոգ յոյսով եւ վստահութեամբ:

Մարտ քսանեօթ

Շաբաթը վերջացաւ, բայց օգնութեան նշոյլ չկայ: Խոստացուած զինուորները չեկան եւ կը կարծեմ՝ այլեւս սաւառնակ ալ պիտի չտեսնենք: Քաղաքը հիմա լաւապէս պատնէշուած է: Խրամատներ փորուած են, զանազան ուղղութիւններու վրայ փշաթէլեր կուտակած են, իսկ կարգ մը վայրեր՝ ականապատած: Բաւական պահեստ կայ գէնքի եւ զինամթերքի, եւ կ'ըստի թէ կազային ռումբեր ալ սկսած են շինել: Ատանայի ճամփան կտրուելէն միքանի շաբաթ առաջ, հայերը կրցան պատրաստուիլ յարձակումին: Այս յետմիջօրէին յանձնաժողով մը պնդեց մեզի որ Հաճըն տեղափոխուինք: Մարդիկ չեն հասկնար մեր չէզոք կեցուածքը: Մենք բացատրեցինք թէ մենք ամերիկացի ենք՝ ամերիկեան կալուածի վրայ, եւ թուրքերուն գալուն՝ մենք ամերիկեան դրօշակ պիտի ծածանենք ու ապափնինք մեր չէզոքութեան, որ պահպանէ մեզ: Յանձնախումբին մեծը ըսաւ. «մի՛ ապափնիք ձեր ամերիկացիութեան: Թուրքերը ձեզ պիտի անդամահատեն, հայերուն կողքին»:

- Թերեւս,- ըսինք մենք,- բայց մենք պիտի չդիմադրենք:

Աղաչեցին մեզի որ պահակներ տրամադրեն, բայց մենք կտրականապէս հրաժարեցանք:

Մարտ քսանինն

Այս առտու կանուխ կրակոցներ լսեցինք, ուստի գիտենք՝ որ թուրքերը կը մօտենան: Կրակոցները քաղաքին միւս ծայրէն կը թօլին լսուիլ: Հաւանաբար ծրագիրը Ատանայի ճամփուն կողմէն յարձակիլ է: Մենք կ'ականկալէինք որ թշնամին Մարաշի կողմէն կու գայ՝ արշաւելով քաղաքին վրայ եւ կ'անցնի մեր համալիրին վերէն, ու տեսնելով մեր դրօշակը, մեզի չի դպիր: Յաճախ թուրքերը ըսած են որ իրենց համար տխուր օր պիտի ըլլայ եթէ Հաճըն Հոմը կործանի: Տարիներ շարունակ այդ բարձունքի ճամփէն նայել են

այս համալիրին եւ կորսուած պիտի զգան առանց անոր: Շատ թուրքեր միսիոնարներէն ազնիւ վարմունք տեսած են, իսկ Միսիզ Քոֆինկին (վեթերան միսիոնարուհիին) անունը մեծ յարգանքով կը յիշուի: Մենք գիտակից ենք ասոր եւ կ'ապաւինինք որ ատիկա լաւ վահան մը ըլլայ ճգնաժամի պահուն: Այս գիշերէն սկսեալ դարմանատունը պիտի պառկիմ, կրտսեր աղջիկներուն քով: Այնտեղի պատասխանատուն խուճապահար վիճակ մը ունի, եւ կը մերժէ պարիսպէն դուրս պառկիլ:

Մարտ երեսուն

Մենոնայթները այս առտու երկտող մը ղրկեցին, թէ իրենց պատուհաններէն կոհիւր տեսանելի է, եւ թէ՛ կը թուի թէ առայժմ սահմանափակ ընդհարումներ կ'ըլլան միայն: Իրենց բարձունքէն լաւ կ'երեւի Ատանայի ճամփան եւ դաշտային հեռադիտակով կրնան տեսնել քարակոյտերու ետին կեցած մարդոց կրակոցները:

Մարտ երեսունմէկ

Ամէն առտու ժամը հինգին կը սկսի կրակոցը եւ ընդմիջումներով կը շարունակուի ցերեկը, իսկ յետմիջօրէին գրեթէ կը դադրի: Քաղաքէն նորէն մարդիկ եկան եւ պնդեցին որ փոքրիկները Հաճըն ղրկենք: Ըսինք որ քաղաքին մէջ ազգականներ ունեցողները ազատ են մեկնելու, իսկ գիւղերէն բերուած բաւական մեծահասակ որբերուն մասին՝ մենք կ'որոշենք: Ահռելի պատասխանատուութիւն է ասիկա, որովհետեւ չենք գիտեր թէ մեր դատողութիւնը ճիշտ է: Ուսուցիչներուն եւ աշակերտներուն ըսուած է որ իրենք ազատ են մեկնելու կամ մնալու, եւ - առանց բացառութեան - անոնք իրենց ճակատագիրը մերինին կապեցին: Մանչերը գործարանային շէնքին մէջ են, որ քաղաքին սահմաններուն մէջ կ'իյնայ: Ասոնց մասին դեռ չենք կրցած որոշել:

Ապրիլ մէկ

Այս յետմիջօրէին Էտիթը եւ ես ծիավարեցինք մենոնայթներուն քով, տեսնելու իրենց վիճակը: Երէկ լուր ղրկեր էին թէ միքանի փամփուշտ հասեր էր իրենց համալիրը: Անոնք արտօնած են որ

հայերը իրենց կալուածը իբրեւ կայան գործածեն, ուստի՝ թիրախ կը դառնան: Մենք հարցականի տակ կ'անունք կողմ բռնելու խոհեմութիւնը: Մեր տեսածին համեմատ՝ մեծաթիւ չեն թուրքերը եւ կրնայ ըլլալ որ թափառող աւազակներ ըլլան, քան թէ՝ գիւղացիներ:

Ապրիլ երեք

Տարօրինակ է մտածել թէ ի՞նչ պատահեցաւ Հինգշաբթիէն ի վեր: Երէկ առտու երկտող մը ստացանք Մսթըր Էպիէն թէ թուրքերուն թիւը շատցած է եւ անոնք վիրաւորած ու տարտղնած են այնքան հայեր, որ վերջիններս կը մտածեն նահանջել քաղաք: Իրենց համալիրին շէնքերէն մին իբրեւ դարմանատուն կը գործածուի վիրաւորներուն համար, ուստի իրենց որբերը ապահով չեն այլեւ: Կը փափաքին որ իրենց փոքրերով ու պաշտօնէութեամբ մեր քովը գան: Ըստ իրենց, կարելի չէ օր ցերեկով անցնիլ բացայայտ ճամփէն ու քաղաքին մէջէն հասնիլ մեր քովը: Ծրագրած են այդ քայլին դիմել մութին: Իրենց գալէն առաջ մենք դարմանատան շէնքէն մեր փոքրերը փոխադրեցինք դպրոցաշէնք: Անոնք հասան շուրջ եօթուկէսին. փոքրերը իրենց *տէօշէկները* (մահիճները) շալկած, իսկ վերմակները՝ ուսած: Անոնց կը հետեւէին երկու բեռնաւորուած էշեր եւ ձիախումբ մը, որոնք կը կրէին փոխադրելի պարենը: Կը կարծէինք որ բնաւ յաւելեալ սենեակ չունինք, բայց ձեռով մը տեղ գտանք բոլորին: Այս առտու փորձեցինք կարգաւորել յառաջացած քառուր:

Կրակոցներուն ելակէտը փոխուած է եւ կը թուի թէ հիմա կու գայ մեր ուղղութենէն: Որոշումի չյանգեցանք տակաւին գործարանի շէնքին տողոց առնչութեամբ: Սելամլըքի պատուհաններէն, հովիտին մէջէն ու լեռան արահետէն դէպի քաղաք վազող հայեր կ'երեւին: Անոնք թուրքեր տեսած պէտք է ըլլան:

Ապրիլ չորս

Ինչքան արագ պարագաները կը փոխուին: Երէկ յետմիջօրէի չորսին թրքական դրօշակը տեսանք մեզմէ վեր՝ բարձունքի մը վրայ: Միքանի օր առաջ հայ պահակները լքեր էին այդ դիրքը: Շուտով կրակոցներ սկսան: Թէեւ կրակոցները քաղաքին ուղղուած

են, բայց մեր համալիրը որ քաղաքին ու թուրքերուն միջեւ կը գտնուի՝ փամփուշտներ ստացաւ: Որոշեցինք մեր տղոց քով մեկնիլ անմիջապէս: Էտիթն ու ես քալեցինք մեր սովորական ճամփայէն, մինչ մերթընդմերթ փամփուշտ մը կը հարուածէր քարակոյտի մը կամ արահետին այս ու այն կողմը: Ի վերջոյ, քաղաքին մէջէն անցնելով հասանք գործարանին շէնքը: Մարդիկ փողոցներն ու իրենց սեմերուն կեցած, յուզուած կը հառաչէին ու կը կանչուըրտէին, մինչ կը հաւաքէին իրենց իրերը՝ ի պատրաստութիւն ծայրամասերէն կեդրոն տեղափոխուելու: Տեսարանը շատ ուրիշ էր երբ մտանք տղոց շէնքը: Ութսուն հոգի էին. մենոնայթները իրենց քսան տղաքը հոն ձգած էին՝ Ուրբաթ օր մեզի գալու ատեն: Բոլորը լուռ, ծնրադրած կ'աղօթէին ընդարձակ սենեակին մէջ, իրենց ուսուցիչին հետ: Միքանի վայրկեան, Էտիթը եւ ես նստանք ու իրար նայեցանք եւ յետոյ, միաբերան ըսինք՝ «Եթէ պիտի մեռնինք, միասի՛ն մեռնինք»: Տղոց ըսուեր էր որ պիտի սպասէին մութին եւ յետոյ իրենց ուսուցիչին հետ պիտի գային մեր համալիրը, իրենց հետ բերելով ինչ որ կրնային բերել: Առանձին վերադարձանք: Ճամփան փամփուշտները կը հարուածէին աջ ու ձախ, բայց մենք անվնաս հասանք տուն: Ժամը եօթը քիչ անց տղաքը սկսան գալ: Միքանի անգամ գացին ու եկան իրենց շէնքը՝ պարպելով ինչ որ կարելի էր: Բայց պէտք էր աճապարէին լիալուսնի յառաջացումէն առաջ, քանի որ այլապէս ցերեկեայ լոյսի պէս տեսանելի կը դառնայ ճամփան: Մինչ մենք այս գործերուն մէջ էինք, քաղաքէն պահակ մը եկաւ մեր համալիրը՝ աղերսելով որ գան մեզ պաշտպանելու: Մենք մերժեցինք եւ զինք դուրս դնելով փակեցինք դարպասը: Միւս երեք դռները արդէն նախապէս կղպուած էին: Ատով յայտնեցինք որ այսուհետեւ քաղաքին եւ մեր միջեւ հաղորդակցութիւնը կը դադրեցնենք:

Այս առտուն կատարելապէս գեղեցիկ է, եւ տարօրինակ կը թուի մտածել թէ վտանգը այնքան մօտ է: Ժամը 9ի շուրջ տեսանք Սեդրակ էֆենտին որ մեզի կու գար, մինչ փամփուշտները կը հարուածէին իր շուրջը: Ան մէկ կողմէն միւսը ցատկելով կը յառաջանար, կարծես ծիծաղելի գորտ մը ըլլար: Երէկ գիշեր իր երկու տղաքը մեզի միացան. հայրը իրենց համար կու գար: Հասնելով դարպասին, ապաստանեցաւ դարմանատան պատին: Էտիթը զինք կան-

չեց ու յանդիմանեց իր տխմար արարքին համար: Բացառաբար պիտի արտօնենք իր երկու մանչերուն՝ վերադառնալ: Բայց կարելի չէ օր ցերեկով մեկնիլ: Խեղճը, կձկտած, հիմա իր ժամանակը կը վատնէ շրջափակին մէջ, սպասելով որ մուօը իջնէ:

Ապրիլ վեց

Մենք մահուան հովիտին մէջ ենք արդէն Կիրակիէն իվեր, եւ դժուար թէ կարենամ պատմել մեր ապրածները: Դեռ շշմած են: Ամբողջ Կիրակի օրը մեր համալիրը հարուածող փամփուշտները շատցան: Իսկ մենք դռներուն աւելի փարեցանք: Երէկ փոքրիկներուն վերադասատրումը կատարեցինք քիչ մը: Դպրոցին հանդիսասարահին պատուհաններու երկար շարքը, որ Հաճնոյ կը նայի, պատնիշեցինք մահիճներով, որպէսզի քաղաքի կրակոցներէն մարդ չվնասուի այդ սրահին մէջ: Դպրոցին բոլոր սենեակները փոքրերով լեցուն են: Իրիկունը անոնք իրենց փոքրիկ մահիճները տախտակամածին կը փռեն, խիտ-խիտ, կողք-կողքի: Շաբաթ օր երբ փակեցինք մեր դռները, միքանի գաղթական ընտանիքներ ներս առեր էինք: Ասոնք տրամաբանօրէն մեզի կը պատկանին, քանի որ համալիրին մօտ կը բնակին եւ մեր քով կը պաշտօնավարեն: Մսթըր եւ Միսիգ Էպիէն բացի երկու հայ ընտանիքներ եւ Մատթէոսը Մարթին Հոմին մէջ են. մնացեալները կը գտնուին գլխաւոր շէնքին ու դպրոցին մէջ: Երէկ առտու թուեցաւ որ նախորդ օրէն աւելի փամփուշտներ հարուածեցին մեր համալիրը: Սկսանք հաւատալ որ թիրախի վերածուած ենք: Ժամը 10ին Էտիթը յայտնեց որ մտադիր է միւս շէնքը երթալու փորձ մը կատարել: Դռնէն դուրս ելլելուն պէս զօրաւոր կրակոց սկսաւ: Ան չվազեց, այլ քալեց հարիւր քայլը, մինչ փամփուշտները իրեն չդպան: Շէնքը մտնելէն ետք պատուհանին վազեց եւ պոռալով պատուիրեց որ ոչ ոք դուրս նայի եւ թէ ինք ետ չի կրնար դառնալ: Քանի որ Էպիները իրեն հետ էին, Միս Սուփըրը, Միս Պրետըմասը եւ ես մնացինք փոքրերուն հետ: Տեղացիներուն մէջ որոշ խուճապ մը կար, բայց կարելի եղաւ հանդարտեցնել զիրենք միքանի բառով եւ խոհեմ առաջնորդութեամբ: Սելամլըքի մեծ պատուհանէն լեռան կողին տեսանք թուրք զօրքի շարասիւն մը, որ յառաջանալով կը կրակէր: Զարմանալի էր

որ վախի զգացում չունեցանք: Չվախնալու այս պարգելը ոչ թե մեզի, այլ՝ Աստուծոյ կը պարտինք որ մեզի շնորհուած էր: Քանի որ ատոր պէտքն ունինք: Ես լիապէս կ'ակնկալէի որ պիտի մեռնիմ, բայց կը յիշեմ՝ յուսացի որ սպանուիմ փամփուշտով, քան թէ դանակով: Մարդիկ խղճալի էին իրենց վախի զգացումներուն մէջ, բայց կը ջանային իրենք զիրենք զսպել՝ ըստ մեր թելադրանքին: Մարդիկը եւ մանչերը վարի սենեակներուն մէջ էին, բայց կանայք ու աղջիկները մեզի հետ էին՝ վերը: Ես բարձրաձայն աղօթեցի որ ապաւինինք Աստուծոյ, ուժին եւ քաջութեան՝ ինչ որ ալ դիմագրաւենք: Յետոյ, Միս Պրետրմասը «Հայր Մեր»ը աղօթեց թրքերէն եւ մենք միասին արտասանեցինք «Տէրը Իմ Հովիւս Է» սաղմոսը: Կը սպասէինք որ որեւէ վայրկեան մեր դարպասները քանդուին: Յանկարծ, երբ լռութեամբ՝ կը սպասէինք, շտապ դակոց մը լսեցինք եւ Էտիթին ձայնը՝ «թող Միս Քլարքը գայ եւ դարպասը բանայ»: Պէտք է պատմութեանս մէջ ետ երթամ, բացատրելու թէ ինչ եղաւ միւս շէնքին մէջ: Անոնք ալ մեզի պէս տեսեր էին զօրասիւնին կրակելով իջնելը լեռնէն: Երբ երկու մարդիկ, իբրեւ յառաջապահ, հասան պոռալու լսելի հեռաւորութեան, փափաքեցան որ մէկը ելլէ որպէսզի խօսին: Մտքըր Էպին եւ Մատթէոսը ելան, իսկ թուրքերը փափաք յայտնեցին համալիրը մտնել՝ խորհրդակցելու: Ասով կը բացատրուի մեր դարպասին դակոցը: Մեր սենեկապահուիներէն մին մարած-մեռած էր՝ աստիճաններուն գլուխը: Չինք մէկ կողմ շարժեցին. իջայ դարպասին մեծ, փայտեայ դռան երկաթամիջուկ սողնակը քաշելու: Էտիթը ողջունեց զիս թէ՛ «ասոնք մեր բարեկամներն են»: Տեղացի հայերը շուտով տարտղնեցան սենեակներուն մէջ, մինչ մենք՝ վեց ամերիկացիներս եւ երկու թուրքերը սելամլըքը մտանք: Այսչափ անբարեկամ երեւցող մարդիկ երբեք չէի տեսած: Մինչեւ ակռաները զինուած էին: Վեց փամփշտակալներով ծածկած էին իրենց մարմինները: Թեւերուն վրայ իսկ: Ձեռքերնին զէնքեր, ռումբեր՝ իրենց գօտիներէն կախուած, ու դանակ մը՝ մխրճուած իրենց մոյկերու վիզերուն: Չարհուրելի տեսք ունէին: Նստելէ ետք աւանդական դադարը առին, ապա ողջունելէ եւ իրենց ծխախոտները վառելէ ետք խօսակցութիւնը սկսաւ: Էտիթը, որ շատ փոքր կ'երեւէր իր նստած մեծ աթոռին մէջ, շուտով թուրքերէն ճանչցուե-

ցաւ իբրեւ համալիրին պատասխանատուն: Այն թուրքը որ սկսեր էր խօսակցութիւնը, մեզ ապահովցուց, որ ինք ու իր ընկերակիցները եկեր էին իբրեւ բարեկամներ եւ թէ՛ զօրքերը որ Հաճընը շրջապատած են մեր թշնամիները չեն: Անոնք կը մարտնչին ֆրանսացիներուն եւ ոչ թէ հայերուն դէմ, բացի եթէ վերջիններս օժանդակեն ֆրանսացիներուն: Երբ հարցուցինք թէ ինչու համալիրին վրայ ծածանող դրօշակը չէր յարգուած, անոնք պատրաստ պատասխան չունէին, բայց ըսին, թէ հրամանատարը կը կարծէր որ զինեալ մարդիկ թաքնուած են հոս: Ուրիշ թուրք մը շարունակեց՝ հարցնելով թէ ի՞նչ զէնքեր ունէինք: Էտիթը քովի սենեակը գնաց եւ բերաւ մեր զէնքը:

- Ասիկա,- ըսաւ ան,- ինծի տրուած էր 1915ին Աւնի Պէյին կողմէ (Հաճընի այդ օրերու զօրահրամանատարը): Ան ինծի հրամցուց հինգ ուրիշ զէնքեր եւ ուզածիս չափ փամփուշտ: Ես միայն ասիկա ունիմ, առանց զինամթերքի:

Թուրքը զէնքը առաւ, զննեց բայց չվերադարձուց զայն: Էտիթը, մօտենալով, ակնածալից ու զարմացկոտ հարցուց.-

- Դժուար թէ ուզես զայն ունենալ չէ՞. Աւնի պէյին կողմէ ինծի տրուած էր:

Թուրքը անմիջապէս վերադարձուց զայն: Յետոյ ըսաւ, որ ինք եւ իր ընկերակիցը պէտք է խուզարկեն համալիրը՝ վստահ ըլլալու թէ զինեալ մարդիկ չեն թաքնուած: Էտիթը դարձեալ, սուր հայեացքով մը ըսաւ.-

- Պատիւիս կը դպիս: Ես ամերկացի եմ եւ քեզի համար պէտք է բաւարար ըլլայ իմ խօսքս:

Զարմանալի է որ գազանային դէմքով այս վայրենատեսք մարդը նահանջեց եւ՝ «այո, այո, գիտեմ» ըսաւ:

Շուտով երկուքը ոտքի ելան եւ բարեւելէ ետք, Մսթըր Էպիին կողմէ առաջնորդուեցան դարպասը, ուր երկու աւելի բարձրաստիճան թուրքեր կը սպասէին որ ներս մտնեն: Անոնք միքանի վայրկեան կեցան, ապա երբ մեկնեցան՝ հիմնական կեցուածքը յայտարարուեցաւ: Կը թուի թէ կարգ է որ ենթակաները նախ զննեն կացութիւնը: Այս մարդը, որ ճէմ պէյ կը կոչուի (պէյ իշխան կը նշանակէ) վերստին ընդգծեց ամերիկացիներուն հետ իրենց բարեկա-

մութիւնը եւ ըսաւ որ մենք եւ մեր հոգածութեան տակ եղողները պէտք չէ վնասուին: Փափաքեցաւ տեսնել իսլամ աղջիկները: Մենք բերինք զանոնք, քօղարկուած: Զարմացանք որ ինք գիտէր անոնց հոս ըլլալը: Յստակ էր նաեւ իր մատնանշումներէն, թէ լրտեսներու միջոցով գիտէր գրեթէ բոլոր անցուդարձերը քաղաքին: Էտիթը յայտնեց Ճէմ պէյին թէ մենք պատասխանատու ենք ամերիկեան կառավարութեան, որովհետեւ անոնք կը գտնուին մեր համալիրին, ամերիկեան հողի վրայ: Ճէմը չխօսեցաւ քաղաքի միւս զօրքերուն մասին, բայց ըսաւ որ մեր կողմէն պիտի յարձակի քաղաքին վրայ, եւ թէ՛ միքանի ժամու հարց է քաղաքը գրաւելը՝ քսանչորս ժամ առաւելագոյնը: Էտիթը յայտնեց իրեն թէ մենք չէզոք ենք եւ թէ՛ ո՛չ իրենց, ո՛չ ալ քաղաքին հետ կապ ունինք, բայց ինչպէս հայ զինուորներու չարտօնուեցաւ համալիրը իբրեւ կռուելու դիրք օգտագործել, նոյնպէս թուրքերը պէտք է յարգեն այս դիրքորոշումը: Ճէմ պէյ համաձայն գտնուելով, մեկնեցաւ: Իդէպ, մերժեց սրճել, երբ իրեն առաջարկուեցաւ, մտածելով (կ'ենթադրեմ)՝ որ թունաւոր է: Կէս ժամ ետք խրամատային աշխատանքներ սկսան ընթանալ ճամփու երկայնքին՝ մեր գլխաւոր դարպասէն եօթանասունհինգ ոտք հեռաւորութեամբ աւելի վար ու... շուտով կրակոցներ սկսան: Կը տեսնէ՞ք ի՞նչ կացութեան մէջ ինկանք՝ իբրեւ Հաճընէն եկող փամփուշտներու վերջին կայան:

Բարեբախտաբար, մեր համալիրին յետսակողմը աւելի ցած է քան յառաջամասը, ուրեմն տեղ կայ ուր մենք կրնանք երթալ յարաբերաբար ապահով զգալու: Թուրքերը իրենց կեդրոնատեղին հաստատեցին լքեալ երիցատան մէջ, իրենց պատնէշներուն շարքին, եւ սկսան փոքր ապաստարաններ փորել:

Իրենց համար սկսաւ որոշակի դառնալ, թէ քաղաքին առումը օրուան մը հարցէն աւելի է: Կարծէք թէ առտուրնէ իվեր շատ ժամանակ անցած է եւ չենք գիտեր թէ ժամառժամ ինչ պիտի փոխուի: Կը ծրագրեմ այս արձանագրութիւնները պահել, թէեւ թերեւս երբեք չտեսնէք ասոնք:

Պատահող դէպքերը թուղթին դնելը զգացումներուս քիչ մը հանգստութիւն կու տայ:

Մեզ շփոթեցնող բաներէն մին մեր կենդանիները կերակրելն է: Էպիները իրենց հետ բերին իրենց այծերու երամակը, նաեւ՝ երկու կով, էշ մը եւ երեք ձի:

Մեր կենդանիներուն կարգին ասոնք ալ հոգալը խնդիր է: Շատ քիչ կեր ունինք, եւ քանի որ չենք կրնար զանոնք համալիրէն դուրս ազատ արածելու ձգել՝ վախնամ որ սատկին: Ասիկա աւելի հաւանական է այծերուն եւ ոչխարներուն պարագային, քանի միւսներուն համար բաներ մը ունինք: Մեր այծերը մեր մարագն են, համալիրի Մարաշի դռան կողքին: Դժուար է անոնց կեր եւ ջուր հասցնել երբ փամփուշտներ արձակուին Հաճընէն: Միւս կողմէ, շատ ալ վստահ չենք թուրքերուն խոստումներուն, թէ՛ չեն առներ զանոնք: Հիմա բոլորս կը բնակինք գլխաւոր շէնքին ու դպրոցաշէնքին մէջ:

Փոքրիկները տեղաւորած ենք վարը, մանկապարտէզի սենեակները: Մանկապարտէզը՝ բլուրի կողին ըլլալով, փոքրիկները շէնքի մուտքէն երեք յարկ վար են: Առայժմ թուրքերը յարգեցին մեր փափաքը եւ համալիր կը մտնեն դարպասը դակելէ ետք ու կը սպասեն որ դուռը բացուի: Իրենց մտած դարպասը Հաճընի կողմէն անտեսանելի է եւ շատ ցած է, հետեւաբար, ներս մտնելու ատեն պէտք է շատ ծոին: Մեր շուրջը կայազօրողներուն թիւը աւելցած է: Կարծես վրաններ ալ պիտի լարեն: Խեղճ օրիորդ Պերճուհիին եւ իր օգնականուհիներուն պարտականութիւնն է ճաշ ապահովել մերիններուն: Բախտաւոր ենք որ մեծաքանակ ցորեն ունինք, բայց ցորենը առանձինն՝ ճաշ չէ:

Իւր գրեթէ չմնաց: Եւ քանի որ միս ու կանաչեղէն չկայ՝ մտահոգ ենք: Ամերիկացիներուն ճաշը թէեւ քիչ է, բայց վստահ եմ եղաւ կ'երթանք. որոշ տուփեղէններ ունինք: Բախտաւոր ենք որ ճամփաներու փակումէն միառժամանակ առաջ բաւական շաքար ստացանք: Մուհամէտը, անտէր մնացած քիւրտը, որ մենոնայթներուն որբերուն հետ եկաւ, շատ հիւանդ է, ուղղակի կ'ահաբեկի երբ կրակոց լսէ, միշտ կը կրկնէ՝ «հաց տուէք թող երթան»: Կը կարծէ որ, արեւելեան սովորոյթի համաձայն, երբ ուտեստ ընդունին մեր ձեռքէն, մեզի վնաս չեն կրնար հասցնել: Բնականէն վտիտ ըլլալով, կարծեմ երկար պիտի չսպրի ան:

Ապրիլ փաս

Նորէն մահը դիմագրաւեցինք: Նախաճաշէն ետք երբ ամերիկեան խոհանոցն էի ու կը ծրագրէի կէսօրուան ճաշին մասին՝ բարկացկոտ խօսակցութիւն մը լսեցի եւ դուրս վազեցի: Փոքրիկներ հաւաքուած էին դռան մօտ եւ վախուորած ըսին՝ «oh, oh, իսլամ Միս Բլաք»: Չհասկնալով թէ ի՛նչ կ'ըսեն, ուղղուեցայ պզտիկ դռան, ուր տեսայ Էտիթն ու Մսթըր Էպին՝ յուզուած խօսակցութեան մէջ՝ միքանի թուրքերու հետ: Անշուշտ բան չէի կրնար ընել, ուստի ետ ուղղուեցայ շէնքը, ուր երէց աղջիկներ յայտնեցին թէ թուրքերը ուրիշ դռնէ մը եւ պատէն ցատկելով ներս կը մտնեն: Մեր պատը շատ ալ պաշտպանութիւն չի տար մեզի. պարզապէս կը նշէ մեր կալուածին սահմանը: Պատերազմին, պատին զանազան մասերը փլեր են, իսկ յետոյ չեն նորոգուած: Կանչեցի Միս Պրետըմասը եւ միասին գացինք հանդիպելու ներխուժողներուն: Միս Պրետըմասը խօսեցաւ իրենց հետ եւ ի յայտ եկաւ որ անոնք որոշած են մեր հայերը որսալ: Վազեցի Էտիթին եւ իրեն պատմեցի: Թուրք առաջնորդներէն մին հետս եկաւ եւ այդ թուրքերուն հրահանգեց դուրս ելլել: Չկամութեամբ մեկնեցան:

Թուրք առաջնորդին ըսածը այն էր որ իրենք գոհ չէին մեր պայմաններէն եւ վստահ ըլլալու որ մենք ճշմարտութիւնը կ'ըսենք, կ'ուզէր ի՛նք համալիրը խուզարկել: Ան հաւաստեց որ եթէ երեք զէնք գտնուի, բոլոր ամերիկացիները տեղնուտեղը պիտի սպանուին: Խուզարկութենէն առաջ մեզի հրահանգուեցաւ պատրաստել համալիրին մէջ գտնուողներուն ցանկը: Ուստի, մարդոց, կիներու, աղջիկներու եւ մանչերու ազգութեան ցանկերը պատրաստեցինք, ու տուինք: Այրերը վարը՝ ճաշասենեակ կանչուեցան եւ անցան երկու թուրքերուն առջեւէն: Այրերը խուճապահար էին, վստահ ըլլալով որ տեղնուտեղը պիտի սպանուին: Մինչ հաշուումը կը շարունակուէր, մեր մտահոգութիւնը աւելցաւ, բայց վերջաւորութեան մեր ցանկը միայն երկու հոգիի տարբերութիւն ունէր: Յետոյ սկսաւ համալիրին խուզարկութիւնը: Մարդ մը սենեակները մտնել սկսաւ: Երբ Միսիզ Էպին սենեակը պիտի մտնէր՝ ըսինք որ մեռած փոքրիկ մը կայ ներսը: Հոն չմտաւ: Այս առտու սիրելի, փոքրիկն Մուհամէտը մեռաւ եւ շնորհակալ ենք որ իրեն համար ահը վերջ գտաւ:

Խուզարկութիւնը շատ մանրամասն էր, եւ ծիծաղելի բաժին ալ ունէր, քանի մարդիկը կը պնդէին ու սողալով ամէնէն անկարելի տեղերն իսկ կ'երթային եւ յետոյ կը դժգոհէին իրենց հագուստը պատռելէն: Իվերջոյ, ոչինչ յայտնաբերելէ ետք մեկնեցան: Բայց իրենց կեցուածքը բարեկամական չէր: Էտիթը եւ Մսթըր Էպին ընկերակցեցան իրենց մինչեւ դարպասը եւ հիմա կը լսեմ թէ հոն ինչ պատահեցաւ: Էտիթը իրենց կ'ըսէ որ չի կրնար այս բարկաճայթ ու բժախնդիր խուզարկու մարդիկը այսպիսի տրամադրութեամբ ճամփել: Ան կը դառնայ թուրքին ու կ'ըսէ. «Ահմէտ, դուն ապագայ ունիս, ես ալ ապագայ մը ունիմ այս աշխարհին մէջ: Մենք միասին այս աշխարհին մէջ պիտի ապրինք: Ինչպէ՛ս կրնանք ապրիլ եթէ ատելութիւն կայ մեր սրտերուն մէջ»: Էտիթը իր ձեռքը կը դնէ Ահմէտին ուսին: Հաճելի չէր: Որովհետեւ Ահմէտը աղտոտած էր: Բայց Էտիթը բռներ է Ահմէտին ձեռքը եւ ուղիղ իր աչքերուն նայելով հանդիսատրապէս ըսեր է. «այս հպումով քեզ իմ եղբայրս կ'ընեն: Հիմա եթէ ես քու քոյրդ եմ ու դուն՝ իմ եղբայրս, պէտք է բարիք ընենք իրարու եւ ոչ թէ չարիք»: Ահմէտը նայեր է Էտիթին, եւ կարծես իր նայուածքը կախարդեր է զինք: Ահմէտին դէմքը փափկեր է եւ Էտիթին նայելով պատասխաներ է. «Ճմարտապէս այդպէս է»: Յետոյ մեկներ է միաներուն հետ: Միայն մէկ հատ զէնք ունինք: Բարիք է ասիկա: Ատով պիտի յաղթահարենք չարը: Ըստ Էտիթին՝ միքանի խաղաղ օրեր պիտի ունենանք, քանի որ թուրքերը միքանի օր ընկճուած ըլլալով իրենց արարքին արդիւնքէն եւ մեր հակադարձութենէն, պիտի փորձեն ողորձել մեզ: Անշուշտ եթէ յարգեն իրենց խոստումը:

Ապրիլ փասնմէկ

Տարեդարձս է: Տարօրինակ կը հնչէ: Արդեօք երբեւէ ուրիշ տարեդարձ մըն ալ պիտի ունենամ: Օրը պայծառ ու գեղեցիկ էր եւ թուրքերէն խնդիր չունեցանք: Իդէպ, ճէմ պէյը կ'ըսէ թէ մենք «չեթէներուն հիւրերն ենք»: Ըստ իր ըսածին, իր մարդոց մեծամասնութիւնը կանոնաւոր զօրք չէ այլ՝ չեթէ:

Կը յիշէ՞ք՝ ըսեր էի որ Մատթէոսը մեծցեր էր իր իսլամ քեռիին քով, հետեւաբար, թուրքերուն մէջ բազմաթիւ բարեկամներ ունէր,

եւ քանի որ ուսում առաւ՝ ճանչցուած է իբրեւ Էտիթին քարտուղարը եւ մատակարարը: Շատ բարձրորակ թրքերէն կը գրէ, որ մեծ օգտակարութիւն ունի, մանաւանդ երբ անհրաժեշտ կը դառնայ երկտողեր յղել:

Պաշտամունքը կը կատարուի շէնքին ստորերկրեայ բաժնին մէջ, առանց երգեցողութեան՝ վախճանով որ թուրքերը կը լսեն ու կը բարկանան: Իմ պարտականութիւնս համալիրը վերահսկելն է. կէս ժամը անգամ մը պտոյտ մը կ'ընեն: Փոքր դուռն էի հիմա: Ամէն ինչ լուռ է: Քիչ մը վերը թուրքեր կային, մինչ ուրիշներ դռան մօտն էին: Անոնք քաղաքը իրենց կարծած դիրութեամբ պիտի չկարենան գրաւել: Էտիթը եւ ես գրասենեակը կը քնանանք. ինքը՝ նստարանին, ես՝ տախտակամածին դրուած երկու մաթրասներուն վրայ: Շէնքին ճակատային հատուածը կը գտնուինք, բայց դարմանատան կառոյցը մեզ կը վահանէ Հաճընէն եկող փամփուշտներէն: Չենք համարձակիր լոյս վարել, քանի կրնանք մեղադրուիլ որ լուսանշաններով քաղաքին հետ կը խօսինք: Մոմ մը կը վառենք միքանի վայրկեանի համար՝ վստահ ըլլալէ ետք թէ բոլոր անցքերը փակած ենք, ճեղքերը՝ բարձերով գոցած: Ատով հանդերձ, մոմին վտիտ լոյսը կը խցկենք սենեակին մէկ անկիւնը:

Ապրիլ տասներկու

Երէկ գիշեր ծրագիրերը քիչ մը վերամշակեցինք: Էտիթը եւ ես փոխարինաբար վարը, փոքրիկներուն հետ պիտի պառկինք: Վերակացուիները վար պիտի չիջնեն, որովհետեւ կը վախնան: Երէկ գիշեր, մութին, փոքրիկներուն քով գացի: Անոնք զիս տեսնելով հանգիստի հառաչներ արձակեցին: Ամերիկացիի մը ներկայութեան պատճառով յառաջացած անոնց ապահովութեան զգացումը սիրտ կը յուզէ: Ոմանք որոնք կը հեկեկային, արագ մը լռեցուեցան երբ յայտարարեցի՝ «Միս Քլարքը հոս է, մի՛ վախճաք»: «Էւթ, էւթ» (այո) պատասխանեցին անոնք, հանգստանալով իրենց անկողիներուն մէջ: Նոյն լեզուն չենք խօսիր, բայց կը հասկնան իմ ըսելու ձգածս:

Կռիւի ձայները աւելի մօտ կը թուին ներքնայարկի այս սենեակներուն, իսկ «Ալլահ, Ալլահ» կանչերը բաւական սահմուկեցուցիչ են:

Փոքրիկներէն ոմանք իրենց քունին մէջ կը հառաչեն: Կը սարսափին մանաւանդ երբ կրակոցները շատնան: Հնգամեայ փոքրիկն Մարիամը, վախէն սկսաւ փսխել: Քովը գացի, ծնրադրեցի, ձեռքս իր ճակատին դրի եւ ըսի՝ «Մարիամ, քնացիր, ես քովիկդ եմ, մէկը քեզի պիտի չցաւցնէ»: Ան լռեց եւ անմիջապէս քունի անցաւ: Յուզի՛չ է այսքան ապաւէն տեսնելը:

Կէսօրուան մօտ թուրք հրամանատարը մածուն նուէր դրկեց, յետոյ ալ խօսեցաւ: Չակնարկեց Շաբաթ օրուան խնդիրին, բայց կարծես մածունը ներողութիւն խնդրելու ձեւ էր:

Ապրիլ տասներեք

Միս Սուփըրը սքանչելի օգտակարութիւն կ'ունենայ մեր դժուարութիւններուն, նաեւ՝ թուրքերուն: Փոքր դռան քով քլինիք հաստատած է եւ ամէն օր դեղ կու տայ, թուրք վիրաւորներ կը դարմանէ: Թուրքերը կու գան ու բժիշկը կը փնտռեն: Մենք ալ «բժիշկ» բառը կը շեշտենք: Թուրք բժիշկ մը կայ թէեւ, բայց կարծէք՝ շատ բան չի գիտեր, մանաւանդ՝ դեղ ալ չունի: Մեզի մարդ դրկեց՝ զանազան դեղեր ուզելու: Միս Սուփըրը շատ փոքր քանակներով ընդառաջեց: Մեզի հետ բնակողներէն ոմանց հաճելի չէ որ մենք բարեկամական կապեր կը հաստատենք թուրքերուն հետ, եւ դժգոհ են որ ծառայութիւններ կը մատուցանենք անոնց: Չեն հասկնար որ որքան աւելին ընենք թուրքերուն՝ այնքան աւելի լաւ պիտի ըլլայ մեր համալիրին համար: Սպաները սուրճ կը դրկեն խարկուելու եւ աղացուելու: Մեզի համար լաւ է ասիկա, բայց զարմացանք երբ զոյգ մը վզակօշիկ դրկած էին որ սեւ ներկուի: Յաճախ աղ կ'ուզեն մեզմէ: Անոնց որոնք կ'ուզեն որ իրենց ծխախոտը վառենք՝ միքանի ցախկով տուփ մը լուցկի կու տանք, յուսալով որ կը հետեւցնեն թէ մեր մթերքները քիչ են: Խելացի շարժեցանք եւ մեր ամբողջ քերոսինը պահեցինք, որպէսզի երբ մեզմէ պահանջեն, արդարօրէն ըսենք որ չունինք:

Զինուորներէն մին, իր ցեղին յատուկ պարզամտութեամբ ըսաւ որ քաղաքը կ'ուզեն հրկիզել եւ այդ նպատակով քերոսինի պէտք ունին: Յաճախ կ'ուզեն թուրք աղջիկները տեսնել, բայց կը մերժենք: Մարդիկը գիտեն որ չեն կրնար փափաքիլ թուրք աղջիկները

տեսնել, հետեւաբար չեն պնդեր: Եւ ի նպաստ մեզի է որ մենք այդ աղջիկները կը պահպանենք:

Երանի կարենայի նկարել մեր տեսած «բանակը»: Սպաները զանազան տեսակի տարազներ հագած են, իսկ շարքայինները իրենց սովորական հագուստով են՝ աղտոտ, պատռտած, ցնցոտիներով: Երբ դուրս նայինք, զիրենք կը տեսնենք ընկողմանած՝ շէնքին ապաստարանին շուրջ: Ոմանք մուտքին են կամ դուրսը: Մաս առ մաս կը քանդեն շէնքը որպէսզի կրակ վառեն: Կը սպասեմ այն օրուան երբ այնքան բան տարած ըլլան, որ կառոյցը այլեւս չկարենայ կանգուն մնալ: Տարօրինակ զգացում է տեսնել գէնքերը պատէն կախուած եւ անդին՝ հաւատացեալ իսլամներ Մեքքայի ուղղութեամբ աղօթքի կեցած: Սպաները բարձունքին լարուած վրաններուն մէջ են, մինչ պարզ զինուորները մեզի շատ մօտ են: Անշուշտ վերակացու մը կայ, ենթասպայ մը, բայց հաճելի չէ մտածել թէ ի՛նչ կ'ըլլայ եթէ ասոնք ձեռքէ ելլեն:

Սկսած են դռան դուրսը գտնուող դարմանատունը մերկացնել: Տեսանք՝ դարմանատան երկու դուռ եւ պատուհաններ մարդոց ուսերուն դրուած դէպի լեռը կը տարուին: Առաւելագոյնը զոր կ'ընենք՝ գրաւոր գանգատներ կը ներկայացնենք Մատթէոսին թրքերէնովը: Բայց շատ բան չենք համարձակիր ըսել:

Այս պահուս, շուրջ երկուհարիւր մարդ կայ դուրսի ապաստարանը: Սկսեր են կիսամնայուն վրաններ լարել: Մարաշի ճամփուն երկու կողմերու պատերը սկսած են փլցնել: Գիշերով կ'աշխատին: Այծի մազով ծածկ կը շինեն:

Ուտեստի մտահոգութիւն չունինք: Գիտէք, թուրք ազարակապանները միշտ ալ մատակարարած են Հաճընին: Հիմա Հաճընի շուկան գոց է իրենց համար, ուրեմն մեզի կու գան ծախելու: Զինուորները կը հարցապնդեն, բայց մեզի ալ կը ձգեն որ գնենք: Յաճախ ալ մուփին մէջ մեր դուռը կը դակեն եւ պարկեր կը յանձնեն՝ յետոյ գանձելու համար: Մեր դրամը գրեթէ վերջացած է, բայց մեր բազմակոյտ հագուստները, որոնք կ'ուզուին մարդոցմէ, ատլի լաւ սակարկելի նիւթ են քան ոսկին: Ճիշտ հիմա պատուհանէն տեսայ երկու մարդիկ երիցատան տանիքը մագլցեցան եւ դէպի քաղաք կրա-

կեցին: Միշտ ալ կը կրակեն՝ վախնալով հայերէն, որոնք յուսակտուր պիտի մարտնչին:

Ապրիլ փասնչորս

Երէկ ցաւոտ ժամանակ մը անցուցինք: Արտօնուեցանք որ մեր փոքրերը այծերն ու կովերը արածեն համալիրի ետեւի տարածքին: Թուրքերը խոստացան չնեղել զիրենք: Առտու կ'երթան արածելու եւ ամերիկացի մը պատին վրայէն կը հսկէ զիրենք: Երէկ, թիւրիմացաբար, երեք տղաք այծերով դուրս ելեր են յետմիջօրէին: Քիչ մը հեռու թափառելով՝ նշմարուեր են Հաճընէն եւ իրենց վրայ կրակուեր է: Տղոցմէ մին թէթետիւրէն վիրաւորուելով վազեր է դէպի դարպասը, միւս երկուքը, ահաբեկ, դէպի լեռ մագլցեր են:

Ասոնցմէ մին վերադարձաւ, իսկ միւսը դեռ անհետք կորած է: Էտիթը վճռեց երթալ զինք փնտռելու: Իրեն հետ ուզեցի երթալ, բայց բացատրեց՝ «ոչ, տղան վախցած պիտի ըլլայ եւ իր լեզուով ըսուող վստահեցման խօսքերու պէտք ունի որպէսզի փափաքի վերադառնալ: Առանձին պիտի չերթամ, Ահմէտը հետս կ'առնեմ»: Ասիկա այն թուրքն է - կը յիշէք - զոր Էտիթը անցեալ օր շահած էր: Ան ապացուցեց որ մեզի բարեկամ է, քանի որ մարդիկը իր հսկողութեան տակ կրցաւ պահել՝ այդ սարսափելի օրէն իվեր: Էտիթը Ահմէտը կանչեց, իսկ ան անմիջապէս պատասխանեց:

Էտիթը բացատրեց որ մեր փոքրերէն մէկը կորսուած է լեռան ստորոտին եւ որ ինք զինք փնտռելու կ'երթայ եւ կ'ուզէ որ Ահմէտը իրեն ընկերակցի: Ահմէտին անմիջական պատասխանը «կու գամ» եղաւ: Չեմ կրնար գրել թէ ի՛նչ զգացի՝ երբ զիրենք կը դիտէի ժայռերուն մէջէն լեռ ելլելու ատեննին: Որոշ տեղէ մը անդին Ահմէտը կեցաւ, իսկ Էտիթը շարունակեց մագլցիլ: Յետոյ Էտիթը պատմեց թէ, հասած էին տեղ մը, ուրկէ նշմարելի կը դառնային Հաճընի դիրքերէն: Եւ քանի որ Ահմէտին ճերմակ գլխանոցը զինք որոշապէս իսլամ կը դարձնէր, Էտիթը ուզեր էր որ ան աւելի չմագլցի. «հոս մնայ,- ըսեր էր,- ես կը մագլցիմ, բայց աչքերդ վրաս պահէ, եւ եթէ կանչեմ՝ կու գաս»: Էտիթը առանձին շարունակեր է մագլցիլ: Փամփուշտը՝ որ զարնուեցաւ իր կողքի ժայռին, ցնցեց զինք բնագդաբար, թէւ գիտենք որ հարուածին ճայնը լսելէդ առաջ արդէն

փամփուշտը իր գործը տեսած կ'ըլլայ: Դարձեալ կրակոց, մինչեւ որ տեսողութենէ անհետացաւ Էտիթը՝ մեծ ժայռի մը ետին: Պահ մը ետք դարձեալ տեսնուեցաւ ան, այս անգամ՝ փոքրիկով: Յետոյ Էտիթը պատմեց որ տղան գրեթէ զգայազիրկ էր ահէն: Հանգստանալէ ետք փոքրիկը ըսեր է թէ չի կրնար վերադառնալ՝ պէտք է գտնէ իր վիրաւոր ընկերը: Էտիթը բացատրեր է, թէ վիրաւորը համալիր վերադարձած է եւ թէ ինք եկած է զինք գտնելու: Անոնք վազեցին լեռան կողին, թաքնուելով ժայռերու ետին, մինչ մենք ակնդէտ կը հետեւեինք: Հասան Ահմէտին սպասած տեղը եւ երեքով ապահով վերադարձան: Դարպասի մուտքին Ահմէտը Էտիթին կրկնակօշիկները կը բերէր: Էտիթը բացատրեց թէ՝ «մտածեցի որ պէտք կրնան գալ»: Պէտք է հասկնալ - որքան որ տարօրինակ կը հնչէ - երբ արեւելքցիք բան մը կը շալկեն կին արարածին համար: Էտիթը միշտ կացութեան տիրուիին է:

Ապրիլ փասնհինգ

Բախտաւոր ենք որ խոշոր փուռ ունինք համալիրին մէջ: Փուռը կը գտնուի փոքր դարպասին կողքին, ուրկէ թուրքերը կ'ընդունինք եւ կը ճամփենք: Փուռը սարքած ենք հիմա եւ կը գործածենք: Շաբաթը հազար հատ պզտիկ նկանակ կ'եփենք ու կը սպառենք մեր բնակչութեան համար: Չենք համարձակիր փռապան Աբրահամը բացայայտելու, այլ՝ երեք կիներ փուռ կ'երթան, իսկ ամերիկացիներս հերթաբար կը պահակենք: Առտուն վեցէն իրիկուան վեց հաց կ'եփեն, իսկ մենք երկուքական ժամ կը պահակենք: Էտիթը եւ Մսթըր Էպին միշտ ազատ պէտք է մնան՝ թուրքերուն հետ հանդիպելու համար: Կ'ակնկալենք որ շաբաթը չորս օր հաց եփելով բաւարար հացը պիտի յառաջացնենք: Այս առտու մինչ կը պահակէի, թուրք զինուորներ նստան բլուրին վրայ, դարպասէն շուրջ քսան ոտք անդին: Աղուոր չզգացի, երբ անոնցմէ մին զէնքը ուղղեց ինծի: Չեմ հաւատար որ միտէր ինծի կրակել, բայց զգացում մը սողոսկեցաւ ողնաշարէս վար: Թերեւս ըսած եմ որ բոլոր օտարները «գլխարկ դնողներ» կը կոչուին հոս: Հետեւաբար, նոյնիսկ եթէ վայրկեանի մը համար դուրս կ'ելլենք՝ գլխարկ կը դնենք, որպէսզի թուրքը հեռուէն մեզ չշփոթէ տեղացիներուն հետ: Ես իմ

գլխարկս «փրկութեան սաղաւարտ»ս կը կոչեմ: Պէտք է այնպէս գործենք՝ կարծես թէ ամերիկացիք փամփուշտէ պաշտպանուած են, քանի որ բաներ կան որ միայն մենք կրնանք ընել:

Օրեր անցած են վերջին անգամ գրելէս, բայց ազատ վայրկեան մը չունեցանք: Անընդհատ աշխատիլը լաւ է: Ժամանակ չի ձգեր մտածելու: Բաւական փոփոխութիւններ տեղի ունեցան: Նոր մէկը՝ Ճիւան պէյ, պատասխանատու կացուցուած է: Երկու անգամ հանդիպեցանք իրեն հետ. Ճէմ պէյէն բարձրաստիճան կը թուի: Հարցուց իսլամ աղջիկներուն մասին եւ լաւ եղաւ որ զանոնք սելամըք հանեցինք՝ երեւելու: Ճէմը ուրախ կը թուի որ աղջիկները ապահով են քովերնիս: Կը թուի թէ պէյերուն ժամանակն է. այսինքն շատ կան, թէեւ կը կասկածինք անոնց պէյի տիտղոսի ճշմարտութեան:

Արագահարուածներուն վերակացուն Էնվէր պէյն է: Յաճախ կ'այցելէ մեզի եւ մեծ հաճոյքով մեզի կը խօսի իր մասին: Մեզի այցելող այս զանազան իշխանաւորները կը յաւակնին որ իրենց գլխուն գին դրուած է: Ասոնցմէ ոմանք թրքական հին, չորրորդ զօրաբանակէն⁷⁹ են: Օր մը երբ բժիշկը - մէջերնէն ամէնէն տհաճը - մեզի այցելեց, սկիզբը տատամսեցաւ, յետոյ յայտնեց թէ Պիթիսէն է: Շուրջի մարդիկը իրար նայեցան. հասկցանք որ ճիշտ չէր խօսեր:

Ապրիլ փասնվեց

Թէ՛ Էնվէրը եւ թէ՛ Ճէմը կ'ուզեն որ մեր դերձակը, մեր կտորներէն հագուստ կարէ իրենց: «Այո»էն բացի բան չենք կրնար ըսել:

Ապրիլ փասնեթ

Ծանր կ'անձրեւէ: Կը յուսանք որ այցելուներ չեն գար: Այնքան վարպետ են ճաշի ժամերուն այցելելու: Իրենց եւ մեր ճաշի ժամերը տարբեր են: Երբ այցելեն, Էտիթը եւ Մսթըր Էպին իրենց հետ պէտք է ըլլան: Երբեմն Միսիզ Էպին կամ Միսիզ Պրետըմսար

⁷⁹ Օսմանեան չորրորդ բանակը գոյառաւ ԺԹ. դարակէսին: Ա. Աշխարհամարտին ան առճակատեցաւ. Դաշնակից բանակներուն դէմ Սինայի, Պաղեստինի, Դամասկոսի եւ Պաղտատի ճակատներուն վրայ: Բանակին ընդհանուր հրամանատարութիւնը ստանձնած էր Ճեմշալ Փաշա՝ Նոյեմբեր 1914-Սեպտեմբեր 1917 շրջանին: Բանակը քայքայուեցաւ Ա. Աշխարհամարտէն ետք:

կացութիւն կը փրկեն, մինչ Միս Սուփըրը եւ ես օգտակար չենք կրնար ըլլալ՝ թրքերէն չգիտնալնուս: Միաներուն հետ յաճախ կը նստինք, բայց հաճելի երեւելէ բացի բան չենք կրնար ընել: Հաճելի երեւիլը իր կարելութիւնը ունի: Անցեալ օր, Ճիւան պէյը Էտիթին հարցուցեր է. «Միս Քլարքը մի՞շտ ուրախ է»: Որոշ է որ չենք ուզեր որ իրենք երեւակայե՛ն իսկ, թէ մենք կը վախնանք: Ճիւանի վերջին այցելութիւններէն մէկը տիզանթերիով հիւանդացած Էնվէրին համար դեղ ուզելու նպատակով էր: Դժուար է դեղագրել՝ հեռուէ հեռու, հետեւաբար ուզեցինք որ Էնվէրը դարմանատուն գայ, ուր Միս Սուփըրը պատշաճը ընէ: Երէկ գիշեր ծանրօրէն հիւանդ վիճակի մէջ շալկուած բերուեցաւ ան: Միս Սուփըրը կրնայ մօտե՛նալ դարպասին՝ առանց Հաճընի փամփուշտներուն հասողութեան մէջ մտնելու: Թերեւս լաւ է որ Էնվէրը դարմանատունն է: Դուռ ու պատուհան գողնալը պիտի կենայ շրջան մը: Եթէ Էնվէրը չլաւանայ, կրնանք կասկածի ենթարկուիլ որ իր մահուան պատճառ եղանք: Իսկ եթէ լաւանայ՝ պէտք է իր շնորհակալութիւնը յայտնէ՝ մեզի հետ բարեկամանալով:

Ապրիլ տասնինն

Մեր տղոցմէ մէկը՝ Յովսէփը, հիւանդ է: Միս Սուփըրը զինք իր սենեակը տարաւ: Թոքատապէ կը տառապի, իսկ դեղերը արդիւնք չեն տար դէռ: Մեղք է: Սարսափէն ալ կը տառապի. ամէն անգամ որ թնդանօթը գոռայ՝ կը ճչայ:

Այս առտու Ճիւանը այցելեց եւ երկար մնաց: Առաջարկ մը ունէր: Կ'ուզէ որ միքանի ամերիկացիներ Հաճըն երթան եւ թրքական պայմանները ներկայացնեն: Ըստ իրեն, թուրքերը հինգ ժամ զինադուլ պիտի հաստատեն՝ առտուան իննէն մինչեւ յետմիջօրէի երկուքը: Ամերիկացիք այդ միջոցին կ'երթան՝ ամերիկեան եւ զինադուլի դրօշակ բռնած: Մեզմէ կ'ակնկալուի որ նկատի առնենք առաջարկը եւ յետմիջօրէին պատասխանենք: Քիչ առաջ պատասխանեցինք: Չէինք գիտեր ի՞նչ ըսենք: Պայմանները հետեւեալներն են.-

Հայերը իրենց բոլոր զէնքերն ու զինամթերքը պիտի յանձնեն խումբ մը պատասխանատու թուրքերու (այդպիսիք կա՞ն), որոնք պիտի ստանձնեն:

Միեւնոյն ատեն զօրքը պիտի հեռանայ լեռները՝ այնքան մը որ քաղաքը յարձակման ենթարկուելու վախ չունենայ:

Զէնքերը պիտի մթերուին շէնքի մը մէջ եւ ֆրանսական դրօշակը վար պիտի առնուի, որմէ ետք՝

Թուրք առաջնորդները իրենց զօրքը պիտի անցընեն քաղաքէն ու տանին Սիս, միայն միքանի մարդ ձգելով՝ զէնքերուն հսկելու:

Զէնքերու այս հաւաքուիլը կը նպատակադրէ այն որ երբ թուրք զօրքերը անցնին, կռնակէն չկրակուին: Իսկ խոստումը այն է որ «Հաճընէն քիթ մ'իսկ պիտի չարինի»: Մատթէոսը եւ Մինասը կանչուեցան եւ հարցը քննուեցաւ բոլոր կողմերէն:

Բնականաբար, այս երկուքը վստահութիւն չունին թրքական խոստումներուն: Բոլորս ալ ուրախ պիտի ըլլանք գիտնալու թէ հայերը ինչպէ՛ս են քաղաքին մէջ, բայց ճամփան լի է վտանգներով:

Թուրքերուն պէտք է վստահիլ, թէ պիտի յարգեն զինադուլը: Միս կողմէ, անկարելի է հաղորդակցիլ քաղաքին հետ՝ տեղեկացնելու համար ծրագիրը: Այդուհանդերձ, որոշուեցաւ որ Էտիթը եւ Մսթըր Էպին երթան. մենք վաղուան ընդառաջ ենք՝ ծանրագոյն զգացումներով:

Ապրիլ քսան

Ժամը իննին երկուքը ճամփայ ելան: Ճիւղանը հոս էր ութուկէսին՝ զիրենք ճամփելու: Յստակ է որ ամերիկացիք որեւէ խորհուրդ պիտի չտան եւ բացարձակապէս չէզոք պիտի մնան: Պարզապէս թուրքերուն խօսափողը պիտի ըլլան: Հայերուն պատասխանը առնելէ ետք, անոնք պիտի վերադառնան, ոչինչ յայտնելով հայերուն՝ թուրքերուն իրավիճակին մասին: Այս բոլորը յստակացուած են թուրքերուն: Չեմ կրնար արտայայտել զգացումներս երբ տեսայ մեր ընկերներուն մեկնումը: Էտիթը շատ նիհար կ'երեւէր մինչ արագօրէն կը քալէր՝ ճերմակ դրօշակը շալկած, իսկ Մսթըր Էպին ամերիկեան դրօշակը կը շալկէր, որ աւելի ծանրակշիռն է: Հակառակ ակնկալութեան՝ արագ չվերադարձան անոնք, եւ ուրեմն սպասման ցաւը աւելի մեծ էր: Շաբաթներ առաջ, թուրքերուն գալէն առաջ, անօրէն կամաւորներէն մին սպառնացեր էր Էտիթին կեանքը խլել, երբ Էտիթ դիտողութիւն ըրեր էր թուրքերուն հանդէպ, քաղաքին

իսլամներուն հանդէպ տեղի ունեցող բռնութիւններուն մասին: Իվերջոյ երկուքը երեւցան եւ մեր պրկուածութիւնը նուազեցաւ: Բերուած պատասխանը մեր ակնկալածն էր: Հայերը չեն համաձայնիր թուրքերուն հետ: Անմիջապէս ճիւղանը համալիր եկաւ եւ իր հիասթափութիւնը յայտնեց: Ըստ իրեն կռիւը պիտի շարունակուի նոր թափով, իսկ երբ քաղաքը առնուի եւ ի յայտ գայ որ իսլամ մը սպանուած է, բոլոր հայերը պիտի ջարդուին եւ քար քարի վրայ պիտի չձգուի: Երբ առանձին մնացինք՝ մանրամասնօրէն իմացանք քաղաքին իրավիճակին մասին. քաղաքը լաւ ամրացուած է եւ բաւական զինամթերք ունի: Փամփուշտի պարկուճները դարձեալ լեցնելու ծրագրեր մշակած են, քանի որ բաւական հումք ալ ունին: Մեր բարեկամներէն ոմանք մահացեր են, ուրիշներ՝ վիրաւորուեր: Ուտեստ կայ, բայց այլազանութիւն չկայ, ժողովուրդը ընկճուած չէ: Չեն ընդունած պայմանները, որովհետեւ իրենց ծանօթ են անցեալի բազմաթիւ նման պարագաներ, երբ զէնքերու յանձնումը ջարդի ազդանշանը եղած է:

Ապրիլ քսանմէկ

Այսօր յետմիջօրէի չորսին Յովսէփը մահացաւ: Վերջաւորութեան շատ ցաւատանջ էր տեսնել իր հոգեվարքը: Խեղճ, սիրելի փոքրիկ: Շնորհակալ եմ որ խաղաղեցաւ: Տախտակ չունէինք որ դագաղի պէս բան մը շինենք: Ստիպուեցանք՝ ինչպէս երբեմն տեղացիները կ'ընեն, լաթով պարուրել մարմինը: Կապեցինք պատանքը եւ ետեւի ճամփէն տարինք դուրս, որպէսզի - եթէ կարելի ըլլայ - թուրքերը չտեսնեն: Ելանք դուրս՝ հովիտին նայող դռնէն դէպի ցած, գերեզմանոցը, ու դրինք ոչ-խորունկ փորուած փոսին մէջ: Մեզի ընկերակցող երեք տղաքը, հայերու սովորութեան համաձայն, հողակոյտը տափակ քարերով ծածկեցին:

Ապրիլ քսաներկու

Առտուն, երբ միւս շէնքը գացի կանաչեղէնի տուփեղէն առնելու (մեր պահեստին մեծամասնութիւնը հոն, ստորերկրեայ սենեակը կը պահենք), փամփուշտներ սուլեցին գլխավերէս: Հաճելի չէր նաեւ տեսնել երկու թուրքեր՝ պատին նստած:

Յուսաբեկած ենք ծառահատումներէն: Դպրոցին վարի հովիտը այնքան գեղեցիկ էր իր սիրուն ծառերով, որոնք հիմա հազուադիւս դարձած են: Թերեւս, եթէ արմատախիլ ընէին՝ նուազ պիտի նեղուէի, բայց իրենք կը թեւատեն ծառերը, կը փրցնեն ճիւղերը կրակի համար, իսկ աւելի ետք կը տապալեն տառապեալ ծառը: Կը թուի թէ թուրքերուն վանտալութիւնը իրենց արեան մէջ է: Մարդիկ այնքան անհոգ են, որ երբեմն երբ փուռը կը պահակեմ, կը դիտեմ զիրենք եւ կը թուի թէ նոյնիսկ պիտի կտրեն իրենց իսկ նստած ճիւղը: Իսկ ես չարութեամբ կը յուսամ որ այդպէս ընեն: Համալիրին դրացի միքանի տուները, որոնց բնակիչները քովերնիս ապաստանեցան, արդէն քանդուած են:

Ապրիլ քսանչորս

Շատ գոհ ենք որ համալիրին ներքին պայմանները հիւանդութիւն չյառաջացուցին: Լաւագոյննիս ըրինք որ մաքուր պահենք մեր միջավայրը: Բայց ասիկա դիւրին չէր: Փականագործ չունինք: Մեր ջուրը կու գայ աղբիւրէ մը, որ խողովակով կը հասնի մեզի: Ունինք նաեւ ջրհոր մը, դուրսի պէտքարաններ, իսկ ստորերկրեայ կոյաջուրը կ'ուղղուի համալիրին յետսակողմէն լեռն ի վար: Պէտքարաններուն ետեւի պատը կը նոյնանայ համալիրին պարիսպին հետ: Միշտ ալ կին մը, շաբաթը երեք անգամ կը մաքրէր զանոնք: Իսկ հիմա մեր սովորական թիւին կրկնապատիկ բնակչութիւնն ունինք եւ խորապէս մտահոգ ենք: Մեր կիրը գրեթէ սպառած է: Եւ թէեւ մեր հովին ու երէց տղոցմէ մին ջանացին դուրսի գործերը ընել ամերիկացիի մը պահակութեամբ, ատիկա այլեւս կարելի չէ ընել: Պէտք է երէց տղաքը թուրք աչքերէ հեռու պահենք որովհետեւ թուրքերը մեզ դարձեալ մեղադրեցին թէ մարդիկ թաքցուցած ենք, եւ նորէն մեր բնակչութիւնը հաշուուեցաւ:

Էտիթը եւ ես այս առտու մեր ծրագիրը մշակեցինք: Առտուն հինգին կ'արթննանք, կը դնենք մեր գլխարկները եւ հովիտին դուռը կ'ուղղուինք, ուր երկու փոքր տղաներ, որոնք չեն շփոթուիր տղամարդու տեղ, մեզ կը սպասեն: Կը բանանք դուռը եւ պատին մօտ կենալով, կը քալենք ուր որ մեր փոքրերը մաքրութեան աշխատանք պէտք է ընեն: Էտիթը կը վերահսկէ զիրենք, իսկ ես իրենց

կոնակ դարձուցած կը նայիմ լեռան ուղղութեամբ՝ հսկելով թշնամական թուրքերուն: Այս առտու շատեր անցան այդ ճամփայէն իրենց գէնքերով եւ հագիւ թէ մեզի նայեցան: Այն զգացումը ունինք որ երբ ամերիկացիք իրենց նային անոնք պիտի չկրակեն բայց երբ կոնակ դարձնենք՝ վստահ չենք որ պիտի չկրակեն: Մաքրութեան գործողութիւնը քսան վայրկեան տեւեց: Յոյս ունինք վաղը աւելի կարճ տեւէ:

Ապրիլ քսանհինգ

Գրեթէ եօթ շաբաթ է որ դուրսէն բան չենք լսած: Զարմանալի է որ ինչու՞ ֆրանսացիք չեն գար քաղաքին օգնութեան: Պէտք է իմացած ըլլան մեր տառապանքը: Մէկ երկու օր առաջ, Ճիւան պէյը մեզի նամակ մը ցցուց, որ նետուած էր օդանաւի երկրորդ ժամանումէն, երբ կը կարծէինք որ բան չնետեց օդանաւը: Կապոցը հայերուն ուղղուած էր, բայց քաղաքէն բաւական հեռու նետուած էր ու անցած թուրքերուն ձեռքը: Քաջալերական խօսք չկար նամակին մէջ: Մեր պատուելին էր գրողը եւ կ'ըսէր թէ Հաճընի օգնութեան ղրկուած զօրքը ետ դարձուած էր: Կը կարծեմ որ մեր կառավարութիւնը եւ Անգլիան ձեւով մը պէտք է օգնեն: Մեր չորսը ամերիկացի են, իսկ երկուքը՝ քանատացի: Անշուշտ բնաւ չեմ գիտեր ինչ կը պատահի աշխարհին մէջ, բայց այս վիճակը տարօրինակ կը հնչէ: Ինծի համար շատ դժուար է գիտակցիլ, թէ ձեր մտահոգութիւնը փարատող բան չեմ կրնար ընել: Միայն գիտնայիք որ լաւ եմ:

Ապրիլ քսանվեց

Երէկ գիշեր բեռնատար անասուններէն մէկը գողցուեցաւ: Ճիւան պէյին ըսինք: Խոստացաւ վերադարձնել տալ եւ յանցաւորը պատժել: Գիտենք որ ասիկա պիտի չըլլայ: Իրականութեան մէջ շատ փոքր վերահսկողութիւն ունի իր մարդոց վրայ: Կը մտածեմ գիշերային պահակ կարգել: Նոր կարգադրութեամբ մը փոքրերը ստորերկրեայ սենեակներէն հանեցինք: Հոն առաջնորդող դուռը գոցեցինք եւ զիրենք միջանցքներն ու սրահակները կը պառկեցնենք:

Ապրիլ քսանութ

Մինչ վերջին նախադասութիւնս կը գրէի Երկուշաբթի, փոքրերէն մէկը ներս վազեց, յուզուած ձայնով ըսելու, թէ փոքր դարպասի դուռը կը զարնեն: Ըստ սովորութեան, Էտիթը եւ Մսթըր Էպին գացին տեսնելու թէ ինչ է հարցը: Յետոյ Էտիթը ինծի պատմեց որ դռան դակոցը անլի զօրացեր էր եւ հաստատուն ձայն մը պահանջեր էր ներս մտնել: Դուռը բացուեր եւ դռան առջեւ ցցուեր էր անգալապատկեր մը՝ Կէօզիկ Տուրանը, իր ութ մարդոցմով: Ըսեր էի ձեզի, թէ կռուողներուն մեծամասնութիւնը անգալներէ բաղկացած է: Ամէն պետ հարիւր հոգի ունի իր հրամանին տակ: Ասոնք պատասխանատուութիւն չեն զգար Ճիւանին պէս մարդոց հանդէպ: Ասոնք հոս կը գտնուին ամբողջ համար: Եւ քանի որ քաղաքը յաջողապէս կը դիմադրէ, ասոնք անլի անհանդարտ կը դառնան: Մենք այսպիսի եօթ անգալապետերու ծանօթ ենք, իսկ ասիկա անլի վատահամբաւ է: Կէօզիկ գաղտնի կամ թաքնուած կը նշանակէ, ուրեմն ինքը գաղտնի Տուրանն է: Մեզի ըսուեցաւ որ ինք էր որ պատուելին եւ իր ընկերակիցները պաշարեր էր Ատանայի ճամփուն վրայ: Էտիթը հարցուց այս առաջնորդին՝ «ինչու՞ այսպիսի կոշտութեամբ կը պահանջես ներս մտնել: Մենք ուրախ կը զգանք մեր բարեկամները տեսնելով բայց անոնք քաղաքավարօրէն կ'ուզեն ներս մտնել»: Մարդիկը արհամարհեր էին եւ իրենց զէնքերը ցցեր: Էտիթը շարունակեր էր. «մեր հիւրերը մեզի կը վստահին եւ իրենց զէնքերը մուտքին կը ձգեն»: Կէօզիկը հակադարձեր էր.-

- Ոչ, մեր զէնքերը մեր կեանքն են. մեզ երբեք չեն ձգեր:- Յետոյ շարունակեր՝ կ'ուզենք երաժշտութիւն լսել:- Իմացեր էինք որ Վիքթորիան մեծ հոշակ գտած է իրենց մօտ եւ մեզի ալ մեծապէս օգտակար եղաւ՝ զիրենք հիւրընկալելու համար: Անգալները մէկ շարքի վրայ յառաջացան աստիճաններէն ու բարձրացան սելամըրը: Լուրջ-լուրջ նստան, իրենց զէնքերով: Կարճ խօսակցութիւն մը տեղի ունեցաւ: Կէօզիկը նախ հարցուց որ մենք 'հոտա՞ծ', թէ՞ 'լա' Ամերիկայէն ենք: Թուրքերը Հարաւային Ամերիկան 'հոտած' կը կոչեն, որովհետեւ հոն մտնողները չեն ենթարկուիր վարակային քնութիւններու: Յետոյ Վիքթորիայէն եղանակները սկսան նուագել: Պէտք է նկատի առնել որ մեր այցելուներուն զարմացկոտ վե-

րաբերմունքը մեր հանգստութեան բան չաւելցուց: Էտիթը ինծի փսփսաց՝ «չեմ գիտեր ի՞նչ կը մտմտան, բայց կարծես թէ լաւ չէ»: Կէօզիկը Մսթըր Էպիին դառնալով ժամը հարցուց: Մօտաւորապէս հինգ էր: Իր քովի մարդուն դառնալով, Կէօզիկը ըսաւ. «սպասէ՛ առաջին դղրդոցին»: Միշտ ալ կանխաւ կ'իմանայինք քաղաքին վրայ կատարուելիք յարձակումի մասին՝ կա՛մ շարքային զինուորներէն, կա՛մ ալ սպաներէն, եւ գիտէինք որ այդ օր յարձակում կար:

Ընդհանրապէս երեկոյին է որ ծանր հրետակոծութիւնը կը սկսի: Իրարու նայեցանք: Միւսները գունատած էին: Զգացի որ ես ալ: Մսթըր Էպին շարունակաբար եղանակներ կը դնէր Վիքթորուային: Յանկարծ թնդանօթը դղրդաց: Թուրքերը իրենք զիրենք ուղղեցին եւ ամուր բռնեցին զէնքերը: Կէօզիկը անոնց նայեցաւ եւ ըսաւ. «սպասեցէք մինչեւ երկրորդ դղրդոցը»: Մսթըր Էպին շարունակեց եղանակներ դնել: Յետոյ ի յայտ եկաւ որ բոլորս ալ նոյն մտածումները ունեցեր ենք: Բոլորս ալ կը կարծէինք որ Կէօզիկը կը ծրագրէ կա՛մ մեզ բոլորս սենեակ մը բանտարկել եւ ուզածը ընել համալիրին մէջ, կա՛մ ալ մեզ բոլորս սպանել յետոյ ազատ ըլլալ ուզածը ընելու: Մենք ձեւացուցինք որ ամէն ինչ սովորական է: Երկրորդ դղրդոցին թուրքերը նորէն զգաստ վիճակի մտան ու սպասեցին իրենց առաջնորդին: Կէօզիկը, սակայն, նորէն ըսաւ. «ո՛չ, սպասեցէք երրորդին»: Նուագուող ամերիկեան եղանակները մեր գուժկանը կը թուէին: Երբ թնդանօթը դարձեալ որոտաց, Կէօզիկը ոտքի ելաւ: Միւսներն ալ ոտքի ելան եւ առանց մեզի նայելու դուրս եկան սենեակէն ու իջնելով աստիճաններէն դուրս ելան դարպասէն: Մսթըր Էպին իրենց ընկերակցեցաւ: Թէեւ յետոյ միայն անդրադարձանք որ անոնք պարզապէս կը սպասէին կրակոցներուն, որպէսզի դիրքաւորուին: Յամենայնդէպս ջղագար վիճակ էր մեզի համար: Ասա՛նկ կեանք կ'ապրինք մենք: Օրաւոր: Երբեք վստահ չենք թէ վաղը ի՞նչ պիտի ըլլայ:

Մայիս մէկ

Ինչ լաւ է որ այսքան հագուստ ունինք ապրանքի հետ փոխանակելու: Այնքան ատեն որ վիճակը ասանկ մնայ՝ վախ չունինք ուտեստի պակասէ: Լաւ է որ հիմա, երբ թշնամիներով շրջապատ-

ուած ենք, առաջուրնէ աւելի լաւ կ'ուտենք: Անցեալին կը պատկանին այն օրերը, երբ բաւարար հակիթ չէինք ունենար տապկելու կամ խաշելու: Հիմա կը բերեն անընդհատ, երկվեցեակներով եւ զանոնք կը փոխանակենք հագուստցուններով:

Թուրք մը կայ որ ալիւր կը բերէ հաց թխելու համար թուրքերուն: Մենք մեր մեծ ընտանիքին կողքին իրենց համար ալ հաց կը թխենք: Չենք կրնար մերժել, եւ գոհ ենք որ գոնէ իրենց ալիւրը կը բերեն իրենց հացին համար: Այս թուրքը, սկսեր ենք հաւնիլ: Իրեն «երիտասարդ Ալի» կ'ըսեն, բայց մենք իրեն «ինկիշմէն» կը կոչենք: Բրիտանացիներու բանտարկեալը եղած է Եգիպտոսի մէջ, միքանի անգլերէն բառ սորվեր է ու կը սիրէ զանոնք գործածել: Կու գայ եւ կը նստի ամերիկացի պահակին կողքին: Երբ ես կամ միս Սուփըրը ըլլանք հոն՝ իր գիտցած անգլերէն բոլոր բառերը կը թափէ, իսկ թրքախօսներուն հետ ալ անընդհատ կը խօսի: Գաղափար մը կազմեցինք անոր բնաւորութեան մասին: Միքանի օրէն Ալին արծակուրդ պիտի առնէ: Մեզի խոստացաւ վերադարձին շատ բաներ բերել, նաեւ՝ գիրուկ, լաւ հաւ մը:

Պատմեցի ձեզի մեր մօտ կայագօրած տարբեր մարդոց մասին: Մինչ օրերը կ'անցնին բառ մը ասկէ, բառ մը անկէ լսելով քիչ մը կը լուսաբանուինք կացութեան շուրջ: Հոս գտնուող մարդոցմէ շատեր ակամայ եկած, ծեծով, սպառնալիքով եւ բռնի բերուած են՝ կռիւին մասնակցելու: Անոնցմէ շատեր անբարեկամ չեն հայերուն, բայց իրենց առաջնորդներուն մականին տակն են: Շատեր ըսին արդէն՝ «մեր սրտով չէ այս եղածը: Մենք Հաճընի հայերուն մէջ բարեկամներ ունինք: Ինչու՞ զիրենք պիտի սպանենք: Մեր տունը կ'ուզենք վերադառնալ: Ամէն ինչ պիտի կորսնցնենք: Տունը միայն փոքրերն ու կիները մնացած են»: Այնքան խեղճ ու տգէտ են որ կը մեղքնանք իրենց: Տակաւ մէջս աւելի կ'ամրապնդուի այն մտածումը թէ անհրաժեշտ միակ բանը, որ անգոյ է հոս, բայց խաղաղութիւն պիտի բերէ՝ սէրն է իրարու հանդէպ: Այս նախանձը, վախը որ թուրքերուն եւ հայերուն սիրտին մէջ է, այս ատելութիւնը սրդողեցնող է: Ներքին, սիրտերուն մէջ փոփոխութիւն պէտք է տեղի ունենայ այս չարչարեալ հողակտորին բոլոր մարդոց համար, որպէսզի մնայուն, իրա՛ւ խաղաղութիւն հաստատուի: Որոշապէս ապացուցուած է որ

որոտացող թնդանօթը համերաշխութիւն չ'ապահովեր: Երբեմն կը մտածեմ՝ արդեօք ձեռով մը ասոր իրագործումին պիտի մասնակցի՞նք: Ճիւանը կը թուի թէ բարի սիրտ ունի. վերջերս յաւելեալ բարեկամութիւն կը ցուցաբերէ: Անցեալ օր ըսաւ. «այս խնդիրները վերջանալէն ետք կ'ուզեմ որ զաւակներս այս դպրոցը յաճախեն: Կ'ուզեմ որ ձեր հոգաձութեան տակ ըլլան»: Այս խօսքին յոյս կարելի չէ կապել, բայց հանգստացնող փշուր մըն է: Մենք ամէն յոյսի կը կառչինք:

Աւելի ետքը՝

Հիմա Էնվէրը եկաւ վայրի ծաղիկներ բերած: Կը տենչայինք երթալ լեռները որոնք հիմա ծաղիկներով գորգուած են: Էտիթը այնքան կ'ափսոսայ որ չկրցայ Չաթաք երթալ՝ տեսնելու վայրի *հայասիւն*ները, որոնք պերճօրէն կը ծաղկին մանաւանդ հոն:

Մայիս երկու

Հաթաճըին կարգ մը ազգականները եկան զինք տեսնելու: Նամակ բերեր էին իր մեծհայրէն, որ Ալպիստան կ'ապրի: Վերջինս կ'ուզէ որ զինք հոն ղրկենք: Քիչ մը թեթեւցած կը զգանք զինք հոն ղրկելով: Ծանր պատասխանատուութիւն էր: Կը պատրաստուինք զինք ճամփել: Մեր հագուստցուններէն իրեն թրքական հագուստ մը կը պատարաստենք: Պէտք է մեկնի պատշաճ քօղարկումով ու յարմար զգեստաւորումով:

Մայիս երեք

Էպիին կովերէն մին Հաճընէն եկած փամփուշտի զոհ դարձաւ այս առտու: Դիակը բացայայտ թիրախի տակ է, բայց Էնվէրը խոստացաւ մարդ ղրկել՝ մութին տանելու կովը եւ միսէն բաժին հանելու մեզի: Մեր երկու մեծ շուներն ալ պատահական փամփուշտներէ սպանուեցան: Ճիւանը այսօր երկար այցելութիւն մը տուաւ եւ առաջարկեց որ մեր քիւրտ հովիւը մեր այժերն ու ոչխարները Բումլու տանի: Ասիկա թուրք գիւղ մըն է, հինգ ժամ հեռու: Անոնց ողջ մնալու միակ առիթն է եւ մենք համաձայն ենք: Հովիւին քիւրտ ըլլալը իր կեանքին ապահովութիւն կու տայ եւ պէտք է վստահինք խոստումին, թէ յետագային պիտի վերստանանք մեր

հօտը: Ասոնց հետ երկու կով ալ պիտի ղրկենք: Ասոնցմէ մէկը վիրաւորուած է: Քովերնիս մէկ կով կը մնայ: Ատոր կեր կրնանք ապահովել:

Մայիս չորս

Միս Սուփըրը շատ մեծ օգտակարութիւն կ'ունենայ համալիրին համար, քանի որ թուրքերը անընդհատ կու գան իր օգնութիւնը խնդրելու: Գրեթէ բոլոր դեղորայքը սպառեց, եւ մենք մտահոգ ենք: Դեղորայքը մեր բնակչութեան ու թուրքերուն համար պէտք ունինք, որպէսզի իրենց բարեկամութիւնը պահպանենք: Էտիթը Ճիւանին յայտնեց մեր դեղորայքի պակասին մասին, իսկ Ճիւանը խոստացաւ Թալաս՝ ամերիկացիներուն քով մարդ ղրկել՝ Միս Սուփըրին նամակով՝ դեղորայքի կարիքին առնչութեամբ: Դրկուած որեւէ նամակ թրքերէն պէտք է ըլլայ: Երեք օր կը տեւէ Թալաս հասնիլը, հետեւաբար չենք կրնար լրաբերը սպասել շաբաթէ մը առաջ: Յուսանք Թալասի մեր գործընկերները կը կարգան տողատակերը եւ կը պատասխանեն մեզի, որպէսզի գիտնանք թէ օգնութիւն սպասե՞նք:

Մայիս հինգ

Ալիւրի պաշարնիս գրեթէ սպառեցաւ: Ըսեր եմ որ ցորեն շատ ունինք բայց միջոց չունինք աղալու: Ճիւանը կ'ըսէ որ երբ պէտք ունենանք՝ Րումլուէն մեզի համար ալիւր պիտի գնէ մեր դրամով: Բայց Էտիթը իրեն յայտնեց որ եթէ ջաղացքի քար մը ճարէ մեզի համար, մենք մեր ալիւրը կ'աղանք մանաւանդ որ քարին մէկը ունինք:

Մայիս ութ

Ասիկա գրելու ատենս կը պահակեմ փուռը: Երէկ դարձեալ սարսափ ապրեցանք եւ տակաւին ցնցուած կը զգամ: Ժամը երկուքի կողմերը արդուկի սենեակը գացի, որ մեր գլխաւոր շէնքին կոնակն է: Փողկապեր պիտի արդուկէի: Վարժուեցանք կրակոցներուն, բայց արդուկած ատենս մեծ պայթիւն մը լսեցի եւ կարծեցի որ փամփուշտ մը սենեակը հարուածեց: Քրիստինան ներս խուժեց լա-

լով թէ «օ, Միս Քլարք, տղաներէն մէկը վիրաւորուեցաւ»: Դուրս աճապարեցի եւ աղբիւրին տանող արահետին վրայ տեսայ Էտիթը, ծռած՝ գետին պառկած տղեկի մը վրայ: Թելադրեց որ տեղացիներէն ոչ ոքի ձգեմ շէնքէն դուրս ելլել: Մսթըր Էպին մեծ դարպաս ուղղուեր էր Էնվէրը կանչելու դարմանատունէն: Մնացեալներս կեցանք տղեկին քովը: Սիրելի փոքրիկ Սաչեանն էր, որ կտրած ծաղիկի պէս գետին էր ինկեր, գլուխը՝ լճացող արեան մէջ: Էտիթը դէպքին վայրը հասեր էր շատ շուտ եւ տեսեր էր երկու մարդիկ՝ փախեր էին պատէն: Էտիթը զանոնք ճանչցեր էր: Քիւրտեր էին. մարդիկ որոնք քանի մը օր է խնդիրներ կը յարուցանեն: Սաչեանը ուրախ տղեկ մըն էր, բոլորս զինք կը սիրէինք: Անշուշտ, պէտք չէր արահետ ելլեր, քանի որ արգիլուած էր: Բայց իշուկը տեսնելով ցատկեր էր վրան քիչ մը վարելու: Պտոյտէն վերադարձին էր որ թուլամորթները կրակած էին իրեն՝ ծոծրակէն: Տղոցմէ մէկը լսեր էր Սաչեանին կանչը «մայրի՛կ, սպանուեցայ»: Յետոյ ինկեր էր իշուկին կոնակէն:

Շուտով Էնվէրը եկաւ Մսթըր Էպին հետ եւ մենք՝ վեց ամերիկացիներս ու թուրքը հաւաքուեցանք դիակին շուրջ: Էտիթը պահանջեց որ Էնվէրը հետերնիս ըլլայ, պահակէ մեզ, մինչ մենք տղեկը թաղենք: Լեռան կողին բանակած թուրքերը մեզ կը դիտէին: Երկու անգամ, Էնվէրը իր թեւերը բողոքելով բարձրացուց, յետոյ բացատրեց որ զինուորներէն միքանին իրենց զէնքերը մեզի ուղղած էին: Նորէն բամպակէ կտորեղէն օգտագործուեցաւ. փաթեցինք տղեկը իր մշտնջենական քունին համար: Մինչ այդ Էնվէրը երկու թուրք կանչեց եւ հրահանգեց որ գերեզմանափոսը փորող տղոց կողքին կանգնին: Կ'ակնկալէինք որ թուրքերը պիտի չփորձէին իրենց եղբայրները սպանելու վտանգին ենթարկել: Ամէն ինչ վերջանալէ ետք Միս Սուփըրը եւ ես գացինք լճացած արիւնը չորցնելու: Հակառակ մեր ճիգին մուգ հետքեր կան տակաւին հողին, եւ երբ պահակելու համար այդ տեղէն կ'անցնիմ՝ դող կ'ելլեմ:

Ճիւղանը այցելութեան եկաւ: Շատ քիչ խօսեցաւ երէկուան ողբերգութեան մասին, բայց երեք ժամ մնաց մեզի հետ: Եւ որքան

երկար տեւէ այցելութիւնը այդքան ատելի կ'ըլլայ յարգանքը: Իր ձեռով ներողութիւն կը խնդրէր:

Մայիս փաստ

Տարի մը առաջ այսօր հասայ Հաճըն: Տարօրինակ տարելից մըն է: Այսօր յետմիջօրէին մարդ մը ջաղացքի քարը բերաւ եւ ծրագիրը գործադրութեան դրինք անմիջապէս: Երկու պզտիկ սրճաղացներ ունինք, որոնք նոյնպէս գործի պիտի լծենք: Նախ վեց տղաք պիտի բանին: Երկուքական՝ ջաղացքի քարերուն եւ մէկական՝ սրճաղացներուն համար: Երկու ժամ աշխատելէ ետք վեց աղջիկներ զիրենք պիտի փոխարինեն: Կը ծրագրենք գիշեր-ցերեկ աղալ:

Մայիս փաստներկու

Թալասէն դեղերը հասան: Նամակներ ալ եկան: Անգլերէն: Ճիւանը զանոնք մեզի յանձնեց: Նամակները առօրեայ նիւթերու մասին կը խօսին, բայց չեն նշեր որ նամակագիրները ըմբռնէն են մեր կացութիւնը: Տարօրինակ: Անոնք կը թելադրեն որ մեզմէ միքանին արձակուրդի երթան իրենց քով: Անբացատրելի է: Ճիւանը կը հաւաստէ որ պատրաստ է որեւէ նամակ կամ հեռագիր դրկել մեզմէ եթէ նախ թարգմանենք իրեն: Գիտենք որ իր առաջարկին մէջ ճշմարտութիւն չկայ:

Մայիս փաստներեք

Մերթընդմերթ, Էտիթը յայտնած էր Ճիւանին, որ ուրախ պիտի ըլլայ հիւրընկալելու Տողան պէյը, որ կ'ըսուի թէ Հաճընի շուրջ գտնուող զօրքերուն գլխաւոր հրամանատարն է: Միշտ ալ պատճառ մը կար, որ այս հրաւերը չիրականանայ. անգամ մը՝ Տողան պէյը յառաջապահ դիրքերը կը քննէր, ուրիշ անգամ մը՝ Սիս կանչուած էր... այն աստիճան՝ որ սկսեր էինք մտածել որ Տողանը երեւակայական է եւ թէ Տողանն ու Ճիւանը նոյն անձն են: Բայց երէկ, Ճիւանը եկաւ առաջարկով մը, թէ ամերիկացիք երկրորդ այցելութիւն մը տան Հաճըն: Այս անգամ կ'առաջարկուէր խորհրդակցութիւն մը կայացնել թուրքերու եւ հայերու միջեւ: Ըսինք որ նման բան մը նկատի առնելու համար, Տողան պէյը մեզի պէտք է այցելէ

եւ անձամբ առաջարկէ: Ճիւանը խոստացաւ իր կարելին ընել: Հանդիպումը այս յետմիջօրէին տեղի ունեցաւ:

Տողան պէյը հիմա գնաց: Երկարահասակ է, բարեձեւ, արծուաչուի: Կարծես չերբէզ է: Ըսաւ որ թուրքերուն նպատակը Կիլիկիան ֆրանսացիներէն մաքրելն է եւ հաւաստեց որ երբեք պիտի չդադրին, մինչեւ որ իրենց նպատակին հասնին: Բացատրեց խորհրդակցութեան իր ծրագիրը: Յայտնեց որ կարելի է յառաջացեալ խրամատներէն պոռալ եւ զինադուլ մը առաջարկել հայերուն: Յետոյ երբ հայերն ու թուրքերը դադրին կրակելէ, ամերիկացիք քաղաք երթան: Տողանը կ'ուզէ որ երկու կամ երեք հայ ներկայացուցիչներ գան համալիր՝ թուրքերուն հետ ժողովի: Ան խոստացաւ որ հայերուն ոչ մէկ վնաս պիտի հասնի. միքանի այլ մանրամասնութիւններ տալէ ետք գնաց: Այս իրիկուն ժամը իննին, Մսթըր Էպին Էնվէրին եւ Ճիւանին հետ պիտի յառաջանայ խրամատներէն եւ կանչէ Մանիսաճեանին⁸⁰ եւ անոր հետ անգլերէն խօսի: Վերջինս քաղաքի այն քիչ մարդոցմէն է որ անգլերէն գիտեն: Քանի որ թուրքերէն ոչ ոք անգլերէն գիտէ, Մսթըր Էպին անգլերէն պիտի խօսի, որպէսզի հայերը ապահովուին որ թակարդ չկայ:

Մայիս փասնհինգ

Ուշ երեկոյ.

Զինադուլը հռչակուեցաւ երէկ առտու եւ դարձեալ Էտիթն ու Մսթըր Էպին ուղղուեցան քաղաք, երկու դրօշակով: Կարճ ժամանակ ետք վերադարձան մեր ակնկալած պատասխանով, թէ հայերը չեն ուզեր թշնամի գիծերը անցնիլ: Առաջնորդները վստահութիւն չունէին ժողովին յաջողութեան, իսկ ժողով կրնար գումարով երկու հակառակորդ յառաջագոյն խրամատներու կիսուն: Ճիւանը ասիկա լսելէ ետք յայտնեց որ թուրքերուն համար ամերիկեան մեր համալիրին սելամըքը միակ տեղն էր հանդիպումին: Ամփոփեմ - առանց մանրամասնութեանց մտնելու - թուրք առաջնորդներուն հետ մեր ունեցած խօսակցութեանց մասին: Բազմաթիւ անգամներ քաղաքին սահմանը երթալ-գալով հարցը արծարծելէ ետք, հայերը

⁸⁰ Միհրան Մանիսաճեան Հաճնոյ Ինքնապաշտպանութեան Մարմնին անդամ էր:

համաձայնեցան երկու հոգի զրկել համալիր, ժամը չորսին: Էտիթը եւ Մսթըրը Էպին յանձն առին զանոնք թիկնապահել, քալելով հայերուն երկու կողմէն: Մինչ այդ մենք պատերազմական ատեան մը գումարեցինք եւ ճշտեցինք թէ որ ամերիկացին ուր պիտի 'կայագորէ': Բնականաբար, անշուշտ, Էտիթը եւ Մսթըրը Էպին ներկայ պիտի ըլլային հանդիպումին, բայց մնացեալներս պիտի կենայինք որոշեալ տեղեր, ուրկէ պիտի հսկէինք թրքական հաւանական մերձեցումի բոլոր ճամփաներուն վրայ եւ ահագանգէինք՝ որեւէ կողմի դաւադրութեան պարագային: Իմ տեղս Հաճըն բացուող մեծ դարպասին դուրսն էր: Կրնայի պահակել թէ՛ մօտերը լարուած թուրք վրաններուն եւ թէ՛ հովիտէն գալիք հայկական մագլցումին:

Համալիրին կացութիւնը վտանգալից կ'ըլլար եթէ կողմերէն մէկը խոստմնադրուժ ըլլար: Համալիրին տեղացիներուն պատուիրուած էր անձայն սպասել շէնքին ստոգետնեայ մասին մէջ:

Ժամը երեքուկէսին գործընթացը սկսաւ: Բոլորս պրկուած էինք, լարուած՝ որեւէ ձայնի: Այն պահուն երբ Էտիթն ու Մսթըրը Էպին պիտի վերադառնային հայկական դիրքերէն՝ կրակոց մը լսուեցաւ: Վստահ եղէք՝ ծունկերս թուլցան: Վայրկեաններ ետք տեսանք որ ամերիկացիք առանձին ետ կու գան: Կրնաք երեւակայել մեր անհամբերութիւնը՝ գիտնալու թէ ինչ պատահեցաւ: Ամերիկացիք տեղեկացուցին թէ հայերը սպասած են իրենց պաշտպանական դիրքերուն մէջ, ապա ճամփայ ելած, իրենց երկու կողմերուն՝ երկու ամերիկացիք: Սակայն յանկարծ կրակոց մը լսուած է եւ փամփուշտ մը ինկած իրենցմէ քայլ մը առջեւ: Հայերը փախեր են, իսկ ամերիկացիք առանձինն վերադարձեր են՝ ականապատուած ու փշաթելուած ճամփաներէն: Անշուշտ երբեք պիտի չգիտնանք՝ ո՞ր կողմէն եկաւ դաւադիր փամփուշտը, բայց մենք մեր կասկածները ունինք: Ճիւղանը շատ բարկացած էր եւ մեզի մասամբ կ'արտայայտէ իր զգացումները: Ըստ իրեն, զիջումի բոլոր մտածումները անհետացած են: Քաղաքը պիտի գրաւուի եւ բոլորը սուրէ պիտի անցուին:

Մայիս տասնվեց

Մեծապէս բախտաւոր ենք մեր փոքր պարտէզով, ուր Էտիթին եւ Միս Սուփըրին հոգածութեամբ հազար եւ բողկ կը բուսնի: Միքանի

օր է մեր սեղանին բողկ կայ, իսկ այսօր մեր առաջին սալատը ունեցանք: Ինձի թուեցաւ որ բողկի հինգ տերեւներէն աւելի համեղ բան կեանքի՛ս մէջ չէի համտեսած: Երկար ատենէ իվեր թարմ բան կ'ուզէի ուտել: Տարօրինակ կը թուի որ մենք կրնանք հետաքրքրուած ըլլալ այսպիսի, յարաբերաբար անկարելոր բաներով, բայց կարծեմ ա՛ս է մեզ փրկողը:

Երբեմն, երբ ձեր մտահոգութեան մասին մտածեմ, կը կարծեմ որ խելքս պիտի կորսնցնեմ, քանի անկարող եմ որեւէ ձեռով ձեզի բառ մը հասցնել: Թերեւս ամբողջ աշխարհը տակնուվրայ է: Ապուշութիւն է ասիկա, բայց այսօր իմ յուսաբեկ զգալու օրերէս մէկն է: Չեմ գիտեր ինչո՛ւ կը շարունակեմ թուղթին տալ այս բոլորը: Շատ պզտիկ հաւանականութիւն կայ որ ողջ մնամ, եւ կամ՝ այս տողերս երբեւէ կարդացուին: Զարմանալի է սակայն, որ թուղթին տալով պատահածները՝ հանգստութիւն մը կը զգամ: Հետեւաբար, կ'ենթադրեմ, պիտի շարունակեմ այնքան՝ որքան կարելի է:

Բամատանի ամիսն ենք: Ասիկա մեզ կրկնակիօրէն մտահոգ կը դարձնէ: Յառաջիկայ չորս շաբաթներուն, բոլոր իրաւ իսլամները ուտեստի եւ հեղուկի պիտի չդպին վաղ առաւօտէն մինչեւ ուշ իրիկուն: Օդը շատ տաք է եւ մարդիկ այս պրկուածութեամբ աւելի դիրագրգիռ կը դառնան: Զինուորները պատրաստ չեն ծոմապահելու, բայց պարզ ու տգէտ գիւղացիք, որ զօրքին մեծամասնութիւնը կը կազմեն, որոշապէս պիտի ծոմապահեն: Սպաները դժուարութիւն պիտի ունենան գիւղացիները հոս պահելու: Եթէ նոյնիսկ Բամատանին հոս մնան՝ ասոնք վճռած են որ նոր պայրամը տուներնին տօնեն: Այս պատճառով ալ քաղաքին վրայ գիշերային յարձակումները շատցած են, քիչ յաջողութեամբ:

Մայիս տասնութ

Դարձեալ մեր պարտէզին մասին պիտի գրեմ: Գերուրախ ենք նորատեսակ ուտեստ մը յայտնագործելնուս համար: Ամերիկացիքս հերթաբար պարտէզին սէզերը կը մաքրենք: Այս աշխատանքին տեղացիները չեն մասնակցիր: Իսկ առտուն փուռի կիներէն մէկէն իմացանք որ սէզերուն մէջ ամէնէն շատ գտնուող տեսակը կարելի է ուտել: Բանճար կը կոչեն տեղացիք, ճակնդեղի տերեւին պէս է:

Այն խոստերէն է զորս հայերը աքսորի ընթացքին կերեր են: Միքանին տապկեցի ընթրիքին, համեղ էին: Պիտի նեղուփնք երբ ասոնք վերջանան:

Մայիս տասնին

Ճիւանը երէկ գիշերը էնվերին հետ անցուց դարմանատան մէջ: Գրեթէ մինչեւ կէսգիշեր խմեցին: Քուրանի օրէնքը՝ խմիչքի դէմ, մեռեալ տառ է շատ մը իսլամներու համար: Առաջնորդները շատ անկեղծօրէն կը բացայայտեն իրենց անտարբերութիւնը իսլամ կրօնքին հանդէպ, թէեւ օգտակար կը գտնեն զայն՝ պարզ գիւղացիք վերահսկելու համար: Մօտակայ կառոյցին մէջ մարդոց ծայնին բարձրանալը եւ ջղային դառնալը էտիթը եւ զիս անհանգստացուց: Փորձեցինք չմտածել թէ ինչ դիւրին պիտի ըլլայ իրենց համար այնքան խմել, որ մոռնալով իրենց խոստումը, իրենք զիրենք ու իրենց մարդերը արձակել համալիրին վրան: Պէտք չէ ձգենք որ մեր հաւատքը նուագի. որեւէ մէկը, որ «մինչեւ հիմա Տէրը օգնեց մեզի» ըսէ՝ անմիջապէս կ'արձագանգենք:

Մտածումներս կայուն կը պահեմ եւ կը փորձեմ չմտմտալ կոտորածի մասին, բայց երբեմն անկարելի է: Եթէ նման բան պիտի պատահի, եւ եթէ ես ոչինչով պիտի կարենամ օգնել՝ կ'աղօթեմ որ նախ ես սպանուիմ: Չեմ կրնար փոքրերուն տառապանքը տեսնել: Հոգիս կ'աղէկէզի նման չարչարանքէ: Ինչի՞ ծառայած պիտի ըլլայ մեր փրկութեան այս ճիգը: Այս փոքրերէն շատեր վայրի, փոքրիկ արարածներ էին ասկէ միքանի ամիս առաջ: Իսկ հիմա՝ սնուցուած են, հագցուած, իրենց միտքն ու հոգին կ'աճի: Վերջիվերջոյ անոնք պիտի զոհուի՞ն: Չեմ կրնար հանդուրժել:

Մայիս քսան

Այս առտու աւելի հանդարտ կը զգամ: Ամօթ կը զգամ իմ հաւատքիս հանդէպ: Օրը գեղեցիկ է. երկինքը՝ դրախտային կապոյտ մը, ուր ծոյլիկ, պզտիկ ամպեր կը նաւարկեն: Երբ *տեֆուրի*ները ծաղկեցան, փամփուշտի հասողութեան մէջ էին եւ չկրցանք հաւաքել, բայց հիմա վարդատունկերը լի են բողբոջներով եւ ակնդէտ կը սպասենք անոնց ծաղկումին: Փոքրերը խելօք են իրենց խճող-

ուած հաւաքավայրերուն մէջ: Սահմանափակումը կ'ազդէ իրենց. Փոքրիկն Միհրանը տժգոյն է. աւելի նման է այն լռակեաց փոքրիկին, որ վեց ամիս առաջ եկաւ: Սքանչացած եմ մեր ուսուցիչներով, որոնք լուռ կը տոկան: Առանց անոնց օգնութեան՝ անկարելի պիտի ըլլար հոգալ համալիրին բնակչութեան: Ալիթեան որ այնքան կայտառ էր երբ Կոստանդնուպոլիսէն հետս եկաւ, հիմա փոսը ինկած այտեր ունի, աչքերուն տակը մութ է, բայց երբեք տեղի չի տար:

Ճոզէֆինը, որուն մասին գրած եմ թէ ի'նչ լաւ փորձառութիւն ունեցած է Կեսարիոյ մէջ՝ տեղահանութեան ատեն, ուշագրաւ վստահութիւն մը կը ցուցաբերէ թէ շուտով օգնութիւն պիտի հասնի:

Մայիս քսանմէկ

Չեմ գրած թէ ինչպէս մեր ըմպելի ջուրը կը մատակարարենք: Սաչեանին մահէն ետք վախցանք տեղացիները դրկելու աղբիւր, որ ճիշտ քովն է փոքր դարպասին, պատին ներսի կողմը: Հետեւեալը կ'ընենք հիմա. ընթրիքէն անմիջապէս ետք Միս Պրետըմասը եւ ես աղբիւր կ'երթանք, բոլոր *սաթըլները* (դոյլերը) կը լեցնենք եւ յետոյ երբ գրեթէ խաւար է, միջին տարիքի երեք աղջիկներ դուրս կը բերենք որպէսզի ջուրի դոյլերը շէնք փոխադրեն ու լեցնեն հսկայ կարասները, որոնք կը գտնուին շէնքին ետեւի գաւիթը: Կարելի արագութեամբ, դատարկ դոյլերը կը լեցնենք նորէն ու նորէն, մինչեւ որ կարասները լեցուին:

Երբեմն, երբ ցերեկը անսովոր տաք ընէ, կարասներուն ջուրը կը հատնի ու ամերկացիներէն մին դոյլերով ջուր կը կրէ՝ ծարաւ յագեցնելու: Երէկ գիշեր, առաջին անգամ է որ ջուրին խնդրով հարց ունեցանք:

Քար մը նետուեցաւ ուսիս, բայց զօրաւոր չէր եւ ենթադրեցիմք որ պարզապէս պատին միւս կողմէն աննպատակ նետուած է: Չվնասուեցայ: Բայց մեր անհանգստութիւնը կ'աւելցնէ:

Մայիս քսաներկու

Եթէ թուրքերը կ'ակնկալեն քաղաքը առնել՝ ուրեմն աւելի ազդու թնդանօթ պէտք է բերեն: Ճաշասնեակէն տեսանելի է թէ թնդանօթի ռումբերը ու՛ր կ'իյնան: Ըստ թուրքերուն, մեծ վնասներ պատ-

ճառուած են քաղաքին, բայց մեր տեսադաշտին մէջ գտնուող Հա-
ճընի շինութիւններուն մեծ մասը անվնաս մնացած է: Կը կռահենք
նաեւ որոշ ակնարկութիւններէ, որ թէ՛ զէնքի եւ թէ՛ թնդանօթի
զինամթերքի սակաւութիւն կայ: Մարդիկը միշտ ալ կը խօսին թէ
ծանր թնդանօթներ ճամփայ հանուած են, բայց ցարդ այն կարծի-
քին ենք որ մէկ թնդանօթ կայ, իսկ միւսները իրականութիւն չեն:
Հաճընը մեռեալ քաղաքի կը նմանի: Երբեմն ծուխ մը կը բարձ-
րանայ տանիքէ մը, բայց - պարզ աչքով կամ հեռադիտակով - շա-
րժող մարդ չենք տեսներ: Կը տեսնենք խրամատները եւ կ'են-
թադրենք որ մարդիկ խլուրդի պէս, ընդյատակ անցած են:

Մայիս քսանվեց

Շաքարի մեր պաշարները օրապարէնի վերածած են, ակնկալե-
լով որ Յուլիս մէկին նորը կ'ունենանք: Երէկ լրիկի վերջին տուփը
բացի: Միքանի տուփ ոլոռն ու բակլայ մնացած է միայն: Այս առտու
երբ *հասնա* (մարան) իջայ, մտմտացի թէ ի՛նչ անուշեղէն կրնամ
գտնել: Դարակները կը նմանէին Մատըր Հապըրտին դարակնե-
րուն. մտածեցի որ եթէ շատ նայիմ՝ թերեւս բան մը մէջտեղ կ'ելլէ
պարապութենէն: Եւ ամէնէն զարմանալի բանը պատահեցաւ. յան-
կարծ նկատեցի որ շիշ մը կայ մութ անկիւնը: Խոհանոց տարի եւ
տեսայ որ թութ էր: Շատ հաւանաբար անցեալ ամառ պատրաս-
տած են, բայց երբեք չեն յիշեր պատրաստելս:

Մայիս քսանութ

Շատ լաւ է որ մեզմէ ոչ ոք հիւանդացաւ: Թերեւս պատճառն այն
է որ չենք կրնար! Միսիզ Էպին մէկ-երկու օր սրտի ցաւ ունեցաւ,
բայց ատիկա արտասովոր չէր եւ կարելի չէ հաշուի առնել: Անցնող
միքանի օրերը չափազանց տաք ըրին: Իրիկունները սպառած կը
զգամ:

Մայիս երեսուն

Նորութիւն չկայ: Թուրքերուն կեցուածքը նոյնն է: Անոնք մեզմէ
կը կասկածին ու կը մեղադրեն մեզ թէ նշանախօսութիւն կ'ընենք
Հաճըն: Երբ վերջին զինադուլին Էտիթը քաղաք գացեր էր, աղա-

չեր էր հայերուն որ չփորձեն խլել մեր համալիրը թուրքերէն: Կարգ մը երիտասարդներ առաջարկեր էին Էտիթին որ իրենք կրնան թուրքերը դուրս մղել այս շրջանէն: Էտիթը բացատրեր էր իրենց այն վտանգը, որուն պիտի մատնուէինք եթէ հայերը նման բան փորձէին: Բնականաբար, իրենց համար դժուար է համոզուիլ որ մենք յաջողած ենք կանայք ու աղջիկները պաշտպանել:

Մայիս երեսունմէկ

Հիմա որ ծառերը կանաչած են, թուրքերը ասելի ազատօրէն կը շարժին՝ քանի ծառերն ու մացառները զիրենք կը թաքցնեն: Թուրքերը իրենց ձիերը վարի գետակը կը տանին առանց վտանգի: Ափսոս է մտածել որ կեռասը պիտի հասուննայ, բայց երբեք պիտի չդպինք անոր: Թուրքերը կը պատմեն որ հայերուն ըսած են թէ պիտի մնան մինչեւ որ խաղողը հասնի: Արդեօք քաղաքի մեր խեղճ բարեկամները ի՞նչ կ'ուտեն: Անոնք Էտիթին ըսեր էին որ առատ պահեստ մը ունին, բայց՝ դժուար թէ:

Ինը շաբաթ առաջ թուրքերը դիրքեր գրաւեցին, եւ տասներկու շաբաթ առաջ մեր վերջին լրաբերը եկաւ, բայց չի թուիր թէ լուծումը ասելի մօտալուտ է քան երբեւէ: Կ'ափսոսանք որ Այիշան այդքան խստապահանջ իսլամուհի է: Ան կը յարգէ ծոմի ժամերը. պէտք է ուտէ երբ առտու դեռ այնքան մութ է որ չես կրնար ճերմակ ու սեւ դերձանները իրարմէ զանազանել: Լոյսը շատ կանուխ կը ծագի եւ յաճախ ինք ուշ կ'արթննայ, բայց իր կրօնական հաւատարմութեամբ պատահ մ'իսկ բերանը չ'առնէր մինչեւ ուշ իրիկուն: Բարեբախտաբար ճեննէթը շատ փոքր է ծոմ պահելու: Այիշան գոնէ համամիտ է որ ճեննէթը ուտէ ու մեր այս հարցը քիչ մը կը թեթեւնայ:

Յունիս երեք

Միս Սուփըրը ծանր կ'աշխատի՝ ծանրօրէն վիրաւորուած մեծաթիւ թուրքերուն վերքերուն վրայ: Արտառոց է թուրք զօրքերուն բժիշկ ըլլալը. բայց ասոնք անկեղծութեամբ կը յայտնեն որ իրենց բժիշկը բան չի գիտեր:

Իվերջոյ հասաւ օրհասը: Պատահեցաւ այն՝ ինչէն կը վախնա-
յինք: Առջի գիշեր, խումբ մը հայեր խուժեցին համալիր եւ գինա-
թափ ըրին թուրքերը: Երէկ առտու ժամը երկուքին վախազդեցիկ
ծայներ լսեցինք, հնդիկներու պէս մարտի ծայներ եւ շտապ կրա-
կոցներ: Ձայները հայերէն թուեցան, բայց վստահ չէինք: Էտիթը եւ
ես, դողդղացող ձեռքերով գետին փռուեցանք ճիշտ այն պահուն
երբ մեր շէնքին դռները իրենց ծխնիներէն դուրս թռան: Սրահ
խուժող մարդոց աղմուկը լսեցինք յետոյ՝ աստիճաններուն վրայ...
չհասկցանք հայե՞ր, թէ՞ իսլամներ էին: Էտիթը դուրս վազելով լսեց
որ անոնք ուսուցիչներուն եւ աղջիկներուն անունները կը կանչէին:
Կը թուի թէ խրամներուն մէջ գիշերը թուրքերը հայերը գրգռեր են,
թէ՛ «աղջիկներ բերինք համալիրէն»: Հայերէն տաքգլուխներ, գրե-
թէ խեցած այն մտածումէն թէ ինչ կրնայ եղած ըլլալ, հովիտէն վար
սողալէ ետք մագլցեր են դէպի համալիր եւ հոն պահակող փոք-
րաթիւ թուրքերու հանդիպելով սպաներ ու վիրաւորեր զանոնք:
Մնացեալ թուրքերը փախեր են լեռն ի վեր: Խեղճ այս խաբուած
մարդիկը չեն գիտակցիր թէ ի՛նչ ըրին: Հիմա տեսան որ բոլոր կի-
ներն ու աղջիկները անվնաս մնացած են, բայց գիտեն որ այսուհե-
տեւ զանոնք չենք կրնար պաշտպանել: Յստակ է որ թուրքերը ետ
պիտի գան եւ այն ատեն չենք գիտեր ի՛նչ վարկ կրնանք ունենալ:

Ամբողջ կացութիւնը փոխուեցաւ հիմա: Այս դէպքէն առաջ, հա-
մալիրին մէջ կրակոց չէր եղած, իսկ հիմա համալիրը վերածուեր է
կռուադաշտի: Հայերը կը հաւաստեն թէ պիտի չձգեն թուրքերուն
մուտքը: Մեր կացութիւնը զարհուրելի է: Խորհրդակցեցանք Մատ-
թէոսին եւ Մինասին ներկայութեամբ եւ որոշեցինք որ բոլոր տեղա-
ցիները, բացի թուրք աղջիկներէն, քաղաք դրկենք՝ իբրեւ միակ
քայլ: Հոն շօշափելի ապահովութիւն կայ: Մեր օգտագործած բարո-
յական ուժը այլեւս անօգուտ է: Հայերուն կողմէ համալիր խուժելը
մենք ափսոսալի գտանք: Հիմա, այլեւս իրենցիները Հաճընի մէջ,
իրենց քով աւելի ապահով պիտի ըլլան քան մեր քով: Առաւօտեան,
խանդավառութեամբ, բոլոր գաղթականները եւ որբերէն մաս մը
Հաճըն շտապեցին: Հաճընէն շատեր եկան ապահովուելու որ մենք
չէինք սպանուած թուրքերէն: Սարսափելի է որ մեր ուսուցիչներն ու

փոքրերը կ'երթան, բայց աւելի սարսափելի է եթէ մնան: Մինչ ցերեկ է, զանոնք հոս կրնանք ձգել, բայց մութը իյնալուն պէս պէտք է երթան: Հայերը մեր փափաքին հակառակ, սկսած են դիրքաւորուիլ շէնքերուն մէջ: Տոպրակներով խիճ ու քար կը բերեն եւ ամրութիւններ կը շինեն պատուհաններուն՝ կրակելու համար: Պարբերաբար փամփուշտ մը պատին կը հարուածէ, ազդանշան իբրեւ՝ թէ թուրքերը վերէն, լեռան բարձունքներէն կը կրակեն: Չեմ համարձակիր նայիլ մեր փոքրերուն: Իրենց ճակատագիրը ի՞նչ պիտի ըլլայ: Սաթենիկը փոքրիկն էլմասն ու Մարին բերաւ հետը, որպէսզի մեզի ցտեսութիւն ըսէ: Ճերմակ ժապաւէն կապեցի անոնց մազերուն, զանոնք ամուր սեղմեցի բազուկներուս մէջ: Սիրտս պիտի կոտորի: Սաթենիկը սիրելի էր եւ քաջ. կը խոստանայ հոգ տանիլ փոքրիկներուն: Մթնշաղին սկսան տխուր երթին: Բոլորն ալ վախով ու ճերմկած դէմքերով մօտեցան մեզի՝ կապոց մը հագուստ, պնակ մը եւ դգալ մը ձեռքերնին, իրենց *սելամը* ըսելու: Այս գիշեր մարդիկ պիտի գան մեր բոլոր ուտեստը տանելու: Չեն ըմբռներ թէ ինչպէ՛ս եւ ինչո՛ւ կը մնանք: Քաղաքին մէջ, կարելի լաւագոյնը ազնուօրէն մեզի կը խոստանան տրամադրել: Բացատրեցինք թէ՛ մենք ճշմարիտ պէտք է մնանք մեր ըսածին, թէ՛ կողմ պիտի չբռնենք: Մենք ամերիկացիներ ենք, ամերիկեան կալուածի վրայ, եւ առանձինն հոս կ'ուզենք մնալ: Անշուշտ, եթէ հայերը յամառին հոս մնալ ու շէնքերէն կրակեն՝ մեր չէզոքութիւնը կ'ազդուի: Մենք պիտի մեղադրուինք իբրեւ յարձակումի դրդապատճառ: Իրենք կը կարծեն որ թուրքերը մեզի պիտի չխնայեն եւ պիտի սպանեն եթէ վերադառնան: Կը գիտակցինք ասոր հաւանականութեան, բայց մեզի համար ուրիշ ուղի չկայ: Անձամբ ես, պիտի ուզեմ հոս մնալ:

Ուտեստին մեծ մասը քաղաք տարուեցաւ: Կէսգիշերին թրքական կրակոցը սկսաւ աւելի մօտէն արձակուիլ: Առտուն ռումբեր նետուեցան մեր շէնքերուն վրայ, բայց ինկան հովիտին մէջ: Հիմա երկու աղջիկները առած ենք եւ իջած ստորերկրեայ յարկը: Կը գրեմ՝ սրահը նստած: Ասիկա է՛ն ապահով վայրն է: Պատուհաններ չունի: Միայն՝ դուրսի դուռ մը: Մարդիկը վերի պատուհաններէն կը կրակեն՝ քարէ տոպրակներուն ետեւէն: Փորձեցի քիչ մը ուտեստ բերել խոհանոցէն, բայց փամփուշտ մը սուլելով այտիս քովէն ան-

ցաւ ու խրեցաւ պատին: Պատերը ծակոտած են արդէն: Մեզի ըսին որ թուրք դիակներ կան շէնքին մօտ: Անոնք առջի գիշերուան կռիւին զոհերն են: Մեր քովն ալ հայ սպանեալ մը կայ: Իր դիակը հիմա աստիճաններէն վար տարին ու սենեակներէն մէկուն գետինը դրին: Սեւ Մահ⁸¹ է հայոց խումբին հրամանատարին անունը: Կամաւոր մըն է, ահագնատեսիլ եւ կուզ: Առատ, սեւ մազեր ունի եւ նշածեւ աչքեր: Բամբ ձայնով մը երգեր կ'երգէ: Իր ձայնը դողի ալիքներ կ'արձակէ մարմինիս: Ըստ Էտիթին ան ծանօթէն թուրքերուն կը հայհոյէ: ...Զինուորները թելադրեցին որ աւելի ապահով տեղ մը գտնենք մեզի համար: Էտիթը առաջարկեց այն միջանցքը որ աստիճաններով դէպի ճաշարան կը տանի: Փոքրիկ սենեակ մըն է, արտաքնատես պատ չունի, ոչ ալ պատուհան: Առաստաղին մէկ ծայրը երկաթեայ կափով մը կայ, որ վերի յարկի սենեակի տախտակամածին կը բացուի: Պզտիկ լոյս մը անկէ կը մտնէ, քիչ մըն ալ՝ օդ: Մեծ կարասներ ու սնտուկներ կան սենեակին մէջ, բայց շտկրտելով կրնանք մեր ութին համար տեղ ստեղծել: Երկու մաթրաս իջեցուցած ենք հոս եւ այնքան մը տեղ կայ, որ փոխնիփոխ կրնանք ատոնց վրայ երկննալ: Քիչ մըն ալ ուտեստ բերած ենք խոհանոցէն:

Բոլորս դուրս ելած ենք սրահէն ու նստած մեր սենեակին մուտքին: Չենք գիտեր թուրքերը ե՛րբ կը յարձակին: Այիշան եւ ճեննէթը շատ լաւ են: Կ'ընեն՝ ինչ որ ըսենք: Ճեննէթը շատ արթուն է եւ սկսած է մտածել թէ ի՛նչ պիտի ընէ եթէ թուրքերը ներս մտնեն:

⁸¹ Քարա Ճեհեննէ՛մ: Ըստ Միսիզ Էպիի, գրաւորներուն ղեկավարը Արա[մ] Չաուշն էր (Eby, էջ 228):

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Հիմա որ նորէն Ամերիկա կը գտնուիմ, միտքերս պէտք է կարգի դնեմ եւ գրեմ համալիրին վերջին օրերուն, եւ երկրին մէջէն ու Սեւ Ծովով մեր վերադարձի ճամփորդութեան մասին: Մեր վերջին սենեակին մէջ կեցութեան ցերեկներն ու գիշերները կ'առանձնանան իրենց իրայատկութեամբ: Երբ յիշեմ այդ օրերը՝ կը սկսիմ շնչել այդ փակ տեղին օդը եւ զգալ դողի ալիքները, որոնք ալեկոծեցին զիս Յունիսի այդ տաք օրերուն: Ամբողջ Հինգշաբթին եւ մինչեւ Ուրբաթ յետմիջօրէ, հայերը շարունակեցին կռուիլ: Երբեք չէինք գիտեր թէ թուրքերը երբ կրնան խուժել համալիր, մտնել մեր շէնքը: Սկսանք երեւակայել թէ կը խուժեն աստիճաններէն վար, եւ ռումբեր նետելով իրենց գալուստը կը յայտնեն:

Մենք փակուած մնացինք այդ սենեակը, բայց պատրաստի ծրագիր ունէինք: Եթէ միայն զէնքերով վար խուժէին՝ յոյս ունէինք որ մեր պզտիկ ամերիկեան դրօշակը կափուլէն դուրս հանելու եւ շարժելու առիթը կ'ունենանք: Իսկ անոնք տեսնելով նշանը, կը դադրեցնեն կրակոցը: Թուրք աղջիկները պիտի երթային եւ ըսէին թէ ովքեր կան սենակին մէջ: Ասիկա մեր փրկութեան միակ միջոցը թուեցաւ: Մինչայդ, սակայն, փամփուշտներ կը բզզան անձրեւի նման, քանի որ արագահարուած հրացան մը ուղղուած է շէնքին: Վիրաւոր հայեր եկան Միս Սուփըրին քով իրենց ձեռքերն ու գլուխը փաթթելու: Աստիճանները արհնոտեցան եւ ճանճ սկսաւ հաւաքուիլ: Հիանդագին տեսարան էր: Շատ տաք էր: Թէեւ ուտեստ ունէինք, բայց չկրցանք ուտել: Ուրբաթ յետմիջօրէի չորսէն հինգի միջեւ, հայերը սպառելէ ետք իրենց զինամթերքը, ետեւի ճամփով սպրդեցան դուրս եւ որքան որ գիտենք՝ մացառներուն մէջ պահուրտեցան մինչեւ մթնիլը, ապա հովիտէն իջան քաղաք: Յաջորդող լռութիւնը քիչ մը աւելի սարսռազդեցիկ էր քան մեր գլխավերը կատարուող կրակոցները: Մենք հերթաբար, երկու-երկու նստանք աստիճաններուն վրայ՝ ոտնաձայներ սպասելով: Էտիթը եւ Մսթըր Էպին մագլցեցան վեր՝ ննջարաններն ու պատուհանները: Հոն ամերիկեան դրօշակը պարզեցին եւ պռռացին թէ՛ «հայեր չկան հոս: Մենք վեց ամերիկացիներս ենք եւ երկու իսլամները: Մենք

բարեկամ ենք՝ եկէք»։ Պատասխան չեղաւ։ Շաբաթ օրը մերթընդմերթ նոյնը պոռագինք, բայց լռութիւնը շարունակեց իշխել։ Քաղաքին ուղղութեամբ կրակոցը դադրեցաւ, բայց պարբերաբար փամփուշտ մը կը հարուածէր շէնքը՝ ամէն անգամ որ մէկը դռան կամ պատուհանին երեւէր։ Բազմիցս ասիկա կրկնեցինք, գիտակցելով որ իրենք մեզ կը դիտեն։ Կիրակի առտու, Յունիս տասներեքին, ժամը վեցուկէսին, թուրքերէն մէկը կանչեց։ Մենք պատասխանեցինք։ Տակաւ իրենց ձայները սկսան մօտենալ եւ Էտիթն ու Մսթըր Էպին համալիր մտան եւ միքանի վայրկեան ետք, բազմաթիւ թուրքերու հետ վերադարձան։ Մինչ անոնք մօտեցան եւ կրակոց չեղաւ մեր շէնքէն, ուրիշ թուրքեր ալ պատերէն ներս ցատկեցին։ Առաջնորդնին վայրենատես մէկն էր՝ Արապ Ալին։ Իր իւրայատուկ գլխարկով ու դանակներով՝ սարսափազդու էր։ Անմիջապէս մարդիկը թափեցան շէնք, մինչ մենք՝ ութս, քով քովի կեցանք դռան մը մօտ։ Միսիզ Էպին գաւաթ մը ջուր հրամցուց իրենց առաջնորդին։ Վեջինս ձեռքով ետ հրեց։ Ասիկա լաւ նշան չէր։ Որովհետեւ եթէ արեւելքցի մը ձեռքէ ուտեստ կամ ջուր ընդունի՝ ստիպուած է բարեացակամ ըլլալ։ Էտիթը եւ ես քով քովի կեցանք։ Էտիթը ցած ձայնով փսփսաց. «չեմ գիտեր ինչ կը մտմտայ»։

Մարդիկը մեր շուրջը կը դառնային, իսկ Արապ Ալին, խօսքը Էտիթին ուղղելով թէ՛ մենք դաւաճաներ ենք զիրենք (իբր թէ նշան տուած ենք հայերուն որ յարձակին) չէր ուզեր մեր ժխտումը լսել։ Մեր վերջը կարծէք եկեր էր։ Այդ պահուն Էնվէր պէյը ներս վազեց։ Ըստ մեր ետքը իմացածին, հրամանատարութեան ծրագիրը այնպէս չէր որ Արապ Ալին եւ իր մարդիկը առաջինը մտնէին։ Բայց անոնք՝ առաջին կողոպտողներն ըլլալու փափաքով, հրամաններուն չէին անսացած։

Ծանօթ. - Շաբաթներ ետք, Թալասի մէջ Էտիթը թուրքէ մը իմացաւ որ այդ մարդոց յստակ ծրագիրն էր ամերիկացիները սպանել, բայց սանձուեր էին։

Էնվէրը Ալին մէկ կողմ քաշեց եւ տաք վիճաբանութիւն մը տեղի ունեցաւ երկուքին միջեւ։ Իվերջոյ մեզի ըսուեցաւ որ անմիջապէս պէտք է մեկնինք։ Երկու ժամ տրուեցաւ՝ մեր իրերը առնելու։ Ժամացոյցիս նայեցայ՝ եօթուկէս էր. վազեցի Մարթին շէնքը, ուր կը

գտնուէր իրերուս մեծ մասը: Մարդիկը արդէն տարտղներ էին շէնքերուն մէջ: Հանդերձակալէն փէշս չէի հասցուցած հանել, երբ անոնցմէ մէկը ինձմէ առաջ խլեց զայն: Բայց ես աւելի արագ շարժեցայ բարձրաճիտ կօշիկներուս խնդրով: Սնտուկը բացի եւ մինչ կը մտածէի թէ ի՛նչ ամէնաշա՛տը պէտք կրնայի ունենալ (քանի գիտէի որ քիչ բան կրնամ տանիլ), սկսայ մէջիները դուրս թափել: Թուրք մը ցցուած նկատեցի գլխուս վերեւ: Զինք ճանչցայ: Ասիկա աւազակապետ մըն էր որ յաճախ կ'այցելէր մեզի եւ բարեկամաբար կը վարուէր: Նշան ըրի որ տէր կենայ սնտուկին, ու վազեցի կողքի սենեակը՝ այլ կարելոր բաներ վերցնելու: Վերադարձիս՝ հոն էր, իսկ սնտուկին բան չէր եղած: Երախտագիտութիւնս յայտնելու համար, իմ շատ սիրած չերքէզական գլխանոցս տուի: Զայն ընդունեց խորին շնորհակալութեամբ, թէւ գիտէի որ կը սպասէ որ մեկնիմ, որպէսզի արձակ-համարձակ հաւաքէ տանի: Ամէն տեղ մարդիկ խուժած էին՝ գորգ կը փաթթէին, վարագոյր վար կ'առնէին, հագուստեղէնի պարկեր կը քաշկոտէին, հանդերձակալներով հագուստ կը շալկէին: Լեցուն թելերով ետ վազեցի գլխաւոր շէնքը, ուր քիլիմին մէջ դնելով հաւաքածներս *պողչա* մը շինեցի: Էտիթը նոյնպէս կը հաւաքէր իր իրերը, միաժամանակ կը վերահսկէր թուրք աղջիկներուն կապոցներուն պատրաստութեան: Հաճնոյ հայերը մեզի ոսկեղէն վստահեր էին: Պաշարման ատեն երբ ուտեստ կը գնէինք, ձեռք չտուինք ատոնց: Էտիթը ճաշասենեակ գնաց ուր պահուած էր այդ աւանդը: Չորս աւազակներ հոն էին արդէն: Ծռելով գանձարկղին թիւերը ճշտեց՝ կռնակ տալով աւազակներուն, որոնցմէ մին միւսներուն ըսաւ՝ «ոսկին պիտի առնէ»: Երկրորդը պատասխանեց՝ «չէ, ոսկի չունին, հագուստ կը վճարէին [ապրանքի փոխարէն]»: Մարդիկ Էտիթին չմօտեցան, իսկ ինք այդ պարկուճները դնելով պարկին մէջ դուրս՝ ելաւ: Քանի յետոյ մենք չխուզարկուեցանք այդ ամբողջը իվերջոյ հասցուցինք Կոստանդնուպոլիս:

Մինչայդ, անդրադառնալով որ հագուած հագուստս ճամփորդութեան յարմար չէ, տարագս հագուեցայ՝ մինչ բազմաթիւ թուրքեր կային սենեակը: Վերջացնելով՝ պատրաստ էի: Գործակիցներս պատրաստութեան մէջ էին:

Մինչ էտիթը կը մտածէր թէ ինչպէս կրնայ տանիլ մեծ հաշուետետրերը (զորս անկարելի կը գտներ), Էնվէրը սենեակէ սենեակ անցնելով մեզի ծայն կու տար՝ «*հայտէ՛-հայտէ՛*», այսինքն՝ «աճապարեցէ՛ք»: Ըստ երեւոյթին չէր վստահեր Արապ Ալիին խոստումներուն, որ վերահսկողութենէ դուրս էր արդէն եւ անելի ատելաւար՝ քանի որ թաքնուած հայ չէր գտած: Մեզի շնորհուած երկու ժամին կէսին, ութուկէսին, Էնվէրին պնդումով, լքեցինք տունը: Խուրձերու կոյտեր գոյացեր էին պատին տակ, մինչ Մարթին շէնքը կը բոցավառէր արդէն: Մարդիկ դիտմամբ վախցուցին մեր ծիւղը, որպէսզի զանոնք չկարենանք առնել: Հետիոտն համալիրէն դուրս շտապեցինք: Ութ հոգի էինք՝ մէկ այր, վեց կին եւ աղջնակ մը: Մարաշ նայող դռան կողքին իսլամ մը մեռած էր: Անցանք եւ մագլցեցանք զառիվերը, մինչ փամփուշտներ կը սուլէին մեր գլխուն վերեւ, իսկ ծովս ու բոց՝ մեր ետին: Դէպի վեր, ձիգ զառիվեր մագլցեցանք մեծ ճիգով, սահելով, իրար հրելով, շնչասպառ: Այդպիսի թեք զառիվեր երբեք չէի ելած: Միքանի երկվայրկեան դադար առինք հանգստացնելու մեր չորցած կոկորդները եւ կուրծքի սուր խիթերը, յետոյ՝ նորէն, միշտ մղուած Էնվէրին «*հայտէ՛-հայտէ՛*» պնդումներէն: Աւարառուններէն շատեր եւս մեր ճամփան բռնած էին. ինձմէ ոչ-շատ հեռու աւազակ մը կը մագլցէր՝ իր բեռը շալկած եւ իմ վերնագգեստս դրած իր ուսերուն: Մէկը իմ բարձրորակ կաշիէ պայուսակս կը տանէր եւ հասկցուց որ կապոցս այլ կրնայ առնել: Հաստատուն ծայնով եւ որքան որ շունչ ունէի «*եոք*» ըսի, եւ շարունակեցի ճամփա: Շրջանցելով լեռան կողը՝ հասանք հարթավայր մը, ուր Էնվէր արտօնեց որ հանգստանանք: Տաս վայրկեանէն ետ ոտքի ելանք: Մեր առջեւը տեսանք ճիւղանք: Մտմտացինք թէ ինչպէ՛ս պիտի վարուի մեզի հետ: Սկիզբը ուրիշ կողմ նայեցաւ, բայց յետոյ մօտեցաւ մեզի: Անգոյն էր, մեր միքանի օր առաջուան ընկերը չէր կարծես: Քիչ մը հանդարտեցաւ եւ բարեւեց մեզի: Այսքան միայն եւ մենք շարունակեցինք մեր երթը: Պահ մը ետք հասանք Էնվէրին վրանին, ուր հանգստացանք եւ մածուն հրամցուեցանք: Էնվէրը, համոզուած եմ, գէշ մարդ մըն էր, բայց երախտագիտութեան զգացում մը ունէր եւ այդ օր մեր կեանքը կը փրկէր՝ ի տրիտուր Միս Սուփըրին իրեն ըրածին: Դարձեալ, մեզի ըսուեցաւ որ յառաջա-

նանք: Երբեք էնվերին չափ արագ չէինք կրնար քալել: Փոքրիկն ճեննէթը՝ ազազուն աղջնակ, ուժասպառ եղաւ, բայց փոքր քաջալերանքով եւ քիչ մըն ալ գրկելով, մեզի հետ կը պայքարէր: Մեր ճամփան այլ տեսք առաւ հիմա՝ զառիվար արահետ եւ երկուստեք պսպղուն ծաղիկներ, որոնք որեւէ այլ պարագայի մեզ գոհունակութեամբ պիտի պարուրէին, մինչ հիմա այս ճամփորդութիւնը վերջացնելն էր մեր միտք բանին: Կէսօրին տեսանք վրանախումբ մը եւ հասանք Շարի ճամփան, ուր պզտիկ կայան մը հաստատուած էր: Հրաւիրուեցանք վրան մը եւ ապակեայ գաւաթներով՝ չափազանց քաղցր թէյ հիւրասիրուեցանք: Ըսուեցաւ որ ճաշ կը պատրաստուէր մեզի համար: Գորգեր փռուած էին շուք տեղ մը եւ չափազանց լաւ ճաշ հրամցուեցաւ մեզի: Կերած ատեն յանկարծ զարմանքով տեսանք Յարութիւն էֆենտին, շնչասպառ, ճակատէն քրտինքի կաթիլներ կը սրբէ: Հաճոյ *քայմաքամ* էր ան երբ Հաճըն ժամանեցի, բայց ֆրանսացիք զինք փոխարինեցին հայով մը: Ֆեքէ կ'ապրէր եւ, ըստ երեւոյթին, չեթէներուն կողքին մասնակցեր էր: Ըսաւ թէ իմացեր էր եղելութիւնը եւ կ'ուզէր օգտակար ըլլալ՝ կարելի որեւէ ձեւով: Մեզի հետ մնաց, մինչ կը մտածէինք մեր յաջորդ քայլին մասին:

Պահ մը ետք էնվերը եկաւ յայտնելու թէ պէտք է հրամանատարին վրանը երթանք այլ լեռան մը կողին: Մերժեցինք քալել: Ձիեր եւ ջորիներ բերուեցան: Դժուար էր նեղ փէշով վարել ձին: Ես լացի իմ անձնական, ամերիկեան թամբիս եւ սանձիս գողցուելուն: Յամենայնդէպս, ասիկա մեծապէս բարելաւեալ վիճակ էր՝ քալելուն բաղդատմամբ: Դանդաղօրէն մեր խումբը մագլցեցաւ լեռնիվեր: Մեր առջեւ բացուող տեսարանները սիրուն էին, իսկ մեր սրտերը կապարի պէս ծանր:

Մթնել սկսեր էր երբ հասանք այն բարձունքին, ուր դիմաւորուեցանք Ասլան պէյին՝ փոխ հրամանատարին կողմէ: Ըսաւ որ Տողան պէյը Սիս մեկնած է եւ մինչեւ իր վերադարձը անկարելի է ծրագրել մեր յաջորդ քայլը: Մօտենալով զօրակայանին, անցանք զինուորներուն կողքէն, որոնցմէ շատեր տհաճօրէն խնդացին, մինչ ես մտմտացի թէ ինչ կը մտածեն: Այդ գիշեր բոլորս պառկեցանք փոխհրամանատարին հետ, վրանին մէջ: Չափազանց անհանգստա-

ւէտ էր: Երկուշաբթին անցուցինք մեզի համար սարքուած ապաստարանին մէջ: Մեզի հետ ազնիւ վարուեցան, բայց տաքը, առանձնութեան բացակայութիւնը - մարդիկ միշտ ներս ու դուրս կ'ընէին - պատշաճ լուացուելու անկարելիութիւնը եւ մեր վիճակին անորոշութիւնը՝ մեր ջիղերուն վրայ կ'ազդէին:

Երեկոյեան Տողան պէյը վերադարձաւ: Առաջուան պէս քաղցր չէր եւ պաշտօնական բարեւտութէ ետք Էտիթին քարտուղար մը ղրկեց որպէսզի արձանագրէ թէ ինչ պատահեցաւ մեր համալիրին մէջ 5 Ապրիլ-13 Յունիս շրջանին: Էտիթը ներկայացուց կարճ վկայութիւն մը, բայց ծաղկալի գովասանք չըրաւ թուրքերուն: Քարտուղարը, ակնյայտօրէն չգոհանալով, հարցուց՝ եթէ աւելի բան ունէր ըսելիք: Էտիթը ըսաւ թէ ըսած էր այն ինչ պէտք էր: Ասով պէտք էր գոհանար: Տողանը հարցուց՝ եթէ կ'ուզէինք Թալաս մեկնիլ: Գիտնալով որ ատիկա միակ տեղն էր որ մեզ պիտի ղրկէին՝ «այո՛» ըսինք: Մեզի ընկերակիցներ խոստացան եւ ձիեր՝ յաջորդ առտուան համար: Այդ գիշեր - Երկուշաբթի - նորէն վրանին մէջ պառկեցանք, թէեւ կը յուսայի որ կ'արտօնուէինք ապաստարանը պառկիլ: Կէս գիշերին հեռաձայնը հնչեց եւ Արսլան պէյին մոմնչած պատասխաններէն Էտիթը բաներ մը հասկցեր էր կացութեան մասին ու ինձի յայտնեց թէ շարքերուն մէջ դասալքումներ եղած են: Բարձրաձայն կանչեր եւ խօսակցութիւններ լսուեցան դուրսը եւ մարդոց վազքը իմացանք: Սուրը մէջքը դնելով եւ ատրճանակը գօտիէն կախելով, Արսլանը կ'երթեւեկէր դժգոհ: Շատ վախցանք որ հայերը յանկարծակի յարձակում մը կ'ընեն մեր կայանին վրայ: Ժամ մը ետք խաղաղած էր ամէն բան:

Առտու եղաւ եւ ըստ սովորութեան, ուշացում եղաւ մեր մեկնումին խնդրով: Յարութիւն էֆենտին եւ Շիւքրի պէյը՝ Արսլանին եղբայրը մեզի ընկերակից նշանակուած էին, թէեւ պահ մը անորոշ մնաց թէ Յարութիւն էֆենտին պիտի արտօնուի՞ մեկնիլ: Մենք մեծապէս իրեն կը վստահէինք մեր ապահովութիւնը: Իվերջոյ սկսանք մեր եռօրեայ ճամփորդութեան: Շատ տաք էր, արեւը անխիղճ դարձաւ կէսօրին: Կէսօրէ ետք հասանք Ռումլու, ուր Այիշային եւ Ճեննէթին բարեկամներն ու ազգականները ստանձնեցին զի-

րենք ու մեզի ճաշ տուին: Մենք կ'ուզէինք զիրենք Թալասի դպրոցը տանիլ, բայց Տողան պէյը չէր արտօնած:

Առաջին գիշերը անցուցինք Տուրսուն էֆենտիին գիւղը՝ ազնիւ քիւրտ շէյխը, որ միշտ բարեկամութիւն ցուցաբերած է Հաճընի ամերիկացիներուն հանդէպ: Ան մեզ ողջունեց մեծ ազնուութեամբ եւ հիւրասիրեց իր տունը, ուր իր ունեցած լաւագոյնը մեր առջեւ դրաւ: Նախքան թուրքերուն պաշարելը՝ ան բազմիցս մեզի լուր դրկեր էր՝ զգուշացնելով անխուսափելի վտանգէն: Անկեղծօրէն գէշ զգաց երբ իմացաւ պատահածները. արցունքներ հոսեցան իր աչքերէն մինչ կը լսէր: Յաջորդ առտու, կանուխ սկսանք, քանի որ երկար ճամփայ ունէինք անցնելիք: Օրուան ընթացքին միքանի անգամ կանգ առինք գիւղերը՝ ձիերը փոխելու: Գիւղացիք, բնականաբար, չկամ էին եւ ափսոսացինք իրենց համար, մինչ մեր ընկերակիցները այդ կարգադրութիւնները կ'ընէին: Ճամփորդութեան աւարտին հասանք գիւղ մը, ուր մարդիկ կտրականօրէն հակառակեցան իրենց կենդանիները տրամադրելու եւ տարբեր պատճառաբանութիւններ տուին: Իվերջոյ Յարութիւնը, միշտ բորբոքող, սպառնաց գիւղը կրակի տալ: Նոյնիսկ սկսաւ տուն մը այրել եւ՝ անմիջապէս ձիերը բերուեցան: Գիւղացիք մեզ պէտք էր կերակրէին:

Երրորդ օրուան մայրամուտին նշմարեցինք Թալասը:

Յոգնած ու սպառած խումբ մըն էինք երբ մտանք հիւրընկալ համալիրը: Սեւ, ձկնորսական գլխարկս դրեր էի, մինչ կիզիչ արեւը այրեր էր դէմքս որ *մահուկանի* տախտակի գոյնը առեր էր, իսկ շրթունքներս ուռեր էին: Երբեք լոգանքը այդքան հաճելի թուացեր էր, քանի չէինք կրցած մեր հագուստները հանել ինը ցերեկ եւ գիշեր:

Մեր մարմինները հանգիստ կ'առնէին, բայց մեր հոգիները կ'արիւնէին: Գիշեր ու ցերեկ մեր մտածումները թշուառ քաղաքին մէջ մեր աշակերտներուն եւ ուսուցիչներուն վրայ էին: Քիչ մը հանգստացուցիչ էր որ Թալասի մէջ, ձեւով մը անոնց մօտ էինք, բայց երկրին այդ մասին անկայուն վիճակը կը թելադրէր որ աւելի լաւ է որ Կոստանդնուպոլիս երթանք: Էտիթը իր լեզուի լաւ իմացութեամբ կը պնդէր որ մնայ հո՛ն ուր կրնայ, քանի երբ Հաճընը խաղաղէր կ'ուզէր իր փոքրերուն քով երթալ: Թալասի համալիրին

մէջ շատ աշխատուժ կար եւ հետեւաբար Միս Սուփըրին եւ իմ կարիքը չկար: Այնպէս կ'իմանայինք կեդրոնի լուրերէն թէ որեւէ պահու կրնային մեզի հրահանգել՝ հեռանալ, եւ լաւ կ'ըլլար որ չբարդացնէինք վիճակը [այսինքն ընդառաջէինք]: Մեր խումբին միւս երեքը մտահոգ էին ծովեզերք հասնիլ եւ տեղեկագրել Ամերիկա՝ Պորտին:

Հնգօրեայ հանգիստէ մը ետք Նիր Իսթի փոխադրութեան մարդիկը, որոնք մեքենայով Թալասէն կ'անցնէին, մեզ առին ու Սվազի եւ Թոքաթի վրայով հասցուցին Սամսոն՝ Սեւ Ծովու վրայ: Այս ճամփորդութիւնն ալ երեքուկէս օր տուեց: Մենք անցանք ճամփաներով, որոնք գերման վերահսկողութեամբ կառուցուած էին, եւ տեսանք դիակներ ու լքուած ինքնաշարժներ որոնք ձգուած էին գերման շտապ փախուստին ատեն, երբ անդրադարձած են որ իրենցը պարտուած դատ մըն է: Ճամփորդութեան այս բաժինը կ'ընդգրկէր այնպիսի տարածքներ որոնք Մուսթաֆա Քեմալի վերահսկողութեան տակ էին, ուստի թրքական արտօնագրերով ճամփորդելը յարաբերաբար ապահով էր: Մեր հասնելէն երկու օր ետք Սամսոն խարսխած ռուսական նաւը չհրապուրեց գիս. ընտանիքս հանգստացնող հեռագիր մը յղեցի տուն եւ շաբաթ մը սպասելէ ետք ամերիկեան խորտընկեցով մը արագօրէն հասայ Կոստանդնուպոլիս:

Նաւուն վրայ միակ կին ճամփորդն էի:

Ամերիկա հասնելէս իվեր զանազան տարածայնութիւններ լսեցի Հաճնոյ կացութեան մասին: Միայն ուշ-ձմռան լսեցի, որ Հոկտեմբեր 15ին, թուրքերը, այլեւս յուսահատ, ծանր զէնքեր բերած են, մինչ հաճընցիք թէ՛ թիով, թէ՛ ուժով այնքան տկարացած են որ չեն կրցած աւելի դիմադրել, եւ թուրքերը միքանի ժամու մէջ գրաւած են քաղաքը: Քաղաքը կրակի տրուած է եւ անոնք որոնք կրակէն փրկուած են սրախողխող եղած են: Միքանի հարիւր հոգի կոռուելով, արահետ բացած են:

Բոլոր ջարդերէն ալ վերապրողներ կ'ըլլան: Սակայն ցարդ գիտենք որ մեր աղջիկներէն երկու-երեք հոգի ողջ են:

Միայն այդքան:

Միայն այդքա՞ն: Մարտ-Ապրիլ-Մայիս ամիսներու երկարատեւ օրերուն եւ մինչեւ Յունիսի կէսը միշտ ալ կ'ըսէինք «վասն ինչի՞ փրկուեր էին անոնք: Անոնք տառապեր էին եւ աքսորին ընթացքին գրեթէ մեռեր էին: Բայց կեանքին վերադարձուեր էին: Անոնց տրուեր էր յոյս եւ ուրախութիւն պարզապէս որպէսզի այսպիսի անգութ ծեւերո՞վ մեռցուէին: Ինչի՞ համար խնայուեր էր անոնց»:

Ռահէլը տեսեր էի յուսահատ, մազերը արձակած եւ տարօրինակ վարուելակերպով: Միքանի ամիս ետք նոյն այդ Ռահէլը տեսեր էի հպարտ, իր մաքուր հիւսքերով, պատրաստ՝ իր պատասխանատուութեան բաժինը ստանձնելու: Կը վերյիշեմ Ռուբէնը այնքան այլամերժ, որ չէինք կրնար զինք ուրիշ փոքրերու հետ դնել, բայց միառժամանակ ետք այնքան ընդառաջող սիրոյ եւ ազնուութեան, որ առաջի՞նը իր գլխարկը իբրեւ յարգանք կը հանէր երբ մեզմէ որեւէ մէկը տեսնէր եւ ճիգ կ'ընէր որ ծառայելու համար նկատի առնուէր:

Հարց է. արդեօ՞ք այդ ամիսները մեզի եւ իրենց տրուած էին որպէսզի իրենք աւելի լաւ քաղաքացիներ ըլլան երկինքի արքայութեան, ուր անոնք մեկնեցան:

Ա՛րդեօք:

Մահաշուք Հովիտին Մէջ Բնակութիւնը⁸²

Էտիթ Քոլտ

Արդէն Մարաշի դէպքին ատեն, Փետրուարին, տարածայնութիւններ կային՝ Հաճնոյ սպառնացող վտանգի մասին: Փորձեցինք հաւատալ որ ատոնք անհիմն են եւ շարունակեցինք լաւատես դրսեւորել մենք զմեզ՝ յաչս ժողովուրդին, բայց սրտիս խորքը կը գիտակցէի որ վատթարագոյնը դեռ պիտի գայ:

Երեք նկատառումներ զիս այդ գիտակցութեան առաջնորդեցին. անցեալ Յուլիսին, զօրավար Մաճը, ֆրանսացի գնդապետի մը հետ եւ «նկատառելի ընկերակիցներ»՝ իրենց իսկ բառերը վկայակոչելով, գործնապէս գրաւեցին Հաճընի շրջանը: Այդ գրաւումը երեք օր տեւեց: Անկէ ետք, ժողովուրդին մտքին մէջ այդ գրաւումը յիշեցնող միակ բանը ֆրանսական տարազ հագած միքանի հայ պաշտօնատարներն էին: Կրնաք երեւակայել ինչպիսի ազդեցութիւն կ'ունենար դաշնակիցներու այսպիսի գրաւումը՝ թուրք, չերքէզ եւ քիւրտ բնակչութեան վրայ: Հաճընը տեսակ մը Մեքքան դարձաւ Փոքր Ասիոյ բոլոր հայերուն, մանաւանդ այն մարդոց որոնք այլեւս հողի եւ ընտանիքի կապուածութիւն չունէին: Քանի որ մենք հոն կը գտնուէինք ժողովուրդին լալին համար, ջանացինք պահպանել անկեղծ յարաբերութիւններ, բայց յաճախ շատ պրկուածութիւն կար: Դժուար էր այն հայերուն համար, որոնք մեր հին բարեկամները չէին, հասկնալ որ ամերիկացիք չէզոք են եւ իրապէս չեն կրնար իրենք զիրենք նոյնամիացնել հայերուն հետ: Նոյնպէս ալ մենք չէինք կրնար հասկնալ, թէ մինչ խաղաղութիւն կարելի չէր հաստատել, ինչպէ՛ս կրնային ֆրանսացիք պատասխանատուութիւն ստանձնել զինելու մեր շրջանի հայերը, որոնք - ըստ մեզի - շրջանի միքանի ժողովուրդներէն մէկն էին: Մենք կ'ենթադրէինք որ ֆրանսացիք եւ ոչ թէ հայերը պէտք էր պատասխանատու ըլլային հանրային բարօրութեան:

Երկրորդ Նկատառումն այն է, որ հաճընցիք բաւականաչափ զգուշացումներ ստացան գալիքի խնդրով: Հայերը թուրք գիւղերու

⁸² Քաղաած *Missionary Herald* Հոկտեմբեր 1920 թիւէն, էջ, 445-48:

աղաներուն մէջ շատ բարեկամներ ունէին: Ամբողջ Փետրուարին այս աղաները շարունակաբար թելադրեցին հայերուն՝ ամէն միջոցներով ինքնապաշտպանութեան պատրաստուելու: Իվերջոյ պատգամը եկաւ որ անմիջապէս որ ձիւները հալին՝ վտանգը պիտի ժամանէ: Այն ատեն էր որ խոհեմ նկատուեցաւ որ մեր ազնիւ պատուելին ու սրբազանը անձամբ երթան Ատանա՝ իշխանութիւններէն օգնութիւն խնդրելու: Ամերիկացիք արդէն սպառած էին հեռագրալին միջոցները:

Այն ատեն ալ, դարձեալ, զգացի որ թէ՛ Հաճընի ժողովուրդը եւ թէ՛ մենք շատ կղզիացած էինք: Երբեք ատիկա չէի զգացած անցեալին: Միեւնոյն երեք ճամփաները՝ Ատանայի, Մարաշի եւ Թալասի, որոնք ներս եւ դուրս կ'առաջնորդէին Հաճընէն, մեր ամէնամօտ դրացիներն էին, բայց նախկին միասնութիւնը որ անչափ զօրութիւն էր ամերիկեան Պորտին մէջ, այլեւս չկար: Անցեալին երբեք հարցականի տակ չէինք առած Կոստանդնուպոլսոյ Մաթըր Փիթին կարողութիւնը՝ կողմնացուցելու որեւէ հեռաւորութիւն կամ հակադիր պարագայ: Ներկայիս, սակայն, այնքան շատ ամերիկացի կայ Թուրքիոյ մէջ, իսկ խնդիրները այնքան շփոթեցնող են, որ իւրաքանչիւր կայարան միայն կրնայ ինզիմք հոգալ: Միայն Հաճընը չէր որ վտանգուած էր, այլ այնքան հսկայ տարածք մը, որ մերը շատ թոյլ կանչ մըն էր:

Հաճընէն դրկուած վերջին նամակատարը Մարտ 10ին էր: Այդ օրէն մինչեւ Յունիս 13՝ համալիրը մեր քած օրը, մենք գործնապէս փակուած էինք աշխարհէն: Մէկ անգամ Պրուսայի Միս Էլընը փորձեց մեզմէ լուր ստանալ, մէկ անգամ ալ մենք յաջողեցանք դեղերու պահանջք յղել Թալաս: Կոհիւր սկսաւ Երկուշաբթի, Մարտ 29ին: Շաբաթ մը ամբողջ, Հաճընի ժողովուրդը փորձեց չեթէները (թուրք աւագակախումբերը) չձգել բարձունքներէն իջնել: Սոսկալի էր կրակոցներուն ձայնը՝ մեր անվարժ ականջներուն: Այդուհանդերձ, մենք բնականոն կերպով շարունակեցինք մեր դասաւանդութիւնները: Իվերջոյ, մեր բարեկամ մենոնայթներուն համալիրը այնքան կրակոցներու ենթարկուեցաւ, որ զիրենք - իրենց աշխատակազմով ու փոքրերով - հրաւիրեցինք որ մեր քով գան: Մութի քօղին տակ եկան անոնք: Յաջորդ իրիկունը գործարանային շէնքերէն բերինք

բոլոր որբանոցային տղաքը, բերինք նաեւ այն պաշարն ու պարենը զոր դիրին եւ արագ կարելի էր փոխադրել: Հրաւիրեցինք պատուելիին ընտանիքը, եւ մեր փոքր աշխատակազմին ընտանիքները: Այդ օրէն մինչեւ մեր լքելը՝ դէպի քաղաք մեր ճամփան փակուած էր:

Հինգշաբթի, Ապրիլ 5ին, չեթէները իջան մեր համալիրը: Ատիկա մեր մահուան առաջին օրն էր: Այն համալիրը, ուր ամերիկեան դրօշակը կը ծածանէր եւ ուր կրակոց մը չէր արձակուած, ենթարկուեցաւ կատաղի յարձակման: Անկէ ետք, տաս շաբաթներ, մենք ապրեցանք իբրեւ հիւրը չեթէներուն: Կեանք չէր ատիկա, այլ բնակութիւն մը՝ մահաշուք հովիտին մէջ: Ուրախ ենք որ չվախցանք, եւ որ մեր բոլոր տնեցիք բացարձակապէս վստահեցան մեզի: Անդադար ջանացինք դուրսը, մեր պատին տակ բանակողներուն հետ բարեկամանալ: Աստուծոյ շնորհքով, մեծ չափով յաջողեցանք: Մենք իրենց ծառայեցինք կարելի բոլոր ձեւերով, մասնաւորաբար Միս Սուփրըը՝ բժշկական օգնութեամբ: Բայց միշտ ալ պէտք ունէինք դարձեալ վերաշահելու զիրենք, որովհետեւ անոնք միշտ կը փոխարինուէին ուրիշներով: Նախկինները կը տեղափոխուէին ուրիշ ճակատ, եւ նոր խումբ մը կը սկէր մեզի հետ գործ ունենալ: Այսպիսի առիթով մըն էր որ մեր սիրելի փոքրիկը, Սաչեանը սպանուեցաւ⁸³, երկվայրկեանաբար մահացաւ իր վիզին ուղղուած տոմ-տոմ փամփուշտներէ: Երկու ուրիշներ արդէն մահացեր էին սարսափէ, իսկ երեք ուրիշներ՝ վիրաւորուեր: Եկաւ ժամանակ երբ մեր բոլոր տնեցիները առանձնացուցինք ներսը, եւ ամերիկացիներս կատարեցինք անհրաժեշտ դուրսի ամբողջ գործը: Բազմաթիւ անգամներ մեր ուղղութեամբ կրակոցներ եղան, բայց գերիշխող նախախնամութիւնը պատճառ դարձաւ որ այդ փամբուշտները շեղին:

Թուրքերը իրենց դիրքերը տեղադրեր էին մեր համալիրին մօտ, մեր եւ քաղաքին միջեւ: Թէեւ բազմիցս ըսինք իրենց թէ մեզի կը պատկանի, անոնք յամառեցան գրաւուած պահել մեր դարմանատան շէնքը, որ մայր դռնէն դուրս կը գտնուէր եւ միշտ անկէ կրակեցին: Ամբողջ համալիրը մնայուն թիրախ էր Հաճընէն եկած կրա-

⁸³ Որբանոցայիններ էին նաեւ Յարութիւն Պողազեանը, Խաչերը (բաբերդցի) (Eby, էջ 81):

կոցներուն: Դժուար թէ օր անցնէր առանց չեթէներու ղեկավարներէն մեզի հետ հաղորդակցողներու: Ըստ երեւոյթին մենք իրենց լաւագոյն բարեկամներն էինք, եւ միքանի շաբաթ ետք մեզի շատ օգնեցին ուսեստ ապահովելու խնդրով:

Երկու անգամ, Մսթըր Էպին եւ ես, թելադրուեցանք իրենցմէ Հաճըն երթալ: Իւրաքանչիւր անգամ անոնք զինադուլ հոչակեցին եւ մենք ճերմակ դրօշակ շալկեցինք: Առաջին մեկնումը պաշարման երրորդ շաբաթի աւարտին էր, իսկ երկրորդը՝ անկէ հինգ շաբաթ ետք: Առաջին անգամին մենք պարզապէս նշեցինք անձնատուութեան պայմանները, այնպէս՝ ինչպէս տրուած էին մեզի իրենց առաջնորդ Տողան պէյէն: Հաճընի յանձնախումը կտրականապէս մերժեց նկատի առնել զանոնք: Երկրորդ անգամուն ջանացինք հանդիպում մը յաջողցնել հակադիր ուժերուն միջեւ: Գացինք ու եկանք եօթ անգամ, յայտնելով Տողան պէյին կեցուածքը եւ բերելով Հաճընի պատասխանները եւն.: Ամէն ինչ կը թուէր նպաստաւոր ըլլալ, բացի այն որ հանդիպման վայրին շուրջ չէին համաձայներ: Տողան պէյ պնդեց որ հանդիպումը կայանայ մեր *սելամլըք*ին մէջ, մինչ Հաճընի յանձնախումբը նոյնքան հաստատական էր որ հանդիպումը կայանայ հակադիր պաշտպանական դիրքերուն կէս ճամփուն: Երկար բանակցութիւններէ ետք, Մսթըր Էպին եւ ես, իվերջոյ, Հաճընի երկու պատուիրակներու հետ ճամփայ ելանք: Զինադուլին մէկ ժամ մնացած էր: Մինչ կը բարձրանայինք Հաճընի ինքնապաշտպանական դիրքերէն մէկէն դուրս, կրակոց մը եղաւ որ խփեց իմ ու Մսթըր Էպիին միջեւ: Հաճընի պատուիրակները փախան, իսկ Մսթըր Էպին եւ ես առանձինն շարունակեցինք մեր վերադարձը համալիր: Վստահութիւնը քանդուած էր: Չկրցանք ճշտել կրակոցին աղբիւրը:

Այս բոլորին աւարտը շատ յանկարծակի պատահեցաւ: Յունիս 9ի առաւօտեան ժամը շուրջ երեքին, ծանր կրակոցներու գիշերէ մը ետք, հայերը յանկարծ խուժեցին համալիրէն ներս: Դիւրութեամբ յաղթահարեր էին թրքական պաշտպանութիւնը, ապա կտորեր մեր դռները՝ ներս մտնելու համար: Դեռ մութ էր եւ սկիզբը չգիտցանք ով էր յարձակողը: Երբ անդրադարձանք թէ ինչ պատահած էր՝ մեր փորքերէն մաս մը բռնի քաղաք դրկուեր էր արդէն: Անշուշտ

հայերը կրնային համալիրին մէջ մնալ միայն կրակելով: Երբեք չտատամսեցան որեւէ բան օգտագործելու՝ պաշտպանուելու համար: Պարզ էր որ մեր համալիրի երեքհարիւր տնեցիներէն նոյնիսկ մէկ հոգի փրկելու յոյսը չքացած էր: Այդ իրիկուն, մթննալէն ետք, ծանր կրակոցներու տակ, մենք ստիպեցինք որ մնացեալ բոլորը եւս երթան: Դժուար պահ մըն էր, որովհետեւ բոլոր այդ խեղճերը գիտէին որ մեզի հետ աւելի լաւ էին քան քաղաքին մէջ: Անոնք աղաչեցին որ մնան: Յաջորդ իրիկուն ուժ մը եկաւ քաղաքէն՝ տանելու այն բոլոր պաշարը զոր կրնային տանիլ: Մինչայդ, զինեալ հայերը կոհուվ կը պահէին համալիրը:

Երրորդ օրուան առտուն չեթէները լրիւ վերակազմեր էին իրենց շարքերը: Կրնաք երեւակայել յաջորդող յարձակումը: Մենք՝ վեց ամերիկացիներս եւ երկու թուրք աղջիկները, ապաստանեցանք մուտք մարանի մը մէջ՝ Հաճըն Հոմի միջակայ շէնքին մէջ: Նորէն, չեմ կրնար նկարագրել այն սարսափը զոր ապրեցանք այդ վերջին օրերուն: Հայերը նահանջեցին Ուրբաթ իրիկուն: Կիրակի առտու, երբ համոզուեցան որ ոչ ոք պիտի կրակէ, չեթէները խուժեցին համալիր եւ սկսան կողոպտել: Շատ կրակոց կար, եւ շատ քիչ՝ բարեկամական վիճակ: Յայտնեցին որ մէկ ժամ ունինք մինչեւ մեր մեկնիլը: Շէնքերէն մին արդէն կ'այրէր երբ դեռ չէինք սկսած միքանի կտոր առնել: Հետիոտն, աճապարանքով բարձրացանք լեռը, շալկելով թամբերը, թամբի պայուսակներ, կապոցներ: Մեր ութ ձիերէն միայն մէկը կրցանք առնել: Երկու գիշեր հիւր մնացինք հրամանատարին վրանին մէջ, իսկ յայաջորդ օրը իրենցմէ երկու հոգի մեզ տարին Թալաս:

Ուրիշներ կրնան պատմել թէ մենք ինչքան յուսալից ճգնեցանք Հաճընի մէջ, եւ որքան լաւ էր մեր տնեցիներուն միաբանութիւնը: Մարդիկ կրնան պատմել մեր սիրելի փոքրերուն մասին եւ այն եօթ աղջիկներուն, որոնք պիտի աւարտէին: Ներկայիս մեր սրտերն ու մտքերը շշմած են: Կարծես՝ ամէն ինչ պիտի կորսուի: Թալաս պիտի մնամ, հիմակուիմա, առնուազն վստահ ըլլալու անոնց մահուան մասին: Ահաւոր պարտութիւն կը թուի ասիկա, բայց թերեւս երկնային բնակարանը մեծապէս պիտի հարստանայ:

Բովանդակություն

	Էջ
Հաճնոյ Հայրենակցական Միութիւն, «Երկու Խօսք»	5
Ալիս Քլարքի Պոլսէն Հաճըն եւ Հաճընէն Պոլիս երթուղին	7
Հաճնոյ քաղաքային յատակագիծը	8
Իբրեւ յառաջաբան	9
Նախաբան	19
Նամակներ Կիլիկիայէն	20
Հեղինակային նշում	99
Գրուած բայց չդրուած [նամակներ]	100
Եզրափակում	153
Էտիթ Քոլտ, «Մահաշուք հովիտին մէջ բնակութիւնը»	163

Գիրքին մէջ օգտագործուած.-

Ա) Կողքի նկարը եւ Հաճնոյ քաղաքային յատակագիծը առնուած են Յակոբ Պօղոսեանի *Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը* Գիրքէն:

Բ) Քարտէսը առնուած է Armenian National Instituteի կայքէջէն եւ համապատասխանաբար վերամշակուած:

Գ) Հեղինակուիլին լուսանկարը եւ Հաճնոյ համայնապատկերը առնուած են *Letters from Cilicia* գիրքէն:

Դ) Կանացի խմբանկարը առնուած է *Missionary Herald*ի Հոկտեմբեր 1920ի թիւէն (էջ 447):